

Թ Ա Ն Ե Ր Ա Ք Չ Ա Մ

ԱՊՐԱՆՈՒ

ԹԱԼԵԱԹ ՓԱՇԱՅԻ

ԹՅԱՆ

ՇԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ

ՀՐԱՄԱՄԱՆ

ՆԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՒ

«Արտակարգ կարևորության գործ է: Արշամը թուրքական պարմագիրությունը դարձրել է ֆեյք նյուզ»:

Մարկ Լևին, ցեղասպանագետ

newmag 1915 info

Թաներ Արջամ

ԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՅՐԱՄԱՆՆԵՐ

Թալեաթ փաշայի հեռագրերն ու Հայոց ցեղասպանությունը

Թարգմանությունն անգլերենից՝
Անդրանիկ Իսրայելյանի



ԵՐԵՎԱՆ
2019

<https://1915.info>

ՀՏԴ 159.9:82-94

ԳՄԴ 88

Հ 742

Աքչամ Թաներ

Ա. 980 Սպանության հրամաններ: Թալեաթ փաշայի հեռագրերն ու Հայոց
ցեղասպանությունը/
Թաներ Աքչամ; Թարգմ. անգլ.: Անդրանիկ Իսրայելյանի.- Եր.:
Նյու Մեգ, 2019.- 408 էջ:

Այս գիրքը երկրաշարժի ազդեցություն ունի ցեղասպանագիտության ու մասնա-
վորապես Հայոց ցեղասպանության հետազոտությունների բնագավառում: Հայոց
ցեղասպանության առանձնահատկություններից է այն, որ իրար հաջորդող թուր-
քական կառավարությունները մշտապես ջանքեր են գործադրում հերքելու համար
Ցեղասպանության պատմական փաստն ու դրան վերաբերող փաստաթղթային
ապացույցները: Այս աշխատությունը հստակեցնում է Ցեղասպանության իրադար-
ձություններին վերաբերող փաստերն ու ճշմարտությունը: Ներքին գործերի նա-
խարար Թալեաթ փաշայի ստորագրած սպանության հրամանների ու օսմանյան
պաշտոնյա Նայիմ էֆենդու հուշերի իսկությունն այս հարցում երկար ժամանակ
ամենավիճելի թեմաներից էր: Ժխտողականները մշտապես պնդում էին, որ այս
փաստաթղթերն անբողջապես կեղծիք են, և որ հայերը դրանք ստեղծել են իրենց
պնդումները հիմնավորելու համար: Թաներ Աքչամի ներկայացրած ապացույցները
հերքում են այդ պնդումներն ու հստակ ցույց տալիս, թե ինչու այդ փաստաթղթե-
րը, որպես հայերի հանդեպ օսմանա-թուրքական կառավարության ցեղասպան
մտադրության ապացույց, պետք է համարել իրական: Այս առումով աշխատությունը
կտրում է ժխտողականության հիմնաքարն ու ևս մեկ անգամ ապացուցում Հայոց
ցեղասպանության պատմական իրողությունը:

ՀՏԴ 93/94

ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-9196-2-1

© Taner Akcam: Killing Orders, 2018

© Թաներ Աքչամ. Սպանության հրամաններ, **newmag** 2019

Գիրքը հրատարակվում է հեղինակի թույլտվությամբ:

Հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները
պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:

Արգելվում է գրքի հատվածական և/կամ ամբողջական վերահրատարակումն
առանց «Նյու Մեգի» գրավոր թույլտվության:

Սիրելի ընկերոջս՝ Հրանտ Դինքին:

Նա երագում էր ճշմարտության ու արդարության
հողի վրա հաշտեցնել հայ և թուրք ժողովուրդներին:

Այդ երազանքը չմեռավ, երբ 2007 թ. սպանեցին
Հրանտին, հակառակը՝ հարյուր հազարավոր մարդկանց
ոգեշնչեց շարունակել իր գործը:

Նվիրում եմ նաև աղջկաս՝ Հելինին:

Նա ինձ հույս է փալիս, որ հաջորդ սերունդն ի գորու է
իրականացնել Հրանտի երազանքը և կերտել ավելի լավ ապագա:

Գրքի հիմնական հապավումները

AMMU	Ցեղերի ու գաղթականների վերաբնակեցման գլխավոր տնօրինություն (<i>Aşâir ve muhacirin müdüriyet-i umûmîyesi</i>)
BOA.A.}d	Նախարարության գրանցամատյաններ (<i>Sadaret Defteri</i>)
BOA.BEO.	Մեծ վեզիրի գրասենյակ (<i>Babiali Evrak Odası Evrakı</i>)
BOA.DH.EUM.	Ներքին գործերի նախարարության հանրային անվտանգության տնօրինություն (<i>Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye müdürlüğü</i>)
BOA.DH.EUM. 2.	Şube: - Ներքին գործերի նախարարության հանրային անվտանգության երկրորդ վարչություն (<i>Dahiliye Nezareti Emniyet-i Umumiye ikinci şube</i>)
BOA.DH.EUM.LVZ.	Ներքին գործերի նախարարության ընդհանուր անվտանգության մատակարարման գրասենյակ (<i>Dahiliye Nezareti Emniyeti Umumiye Levazım Kalemi</i>)

- BOA.DH.EUM.MH. Ներքին գործերի նախարարության ընդհանուր անվտանգության պաշտոնյաների գրանցման գրասենյակ (*Dahiliye Nezareti Emniyeti Umumiye Memurin Kalem Evrakı*)
- BOA.DH.EUM.VRK. Ներքին գործերի նախարարության ընդհանուր անվտանգության գրանցման մատյանների գրասենյակ (*Dahiliye Nezareti Emniyeti Umumiye Evrak Odası Kalemi Evrakı*)
- BOA.DH.KMS. Ներքին գործերի նախարարության մասնավոր քարտուղարության գրանցման գրասենյակ (*Dahiliye Nezareti Dahiliye Kalemi Mahsus Evrakı*)
- BOA.DH. ŞFR. Ներքին գործերի նախարարության գաղտնագրման գրասենյակ (*Dahiliye Nezareti Şifre Kalemi*)
- BOA.İ.MMS. Անձնակազմի և ծառայության գրանցամատյանների տնօրինություն (*Irada Meclisi Mahsus*)
- BOA.MF.MKT. Կրթության նախարարության հաղորդակցության գրասենյակ (*Maarif Nezareti Mektubi Kalemi*)
- BOA.ŞD. Պետական խորհրդի փաստաթղթեր (*Şura-yı Devlet Evrakı*)
- CUP Միություն և առաջադիմություն կոմիտե (*Committee of Union and Progress*), հետագայում՝ Միություն և առաջադիմություն կուսակցություն, անդամները՝ երիտթուրքեր

DE/PA-AA	Գերմանիայի արտգործնախարարության քաղաքական արխիվ (<i>Politisches Archiv des Auswärtigen Amts</i>)
IAMM	Ներքին գործերի նախարարության ցեղերի և գաղթականների վերաբնակեցման տնօրինություն (<i>Dahiliye Nezareti Iskan-ı sair ve Muhacir'in Müdüriyeti</i>)
SO	Teşkilatı Mahsusa (Հատուկ կազմակերպություն)
TV	<i>Takvimi Vekayi</i> («Իրադարձությունների օրացույց» - օսմանյան կառավարության պաշտոնաթերթ)

Օսմանյան կայսրության վարչական բաժանումների աստիճանակարգը և դրանց ղեկավարները

<i>Վարչական միավորի օսմաներեն անվանումը</i>	<i>Հայերեն համարժեքը</i>	<i>Կառավարչի պաշ- տոնը</i>
վիլայեթ	նահանգ	վալի, նահանգապետ
սանջակ, լիվա	գավառ	մութասարիֆ
մութասարիֆություն	գավառի կառավարչություն	մութասարիֆ
քազա	գավառակ	քայմաքամ
նահիյե	ավան	մյուդիր
քարյե	գյուղ	մուխթար

Բովանդակություն

	Նախաբան	17
	Ներածություն	55
Գլուխ 1	Նայիմ էֆենդու պատմությունը և նրա հուշերի իրական լինելու հարցը	63
Գլուխ 2	Նույնիսկ եթե հուշերն իրական են, կարո՞ղ են փաստաթղթերը կեղծ լինել	99
Գլուխ 3	Նայիմ էֆենդու հիշատակած մարդիկ ու իրադարձությունները, որոնց իսկությունը հաստատված է օսմանյան փաստաթղթերով	157
Հավելված 1	Բժիշկ Ավետիս Նաքքաշյանի նամակն Անտոնյանին	211
Հավելված 2	Արամ Անտոնյանի նամակը Մերի Թերզյանին	277
Հավելված 3	Հյուպատոս Վ. Ռոսլերի նամակը դոկտոր Լեփսիուսին	287
Հավելված 4	Հուշագիր՝ ուղարկված Սողոմոն Թեհլիրյանի փաստաբաններին	303
	Վերջաբան	315
	Ծանոթագրություններ	321
	Գրականության ցանկ	389
	Ինդեքս	399

Նախաբան

Փաստեր, ճշմարտություններ և ժխտում

Մի այսպիսի պատմություն կա: 1929 թ., մահից քիչ առաջ, Ֆրանսիայի վարչապետ Կլեմանսոն բանավիճել է Վեյմարյան Հանրապետության ներկայացուցչի հետ այն մասին, թե ով է մեղավոր Առաջին աշխարհամարտի բռնկման համար: Կլեմանսոյին հարցրել են. «Ըստ քեզ՝ ապագա պատմաբանների կարծիքն ինչպիսին կլինի այս խնդրահարույց ու հակասական հարցի շուրջ»: Նա պատասխանել է. «Չգիտեմ, բայց վստահ եմ, որ չեն ասի՝ Բելգիան է ներխուժել Գերմանիա»¹:

Փաստերի ու ճշմարտության միջև հարաբերությունը հասարակական գիտությունների ամենավիճելի հարցերից մեկն է: Որպես կանոն, փաստերը, կարծիքներն ու մեկնաբանությունները կարող են լինել տարբերակված, իրարից անջատ: «Ճշմարտությունը» պետք է հիմնված լինի հաստատված փաստերի վրա, որոնց շուրջ ընդհանուր համաձայնություն կա: Այսպիսով, ճշմարտությունը տարբերվում է կարծիքից ու մեկնաբանությունից: Ճշմարտությունը ժխտելը նույնն է, թե հաստատված փաստերը հերքելը: Համենայն

դեպս, մենք ուզում ենք հավատալ դրան: Այս իմաստով Հաննա Արենդտը՝ նշում է.

«Կարծիքից ու մեկնաբանությունից դուրս ընդհանրապես գոյություն ունեն փաստեր: Մի՞թե պատմաբանների ու պատմության փիլիսոփաների սերունդները չեն ապացուցել, որ անհնար է փաստերը հաստատել առանց մեկնաբանությունների: Դրանք նախ պետք է ընտրվեն իրադարձությունների քառսից, և սա արդեն կախված է ոչ թե փաստերից, այլ վերաբերմունքից ու որոշումից: Հետո՛ միայն այդ փաստերը պետք է հարմարեցվեն պատմությանը: Պատմությունն էլ կարող է շարադրվել միայն որոշակի տեսանկյունից և ոչ մի կապ չունենալ իրական անցքերի հետ: Ուրեմն կասկածից վեր է, որ պատմական գիտություններին հատուկ են բազում շփոթմունքներ: Դրանք, սակայն, չեն կարող հերքել իրողությունները, ջնջել փաստի, կարծիքի ու մեկնաբանության սահմանները կամ էլ պատմաբանին արդարացնել փաստերն իր ցանկությամբ շահարկելու հարցում»²:

Շարունակելով Արենդտի միտքը՝ կարելի է պնդել, որ յուրաքանչյուր սերունդ իրավունք ունի իր պատմությունը գրել, փաստերը սեփական տեսանկյունից *մեկնաբանել*, բայց փոխել՝ ոչ: Պետք է անկեղծորեն ջանալ տարբերակել այն, ինչը պնդում են, որ տեղի է ունեցել, և այն, ինչն *իրականում եղել է*: Որևէ մեկն իրավունք չունի խեղաթյուրել փաստական նյութը³:

² Hannah Arendt - Հաննա Արենդտ (1906-1975), հրեական ծագումով գերմանացի պատմաբան, փիլիսոփա, քաղաքագետ, տեսաբան, 20-րդ դարի քաղաքական փիլիսոփայության ամենակարևոր դեմքերից մեկը, տոտալիտարիզմի տեսության հիմնադիրը: Կարծում էր, թե նացիզմն ու ստալինիզմը պետության ամբողջատիրական, նոր և ժամանակակից ձևեր են, որոնք չպետք է շփոթել ժնշման ավանդական ձևերի հետ: (Ծանոթագրությունները՝ newmag-ի):

Այս առումով, զանգվածային կոտորածների ժխտումը սովորաբար համարվում է սուկ փաստերի հերքում, բայց դա ճիշտ չէ: Իրականում ժխտողականությունը ծնվում է այնտեղ, որտեղ հստակ չեն փաստերի և ճշմարտության սահմանները: Ժխտողականությունն ունի փաստերի ուրույն հաջորդականություն և սեփական ճշմարտություն: Արդյունքում, բանավեճը չի ընթանում ընդունված փաստերի խմբի, դրանից բխող ճշմարտությունն ընդունելու կամ ժխտելու շուրջ: Ընդհակառակը, բանավեճերը դառնում են փաստերի ու ճշմարտությունների *տարբեր* խմբերի միջև պայքար քողարկված դրդապատճառներով:

Այսպիսին է 1915-1918 թթ. Հայոց ցեղասպանության շուրջ բանավեճը: Այս Ցեղասպանությունը դարձել է ավելի քան մեկ միլիոն մարդու սպանության կամ մահվան պատճառ: Դրան հաջորդած մեկ դարի ընթացքում թուրքական կառավարությունները մեկը մյուսի հետևից հաջողության են հասել՝ կերտելով «պաշտոնական պատմության» սեփական տարբերակը և «պատանդ պահելով» պատմությունը՝ ի շահ սեփական փաստաթղթային ապացույցների ու ճշմարտությունների: Նրանք հաջողության են հասել գոնե այն հարցում, որ լայնորեն տարածել են սեփական «պատմական տեսակետը», ինչը տրամաբանորեն շատերին է հավանական թվում:

Առաջին աշխարհամարտի իրադարձությունների նկատմամբ թուրքական ժխտողականությունը հանրային քննարկման ասպարեզում կեղծ «ճշմարտության» մատուցման ամենահաջող օրինակներից է՝ լավ կազմակերպված, կանխամտածված ու համակարգված կեղծիքի տարածմամբ:

Նրանք, ովքեր ընդունում են «ամեն ոք կարող է ունենալ սե-

փական կարծիք, բայց ոչ՝ սեփական փաստեր»⁴ կարգախոսը, զարմանքով են հետևել նախորդ տասնամյակներում Հայոց ցեղասպանության վերաբերյալ հանրային ու պատմական քննարկումներին, երբ փաստերի վրա հիմնված ճշմարտությունները վարկաբեկվել են ու հավասարեցվել կարծիքի մակարդակի⁵: Այսպիսով, այս ռազմավարության կարևոր սյուներից մեկը ճշմարտությունը թաքցնելն ու այն լռության մատնելն է:

Այս գրքի նպատակը հստակեցնելն է Հայոց ցեղասպանության հարցի քննարկումները՝ փաստերի ու ճշմարտության հարաբերության տեսանկյունից: Այս ուսումնասիրությունն ապացուցում է, որ ճշմարտությունը թաքցնողները, մասնատողները և դրանցից շահողներն իրականում սխալվել են:

* * *

Մայքլ-Ռոլֆ Տրույոն* նշում է. «Պատմությունը գիտություն է դառնում չորս փուլերով՝ (1) փաստերի ձևավորում (*աղբյուրների հստակեցում*), (2) փաստերի հավաքում (*արխիվների կազմում*), (3) փաստերի վերականգնում (*պատումների շարադրում*) և (4) հետադարձ արժևորում (*ամբողջական պատմության ստեղծում*)»⁶: Սրանց մենք հավելում ենք նաև 5-րդը՝ առանցքային փաստաթղթերի ոչնչացման կամ հերքման փուլը:

Ամեն ցեղասպանություն իր յուրահատկությունն ունի: Հայոց ցեղասպանությունն առանձնանում է դրան առնչվող ճշմարտությունները թաքցնելու և պատմականությունը հերքելու

* Michel-Rolph Trouillot - Մայքլ-Ռոլֆ Տրույոն (1949-1985), մարդաբան: Իր «Լռեցնելով անցյալը» գրքում ներկայացնում է, թե ինչպես են իշխանությունները գործում պատմագրությունը ստեղծելու ժամանակ:

երկարատև ջանքերով: Մեկդարյա այս ժխտողականության առանձնահատկություններից է նաև այն, որ ժխտումը հատուկ է եղել Ցեղասպանությանը դրա հենց սկզբից: Այլ կերպ ասած, Հայոց ցեղասպանության հերքումը սկսվել է ոչ թե կոտորածների նախօրեին, այլ Ցեղասպանության ծրագրի անբաժան մասն է կազմել: Սեփական հայրենիքից հայերի արտաքսումը դեպի Սիրիայի անապատներ, նրանց ոչնչացումը կան ճանապարհին, կան վերջնական հանգրվաններում իրականացվել է հայերին վերաբնակեցնելու որոշման քողի տակ: Ամբողջ գործընթացը, ըստ էության, կազմակերպվել ու իրականացվել է՝ ջանալով վերաբնակեցումը ներկայացնել որպես իրողություն:

Չխորանալով մանրուքների մեջ նշենք, որ ամենակարևոր հարցը հենց այս քաղաքականության հիմքում է: Կարելի է ասել, որ այդ շրջանում Օսմանյան պետության թուլությունն այսօրինակ քաղաքականություն վարելու հետևանք էր: Օսմանյան իշխանությունները ստիպված էին տեղահանության ու բնաջնջման ամբողջ գործընթացը կազմակերպել Գերմանիայի ու Ամերիկայի Միացյալ Նահանգների վերահսկողության տակ: Պատճառն այն էր, որ օսմանցիները Գերմանիայից կախված էին ռազմական ու ֆինանսական առումով, նաև ցանկանում էին ամերիկացիներին պահել չեզոք երկրի կարգավիճակում: Ասել է թե՛ նրանք չէին կարող արհամարհել այս երկու տերություններին ու հարկադրված էին արդարացնել իրենց գործողությունները: Ամերիկացիների ու գերմանացիների ճնշումները մեղմելու համար օսմանցիները դիմում էին փաստերի ժխտման ու խաբեության: Օսմանյան հասարակությունում բացակայում էր ցեղասպան քաղաքականությանը գաղափարապես աջակցող զանգվածային

շարժումը, ինչը կարելի է համարել այս քաղաքականության գործադրման մյուս պատճառը⁷: Օսմանյան պաշտոնյաներին բնորոշ կաշառակերությունը, որը տարածված էր հատկապես Սիրիայում, ասվածի ապացույցներից է (սա նաև մեր թեմաներից մեկն է): Հավելենք նաև, որ կառավարությունը բնակչությանը հրահրում էր թալանել անպաշտպան հայերին՝ ապահովելով հասարակության աջակցությունը Ցեղասպանության քաղաքականությանը:

Ամբողջ տեղահանությունն ու բնաջնջումն օրինական վերաբնակեցում ներկայացնող պաշտոնական փաստաթղթերը կազմվել են տեղահանության առաջին օրերից: Այլ կերպ ասած, Տրույոյի նկարագրած «փաստերի (աղբյուրների) ստեղծման պահը» եղել է առնվազն 1915 թ. ապրիլի 25-ը, որը նաև Հայոց ցեղասպանության սկզբի խորհրդանշական օրն է*:

Այդ օրը Ստամբուլում ձերբակալվել են մոտ 200 մտավորականներ, համայնքի առաջնորդներ: Նրանք տեղափոխվել են Անկարայի մոտ գտնվող Այաշ և Չանքըրը բնակավայրեր՝ բանտարկության կամ հարկադիր բնակության: Հաջորդ ամիսներին այս բնակավայրեր ավելի շատ մտավորականներ են ուղարկվել: Նրանց մեծ մասը վերստին տեղահանվել է դեպի գաղթի վերջնական հանգրվաններ ու ճանապարհին սպանվել: Օսմանյան արխիվները լի են փաստաթղթերով առ այն, որ այս մարդիկ մահացել են ինֆարկտից, բնական այլ պատճառներով, փախել կամ ինչ-որ պահի ազատ են արձակվել: Օսմանյան արխիվների երկարամյա գլխավոր քարտուղար Յուսուֆ Սարընայը, իր հոդվածում օգտագործելով

* Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրն իրականում ապրիլի 24-ն է, սակայն մենք թարգմանել ենք այնպես, ինչպես գրել է հեղինակը:

այս ուսումնասիրությանն առնչվող փաստաթղթերը, գրում է, թե Չանքըրըում պահվող 155 մտավորականներից միայն 29-ն են պահվել բանտում, 35-ն արդարացվել են ու վերադարձել Ստամբուլ, 31-ին կառավարությունը ներել է և թույլ տվել հաստատվել ցանկացած քաղաքում, 57-ին քշել է Դեյր էլ Զոր, երեք օտարերկրացիների վտարել երկրից: Այսինքն՝ հողվածագիրը պնդում է, որ նշված մտավորականներից ոչ ոք չի սպանվել⁸:

Փաստերի ստեղծման ու պատումի ձևավորման այս գործընթացը ցույց տալու համար երեք օրինակ բերենք: Ականավոր հայ պատգամավոր Գրիգոր Զոհրապը ձերբակալվել է 1915 թ. հունիսի 2-ին Ստամբուլում⁹: Նրան ռազմական դատարանում դատելու պատրվակով ուղարկել են Հարավարևելյան Անատոլիայի Դիարբեքիր քաղաք, բայց ճանապարհին հուլիսի 19-ին Ուրֆայի մոտ քարերով սպանել են¹⁰: Այդ սպանության ընթացքում արդեն պատրաստվում էին պաշտոնական փաստաթղթեր, որոնք հավաստում էին, որ նա մահացել է ինֆարկտից: 1915 թ. հուլիսի 20-ին, Ուրֆայի քաղաքապետարանի բժշկի ստորագրությունը կրող զեկույցի համաձայն, Զոհրապն Ուրֆայում եղած ժամանակ կրծքավանդակի ցավեր է ունեցել և բուժում ստացել: Հետո Զոհրապն իբր ուղարկվել է Դիարբեքիր, սակայն ճանապարհին մահացել է: Բժիշկն այցելել է դեպքի վայր ու հաստատել մահվան պատճառը՝ սրտի կանգ¹¹:

Այս միջադեպի հետ կապված կառավարության ևս մեկ տեղեկանք կա հոգևորական Քյուրքչյու Վանիսի որդի, Ուրֆայի հայկական եկեղեցու հոգևոր դասի անդամ Հայրապետի վկայությամբ: Զեկույցում հոգևորականը պնդում է, որ Զոհրապը «մահացել է սրտի հիվանդության» պատճառով ու

թաղվել «իր կրոնական ավանդույթներով»: Վերջում կա նշում, որը հաստատում է «Ուրֆայի հայկական եկեղեցու հոգևորական, Վանիսի որդի Հայրապետի անձնական ստորագրությունը»: Ստորագրությանը կից դրված է նաև Օսմանյան իշխանությունների կնիքը¹²: Կա նաև երրորդ պաշտոնական փաստաթուղթը, որտեղ նշված է, որ Զոհրապը ոչ թե սպանվել, այլ մահացել է միջադեպի հետևանքով: 1915 թ. հոկտեմբերի 17-ին Ներքին գործերի նախարարությունը հեռագրով Հալեպ է ուղարկել համար 516 փաստաթուղթն առ այն, որ Զոհրապը դժբախտ պատահարի զոհ է դարձել ճանապարհին¹³:

Ինչպես տեսնում եք, Զոհրապի մահվան պաշտոնական «փաստերն ու ճշմարտությունը» վկայում են, որ նա մահացել է ինֆարկտից, ինչի մասին կա բավարար փաստաթղթային հիմք: Հետագայում, սակայն, Զոհրապի մահվան հերքումը չի օգտագործվել որպես ժխտողական քաղաքականության մաս: Պատճառն այն է, որ Զոհրապին սպանողները՝ երիտթուրքական Հատուկ կազմակերպության անդամներ Չերքեզ Ահմեթն ու իր հանցակիցները, ձերբակալվել են, դատապարտվել մահվան ու մահապատժի ենթարկվել: Երիտթուրքերի Միությունն և առաջադիմություն կուսակցության իշխող եռյակի անդամ Զեմալ փաշայի օգնականը՝ Ալի Ֆուաթ էրդենը, առանցքային դեր է կատարել մարդասպաններին կախաղան բարձրացնելու գործում և հետագայում բացատրել է կուսակցության վերաբերմունքը: Նա մասնավորապես նշել է.

Հատուկ կազմակերպությունը (Teşkilât-ı Mahsusa) Օսմանյան կայսրությունում գործող գաղտնի կազմակերպության անվանումն է: Այն գործել է Ներքին գործերի նախարարության հովանու ներքո Բեհաեդդին Շաքիրի գլխավորությամբ: Կազմակերպությունը զբաղվել է բանտերից հանցագործների հավաքագրմամբ, որոնց օգտագործել է հայկական ջարդերում:

«Միջոցներն անհրաժեշտ էին «գտումներ» իրականացնելու «կեղտոտ գործի» համար, երբ դրանց կարիքը կար, իսկ օգտագործվելուց հետո պիտի դեն նետվեին, ինչպես զուգարանի թուղթը»¹⁴:

Ահմեթն ու իր գործընկերները հավանաբար օգտագործվել էին նաև ուրիշ հայ մտավորականների սպանություններում, ուստի և վտանգ էին ներկայացնում Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարության համար:

Այս միջադեպի վերաբերյալ համապատասխան տեղեկությունն ի հայտ է եկել ոչ միայն ժամանակակիցների հուշերում, այլև Օսմանյան խորհրդարանի՝ 1916 թ. նոյեմբերի արձանագրություններում¹⁵: 1916 թ. նոյեմբերի 12-ին խորհրդարանում բարձրացվել է Զոհրապի ու Նրա հետ սպանված պատգամավոր Վարդգես Սերենգյուլյանի հարցը: 16 օր անց, նոյեմբերի 28-ին, Մեծ վեզիր Սայիթ Հալիմ փաշան պատասխանել է հարցին.

«Զինվորական դատարանի նիստին որպես մեղադրյալ ուղեկցվելու ընթացքում, Դիարբեքի ճանապարհին Էրզրումի պատգամավոր Վարդգես Սերենգյուլյանին ու Ստամբուլի պատգամավոր Գրիգոր Զոհրապին սպանել է Չերքեզ Ահմեթի ավազակախումբը: Մարդասպանները դատվել ու մահապատժի են ենթարկվել Դիարբեքիում»¹⁶:

Մեր բերած երկրորդ օրինակն առնչվում է Դաշնակցություն կուսակցության ղեկավարներից մեկին՝ Ակնունուն (Խաչատուր Մալումյանին)¹⁷: Նրան 1915 թ. ապրիլի 24-ին ձերբակալել ու տարել են Կենտրոնական Անատոլիա, Անկարայի մոտ գտնվող Այաշի բանտ: Հունիսի 2-ին Ակնունուն 5 ընկերների հետ ուղարկել են Դիարբեքի ռազմական դատարանում

դատվելու¹⁸: Խուճբը Հալեպ է հասել նախքան Գրիգոր Զոհրապը և 1915 թ. հունիսի 24-ի հրահանգով ուղարկվել է Դիարբեքիր¹⁹: Ամենայն հավանականությամբ նրանց, ինչպես և Զոհրապին, սպանել են նույն անձինք մի քանի օր ավելի շուտ, հուլիսի սկզբին²⁰: Այնուամենայնիվ, մեր ունեցած որոշ օսմանյան փաստաթղթեր նշում են, որ Ակնունին ու ընկերները չեն սպանվել, այլ Դիարբեքիր չհասած փախել են ու անցել Ռուսաստան: Արտգործնախարար Հալիլ Մենթեշեն 1916 թ. հուլիսի 19-ին Թալեաթ փաշային ուղղված նորում նշում է.

«Կասկած չկա, որ Դիարբեքիրի ռազմական դատարանի ճանապարհին» Ակնունին ու իր ընկերները «խաբել են պահապաններին ու փախել Ռուսաստան»²¹:

Վերջին օրինակը «Սաքահ» թերթի գլխավոր խմբագիր Տիրան Քելեկյանինն է: Երիտթուրքերի հետ իր մտերմությամբ հայտնի Քելեկյանը նույնպես ձերբակալվել էր 1915 թ. ապրիլի 24-ին: Նրան ազատ էին արձակել մայիսի 8-ին՝ պայմանով, որ ընտանիքի հետ իր հայեցողությամբ կընտրի բնակության մի վայր, որտեղ հայեր չկան, և չի վերադառնա Ստամբուլ: Սակայն Քելեկյանը մնացել է Չանքըրըում, ուր ավելի վաղ նրան արքայազն էին²²: Հուլիսի 18-ին նա պաշտոնական խնդրագիր է ուղարկել՝ հայցելով Ստամբուլ վերադառնալու թույլտվություն: Տասնմեկ օր անց ստացված պաշտոնական պատասխանը կրկնում էր՝ նա կարող էր բնակվել ցանկացած տեղ՝ Ստամբուլ չվերադառնալու պայմանով²³: Տիրան Քելեկյանին Զոհրապի ու Ակնունու նման, ի վերջո, ուղարկել են Դիարբեքիր դատաքննության պատրվակով: 1915 թ. նոյեմբերի 2-ին զինված ավազակախմբերը նրան սպանել են

Դիարբեքիի ճանապարհին²⁴: Յուսուֆ Սարընայի՝ մեր հիշատակած հողվածում նշվում է, որ Տիրան Քելեկյանը «ներում է ստացել Ներքին գործերի նախարարության 1915 թ. օգոստոսի 4-ի հրամանով և պետք է մեկնի Իզմիր»²⁵:

Օսմանյան արխիվները, Տրույոյի բնորոշմամբ, փաստերի հավաքման (արխիվների ստեղծման) օրինակ են: Ձերբակալված հայ մտավորականությանը վերաբերող վերոնշյալ փաստաթղթերից բացի՝ դրանք լի են կառավարության հրամաններով: Այդ հրամանները տեղահանություններն ու կոտորածները ներկայացնում են որպես բնակչության բնականոն ու օրինական տեղափոխության ջանքեր: Վերոնշյալի կարևորագույն օրինակներից են 1915 թ. մայիսի 30-ի կառավարության որոշումը և 1915 թ. հունիսի 10-ին հրապարակված կանոնակարգը՝ 44 հողվածներով: Ըստ այս կանոնակարգի՝ տեղահանության ենթարկվող հայերի գույքն ու ունեցվածքը պետք է գրանցվեին, և նոր բնակավայրում մարդիկ պետք է համարժեք փոխհատուցում ստանային: Ըստ մայիսյան որոշման.

«Հայերը նոր բնակավայրում պետք է իրենց նախկին ֆինանսական ու տնտեսական կարողությանը համարժեք ունեցվածք ու հող ստանան: Պետությունը տներ է կառուցելու կարիքավորների համար, սերմեր է բաժանելու հողագործներին, գործիքներ ու միջոցներ է տրամադրելու դրանց կարիքն ունեցող մասնագետներին: Այն իրերն ու ունեցվածքը, որոնք անվսաս կմնան հայերի թողած վայրերում, նույն տեսքով կվերադարձվեն տերերին կամ կփոխհատուցվեն համարժեքորեն»²⁶:

Ավելի ուշ 1915 թ. սեպտեմբերի 26-ի օրենքով ու նոյեմբերի 8-ի կանոնակարգով վերոնշյալ դրույթները լրամշակվել են:

Դրանք հիմք են դրել հայերի ունեցվածքից ստացված եկամուտները վերաբնակեցման վայրերում իրենց տերերին փոխանցելու գործընթացին²⁷: Եվս մեկ կարևոր փաստաթուղթ է 1915 թ. հոկտեմբերի 7-ին հրապարակված կանոնակարգը կամ «Թալիմաթնամեն»: Այն բաղկացած է 55 առանձին հոդվածներից, որոնք կոչված են Սիրիա հասած ու Հալեպի մերձակայքում հավաքված մեծ թվով հայերի կանոնավոր տեղաբաշխումը կարգավորելուն: Ըստ կանոնակարգի՝ նոր շրջաններ ուղարկվող հայերի անունները պետք է գրանցվեին տեղահանության գրանցամատյաններում: Տեղահանվողները բաժանվելու էին հազար հոգանոց խմբերի, ամեն խմբին տրամադրվելու էր 150 ավանակ, ջորի և ուղտ: Նրանց հատկացվելու էր առնվազն չորս օրվա սննդի ու ջրի պաշար, ճանապարհի երկայնքով տեղադրվելու էին կայանատեղիներ, կառուցվելու էին հացի փռեր: Ավելին, ճանապարհին գործելու էին հանգստի համար նախատեսված վայրեր՝ ապահովված բժիշկներով ու սանիտարներով: Մարդիկ, որոնք անկարող կլինեին շարունակել ճանապարհը, բուժօգնության հնարավորություն կունենային: Ի վերջո, տեղահանված հայերը վերաբնակեցվելու էին բերրի հողերում, և յուրաքանչյուր ընտանիք ստանալու էր գոյատևման համար բավարար հող²⁸:

Այս փաստաթղթերը վկայում են, որ Ցեղասպանության ժամանակ կերտվել է զուգահեռ «ճշմարտություն»: Այդ «ճշմարտությունը» հիմնվում է կեղծ փաստերի վրա, ընդ որում, դրանք արձանագրված են բնօրինակ փաստաթղթերում: Ստեղծվել է այլընտրանքային տեսակետ, որը տանում է դեպի պատմական բանավեճ ու անգամ պայքար՝ պարզելու համար, թե ո՞ւմ ճշմարտությունն է ավելի ճշմարտացի: Ցեղաս-

պանության ընթացքում ստեղծված այս «փաստերը» ճշմարտությունը վերածել են սոսկ բազում «կարծիքներից մեկի»:

Չնայած հետքերը մաքրելու բոլոր ջանքերին՝ զանգվածային սպանող թողնում է ապացույցներ: Սա վերաբերում է նաև Հայոց ցեղասպանությանը: Կան բավականաչափ նյութեր՝ ցույց տալու համար Օսմանաթուրքական կառավարության ցեղասպան մտադրությունը: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ պատմությունը լռեցնելն ու «պատանդ պահելը» չեն սահմանափակվել միայն փաստերի կեղծմամբ: Անհրաժեշտ էր նաև ոչնչացնել գոյություն ունեցող մեղադրական նյութերը կամ անվավեր հռչակել դրանք: Սա Տրույոյի ցուցակին մեր ավելացրած 5-րդ կետն է՝ «առանցքային փաստաթղթերի ոչնչացում և/կամ դրանց կեղծ լինելու ապացուցում»: Գաղտնիք չէ, որ թուրքական ժխտողականությունը վաղուց աչքի է ընկնում «իրական ճշմարտության» նյութական հիմքերը ոչնչացնելով:

Այժմ մենք ունենք հանգամանալից ապացույցներ, որ Հայոց ցեղասպանությանն առնչվող օսմանյան առանցքային փաստաթղթերը կանխամտածված կերպով ոչնչացվել են: Սրանց մեջ ամենակարևորը 1919 թ. Ստամբուլում տեղի ունեցած հետպատերազմյան գլխավոր դատավարության ընթացքում երիտթուրք ղեկավարների դեմ մեղադրանքի մեջ եղած տեղեկատվությունն է: Մեղադրանքում դատախազությունը պնդել է, որ երիտթուրք կառավարությունը, պարտվելով Առաջին աշխարհամարտում, «մաքրել» է սեփական արխիվները: Ոչնչացված փաստաթղթերում զգալի թիվ են կազմել Ներքին գործերի նախարարության, Միություն և առաջադիմություն կուսակցության, Հատուկ կազմակերպության փաստաթղթերը, որոնք առանցքային դերակատարում են ունեցել հայերին ոչնչացնելու

գործում: Բացի դրանից՝ բոլոր շրջանային վարչական կենտրոններին շրջաբերական է ուղարկվել՝ հայերին առնչվող բոլոր կարգադրություններն այրելու հանձնարարականով²⁹:

Անհետ կորած փաստաթղթերի մեջ կարևորագույնը Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարների 1919-1922 թթ. դատավարությանն առնչվող թղթապանակներն ու հարակից փաստաթղթերն են: Դրանց մեջ են 1918 թ. նոյեմբերին ստեղծված հետաքննության մարմնի փաստաթղթերը, ռազմական դատարանների հետաքննության թղթաբանությունը, 63 գործերի նյութերը, դատական նիստերի արձանագրությունները, ականատեսների ու ամբաստանյալների վկայությունները, տասնյակ անհատների ու իրադարձությունների վերաբերյալ կատարած այն հետաքննությունները, որոնք տեղ չեն գտել դատական գործընթացում: Այս ամենը կորել է անհետ, առանց գտնվելու վայրի ու ճակատագրի մասին որևէ նշանի³⁰:

Մինչև գործերի հարուցումը կատարած հետաքննությունների, նաև դատավարությունների ընթացքում կազմած հարյուրավոր պաշտոնական փաստաթղթեր են եղել այն մասին, թե ինչպես է կազմակերպվել Ցեղասպանությունը: Դրանց մի մասը հեռագրով տրված հրահանգներ էին: Օրինակ՝ միայն Անկարայի շրջանից 42 հեռագիր է ուղարկվել: Նաև եղել են օսմանյան բարձրաստիճան ռազմական ու քաղաքացիական պաշտոնյաների տված բանավոր ու գրավոր վկայություններ: Ըստ դրանց՝ կոտորածները եղել են նախապես ծրագրված, համակարգված և իրագործվել են Միություն և առաջադիմություն կուսակցության հսկողությամբ: Այսօր այդ լայնածավալ նյութերը լիովին անհետացել են: Այս կորստի նշանակությունն

ու չափն ավելի լավ գիտակցելու համար ճիշտ կլինի մի պահ պատկերացնել, թե ինչպիսին կլինեն Նյուրնբերգյան դատավարությունն առանց գոյություն ունեցող ապացույցների:

Բացի Օսմանյան պաշտոնաթերթում (*Takvim-i Vekayi*) տեղ գտած 13 մեղադրական ակտերից ու վերջնական դատավճիռներից՝ մնացել են միայն այս իրադարձությունների դատավարությունների մասին օրաթերթերում տպված հոդվածները: Այսպիսով, փաստաթղթային ապացույցները թաքցնելու և վերացնելու հետևանքով Ցեղասպանությունը, որ փաստաթղթերով հիմնավորված պատմական ճշմարտություն է, վերածվել է սառույցի բարակ շերտի նման փխրուն հիպոթեզի:

Թաքցնելուց և ոչնչացնելուց հետո մնացել էր ևս մեկ անելիք՝ ապացուցել, որ մեղադրական ամեն փաստաթուղթ կեղծ է կամ բնօրինակը չէ: Սրա լավագույն ապացույցը Թալեաթ փաշայի հեռագրերն են, որոնք կարգադրում են ոչնչացնել հայերին: Հենց դրանք են այս գրքի թեման: 1918 թ. նոյեմբերին հեռագրերի բնօրինակները և/կամ նրանց ձեռագիր կրկնօրինակները Հալեպի Տեղահանության տնօրինությունում աշխատող օսմանյան պաշտոնյա Նայիմ էֆենդին վաճառել է լրագրող ու մտավորական Արամ Անտոնյանին³¹: Նայիմը ոչ միայն իր ձեռքով ստեղծել է 52 ձեռագրի կրկնօրինակ, այլև վաճառել է մոտ 24 բնօրինակ՝ փոքր նշումներով լրացնելով դրանք իր սեփական հիշողություններով: Այս պատճառով էլ Արամ Անտոնյանը հետագայում դրանք կոչել է «Նայիմ բեյի հուշեր»³²:

Անտոնյանը հետագայում ի մի է բերել այս արժեքավոր հեռագրերը, որոնք ապացուցում էին, որ օսմանյան հայերը ոչնչացվել են կառավարության ուղղակի հրահանգներով: Հեռագրերը Նայիմի նշումների հետ Անտոնյանը հրատարակել

է 1920-1921 թթ. երեք տարբեր լեզուներով³³: 1983 թ. Թուրքական պատմագիտական ընկերությունը հրատարակել է Շիւասի Օրելի և Սյուրեյա Յուլջայի* հեղինակած *Ermenilerce Talat Paşa'ya Atfedilen Telgrafların Gerçek Yüzü* անվամբ աշխատությունը: Այն 1986 թ. թարգմանվել է անգլերեն՝ *The Talat Pasha Telegrams, Historical Fact or Armenian Fiction?*, այսինքն՝ «Թալեաթ փաշայի հեռագրերը. պատմական փաստ, թե՞ հայկական հորինվածք» վերնագրով³⁴: Գիրքը պնդում է, որ Անտոնյանի հրատարակած հիշողություններն ու հեռագրերը կեղծիք են, հեռագրերը ստեղծել են հայերը, ամենայն հավանականությամբ հենց Անտոնյանը:

Օրելի և Յուլջայի աշխատանքի հրատարակումից հետո Նայիմի հուշերի և դրանց կցված հեռագրերի կեղծ լինելու տեսակետը լայն տարածում է գտել: Հեռագրերն անգամ կոչվել են «Թալեաթ փաշային վերագրվող կեղծ հեռագրեր»: Օրելի և Յուլջայի աշխատանքը, այսպիսով, կարծես թե փակել է հարցի քննարկումները: Հեղինակավոր գիտնականները հակված են եղել այդ հարցից խուսափել մինչև մեր օրերը: Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է պնդել, որ այս գիրքը նոր էջ է բացում վերոնշյալ պատմության մեջ:

* * *

Այժմ անդրադառնանք անցյալը լռեցնելու և պատմությունը պատանդ պահելու մասին Տրույոյի 3-րդ ու 4-րդ կետերին:

* Հայոց ցեղասպանության ժխտման նպատակով 1931-ին Թուրքիայի կառավարությանը կից ստեղծված Թուրքական պատմական ասոցիացիային անդամակցած պատմաբաններ:

Փաստերի վերականգնման և հետադարձ արժևորման այս փուլերը վերապահված են պատմությանն ու պատմաբաններին: Չնայած բազում պատմաբաններ հայտարարում են, որ սկզբունքային և օբյեկտիվ պատմագիտության հետևորդներ են, միևնույն է, նրանք ևս հավատում են «փաստերի վրա հիմնված» այս պատումին: Այս պատմաբանները բանավեճի են հրավիրում Հայոց ցեղասպանությունն ընդունողներին՝ հիմքում դնելով եղած փաստաթղթերը: Իսկ նման բանավեճերը հաճախ ավարտվում են փաստաթղթերի բնօրինակները ներկայացնելու հորդորներով: Հեղինակավոր իսլամագետ ու արևելագետ Բեռնարդ Լյուիսը* ժամանակին այս թեզի ջատագովն էր: Նա նշում էր. «Չկա որևէ ապացույց, թե գոյություն է ունեցել հայ ժողովրդին բնաջնջելու օսմանյան կառավարության ինչ-որ որոշում կամ ծրագիր»³⁵:

Գյունտեր Լևին** ևս այս հեղինակների մեջ է³⁶: 2004 թ. լույս ընծայված նրա գրքի հիմնական գաղափարն այն է, որ 1915-1916 թթ. կոտորածների հարցում Թուրքիայի կառավարության մեղավորությունն ապացուցող ոչ մի բնօրինակ փաստաթուղթ չկա, ուստի ցեղասպանության ապացույց գոյություն չունի³⁷: Ըստ հեղինակի՝ «Օսմանյան պաշտոնաթերթում» կամ ժամանակի օրաթերթերում հրապարակված՝ երիտթուրքերի հետպատերազմյան դատավարության փաստաթղթերն արժանահավատ չեն: Լևին նշում է.

* Bernard Lewis - Բեռնարդ Լյուիս (1916-2018), բրիտանացի պատմաբան, արևելագետ: Հետազոտում էր Արևմուտքի և իսլամի առնչությունները:

** Guenter Lewy - Գյունտեր Լևի (ծնվ. 1923), ամերիկացի քաղաքագետ: «Հայերի կոտորածն Օսմանյան կայսրությունում. վիճելի ցեղասպանություն» գրքում պնդում է, որ կատարվածը ճեղասպանություն չէր: Ապացույցներ չկան, որ այն կազմակերպել է պետությունը:

«Փաստաթղթերի բնօրինակների կորստի պատճառով 1919-1922 թթ. դատավարությունների եզրակացությունները մնում են առանց հիմնավոր ապացույցի, իսկ պատճենները չեն կարող փոխարինել բնօրինակին»³⁸:

Հեղինակն այնքան հեռու է գնացել, որ անգամ պնդում է՝ նշված փաստաթղթերը գոյություն չեն ունեցել, և դրանք անվանում է «ենթադրյալ»³⁹:

Անտոնյանին տված Նայիմի հեռագրերը Լևին համարում է անվավեր ու անվստահելի: Կրկնելով Օրելի և Յուջայի կարծիքը, թե փաստաթղթերը պարզապես կեղծիքներ են, Լևին պնդում է.

«Օրելի ու Յուջայի մանրակրկիտ վերլուծությունն այս փաստաթղթերի իրական լինելու մասին այնքան հարցեր է առաջացրել, որ գիտական տեսանկյունից դրանք այլևս ընդունելի չեն»⁴⁰:

Այս «կոալիցիան» իրոք արտառոց է: Մի կողմում Թուրքիայի իրար հաջորդող կառավարություններն են, որոնք հետևողականորեն ոչնչացրել են 1915 թ. իրադարձությունները բնաջնջման համալիր ծրագիր լինելու ապացույցները: Դրանց մեջ են երիտթուրքերի հետպատերազմյան դատավարության բոլոր գործերը, Թալեաթ փաշայի բոլոր հեռագրերը, այլ մեղադրանք պարունակող փաստաթղթեր, այդ վկայությունների ճակատագրի ցանկացած հետք: Մյուս կողմում այն պատմաբաններն են, որոնք պնդում են, որ վրստահելի փաստաթղթային աղբյուրների բացակայության պայմաններում չի կարելի պնդել հայերի դեմ իրագործված Ցեղասպանության մասին: Այս տարօրինակ «կոալիցիայի» լույսի տակ արդեն զարմանալի չէ, որ 2005 թ. նոյեմբերի 22-ին Թուրքիայի խորհրդարանի խոսնակ Բյուլենթ Առընչը Լևին

պարզևատրեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի մեղալով⁴¹:

Այս ժխտողական քաղաքականության պատին դրած վերջին քարը Ցեղասպանությունից փրկվածների վկայությունների մերժումն է՝ ոչ հուսալի աղբյուր լինելու պատճառաբանությամբ: Ի հեճուկս այս ամենի, օսմանյան պաշտոնական փաստաթղթերը համարվում են միակ լիարժեք վստահելի աղբյուրն ու կարևորության դասակարգմամբ առաջին տեղում են: Պատերազմի տարիներին օսմանյան վայրագությունները նկարագրող բրիտանական տարեգիրքը՝ Առնոլդ Թոյնբիի* ու Ջեյմս Բրայսի** «Կապույտ գիրքը»***, մերժվում է որպես պատերազմի քարոզչություն, քանի որ տեղեկությունների մեծ մասը ձեռք է բերվել հայերից⁴²: Այսինքն՝ Մարկ Նշանյանի բնորոշմամբ. «Հայերից պահանջվում է ապացուցել իրենց մահը»⁴³: Ասել է, թե Ցեղասպանության իրադարձություններն ի սկզբանե համարվել են ոչ իրական: Այսպիսով, Ցեղասպանությունը, որպես պատմական փաստ, կասկածի տակ է դրվել կամ իջեցվել մի կարծիքի մակարդակի, որը չունի ապացույցներ:

Իրականում անհրաժեշտ է եղեռնից փրկվածների հուշերին

* Arnold Toynbee- Առնոլդ Թոյնբի (1889-1975), բրիտանացի պատմաբան, «Պատմության հետազոտություն» 12-հատորյակի հեղինակը: Փարիզի կոնֆերանսին մասնակցել է որպես միջազգային հարաբերությունների փորձագետ: Հայաստանի անկախության կողմնակիցն էր:

** James Bryce - Ջեյմս Բրայս (1838-1922), բրիտանացի պետական, քաղաքական գործիչ, դիվանագետ, լիբերալ մտածող: Հայաստանում առաջին անգամ եղել է 1876-ին: Սերտ կապեր ուներ Պողոս Նուբար փաշայի և Արշակ Չոպանյանի հետ:

*** Blue Book - «Կապույտ գիրք» (1916), այլ կերպ կոչվում է «Հայերի վիճակը Օսմանյան կայսրությունում 1915-1916 թթ.»։ Հայոց ցեղասպանության ուսումնասիրության կարևորագույն սկզբնաղբյուր է, հայերի՝ տեղահանության և կոտորածի մասին 158 փաստաթղթերի ժողովածու: Ներառում է Օսմանյան կայսրությունում աշխատած արտասահմանցիների տեղեկագրեր ու զեկուցագրեր, ականատեսների հուշագրություններ, դիմումներ:

վերաբերվել որպես կարևոր օսմանյան փաստաթղթերի ու հարց բարձրացնել, թե *ինչ է պատահել 1919-1922 թթ. դատավարությունների ընթացքում* ի հայտ եկած փաստաթղթերի հետ: Եթե կառավարությունը թաքցրել կամ ոչնչացրել է, ապա միայն այն պատճառով, որ չի ցանկացել հասանելի դարձնել դրանց բովանդակությունը: Սա արդեն վկայում է, որ փաստաթղթերը Թուրքիայի իշխանությունների համար մեղադրական բնույթ ունեն: Դատավարության փաստաթղթերի ու գործերի պարտակումը կամ կանխամտածված ոչնչացումը բավական են, որ պատմաբանները լուրջ կասկածներ ունենան, եթե, իհարկե, նրանք պահանջում են լուրջ, վստահելի ապացույցներ և պնդում, որ ուղիղ մեղադրական փաստաթղթերի բացակայությունը խոչընդոտում է տեղի ունեցածը պարզելուն:

Այս իրավիճակում մենք՝ պատմաբաններս, պետք է ի հայտ բերենք կորած կամ թաքցրած փաստաթղթերից հայթայթած տեղեկությունը և ապացուցենք, որ այն իրական է՝ ի հեճուկս ժխտողականների: Ժամանակն է, որ նրանց ընտրած փաստերով և ճշմարտության նրանց տարբերակի վրա կառուցված պատումը հերքվի: Այս աշխատանքի նպատակը հենց դա է. վերհանել լռության մատնված տեղեկությունները, ցույց տալ, որ «կարծիքի» ու «մեկնաբանության» թնջուկից հնարավոր է դուրս բերել 1915 թ. իրադարձությունների ապացույցների փաստեր:

* * *

Այս հարցում մեզ մեծապես օգնել է հայ կաթոլիկ հոգևորական Գրիգոր Գերգերյանը: Մեր աշխատանքի հիմքում եղած նյութերի մեծ մասը գտնվել է նրա արխիվում: Մասնավոր այս արխիվը

պահպանել է հոգևորականի զարմիկ Էդմոն Գերգերյանը՝ 2015 թ. մեզ թույլ տալով օգտվել արխիվից: Նախքան արխիվը ներկայացնելն անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Հայր Գրիգոր Գերգերյանին ու նրա արխիվի պատմությանը:

Գրիգոր Գերգերյանն ու իր արխիվը

Գրիգոր Գերգերյանը (մայիսի 12, 1911 թ.-մայիսի 7, 1988 թ.) ծնվել է Սեբաստիայի (Սվազի) նահանգի Գյուրյուն շրջանում: Նա եղել է տան 16 զավակներից ամենափոքրը: Ընտանիքի 8 որդիներից և 8 դուստրերից տեղահանությունից փրկվել են միայն վեցը⁴⁴: 10 երեխաները ծնողների հետ սպանվել են: Գրիգորն ականատես է եղել ծնողների սպանությանը: 1916 թ. նա ավագ եղբայրներից մեկի հետ մի կերպ հասել է Բեյրութ, որտեղ էլ որբանոցում անցկացրել է մանկությունը: 1925 թ. Գրիգորն ընդունվել է Զմառի Կաթոլիկ վանքի դպրոց, 1930 թ. ավարտել Բեյրութի Սուրբ Հովսեփի համալսարանը: Այնուհետև մեկնել է Հռոմի Լևոնյան ակադեմիա՝ նպատակ ունենալով շարունակել աստվածաբանական կրթությունը և դառնալ վանական: 1937 թ. Գերգերյանն իրագործել է կաթոլիկ վանական դառնալու իր նպատակը: Նույն տարում արդեն Հայր Գրիգորը որոշել է դոկտորական ատենախոսություն պաշտպանել Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Այնուամենայնիվ, նա այդպես էլ չի ավարտել իր ատենախոսությունը, չնայած ամբողջ կյանքը նվիրել է թեմայի ուսումնասիրությանը: Արխիվը, այսպիսով, Հայր Գրիգորի ամբողջ կյանքի աշխատանքի արդյունքն է:

Մինչև Ցեղասպանությունը Գրիգորի ավագ եղբայր Պետրոսն արդեն տեղափոխվել էր Կահիրե: Վանական դառնա-

լուց հետո Գրիգորը ևս հաստատվել է այնտեղ: 1952 թ. Կահիրեում իր հետազոտությունների ընթացքում նա հանդիպել է Քյուրտ (քուրդ) Մուստաֆա փաշային, որը հայտնի էր նաև Նեմրուֆ Մուստաֆա փաշա անունով և 1919-1922 թթ. երիտթուրք պաշտոնյաների գործերը քննող ռազմական առաջին դատարանի (*Divan-i Harb-i Örfi*) դատավորներից մեկն էր: Այդ պաշտոնում Մուստաֆան ձերբակալվել է 1920 թ.: Նրան մեղադրել են փաստաթղթերի կեղծման միջոցով Բաբերդի գավառի կառավարիչ (*քայմաքամ*) Նուսրեթին մահապատժի դատապարտելու համար: Մուստաֆան սկզբում դատապարտվել է, ապա արդարացվել Սուլթանի հրամանով: 1922 թ., երբ թուրք ազգայնականները գրավել են Ստամբուլը, վախենալով նոր ձերբակալումից, նա հեռացել է Կահիրե⁴⁵:

Հայր Գրիգորի հանդիպումն Օսմանյան նախկին դատավորի հետ բեկումնային էր: Գրիգորի մի կարճ գրությունից տեղեկանում ենք, որ նրանք հանդիպել են մի քանի անգամ, բանավիճել, հարցեր քննարկել: Մուստաֆան կարևոր տեղեկություններ է հաղորդել երիտասարդ Գերգերյանին: Ըստ Մուստաֆայի՝ Ստամբուլի Հայոց Պատրիարքարանը երիտթուրք պաշտոնյաների դատավարություններում կողմերից մեկն է եղել և ունեցել է գործերի պատճենները: Երբ թուրք ազգայնականները գրավել են Ստամբուլը, Պատրիարքարանն ապահովության համար իր տրամադրության տակ եղած բոլոր նյութերն ուղարկել է Ֆրանսիա, Մարսել: Հիմնավորումներից մեկն էլ այն էր, որ Հայր Գրիգորիս Պալաքյանը Մարսելում է եղել: Հետագայում այս փաստաթղթերն ուղարկվել են Մանչեստր, վերջում հանգրվանել Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանում⁴⁶: Գրիգոր Գերգերյանը մեկնել է Երուսաղեմի

Հայոց Պատրիարքարան՝ հետազոտության նպատակով: Տարիներ անց նա իր զարմիկ դուկտոր Էդմոն Գերգերյանին ասել է, որ լուսանկարել է այն ամենը, ինչ տեսել է:

Երուսաղեմում Գերգերյանի գտած փաստաթղթերի կարևորագույն մասը Ստամբուլի միության և դատախազության արձանագրություններն են, դատական գործեր, որոնք այժմյան Թուրքիայի իշխանությունները հրաժարվում են ի ցույց դնել: Այս փաստաթղթերի մեծ մասը հայերի կոտորածների հրահանգներ պարունակող հեռագրեր են՝ պարզված հետաքննություններով, զինվորականների ու քաղաքացիական պաշտոնյաների հայտարարություններ, կասկածյալների ու ականատեսների բանավոր և գրավոր վկայություններ, նախքան դատը տեղի ունեցած հարցաքննություններ: Ներածական մասում մենք օգտագործել ենք այդ փաստաթղթերից միայն երկուսը՝ ապացուցելու համար, թե որքան արժեքավոր են դրանք:

Գերգերյանը, սակայն, միայն Երուսաղեմի Պատրիարքարանի արխիվներից չի օգտվել: 1950 թ. նա մեկնել է Փարիզ՝ Պողոս Նուբար փառալուստի գրադարան, որի տնօրենն Արամ Անտոնյանն էր: Այնտեղ Գերգերյանը տեսել է և լուսանկարել Նայիմ էֆենդուի հուշերն ու Թալեաթ փառալուստի հեռագրերը: Ահա սրանց մասին է մեր աշխատությունը:


Ցեղասպանության մասին նյութերի առումով Գերգերյանի արխիվն անփոխարինելի է, քանի որ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի արխիվները փակ են հետազոտողների համար⁴⁷, իսկ Պողոս Նուբար փառալուստի գրադարանի կարևորագույն փաստաթղթերն անհետացել են: Այսպիսով, չափազանց կարևոր է Գերգերյանի հավաքածուի նյութերը հնարավորինս հանրայնացնելը՝ չթողնելով դրանք սակավա-

թիվ փորձագետների ուսումնասիրությանը: Այս նպատակով Կլարկի համալսարանում մենք արդեն սկսել ենք իրականացնել «Գրիգոր Գերգերյանի արխիվի նախագիծը»: 2017 թ. վերջին արխիվային ամբողջ հավաքածուն արդեն տեղադրված էր համալսարանի կայքում: Հեշտ ընկալելի, մանրամասն ցուցիչների շնորհիվ՝ օգտատերը հնարավորություն ունի առցանց ծանոթանալ արխիվի ամբողջ հավաքածուին:

* * *

Թուրքական կառավարությունների ժխտողական փաստարկները հիմնականում երկու հենասյուն ունեն: Ժխտողականները պահանջում են փաստաթղթերի բնօրինակները և, որպես հորինվածք, մերժում Ցեղասպանությունն ապացուցող Նայիմի հուշերն ու Թալեաթի հեռագրերը: Այդ հեռագրերը մեր աշխատության թեման են: Իսկ Նայիմի վերաբերյալ այս ներածությունում երկու հեռագրեր ենք ներկայացնում Գերգերյանի արխիվից: Երկուսն էլ հիշատակվել են Միություն և առաջադիմություն կուսակցության ղեկավարների՝ 1919 թ. ապրիլի 28-ի դատավարության մեղադրական ակտում և հրապարակվել *Օսմանյան պաշտոնաթերթում*⁴⁸ (տե՛ս Նկար 1): Երկու հեռագրերն էլ այն փաստաթղթերից են, որոնք ապացուցում են օսմանյան կառավարության ցեղասպան մտադրությունը: Թուրքական իշխանություններն են թաքցրել կամ ոչնչացրել դրանց բնօրինակները, իսկ Լևիի նման ժխտողականները դրանք համարում են ոչ արժանահավատ աղբյուր:

Առաջին հեռագիրը Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քամիլ փաշայի՝ 1915 թ. հուլիսի 24-ի հրամանն է (տե՛ս




Նկար 2. Երրորդ բանակի հրամանատար Մահմուդ Քամիլ փաշայի հրամանը, 1915 թ., հուլիսի 24:

«Ինչպես պարզվում է, որոշ քաղաքներում և գյուղերում, որտեղից հայերին տեղահանում են, մուսուլմանները թաքցնում են նրանց: Այն մուսուլմաններին, որոնք, դեմ գնալով կառավարության որոշմանը, թաքցրել կամ պաշտպանել են հայերին, անհրաժեշտ է սեփական դռան շեմին մահապատժի ենթարկել և նրանց տները հրդեհել: Ինչպես հարկն է, տեղյակ պահեք գործում ներգրավված կողմերին և հետևեք, որ բոլոր հայերը տեղահանվեն: Իսլամ ընդունած հայերին ևս պետք է գաղթի ենթարկել: Եթե հայերին պաշտպանողները Ջինված ուժերի կազմում են, առաջին հերթին

տեղեկացրեք համապատասխան գերատեսչություններին: Մեղադրանքն ապացուցվելուց հետո նրանք պետք է անմիջապես հեռացվեն Զինված ուժերից: Վարչական պաշտոն զբաղեցնողները ևս պետք է մեկ առ մեկ հեռացվեն ու հանձնվեն ռազմական դատարաններին դատվելու համար»:

Մեղադրական եզրակացությունում այս փաստաթուղթը դասակարգվել է որպես «*Թղթապանակ համար 13, առաջին փաստաթուղթ*»: Փաստաթղթի գլխագրում դրված է Ներքին գործերի նախարարության անվտանգության վարչության կնիքը, իսկ ներքևում՝ Ներքին գործերի նախարարության կնիքը և «հաստատված բնօրինակ» գրությունը՝ թվագրված 1919 թ. փետրվարի 23: Կասկածից վեր է, որ փաստաթուղթն իրական է:

Գերգերյանի արխիվում առկա է նաև այս թեմայի վերաբերյալ Մահմուդ Քամիլ փաշայի երկրորդ հեռագիրը: Հուլիսի 24-ին հեռագրված հրամանի բովանդակությունը կարծես որոշ խառնաշփոթ էր առաջացրել ենթակաների շրջանում: 1915 թ. օգոստոսի 1-ին ուղարկված այս նոր հեռագրի նպատակը նախորդի առաջացրած տարրնթերցումները հստակեցնելն էր: Հրամանում Քամիլ փաշան նշում է, որ կարգադրել է «...մահապատժի ենթարկել նրանց, ովքեր թաքցնում են գաղթի ենթակա հայերին»: Այնուհետև նա պարզաբանում է, որ «...դա չի վերաբերում այն մուսուլմաններին, որոնք իրենց տներում ապաստան են տալիս կառավարության որոշմամբ պաշտոնապես իրենց հատկացված կանանց ու երեխաներին»: Պատիժը տարածվում է «...այն մարդկանց վրա, անկախ սեռից ու կրոնական պատկանելությունից, որոնք



Նկար 3. Բեհաեդդին Շաքիրի՝ 1915 թ. հուլիսի 4-ի հեռագիրը գաղտնագրված թվերով:

հայերին ապաստան են տալիս առանց կառավարության գիտության»: Այսպիսի մարդիկ «...պատժվելու են, ինչպես կարգն է»: Այս հեռագրից պարզ է դառնում, որ մեծ թվով մուսուլմաններ տարբեր քաղաքներում ու գյուղերում ապաստան են տվել հայերին: Կառավարությունը դրա դեմն առնելու նպատակով ստիպված դիմել է ծայրահեղ քայլերի, օրինակ՝ մահապատիժ և տները հողին հավասարեցնել:

Մյուս հեռագիրը տվել է Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ ու Հատուկ կազմակերպության պարագլուխ Բեհաեդդին Շաքիրը: Հեռագիրը հասցեագրված է եղել Էրզրում՝ Խարբերդի նահանգապետ Սաբիթ բեյին: Ըստ բովանդակության՝ այն պարունակում էր կարգադրություններ, որոնք պետք է փոխանցվեին երիտթուրքերի կուսակցության քաղաքային մասնաճյուղի քարտուղար Նազըմին: Շաքիրը գրում է. «Այդտեղից գաղթեցված հայերը ոչնչացվել են: Բռնագաղթից հետո այս վտանգավոր տարրերը վերացվել են, թե՛ բավարարվել եք նրանց քշելով: Խնդրում եմ անկեղծ և բաց եղիր, եղբայր իմ» (տե՛ս Նկար 3):

Հեռագրի վերևի աջ կողմում դրված է Ներքին գործերի նախարարության քաղաքացիական կառավարման վերահսկիչ մարմնի պաշտոնական կնիքը, որը փաստաթղթի իսկության հարցում կասկածի տեղ չի թողնում: Նկարից երևում է, որ փաստաթղթի ներքևի մասում քառանիշ խմբավորած արաբական թվեր կան: Դրանք բնօրինակի տեքստի ծածկագրերն են: Այն բառը կամ վերջածանցը, որը համարժեք է տվյալ խմբին, գրված է քառանիշ թվերի վերևում: Հեռագրի ամբողջ նշանակությունը պարզելու համար որոշակին գիտելիքի պաշար է անհրաժեշտ:


Մինչև 1914 թ. հոկտեմբերը, երբ Թուրքիան պաշտոնապես ներքաշվեց Առաջին աշխարհամարտի մեջ, Բեհաեդդին Շաքիրն օգոստոսին ուղարկվել էր Էրզրում: Նպատակը երիտթուրքերի կիսառազմականացված Հատուկ կազմակերպության (*Teşkilat-ı Mahsusa*) գործողություններն ուղղորդելն էր: Նախկինում էլ նրան վերապահվել էր Ռուսաստանի դեմ Կովկասի մահմեդականության ապստամբության նախապատրաստումը: Շաքիրն այս տարածաշրջանում Հատուկ կազմակերպության գործունեության պատասխանատուն էր, ինչը վկայող բազմաթիվ փաստաթղթեր կան: Դրանց մի մասի վրա ուղղակիորեն դրված է նրա ստորագրությունը, որպես «Էրզրումի Հատուկ կազմակերպության ղեկավար Բեհաեդդին Շաքիր»⁴⁹: Օսմանյան պաշտոնաթերթի 3540-րդ համարում երիտթուրք ղեկավարների վերաբերյալ հրապարակված մեղադրական եզրակացության համաձայն՝ Հատուկ կազմակերպությունը Ստամբուլում Շաքիրին մատակարարել է մեծ գումար, պայթուցիկներ ու մեքենա, նախքան նրան Էրզրում գործուղելը: Ավելին, Շաքիրին է վստահվել գաղտնագրման բանալին, որն անհրաժեշտ էր Ստամբուլի ու այլ նահանգների հետ հաղորդակցության համար⁵⁰:

Բեհաեդդին Շաքիրը մեղադրյալի կարգավիճակ է ունեցել երկու հետպատերազմյան դատավարություններում՝ երիտթուրք ղեկավարների Ստամբուլի գլխավոր դատավարությունում և Մանուրեթյուլազիզի (Խարբերդի) դատավարությունում: Այստեղ նրան դատել են հեռակա կարգով: Երկու մեղադրական եզրակացություններում բազմիցս հիշատակված են նրա անձն ու գործունեությունը: Երկու դեպքում էլ քրեական հետապնդման համար, որպես ապացույց,

օգտագործվել է 1915 թ. հուլիսի 4-ի հեռագիրը: Մամուլեթյուլագիզի դատավարության ընթացքում հեռագրին հղում է կատարվել և՛ մեղադրական եզրակացությունում, և՛ դատավորների հրապարակած վճռում: Գլխավոր մեղադրական եզրակացությունում այն մեջբերվել է ամբողջությամբ ու կոչվել է «գաղտնագրված հեռագիր»: Եզրակացությունը փաստել է, որ հեռագրի լուսանկարված տարբերակը գտնվում է դատավարության «9-րդ թղթապանակում»⁵¹:

Էրզրումի նահանգապետ Թահսին բեյը հետագայում նշել է, որ Շաքիրին տրված գաղտնագրման բանալիներից մեկը պատկանում էր Ներքին գործերի նախարարությանը: Ըստ նրա՝ Շաքիրը հեռագրերը հղում էր «Հատուկ կազմակերպության ղեկավար» ստորագրությամբ: Մամուլեթյուլագիզի դատավարության՝ 1919 թ. օգոստոսի 2-ի նիստին Թահսինը ցուցմունք է տվել, որ Շաքիրն ուներ գաղտնագրման բանալի: Նա կապի մեջ էր և՛ Բարձր դռան (Սուլթանի պալատի), և՛ Ռազմական նախարարության հետ: Տեղահանությունների ընթացքում նա հաղորդակցություն էր պահում նաև բանակի հետ⁵²: 1915 թ. հուլիսի 4-ի հեռագիրը, որպես ապացույց, նաև ընթերցվել է Մամուլեթյուլագիզի դատավարությանը 1920 թ. հունվարի 10-ին⁵³:

Հարկ է նորից շեշտել, որ այս փաստաթղթերի բովանդակությունն ու գոյությունը հայտնի են եղել և չեն վիճարկվել: Պարզապես Լևիի նման պատմաբանները նշում են, որ բնօրինակների բացակայության պայմաններում մեղադրական եզրակացության մեջ արված մեջբերումներն արժանահավատ չեն: Ավելորդ է ասել, որ փաստաթղթի վրայի կնիքը կասկած չի թողնում դրա իսկության վերաբերյալ, և բացի



Նկար 4. DH.SFR., 531/46-1 գաղտնագրված հեռագիր էլազրգից: 1916 թ., սեպտեմբերի 7:

դրանից՝ մենք ունենք դրա բնօրինակ լինելը հավաստող այլ կարևոր տեղեկություն:

**Փաստաթղթի գաղտնագրման մեթոդը
համընկնում է արխիվի այլ փաստաթղթերի
գաղտնագրման կանոններին**

Բեհաեդդին Շաքիրի հեռագրի լուսանկարից երևում է, որ այն պարունակում է արաբական քառանիշ թվեր: Յուրաքանչյուր թվին համարժեք բառը կամ վերջածանցը նշված է նրա վերևում: Որոշ բառեր ու վերջածանցներ դյուրընթեռնելի են: Օրինակ՝ Ermeni (հայ) [8519]; sevк (տեղահանություն, արտաքսում, ուղարկում) [4889]; yalnız (միայնակ) [4632]; bey (բեյ, պարոն) [2469]; -leri (հոգնակիակերտ ածանց) [9338];

-im/-om (առաջին դեմքի պատկանելություն ցույց տվող վերջավորություն) [7749]:

Թուրքիայի կառավարության օսմանյան արխիվում այժմ կան Ներքին գործերի նախարարության մեծ քանակով գաղտնագրված փաստաթղթեր, որոնք հասանելի են հետազոտողներին: Սրանք հիմնականում Ստամբուլից տարբեր նահանգներ ուղարկված հեռագրեր են: Պատերազմի տարիների բազում հեռագրեր ևս քառանիշ են, ինչպես Շաքիրի հեռագիրը: Մենք համեմատեցինք Շաքիրի փաստաթղթերի քառանիշ թվերը և օսմանյան արխիվում պահվող նույն՝ 1915 թ. հունիս-հուլիս ժամանակահատվածի հեռագրերը: Դա հեշտ գործ էր, որովհետև արխիվային նյութերն այժմ գաղտնագրված են: Համարժեք բառերն ու վերջածանցներն արդեն գրված են թվային ծածկագրերի վերևում: Պարզվեց, որ Շաքիրն իրոք օգտագործել է գաղտնագրման բանալի, որը նրան տվել է Ներքին գործերի նախարարությունը: Մենք դիտարկեցինք 25 տարբեր հեռագրեր, որոնց բառերն ու վերջածանցները 34 տեղ համընկնում էին Շաքիրի հեռագրի հետ (տես Նկար 4):

Նշենք, որ օսմանյան արխիվներում հայտնաբերված այս փաստաթղթերը հետազոտողներին հասանելի են դարձել միայն վերջին տասնամյակում՝ 2010-ական թթ.: Այսինքն՝ համեմատության նպատակով դրանք օգտագործելու հնարավորություն նախկինում չի եղել, քանի որ այս գաղտնագրերի գոյությունն ընդհանուր առմամբ անհայտ էր մնում մինչև վերջին տասնամյակը: Սակայն այժմ Մահմուդ Քամիլ փաշայի և Բեհաեդդին Շաքիրի հեռագրերի գոյությունն ու բնօրինակի հավաստիության ապացույցները մեզ նորից են հնարավորություն տալիս անդրադառնալ փաստի ու ճշմարտության

հարաբերությանը: Արդեն նշել ենք, որ թուրքական կառավարությունների ռազմավարությունն ու ժխտողական քաղաքականությունը շարունակաբար հիմնված են եղել պատմական փաստաթղթերի բնօրինակների քողարկման կամ ոչնչացման վրա: Այս փաստաթղթերի ի հայտ գալը հզոր հարված է ժխտողականության ռազմավարությանը: Այստեղից էլ բխում է մեր գրքի հիմնական թեման՝ Թալեաթ փաշայի հեռագրերի բնօրինակ լինելը:

* * *

Գիրքը, ի թիվս այլ փաստաթղթերի, անդրադառնում է օսմանյան պաշտոնյա Նայիմ էֆենդու հուշերին: Նա 1915-1916 թթ. աշխատել է Հալեպի տեղահանության տնօրինությունում (*Halep Sevkiyat Müdürlüğü*): Հուշերը հայտնաբերվել են կաթոլիկ հոգևորական Գրիգոր Գերգերյանի անձնական արխիվում⁵⁴: Դրանք ներառում են օսմանյան ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ուղարկած հեռագրերը՝ հայերի բնաջնջման հրահանգներով, նաև այդ ժամանակաշրջանի մասին Նայիմի անձնական դիտարկումները: Մենք արդեն գիտենք, որ Նայիմն իր հուշերն ու հեռագրերը 1918 թ. վաճառել է հայ մտավորական Արամ Անտոնյանին: Անտոնյանն այդ փաստաթղթերն ու հուշերի մի մասը 1920-1921 թթ. հրատարակել է հայերեն, անգլերեն ու ֆրանսերեն:

Հավելված 1-ում փաստաթղթերը թարգմանաբար են ներկայացված: Մենք հրապարակել ենք Նայիմ էֆենդու հուշերի՝ մինչև այժմ չհանրայնացված բնօրինակները, նաև դրանց վերաբերող այն հատվածները, որոնք առաջին անգամ ներ-

կայացրել է Անտոնյանը հայերեն: Այսպիսով, ընթերցողը հնարավորություն է ստանում ծանոթանալ ամբողջ հավաքածուին: Հավելված 2-ում տեղ են գտել նաև Անտոնյանի նամակները՝ Նայիմի մասին լրացուցիչ տեղեկություններով, նաև բժիշկ Ավետիս Նաքքաշյանի նամակն Անտոնյանին: Այս նամակները մանրամասն տեղեկություններ են պարունակում Նայիմ էֆենդու մասին: Հավելված 4-ում կգտնեք նաև պատերազմի տարիներին Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վոլտեր Ռոսլերի զեկույցն Անտոնյանի գրքի վերաբերյալ:

* * *

Սովորաբար գրքերում հատուկ տեղ են հատկացնում նաև երախտագիտության խոսքերին: Կարելի է նշել մարդկանց ու կազմակերպությունների երկար ցուցակ, ուստի ես չեմ սահմանափակվում գրքի հրապարակման հարցում ինձ օգնողների անուններով և շնորհակալություն են հայտնում նաև նրանց, ովքեր օժանդակեցին Գրիգոր Գերգերյանի արխիվի էլեկտրոնային տարբերակի հրապարակմանը: Այսպիսով, առաջինը ցանկանում են երախտագիտությունս հայտնել Գրիգոր Գերգերյանի զարմիկ դուկտոր Էդմոն Գերգերյանին՝ իր հորեղբոր արխիվը նրա մահից հետո (1988 թ.) խնամքով պահպանելու, էլեկտրոնային տարբերակի վերափոխման հարցում ցուցաբերած ձկունության և ըմբռնումի համար: Առանձնահատուկ շնորհակալություն են հայտնում Պերճ Փանոսյանին՝ արխիվի լուսապատճենման և թվայնացման համար: Պերճն այն կատարել է ոչ միայն որպես պրոֆեսիոնալ կամ գործարար, այլև հոգի է դրել այդ աշխատանքում: Նրա

փորձառության շնորհիվ որոշ անընթեռնելի փաստաթղթեր էլեկտրոնային կրիչներով առավել մատչելի և ընթեռնելի են, քան բնօրինակը:

Արխիվը մանրակրկիտ ուսումնասիրության կարիք ուներ (մինչև հիմա այդ գործն ավարտված չէ), և Գերգերյանի նյութերը պետք է մանրամասն ինդեքսավորվեին ապագա հետազոտողներին ծառայելու համար: Բացի դրանից՝ նյութերը տարբեր լեզուներով էին՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, հայերեն, թուրքերեն, օսմաներեն ու հայատառ թուրքերեն: Անհրաժեշտ էր գործի ընդունել լեզուներ իմացող մարդանց, որ կարողանային թարգմանել ու ինդեքսավորել հարյուր հազարավոր էջերը և փաստաթղթերի հավաքածուն: Մենք կձախողեինք, եթե չլիներ մի խումբ վստահելի մարդկանց ու կազմակերպությունների աջակցությունը: Այս հաջողության մեջ իրենց ավանդն են ունեցել Տեր և Տիկին Նազար ու Արտեմիա Նազարյանները, Հարի և Սյուզան Թուֆյանները, Սարգիս ու Ռուֆ Բեդկյանները, Հակոբ և Սիլվա Բաղդադյանները, Սարո և Հիլդա Հարությունյանները, անանուն բարերարը, Հրաչ Կապրիեյանը, Անդրանիկ Բաղդասարյանը, Անուշ Մաթևոսյանը և Նյու Յորքում բնակվող ընկերներիցս մեկը, որը ցանկացավ անանուն մնալ: Նախագծի իրականացմանը նպաստել են նաև «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամն ու հատկապես դոկտոր Ռազմիկ Փանոսյանը: Նա, ի դեպ, նոր շունչ է հաղորդել հիմնադրամի հայկական համայնքների բաժանմունքին: Նաև երախտագիտությունս եմ հայտնում «Դադուրյան» հիմնադրամին, «Ժիրայր Նշանյան» հիմնադրամին, Հայկական բարեգործական ընդհանուր միությանը, «Վարդանի ասպետներ ու դուստրեր» կազմակերպությանը,

Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ասոցիացիային:

Այս ընթացքում ես մեծ աջակցություն եմ ստացել շատ մարդկանցից: Ցանկանում եմ անձամբ երախտագիտություն հայտնել նրանց, ովքեր օգնել են այս գրքի աշխատանքներին: Նախ և առաջ շնորհակալություն Օմեր Թյուրքօղլուին, որը մեծ հոգածությամբ տառադարձել է գրքի օսմանյան փաստաթղթերը, Նայիմ էֆենդու հուշերը: Նա է նախաձեռնել չթարգմանված նյութերի խմբագրումը, արժեքավոր խորհուրդներ տվել գրքի բովանդակության վերաբերյալ: Առանց Օմերի գիրքն այսպիսի տեսք չէր ունենա: Հայերեն նյութերը թուրքերեն են թարգմանել Անի Դեղիրմենջիօղլուն, Սևան Դեիրմենջյանը, Նազլը Թեմիր Բեյլերյանը և Թաբիթա Թոփարլաքը՝ օգնելով հնձ հասկանալ դրանց բովանդակությունը: Հայերեն նյութերի անգլերեն թարգմանության համար պարտական եմ Արամ Արկունին: Իմ ղեկավարությամբ ասպիրանտներ Աննա Ալեքսանյանը, Էմրե Ջան Դաղլըօղլուն, Բուրչին Գերչեկը և Ումիթ Քուրտը ոչ միայն ինդեքսավորել են արխիվները, այլև մանրակրկիտ ստուգել և ուղղել են սխալները, կարևոր առաջարկներ արել: Այս ցանկին ես ավելացնում եմ Ռոբեր Բոփթաշին: Նա է ստուգել տեքստն ու օգտակար առաջարկներ արել: Նշեմ նաև Հայկական հետազոտությունների և ուսումնասիրությունների ազգային ասոցիացիայի ակադեմիական հարցերով տնօրեն Մարկ Մամիկոնյանին: Նրա հետ եմ մշտապես քննարկել աշխատությանը վերաբերող հարցերն ու խնդիրները:

Երախտագիտության խոսքերի հասցեատերերի ցանկում առանձնահատուկ տեղ ունի երկար տարիների ընկեր ու գործընկեր Պոլ Բեսեմերը: Նա իմ գրեթե բոլոր գրքերի ու հոդված-

ների թարգմանիչն է: Նա այս գրքի անգլերեն թարգմանության հեղինակն է: Հավելվածում տեղ գտած տեքստերի բնօրինակների անգլերեն թարգմանության համար պարտական եմ նաև Բելինդա Կուպերին ու Ջենիֆեր Մանուկյանին: Նրանցից յուրաքանչյուրին պարտական եմ յուրովի: Ամբողջ նյութի անգլերեն խմբագրման ու հրատարակության նախապատրաստման ծանր գործն իր վրա է վերցրել Ջորջ Շիրինյանը:

Եվ վերջապես, երախտագիտությունս եմ հայտնում Անկարայում գտնվող Թուրքիայի հանրապետական արխիվի աշխատողներին: Ժամանակակից տեխնոլոգիաների շնորհիվ՝ Անկարայի այս արխիվը կապված է Ստամբուլի օսմանյան արխիվին: Ես հնարավորություն ունեցա Անկարայից օգտուվել Ստամբուլի օսմանյան արխիվներից: Անկարայի արխիվի աշխատակիցներն ինձ օգնեցին բոլոր հարցերում: Հաճելի ու նպաստավոր միջավայր ստեղծելուց բացի՝ մեծապես օժանդակեցին գտնել փնտրածս փաստաթղթերը: Երբ նրանց անուններն էի ուզում իմանալ գրքում նշելու համար, պատասխանեցին. «Անունները կգան ու կգնան, շնորհակալություն հայտնեք հաստատությանը»: Այդ պատասխանը նրանց ամենօրյա հոգատար աշխատանքի խորհրդանիշն է:

Աշխատանքում եղած սխալների ու բացթողումների պատասխանատուն միայն ես եմ:

Ներածություն

Հայոց ցեղասպանության վերաբերյալ ամենավաղ հրատարակված աշխատություններից մեկը Տիգրան Բոյաջյանը վերնագրել է «Հայաստան. մոռացված Ցեղասպանության գործը»¹: Տասնամյակներ անց այս թեմայով հրատարակվել են հարյուրավոր նյութեր տարբեր լեզուներով: Այժմ կարելի է ասել, որ ցեղասպանագիտության ոլորտում Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը կարևոր տեղ է զբաղեցնում: Այն «մոռացված Ցեղասպանություն» չէ, ինչպես առաջ էր:

Չնայած թուրքական կառավարությունների համառ ժրխտումներին՝ ցեղասպանագիտության վերջին տարիների աշխատություններն ապացուցել են, որ օսմանաթուրքական կառավարությունները համակարգված ոչնչացրել են հայերին իրենց պատմական հայրենիքում: Տարածաշրջանի հնագույն քրիստոնյա ժողովուրդներից մեկը՝ հայերը, լինելով փոքրամասնություն երկու հազարամյակ՝ ապրել են մուսուլման-

¹ Իրականում մահմեդականների իշխանությունը Հայկական լեռնաշխարհում հաստատվել է 8-րդ դարում, արաբական խալիֆայության շրջանում: Սա նշանակում է, որ հայերը մահմեդականներով շրջապատված կամ նրանց տիրապետության տակ գտնվող փոքրամասնություն են եղել ոչ թե երկու հազարամյակ, այլ մոտ 13 դար:

ներով շրջապատված: Նրանք զրկված են եղել տարրական սոցիալական, տնտեսական ու քաղաքական իրավունքներից, որովհետև Օսմանյան կայսրությունը կառավարվում էր իսլամի օրենքներով: Հայերը սոցիալական արդարության ու քաղաքական հավասարության պահանջներ ներկայացրեցին միայն 19-րդ դարի երկրորդ կեսին, սակայն բախվեցին օսմանյան կառավարությունների ահագնացող ճնշումներին:

1878 թ. Բեռլինի Կոնգրեսը համարվում է հայերի ոչնչացման երկար գործընթացի սկիզբը, իսկ վերջը՝ 1921 թ.* Խորհրդրդային Հայաստանի ու 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հիմնադրումը: 1878-1923 թթ. կարելի է բնորոշել Ցեղասպանության գործընթացի շարունակման փուլ՝ հայերի երեք զանգվածային կոտորածներով: 1894-1896 թթ. Աբդուլ Համիդ սուլթանի կոտորածներին զոհ է գնացել առնվազն 100,000 հայ²: 1909 թ. Ադանայի կոտորածների ժամանակ 20,000 հայ է սպանվել, քաղաքն ավերվել է: Այնուհետև, 1915-1918 թթ., Ցեղասպանության ընթացքում ամբողջ հայ բնակչությունը տեղահանվել է իր պատմական հայրենիքից: 1914 թ. Անատոլիայի մոտ երկու միլիոն հայերից հիմա մնացել է Ստամբուլում ապրող 40-60 հազար հայ:

Ցեղասպանությունը վերջ դրեց իրենց հայրենիքի մեծ մասում ապրող հայերի գոյությանը և հայության համար անասելի ծանր բեռ դարձավ: Հայերը ստիպված էին ապացուցել իրենց բնաջնջումը, որովհետև Թուրքիայի կառավարությունը ժխտում էր դա: Նախաբանում նշել ենք, որ Թալեաթ փաշայի հեռագրերը չափազանց կարևոր են եղածն ապացուցելու

* Խորհրդային Հայաստանի հիմնադրման օրն իրականում 1920 թ. դեկտեմբերի 2-ն է:

համար: Արամ Անտոնյանի հրատարակած այս հեռագրերն օսմանյան պաշտոնյա Նայիմի հուշերի հետ պարունակում են հայերին բնաջնջելու հրահանգներ: Ապացուցելով հեռագրերի ու Նայիմի հուշերի իրական լինելը՝ ժխտողականության քաղաքականությունը վերջնականապես ջախջախվում է:

Նայիմ էֆենդին և իր հուշերը


Նայիմը եղել է Հալեպի տեղահանության տնօրինության (*Sevkiyat Müdürlüğü*) քարտուղարը: Այդ ստորաբաժանումը ենթարկվում էր Ներքին գործերի նախարարության Ցեղերի ու գաղթականների գրասենյակի տնօրինությանը (*İskân-ı Aşâir ve Muhâcirîn Müdirîyeti*)³: Իրականում Նայիմի «հուշերը» դասական հուշեր չեն, այլ օսմանյան 52 փաստաթղթերի ձեռագիր պատճեններ⁴: Դրանք ուղեկցվում են Նայիմի գրած ծանոթագրություններով: Հավաքածուի նյութերի մեծ մասը վերագրվում է երիտթուրքերի ղեկավար-եռյակի անդամ և Ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային: Որոշ փաստաթղթեր պարունակում են հայերին վերացնելու նրա հրամանները: Բացի դրանից՝ Նայիմը շարադրել է հեռագրերում հիշատակվող կոնկրետ թեմաների ու իրադարձությունների մասին իր իմացածը: Այսուհանդերձ, հուշերի մեծ մասը երբեք չի հրատարակվել ու առաջին անգամ լույս է տեսնում մեր գրքում (տե՛ս Հավելված 1.1):

Այս հավաքածուի մասին հանրությունը տեղեկացել է հայ լրագրող ու մտավորական Արամ Անտոնյանի շնորհիվ: Նրան, ի թիվս ստամբուլահայ այլ երևելիների, ձերբակալել էին 1915 թ. ապրիլի 24-ին: Արամ Անտոնյանը պատահականության շնորհիվ խուսափել է ձերբակալությունից ու չի արժանացել

մյուսների սարսափելի ծակատագրին⁵: 1918 թ. նոյեմբերին անգլիացիները գրավեցին Հալեպը, և այնտեղ գտնվող Անտոնյանը Նայիմից գնեց նյութերի բնօրինակը: Նա գնել է ոչ միայն փաստաթղթերի ձեռագիր պատճենները («հուշերը»), այլև օսմանյան 24 փաստաթղթերի բնօրինակներ⁶:

Ահա այդ 24 փաստաթղթերի ընդհանուր նկարագիրը: Մեր ձեռքի տակ են դրանցից 16-ի ձեռագիր պատճենները՝ Նայիմի հուշերով: Վեց փաստաթղթեր առնչվում են հայ պատգամավոր Գրիգոր Զոհրապին և նկարագրված չեն հուշերում: Եվս 2 փաստաթուղթ, որոնց չեն անդրադառնում հուշերը, Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամ Բեհաեդդին Շաքիրի նամակներն են: Անտոնյանն իր հայերեն գրքում ներկայացնում է 24 նկարներից 14-ը, այդ թվում՝ Շաքիրի նամակները⁷: Փաստաթղթերի մեջ 7 հեռագրեր կան, որոնք պարունակում են երկնիչ ու եռանիչ գաղտնագրեր: Իր գրքում Անտոնյանը 5 նկար է ներկայացնում այդ գաղտնագրված հեռագրերից: Եվս 12 հեռագիր կրում է Հալեպի նահանգապետ Մուստաֆա Աբդուլիալիկի ստորագրությունը: Անտոնյանը 7 նկար է ներկայացնում այդ հեռագրերից:

Իր նոթատետրում Անտոնյանը հիշատակում է թե՛ Նայիմին հանդիպելու, թե՛ փաստաթղթերը գնելու օրերը: Ըստ հուշերի՝ նա Նայիմին հանդիպել է Հալեպի հայտնի Բարոն Հոթելում, որը Մեջլումյան եղբայրներին էր պատկանում: Անտոնյանն ու Նայիմը հանդիպել են 1918 թ. նոյեմբերի 6-ին, 10-ին և 14-ին: Հյուրանոցում Անտոնյանը վճարել ու ստացել է փաստաթղթերի առանձին փաթեթները: Նոյեմբերի 14-ի հանդիպմանը Նայիմն Անտոնյանին շնորհակալություն է հայտնել վճարումների համար ու տեղեկացել, որ պատրաստ է ավելի շատ



Նկար 1. Անտոնյանի ձեռագիր նշումները Նայիմ էֆենդու հետ հանդիպման վերաբերյալ:

պատճեններ տրամադրել: Անտոնյանը, սակայն, մերժել է՝ նշելով, որ մեծ գումար կվճարի միայն փաստաթղթերի բնօրինակների համար: Նա գրում է.

«Նայիմը հյուրանոց էր եկել շնորհակալություն հայտնելու: Նա կրկին ցանկացավ, որ միջնորդեմ Բ-ին (այսինքն՝ հյուրանոցի տեր Օսիկ Մեջլումյանին – հեղ.), որ իրեն վճարի փաստաթղթեր բերելու համար: Ես ասացի, որ պատճենների համար այդպիսի բան չեմ անի: Այլ բան, եթե նա բերի բնօրինակը» (տես Նկար 1)*:

* Մեջբերումն արվել է անգլերենի թարգմանությամբ, քանի որ հայերեն տեքստի

Ի վերջո, Նայիմը բերել է փաստաթղթերի ավելի շատ բնօրինակներ:

Անտոնյանը Նայիմի հավաքածուի ու տրամադրած փաստաթղթերի հիման վրա 1919 թ. հայերեն գիրք է գրել, որը, սակայն, լույս է տեսել գրքի անգլերեն ու ֆրանսերեն տարբերակների հրատարակումից հետո⁸: Գրքի բովանդակության մեծագույն արժեքը Թալեաթ փաշայի ուղարկած հեռագրերն են՝ հայերին ոչնչացնելու վերաբերյալ Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարարի հրամանները: Օրինակ՝ 1915 թ. սեպտեմբերի 22-ի հեռագրում Թալեաթը կարգադրում է.

«Թուրքական հողում հայերի բոլոր իրավունքները, օրինակ՝ կյանքի և աշխատանքի իրավունքները, վերացված են: Ոչ ոք, օրորոցի բարուրից սկսած, չպետք է ողջ մնա: Կառավարությունը պատասխանատվություն է ստանձնում այս իրավիճակի համար»:

Հեռագիրը նաև հաստատում է, որ այս հրամանին «համարժեք քայլեր արդեն ձեռնարկվել են որոշ նահանգներում»⁹:

1915 թ. սեպտեմբերի 29-ին Հալեպի նահանգապետին ուղարկված մեկ այլ հեռագրում կարդում ենք.

«Արդեն հաղորդվել է, որ կառավարությունը Ջեմիեթի (Երիտթուրքերի կոմիտեի) հրամանով որոշել է լիովին բնաջնջել Թուրքիայում բնակվող հայերին: Այս հրամանին ու որոշմանն ընդդիմացողները չեն կարող մնալ պետական համակարգում: Կանայք, երեխաները, հաշմանդամները պետք է ոչնչացվեն անխտիր՝ առանց խղճմտանքի, անկախ նրանից՝ ինչքան ողբերգական են սպանության ձևերը»¹⁰:

լուսանկարն ընթերցելի չէ թարգմանչի համար:

Մեկ այլ չթվագրված հեռագրում նշվում է.

«Երկար ժամանակ մտադրություն կար ոչնչացնել (կայսրության) հայկական տարրը, որը դարեր շարունակ ջանացել է սասանել մեր պետության ամուր հիմքերն ու լուրջ սպառնալիք է ներկայացրել կառավարությանը: Մեր սուրբ պարտքն իրագործելու հարմար պայմաններ չեն եղել: Այժմ խոչընդոտներ այլևս չկան, ու հայրենիքն այս վտանգավոր տարրից փրկելու ժամանակն է: Անհրաժեշտ է գիտակցաբար ու լիարժեք նվիրումով գործել, վերացնել «հայ» անունը Թուրքիայում, առանց խղճին ու կարեկցանքին տրվելու՝ վերջ դնել նրանց գոյությանը»¹¹:

1915 թ. հոկտեմբերի 16-ի հեռագրում կարդում ենք.

«Գաղթի ճանապարհին որոշ հայտնի տեղահանվողների հանդեպ տեղի բնակչության գործած հանցանքներն ու զանցանքները միայն հաստատում են կառավարության նպատակների իրագործումը¹², և կարիք չկա այս թեմայով իրավաբանական հետաքննություն սկսել: Անհրաժեշտ հաղորդագրությունն արդեն փոխանցվել է Դեյր էլ Զորի և Ուրֆայի վարչական շրջաններ»¹³:

«1915 թ. դեկտեմբերի 14-ին Հալեպի ղեկավարությանն ուղարկված հեռագրում նշվում է.

«Բնաջնջման ենթակա ամենակարևոր խումբը հոգևորականությունն է: Մեծ սխալ կլինի նրանց թույլ տալը, որ հեռանան ու բնակություն հաստատեն Սիրիայի և Երուսաղեմի նման վտանգավոր շրջաններում: Կառավարության դեմ չարամիտ դավադրության հակված այս անձանց վերջնական հաստատման լավագույն վայրն այն է, որտեղ նրանց կկոտորեն»¹⁴:

Անկասկած, նման փաստաթղթեր պարունակող գիրքը լուրջ վտանգ է ներկայացնում Թուրքիայի Հանրապետության որդեգրած պաշտոնական պատմագրության համար: Այս պատճառով է Թուրքական պատմագիտական ընկերությունը 1983 թ. հրատարակել Շինասի Օրելի ու Սյուրեյա Յուլջայի աշխատությունը: Հեղինակները ժխտում են Նայիմ անունով օսմանյան պաշտոնյայի գոյությունն ու պնդում, որ ենթադրյալ հուշերն ու կից փաստաթղթերն իրականում Անտոնյանն է հորինել¹⁵:

Հեղինակներն իրենց պնդման համար 3 հիմնավորում են բերում. (1) Նայիմ էֆենդի անունով անհատի գոյությունը հավանական չէ, (2) չեղած մարդը չի կարող գրել հուշեր, ուստի դրանք չեն կարող գոյություն ունենալ, (3) Թալեաթին վերագրվող հեռագրերը կեղծիք են: Այսպիսով, նրանք եզրակացնում են, որ հուշերն ու փաստաթղթերը հայերի, հավանաբար հենց Անտոնյանի ստեղծած կեղծիքն են:

Նրանց գրքի հրատարակումից հետո սովորական է դարձել հուշերում եղած փաստաթղթերն անվանել «Թալեաթ փաշային վերագրվող կեղծ հեռագրեր»: Այնուամենայնիվ, մենք ցույց կտանք, որ Օրելն ու Յուլջան սխալվում են բոլոր առումներով: Իրականում գոյություն է ունեցել Նայիմ էֆենդի անունով օսմանյան պաշտոնյա, ու մեր տրամադրության տակ է նրա հուշերի բնօրինակը գրված հենց իր ձեռքով: Մենք նաև ցույց կտանք, որ Նայիմի պատմությունները, որոնք տեղ են գտել հուշերում, իրական են ու հաստատվում են օսմանյան արխիվների համապատասխան փաստաթղթերով: Մենք կարող ենք ապացուցել, որ Թալեաթի հեռագրերի իրական չլինելու վերաբերյալ Օրելի ու Յուլջայի բոլոր փաստարկները կեղծ են, ամբողջությամբ մտացածին և սխալ:

Նայիմ Էֆենդու պատմությունը և նրա հուշերի իրական լինելու հարցը

Ինչպես են այդ գրառումները մեզ հասել

Մենք այն համոզմանն էինք, որ Անտոնյանի հրատարակած Նայիմ Էֆենդու հուշերն ու փաստաթղթերն ամբողջական են: Մեզ հասած տեքստն ուսումնասիրելուց հետո միայն հասկացանք, որ Անտոնյանի հրատարակածը Նայիմ Էֆենդու տրամադրած նյութի *ամբողջական տարբերակը* չէ, այլ դրա մի մասը¹:

Մեր ունեցած բնօրինակն առաջինը գտել է հայր Գրիգոր Գերգերյանը: Նա հուշերի բնօրինակն ու որոշ փաստաթղթեր գտել և լուսանկարել է Փարիզի Պողոս Նուբար գրադարանում 1950 թ.²: Ըստ Գերգերյանի՝ հուշերն իրականում բաղկացած էին 16, 12 և 7-էջանոց երեք մասերից՝ սեղմակով իրար միացված³: Գերգերյանը պնդում է, որ, Նայիմ Էֆենդու հուշերից բացի, գրադարանում կային «Գրիգոր Զոհրապի մահվանն առնչվող երեք պաշտոնական փաստաթղթեր, որոնք հրատարակված չեն»⁴: Հիմա այնտեղ միայն Զոհրապի մահվանն առնչվող երկու փաստաթուղթ կա: Նայիմի հուշերը և ուղեկցող հեռագրերի բնօրինակները բացակայում են: Դրանց գտնվելու վայրն անհայտ է⁵:

Իր *հրատարակած* հատվածներում Անտոնյանը չի պահ-

պանել Նայիմի հուշերի հերթականությունը: Նա օգտագործել է այն հատվածները, որոնք ինքն է կարևոր համարել: Նայիմի բառերը մեջբերելու փոխարեն Անտոնյանը երբեմն պարզապես ամփոփել է նրա միտքը կամ հուշերում տեղ չգտած նախադասություններ վերագրել Նայիմին: Այսպիսի հատվածները, սակայն, փոքր են և նպատակ ունեն պատմությունն ամբողջական ներկայացնել: Այդպես են անում այն դեպքում, երբ փաստաթղթերի վերջում ստորագրության փոխարեն իրավատիրոջ անուն-ազգանունն են գրում:

Իրականում կարող ենք փաստել, որ Անտոնյանի գրքում ամփոփված են ոչ թե Նայիմի ամբողջական հուշերը, այլ դրանց այն հատվածները, որոնք Անտոնյանը կարևոր է համարել: Այդուհանդերձ, իր գրքի սկզբում նա նշում է, որ ներկայացրել է մեկնաբանություններ ու ծանոթագրություններ:

«Նայիմ բեյի հուշերն առանց վերլուծության հնարավոր չէ հրապարակել: Որոշ տեղերում պետք էր ներկայացնել անհրաժեշտ բացատրություններ, քանի որ նշված անձինք ու իրադարձությունները հիմնականում հայտնի չեն Եվրոպայում»⁶:

Անտոնյանի հրատարակած հայերեն տարբերակում Նայիմի հուշերն այլ տառատեսակով են, և այդ տպված հատվածները հեշտ է համեմատել մեր ունեցած տեքստի հետ: Ակնհայտ է, որ ոչ թե Անտոնյանը հուշերի մի զգալի մասը չի հրապարակել, այլ դրանց շատ հատվածներ բնօրինակում պարզապես չկան: Մենք այդ հատվածները հավաքել ենք Հավելված 1-ում:

Լիովին հասկանալի է, թե Անտոնյանն ինչու է որոշել Նայիմի հուշերի որոշ մասեր չհրատարակել: Կարելի է եզրակացնել, որ նա անհրաժեշտ չի համարել: Այսուհանդերձ, հարց է առաջա-

նում, թե որտեղ են հուշերի այն մասերը, որոնք Գրիգոր Գերգերյանը չի հայտնաբերել, բայց Անտոնյանը հրատարակել է:

Նախքան այս հարցին անցնելը ճիշտ կլինի քննարկել հուշերին առնչվող մեկ այլ հանգամանք: Հուշերում եղած 52 բնօրինակ փաստաթղթերից 18-ի լուսանկարները գոյություն ունեն: Այս 18-ից 7-ը բառերի փոխարեն թվերով գաղտնագրված հեռագրեր են: Գրքի հայերեն տարբերակում Անտոնյանը հրատարակել է այդ 18-ից 14-ի կրկնօրինակները: Մեր ձեռքի տակ կա փաստաթղթերի 32 ձեռագիր կրկնօրինակ, որոնցից միայն յոթի լուսանկարներն ունենք: Երբ համեմատում ենք փաստաթղթերի ձեռագիր պատճեններն ու լուսանկարները, դրանք լիովին, բառ առ բառ համընկնում են⁷: Սա վեր է հանում մի կարևոր ճշմարտություն. Նայիմն այս փաստաթղթերը ոչ թե հիշելով է շարադրել, այլ արտագրել է բնօրինակներից: Եթե այս աշխատանքը հիմնված լիներ հիշողության վրա, որոշ բառեր ու նախադասություններ կտարբերվեին:

Փաստաթղթերի նկարներն ու հուշերում դրանց վերաբերող նկարագրությունը ճշգրտորեն համընկնում են: Այս փաստն արդեն ջախջախում է Օրելի և Յուլջայի այն առանցքային պնդումը, թե փաստաթղթերն իրական չեն: Նրանք փաստաթղթերի պատճենների անգլերեն ու ֆրանսերեն թարգմանությունները համեմատել են օսմաներեն տեքստերի լուսանկարների հետ: Մեծ տարբերություններ կան անգլերեն և ֆրանսերեն տեքստերի, այդ երկուսի և օսմաներենի միջև: Այս տարբերությունները հիմք ընդունելով՝ Օրելն ու Յուլջան պնդում են, որ այդ փաստաթղթերը կեղծ են: Նրանք նշում են.

«Անտոնյանի գրքի անգլերեն ու ֆրանսերեն տարբերակների որոշ

տարբերություններ ի հայտ են բերել փաստաթղթերի կեղծիքները և այնքան շատ, որ դժվար է դրանք վերագրել սխալ թարգմանությանը կամ հրատարակիչների փաստական սխալներին»⁸:

Արդեն կարելի է պնդել, որ վերոնշյալ մեջբերման հարցը լուծված է: Հուշերի ձեռագիր պատճեններն ու փաստաթղթերի լուսանկարները նույնական են:

Որտե՞ղ են հուշերն ու փաստաթղթերի բնօրինակները

Ինչ ճակատագիր են ունեցել Արամ Անտոնյանի հրատարակած այն հուշերն ու փաստաթղթերը, որոնք մեր ձեռքի տակ չեն: Պատասխանը մեր հավելվածում տեղ գտած երկու նամակներում է: 1925 թ. հոկտեմբերի 6-ով թվագրված նամակներից մեկը բժիշկ Ավետիս Նաքքաշյանն ուղարկել է Արամ Անտոնյանին (տե՛ս Հավելված 2)⁹: Մյուս նամակը 1937 թ. հուլիսի 28-ին Անտոնյանն ուղարկել է տիկին Մերի Թերզյանին ժնև (տե՛ս Հավելված 3):

Ինչո՞վ են արժեքավոր այս նամակները: Անտոնյանը հուշերի ու փաստաթղթերի հավաքածուն Լոնդոն է բերել 1920 թ.՝ անգլերեն տարբերակի համար: Այդ նպատակով նա ընտրել է «որոշ բնօրինակներ, որոնք դեռ չէր հասցրել լուսանկարել»: Մյուսները «թողել է Լոնդոնում՝ հրատարակությանը նախապատրաստելու համար»: 1920 թ. օգոստոսին Ավետիս Նաքքաշյանը, որը Ստամբուլում բժիշկ էր աշխատում, Հայոց Զավեն պատրիարքի միջոցով դիմել է Անտոնյանին՝ Աբդուլահադ Նուրի Թենգիրշենկին պատասխանատվության ենթարկելու հարցում աջակցելու համար: Նուրիի գործը լսվում էր Ստամբուլի ռազմական դատարանում¹⁰: Պատերազմի տարիներին նա եղել էր Հալեպում Ցեղերի ու գաղթականնե-

րի վերաբնակեցման տնօրինության Տեղահանության ու վերաբնակեցման մասնաճյուղի տնօրենը¹¹:

Նայիմը տնօրինության քարտուղարն էր և Նուրիի մտերիմը: Իր հուշերում Նայիմը բավականաչափ տեղեկություններ ու փաստաթղթեր է ներառել Աբդուլահադ Նուրիի մասին:

Գաղթից փրկված և Հալեպի շրջանում բնակություն հաստատած հայ բժիշկ Նաքքաշյանը շատ պատմություններ էր լսել Նուրիի մասին: Նա գիտեր, որ փրկվածներն ամենուր որոնել են Նուրիին՝ պատասխանատվության ենթարկելու նպատակով: Երբ Նուրիին դեռ փնտրում էին, Նաքքաշյանը Ստամբուլում պատահաբար ներկա է գտնվել նրա գործով դատական լսումներին: Հետագայում նա կարողացավ հասնել Նուրիի ձերբակալմանը: Այդ ժամանակ, 1920 թ. օգոստոսին, Նաքքաշյանի ձեռքն է ընկել Անտոնյանի գիրքը՝ Թալեաթի ու Նուրիի նամակագրությամբ: Գիրքն ուսումնասիրելով Նաքքաշյանը որոշել է Հայոց Զավեն պատրիարքի միջոցով Անտոնյանից խնդրել Աբդուլահադ Նուրիի մասին նյութերը:

Անտոնյանն այս պատմության հանգուցալուծման մասին 1937 թ. գրում է ոմն տիկին Թերզյանի:

«Ես ստացա նամակը... այս հարցի վերաբերյալ ու անմիջապես կապ հաստատեցի Լոնդոնի Հայկական Բյուրոյի հետ: Իմ խընդրանքով նրանք Պատրիարքարան ուղարկեցին բոլոր բնօրինակները: Միևնույն ժամանակ ես ուղարկեցի մի երկարաշունչ պատմություն, որ Նայիմ բեյը մատիտով գրել էր Աբդուլահադ Նուրի բեյի մասին: Մեղադրական փաստաթուղթ էր իր զարհուրելի ղեկավարի մասին: Ուղարկել եմ նաև տանն ունեցած մի քանի բնօրինակներ, որոնք անդրադառնում էին Աբդուլահադ Նուրի բեյին»:

Ստամբուլյան մամուլից մենք տեղեկանում ենք, որ Աբդուլահադ Նուրիի դեմ գործ է հարուցվել, ու այդ փաստաթղթերն իսկապես օգտագործվել են դատավարության ընթացքում: Հայկական «ժողովրդի ձայն» պարբերականի 1919 թ. սեպտեմբերի 19-ի համարում այս մասին տեղեկություններ կան: Թերթը գրում է. «Առաջին ռազմական դատարանում վերջերս տեղի է ունեցել տխրահռչակ մսագործ Աբդուլահադ Նուրիի դատավարությունը»: Ըստ հոդվածի՝ «Բժիշկ Նաքքաշյանը մասնակցել է դատական հետաքննությանը ու ներկայացրել ցնցող փաստաթղթեր հայտնի մարդասպանի դեմ»: Բացի բժշկի վկայություններից՝ Անտոնյանի ուղարկած որոշ փաստաթղթեր ևս ներառվել են դատական գործի նյութերում¹²:

Նուրիի դատը, սակայն, հետաձգվել է: Մինչև դատավճռի հրապարակումը մեղադրյալին Անատոլիա փախչելու հնարավորություն են տվել: Իր նամակում Նաքքաշյանը մանրամասն բացատրում է, թե ինչու է դատն անսպասելիորեն ավարտվել: Ըստ նրա՝ դատական նիստին ներկայացել է Անկարայից ժամանած մի անձանոթ հոգևորական՝ հայր Տաճատ անունով: Նա նշել է.

«Անկարայի ազգային կառավարության գիտությամբ եկել են Ստամբուլ՝ հորդորելու ձեզ, որ բաց թողնեք Նուրիին: Այս գազանը այնտեղ՝ Անկարայում, արտաքին գործերի նախարար Յուսուֆ Քեմալի եղբայրն է: Եթե դուք կախեք այս շանը, 2,000-3,000 հայեր կկոտորվեն այնտեղ: Աղաչում եմ, ազատ արձակեք նրան»¹³:

Նամակում Նաքքաշյանը նաև գրում է. «Մինչև մենք աշխատում էինք լուծում գտնել, Ֆերիդ փաշայի կառավարությունը հրաժարական տվեց, և իշխանության եկան ազգայնական

ուժերը»: Բժիշկը հավելում է, որ ռազմական դատարանի կազմը ևս փոխվել է: Նուրիին ձերբակալած նախկին գլխավոր դատավոր Քյուրտ Մուստաֆա փաշան ինքն է այժմ կալանքի վերցված: Նամակի բովանդակությունը հաստատվում է նաև այդ օրվա մամուլի հրապարակումներով: Ֆերիդի կառավարության 1920 թ. հոկտեմբերի 17-ի հրաժարականից մեկ ամիս չանցած¹⁴ նոյեմբերի 15-ին ձերբակալվել է նաև Մուստաֆա փաշան¹⁵: Ըստ Նաքքաշյանի՝ նա կարճ ժամանակով ձերբակալվել է Նուրիի դատավարությունը նախաձեռնելու համար:

1937 թ. հուլիսի 28-ին Մերի Թերզյանին գրած նամակում Անտոնյանը պատասխանում է այն հարցին, թե ինչ է պատահել Ստամբուլ ուղարկած հուշերի ու փաստաթղթերի հետ. «Լոնդոնից կամ անձամբ իմ ձեռքով Պատրիարքարան ուղարկած թղթերը, որոնք կցվել են նաև Աբդուլահադ Նուրիի գործին, մնացել են այնտեղ: Չգիտեմ՝ ինչ վիճակում են հիմա»: Մինչև այժմ հայտնի չէ այդ թղթերի ճակատագիրը: Այնուամենայնիվ, դրանք ներառվել էին վերոնշյալ գործի մեջ, և տրամաբանությունը հուշում է, որ եթե չեն ոչնչացվել մյուս գործերի հետ, ապա պահվում են ինչ-որ տեղ: Հավանական է՝ կամ Ստամբուլում՝ վարչապետին կից օսմանյան արխիվներում, կամ էլ Անկարայի Զինվորական արխիվում (ATASE - Թուրքիայի գլխավոր շտաբի Զինվորական պատմության և ռազմավարական հետազոտությունների արխիվ)¹⁶:

Ստամբուլ չուղարկված փաստաթղթերի մի մասը կորել է Բեռլինում Սողոմոն Թեհլիրյանի դատավարության ընթացքում: Պատերազմից հետո Բեռլինում ապաստանած Թալեաթ փաշայի սպանության համար Թեհլիրյանը ձերբակալվել ու դատվել էր 1921 թ. մարտին: Թեհլիրյանի դատապաշտպանը

խնդրել էր Անտոնյանի օգնությունը: Նա համաձայնել էր ու մեկնել Բեռլին ձեռքի տակ եղած որոշ նյութերով: Ըստ Անտոնյանի՝ «Երկու նամակների բնօրինակներն ու որոշ հեռագրեր կցվել են Թեհլիրյանի գործին»¹⁷:

Այստեղ անհրաժեշտ է որոշ հստակեցում մտցնել: Անտոնյանի՝ Բեռլին տարած փաստաթղթերն իրականում չեն կցվել գործին, որովհետև ուղղակի կապ չունեին դրա հետ: Ավելին, դատարանն Անտոնյանին չի կանչել ցուցմունք տալու, չնայած նա Բեռլինում էր: Դատավորների կարծիքով՝ հայերի բռնագաղթի ու դրա հետևանքների հարցում Թալեաթի պատասխանատվությունը քննարկելու կարիք չկար, քանի որ դատավարության տրամաբանությամբ՝ Թեհլիրյանի *կարծիքն* այդ մասին արդեն բավական էր¹⁸:

Օրելն ու Յուլջան այս փաստաթղթերի կեղծ լինելն ապացուցված են համարում, որովհետև դրանք չեն օգտագործվել Թեհլիրյանի դատավարությունում¹⁹: Սա սխալ փաստարկ է: Բեռլինն ընդհանրապես մտադիր չէր քննության առնել այս փաստաթղթերը և Թալեաթի ու թուրքական կառավարության դերը հայերի կոտորածներում: Եթե քննարկում լիներ, դատարանը ստիպված կլիներ հաստատել ոչ միայն փաստաթղթերի իսկությունը, այլև Գերմանիայի դերը Հայոց ցեղասպանության գործում: Վերսալի պայմանագրի ծանր պայմանների և երկրի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի առումով սա վտանգավոր թեմա էր, և Գերմանիայի կառավարությունը ձգտում էր հեռու մնալ դրանից:

Այս էր պատճառը, որ Ցեղասպանության տարիներին Հալեպում Գերմանիայի հյուպատոս Վոլտեր Ռոսլերին թույլ չտվեցին ցուցմունք տալ դատարանում²⁰: Իր վերադասներին Գերմա-

Նիայի ԱԳՆ ուղարկած նամակում Ռոսլերը նշում է, որ թույլ-տվության դեպքում կասի, որ Անտոնյանի ներկայացրած փաստաթղթերն իրական են, ու Թալեաթը (և օսմանյան կառավարությունը) ուղղակի պատասխանատու է հայերի կոտորածների (և պատերազմական մյուս հանցագործությունների) համար:

Կարծում ենք՝ օգտակար է Ռոսլերին մեջբերել ամբողջությամբ:

«Եթե Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունն ինձ թույլ տա որպես վկա հարցաքննվել մարդասպան Թալեաթ փաշայի քննության ընթացքում, ես հարկադրված կլինեմ բացել ի պաշտոնե իմացած գաղտնիքներն ու պատասխանել նախագահող դատավորի հարցերին՝ երդվելով չստել որպես վկա: Ես չեմ կարող դեմ գնալ իմ համոզմունքին. Թալեաթ փաշան թուրքական այն պաշտոնյաներից էր, որը ծրագրել էր հայերի բնաջնջումը և իրագործել իր մտադրության համաձայն: Իմ ցուցմունքի գործած տպավորության շնորհիվ՝ առ ոչինչ կդառնան բոլոր մեղմացնող հանգամանքները, թե հայկական հարցը վտանգ էր Թուրքիայի համար, և Ռուսաստանն այն օգտագործում էր Թուրքիան պառակտելու նպատակով: Ենթադրում եմ՝ դատարանն ինձ կներկայացնի Արամ Անտոնյանի հրապարակած այն փաստաթղթերը, որոնք պարունակում են Թալեաթ փաշայի կարգադրությունները հայերին տեղահանելու և ոչնչացնելու մասին: Ես հարկադրված կլինեմ ցուցմունք տալ, որ այդ փաստաթղթերն ամենայն հավանականությամբ իրական են: Ես նաև ստիպված կլինեմ խոստովանել, որ Պոլսից Հալեպ ուղարկված՝ տեղահանության հանձնակատարի դիտարկումները ճշմարտություն էին: Նա ինձ ասաց. «Դուք չեք հասկանում մեր ուզածը. մենք ուզում ենք Հայաստան՝ առանց հայերի»»²¹:

Փարիզ վերադառնալուց հետո Անտոնյանը մի քանի անգամ փորձել է Բեռլինից վերադարձնել իր փաստաթղթերը, բայց՝ ապարդյուն: Ենթադրաբար, դրանք պետք է լինեին գործի նյութերում, բայց, ցավոք, չկան: Անտոնյանի գրածից կարելի է հասկանալ, որ Նայիմի հուշերի ու մյուս թղթերի մի մասը պետք է այժմ գտնվեր Փարիզի Պողոս Նուբար գրադարանում: Նշեցի, որ հայր Գերգերյանը 1950 թ. այցելել է գրադարան, գտել սեղմակով իրար կպած ձեռագիր հատվածներ և այլ փաստաթղթեր, որոնք էլ անմիջապես լուսանկարել է: Սակայն ո՛չ Իվ Թերնոնը, ո՛չ Վահագն Դադրյանը, որոնք համապատասխանաբար 1970 թ. և 1980 թ. այցելել են գրադարան, չեն գտել փաստաթղթերի բնօրինակները: Որտեղ են դրանք հիմա՝ հայտնի չէ: Հուշերի և փաստաթղթերի բնօրինակներից մնացել են միայն Գերգերյանի արած լուսանկարները: Դրանք էլ ներկայացնում ենք մեր աշխատանքում:

Տեքստի իրական լինելու վերաբերյալ կասկածները

1983 թ. իրենց աշխատությունում Օրելն ու Յուլջան կասկածի տակ են դնում Նայիմ էֆենդի անունով օսմանյան պաշտոնյայի գոյությունը՝ պնդելով, թե նրան վերագրվող հուշերն ու կից փաստաթղթերը խմբագիր-հրատարակիչ Արամ Անտոնյանի կեղծիքն են: 1986 թ. իր հոդվածում²² Վահագն Դադրյանը փորձել է ապացուցել այդ նյութերի իրական լինելը, բայց՝ ապարդյուն: Օրելի ու Յուլջայի աշխատության հրապարակումից հետո Նայիմի-Անտոնյանի նյութերը թերահավատությամբ են ընդունվել ոչ միայն գիտական, այլև հասարակական շրջանակներում: Ժամանակի հետ նյութերը սկսել են կոչվել ոչ

թե Նայիմի, այլ Անտոնյանի փաստաթղթեր՝ այն նկատառու-
մով, որ նա է դրանց հեղինակը: Ոչ իրական լինելու պատճա-
ռաբանությամբ թղթերը չեն օգտագործվել գիտության մեջ,
իսկ քաղաքական բանավեճերում Թուրքիայի պաշտոնական
դիրքորոշումը պաշտպանողների համար հիմնական փաս-
տարկ են ծառայել: Նրանք, այսպիսով, շարունակաբար պնդել
են «հայկական շրջանակների կեղծիքների» մասին:

Այս հարցով հետաքրքրվող մարդիկ համակարծիք են եղել,
որ Նայիմ էֆենդու հուշերն ու դրանց կցված թղթերը կեղ-
ծիք են: Հետաքրքիր է, որ, այդուհանդերձ, Օրելի ու Յուզայի
գրքին հաջորդող երեք տասնամյակի ընթացքում նյութի վե-
րաբերյալ ոչ մի նոր աշխատանք չի գրվել: Օրինակ՝ նշված
դիրքորոշումը պաշտպանող և այս թեմայով գրող հեղինակ-
ներ Քամուրան Գյուրյունը²³, Թյուրքքայա Աթայովը²⁴, Գյուն-
տեր Լևին²⁵ և Մաքսիմ Գաուլինը²⁶ ոչինչ չեն ավելացրել Օրելի
ու Յուզայի նյութերին: Նույնիսկ այն գիտնականները, որոնք
ուղղակիորեն չեն անդրադարձել այս թեմային, Անտոնյանի
փաստաթղթերը համարել են կեղծ ու հարկ են համարել նշել
այս մասին: Էրիկ Յուրխերը²⁷, Բեռնարդ Լյուիսը²⁸, Էնդրյու
Մանգոն²⁹, Նորման Սթունն³⁰ ու Մայքլ Գյունտերը³¹ մի քանիսն
են տասնյակ օրինակներից:

Այսպիսով ազդեցիկ պատմաբանները որոշել են ձեռք չտալ
Նայիմի աշխատանքներին, չօգտագործել նրա հուշերն ու թղթ-
թերը՝ սառեցնելով այս թեման: Նույնիսկ երբ նրանք գտնում են
նմանատիպ այլ փաստաթղթեր, դրանք են օգտագործում՝
նշելով, որ նյութը հետագա քննարկման ու ուսումնասիրու-
թյան կարիք ունի³²: Անկեղծորեն նշենք, որ մեր դիրքորոշումը
նույնպես այսպիսին էր, երբ սկսեցինք թեմայի ուսումնասի-

րութունը: Լիովին հավանական էինք համարում, որ խնդրո առարկա փաստաթղթերը կեղծիք են³³: Մեր հերթական աշխատանքներից մեկում նշեցինք, որ չենք մտնի այս հարցի քննարկման մեջ: Երբ նմանատիպ բովանդակությամբ փաստաթղթեր հայտնաբերեցինք, այդ ժամանակ խոստացանք օգտագործել Անտոնյանի հրատարակած փաստաթղթերը³⁴: Այսպիսով, միայն հաջորդ աշխատության մեջ նշեցինք, որ անհրաժեշտ է վերսկսել ամբողջ բանավեճը³⁵:

Նայիմ Էֆենդու հուշերի վերաբերյալ երեք հիմնավոր վերապահում

Հուշերն ու փաստաթղթերն Անտոնյանի կեղծիքին վերագրելով՝ Օրելն ու Յուզան իրենց պնդումները խարսխել են երեք փաստարկի վրա: (1) Նայիմ Էֆենդի անունով անհատի գոյությունը քիչ հավանական է: (2) Պարզ չէ՝ Նայիմի հուշերը բնօրինակներն են, թե՞ ոչ: (3) Հրատարակված փաստաթղթերում կան բազում սխալներ, օրինակ՝ ստորագրություններն ու ամսաթվերը, ուստի դրանք հայ լրագրող Արամ Անտոնյանի կեղծիքն են: Առաջին կետն ապացուցելու համար հեղինակները ներկայացնում են օսմանյան արխիվներում կատարած հետազոտությունը: Նրանք պնդում են, որ հետազոտել են «օսմանյան ավանախները... կայսերական օրենքների ու կարգադրությունների հավաքածուն, առաջին մասնավոր օսմանյան թերթը և օրենքների ժողովածուները, բայց չեն հանդիպել Նայիմ Էֆենդի անվանը»³⁶: Այս պատճառով էլ «դժվար է եզրակացնել, որ Նայիմ Էֆենդի անունով իրական մարդ է եղել»: Հեղինակներն առաջարկում են երեք տարբերակ՝ «(1) Նայիմը հորինված

կերպար է, (2) Նայիմը կեղծանուն է, (3) Նայիմն իրական մարդ է», բայց «միակ բանը, որ կարելի է հաստատել, այն է, որ նույնիսկ եթե Նայիմ բեյը եղել է իրականում, ապա երկրորդական նշանակության պաշտոնյա է եղել և չէր կարող տիրապետել առանցքային գաղտնի փաստաթղթերի»³⁷:

Օրելն ու Յուզան կասկածում են տվյալ անձի գոյությանը, այդ պատճառով էլ չեն ընդունում Նայիմի հուշերը: Իրենց աշխատանքում, Անտոնյանի հեղինակած հուշերին հղում անելիս, նրանք «հուշեր» ու «հիշողություններ» բառերը դնում են չակերտներում՝ կասկածի տակ դնելով դրանց իսկությունը³⁸: Ըստ նրանց՝ հուշերն ու կից թղթերն ամբողջովին Անտոնյանի ձեռքի գործն են³⁹: Օրելն ու Յուզան պնդում են, որ «Անտոնյանն անփութություն է ցուցաբերել կեղծ փաստաթղթերը խմբագրելիս», ու շարունակում են. «Անտոնյանը հապշտապ գրի է առել կեղծ փաստաթղթերը»⁴⁰: Հեղինակները նշում են, որ իրենց աշխատության խնդիրն է եղել ցույց տալ, թե ինչպես է Անտոնյանը ստեղծել այդ փաստաթղթերը: Նրանք պնդում են, որ իրենց գրքով «ոչնչացրել են Անտոնյանի՝ կեղծ փաստաթղթեր ստեղծելու համակարգի հիմքը»⁴¹: Ըստ Օրելի ու Յուզայի՝ «Հայկական շրջանակները հանցագործություն են կատարել՝ ստեղծելով այս կեղծ փաստաթղթերը»⁴²:

Փաստաթղթերի թեմայով թերևս ամենից կտրուկ արտահայտվել է Քամուրան Գյուրյունը.

«Եթե իրական համարվող փաստաթղթերում անգամ մեկ նախադասություն կեղծ է, ապա ամբողջ գիրքը վերածվում է միջազգային կեղծ թղթի... Հետաքրքիր է՝ «անբարո» Նայիմ բեյի պատրաստած ու հայկական կազմակերպության ուսումնասիրած այս

կեղծ փաստաթղթերը գնողները ինչպէս չեն նկատել սա: Մենք երբեք չենք իմանա այս հարցի պատասխանը: Այնուամենայնիվ, արժե նշել, որ «Նայիմ բեյ» կոչվող այս անձը երևի ապրել է միայն ինչ-որ մեկի երևակայության մեջ, և այս կեղծիքների հեղինակն իրականում Անտոնյանն է»⁴³:

Իրոք եղե՞լ է Նայիմ էֆենդի անունով օսմանյան պաշտոնյա

Առաջին ու կարևորագույն հարցը, որին պետք է պատասխանել, հետևյալն է. իրականում գոյություն ունեցե՞լ է Նայիմ էֆենդի անունով օսմանյան պաշտոնյա: Մենք կարող ենք վստահաբար պնդել՝ այո: Անշուշտ եղել է Նայիմ էֆենդի անվամբ օսմանյան պաշտոնյա: Սա հնարավոր է ստուգել տարբեր աղբյուրներով: Առաջինը թուրքական Գլխավոր շտաբի զինվորական Արիսիվի (ATASE-ի) հրատարակած նյութերն են⁴⁴: Երկրորդ և ոչ պակաս կարևոր աղբյուրը երեք տարբեր օսմանյան փաստաթղթերն են, որոնց մեջ հանդիպում է Նայիմ էֆենդի անունը: Մեկը հրատարակել է Անտոնյանը, մյուս երկուսը վերաբերում են հայ պատգամավոր Գրիգոր Զոհրապին: Դրանց բնօրինակները պետք է որոնել Փարիզի Պողոս Նուբար գրադարանում⁴⁵: Այս փաստաթղթերի հիման վրա կարելի է վստահաբար պնդել, որ Նայիմ էֆենդի անունով պաշտոնյա իսկապես ծառայել է Տեղահանության տնօրինության Մեսքենեի ծամբարում և Հալեպում:

ATASE-ի հրատարակած օսմանյան փաստաթղթերը վերաբերում են այն զինվորականներին ու պաշտոնյաներին, որոնք 1916 թ. ամռանը հայերից կաշառք էին վերցրել Մեսքենեի գաղթականների ծամբարում և դրա մերձակայքում:

Հետաքննության պատճառը եղել են զեկույցները, որ Տեղահանության տնօրինության պաշտոնյաները կաշառքի դիմաց աչք էին փակել՝ Հալեպից Դեյր էլ Զոր գաղթելու համար ընտրված հայերին թույլ տալով ճամփորդական վկայականներ ստանալ և փախչել տարբեր ուղղություններով⁴⁶:

Հետաքննությունով անցած օսմանյան պաշտոնյաների ցուցակը գլխավորում է փոխգնդապետ Գալիպը: Նա եղել է բանակի թիկունքի ապահովման վարչության պետ: Գալիպի խնդիրն էր գաղթեցնել այն հայերին, որոնք մեծ թվով կուտակվել էին Եփրատ գետի ափերին, նաև Մեսքենեի ճամբարում: Նրանք սպառնալիք էին դիտարկվում զինվորական շարասյուների համար ու պետք է քշվեին արևելք՝ Դեյր էլ Զոր: Գալիպը նաև պետք է հայերից արհեստավորներ առանձնացնել օսմանյան բանակի համար աշխատեցնելու նպատակով⁴⁷: Դրա փոխարեն, Գալիպն ու իր մերձավորները կաշառք են վերցրել հարյուրավոր հայերից հատուկ ճամփորդական փաստաթղթեր տրամադրելու դիմաց: Այնուհետև նրանք թույլ են տվել, որ հայերը Դեյր էլ Զոր ուղարկվելու փոխարեն փախչեն Հալեպ: Մեսքենեի դեպքերից գազազած՝ Հալեպի նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկը հեռագրերի միջոցով պաշտոնական Ստամբուլի ուշադրությունն է հրավիրել այդ ամենի վրա⁴⁸:

Նա գրել է.

«Հայերի մի մասը, որը պետք է այստեղից գաղթեցվեր Դեյր էլ Զոր, տեղահանությամբ զբաղվող պաշտոնյաների ու պահապանների թողսվությամբ խույս է տվել ու վերադարձել է Հալեպ: Եթե այս ամենին էլ գումարենք փաստաթղթերի բացակայության վրա աչք փակելը, կարելի է ասել, որ տեղահանության խնդիրը փակուղի է մտել»:

Նահանգապետի կարծիքով՝ «պաշտոնյաներն ու պահապաններն առիթից օգտվելով չարաշահում են իշխանությունը»: Սա կանխելու համար նահանգապետը կոչ էր անում ժամանակավորապես «դադարեցնել տեղահանությունը դեպի Դեյր էլ Զոր, քանի դեռ այն չի ընթանում կանոնակարգված ու նորմալ ձևով»: Նահանգապետը նաև դժգոհել է Մեսքենեում հայ երեխաների համար որբանոց կառուցելու կապակցությամբ⁴⁹:

Հալեպից Դեյր էլ Զոր տանող ճանապարհին կատարված նմանատիպ դեպքերի մասին դժգոհություններ է հնչեցրել նաև Դեյր էլ Զորի գավառապետ (մութասարիֆ) Սալիհ Զեքին: 1916 թ. հուլիսի 19-ի հեռագրում նա մայրաքաղաքի իր վերադասներին տեղեկացրել է, որ Հալեպի ոստիկանական բաժանմունքի կարգադրությամբ ժանդարմներով ուղեկցվող «վտանգավոր անհատներից» միայն մեկն է Դեյր էլ Զոր հասել: Մնացած վեցին ճանապարհին թույլ են տվել փախչել: Նույն կերպ Հալեպից Դեյր էլ Զոր ուղարկված 72 հայերից միայն երեքն են իրականում հասել տեղ: Ժանդարմերիայի ուղեկցող պահակախումբը գրեթե ամբողջ խմբին թույլ է տվել փախչել նախքան Դեյր էլ Զորի գավառ հասնելը: Զեքին պահանջել է ժանդարմերիայի վարքագծի մասին հաղորդել Հալեպի իշխանություններին ու պատասխանատու մարմիններին⁵⁰:

Թալեաթը Հալեպի նահանգապետի (վալիի) ու Դեյր էլ Զորի գավառապետի բողոքները ստանալուց հետո, հուլիսի 19-ին, հեռագիր է ուղարկել վալիին՝ պահանջելով ցուցակն այն մարդկանց, «որոնք աչքի են ընկել հայերի գաղթի ժամանակ իշխանության չարաշահմամբ. պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել նրանց դեմ»: Թալեաթը նաև պահանջել է դադարեցնել «աշխատանքի ընդունել այն մարդկանց, որոնց

հեռացրել են տեղական իշխանությունները»⁵¹: Իր պատասխանում Նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկը նշել է. «Հսկիչների ուղեկցությամբ Դեյր էլ Զոր ուղարկված խմբերը ցրվում են անգամ կես ճանապարհին»: Նա պահանջել է մանրամասն հետաքննություն կատարել փախչողների վերաբերյալ, պատասխանատուներին ուղարկել զինվորական դատարան:

Նահանգապետը նաև պահանջել է, որ վերսկսված տեղահանությունների վերահսկող նշանակված Հաքքը բեյը հնարավորինս շուտ ուղարկվի⁵²: 1916 թ. օգոստոսի 4-ի հեռագրում Թալեաթը Հալեպի նահանգապետին տեղեկացրել է, որ «Հաքքը բեյը 15 օր առաջ ճանապարհ է ընկել»⁵³: Նահանգապետի հայցի հիման վրա հետաքննություն սկսելու որոշումը կայացվել է օգոստոսի 8-ին: Հաքքը բեյը լիազորությունների կատարմանն էր անցել «Տեղահանության տնօրինության փոխտնօրեն» կոչմամբ և պետք է այցելեր Մեսքենեի ճամբար՝ իրավիճակի վերաբերյալ զեկույց պատրաստելու համար⁵⁴: Ժամանակի ընթացքում Հաքքը բեյը նաև վերսկսելու էր դեպի Դեյր էլ Զոր տեղահանությունները⁵⁵:

Կոռուպցիայի ու խախտումների հետաքննության զեկույցն ավարտին է հասցվել 1916 թ. հոկտեմբերի 5-6-ին, իսկ ներգրավված անձանց վկայությունները գործին են կցվել հաջորդ ամսից⁵⁶: Հարցազրույցների ու հարցաքննությունների ընթացքում ցուցմունք տված անձանցից մեկը եղել է ոմն Նայիմ էֆենդի: Նա վկայություն է տվել 1916 թ. նոյեմբերի 14-15-ին: Ցուցմունքում նրա անձը ներկայացվում է ըստ անձնագրի. «Նայիմ էֆենդի: Հուսեյն Նուրիի որդին: 26 տարեկան: Ծնվել է Սիլիֆկեում: Նախկինում՝ տեղահանման պաշտոնյա (Sevk Memuru)* Մեսքենեում: Այժմ՝

* Sevk Memur-ը Ցեղասպանության ընթացքում հայերի գաղթով, արտաքսմամբ

հացահատիկի քաղաքային պահեստի պատասխանատու»⁵⁷:

Ցուցմունքում Նայիմը նշել է, որ փոխգնդապետ Գալիպը Մեսքենեի ճամբարում հանդիպել է տեղահանության պատասխանատու պաշտոնյաներին: «Մի օր նա, որպես թիկունքի ապահովման պետ, Զերաբլուսից գործուղվեց Մեսքենե» և մեզ ցույց տվեց «Ռազմական նախարարությունից՝ ուղարկված երկու հեռագրերից մեկը: Հեռագրերում նախարարությունը նշում էր, որ անհրաժեշտ է օգտագործել եփրատի շրջանում վերաբնակեցված որոշակի մասնագիտություն ունեցող հայերի կարողությունները, պաշտպանել որբերին»: Սրանից ելնելով Գալիպը պահանջել է տրամադրել «որոշակի մասնագիտություն ունեցող բոլոր հայերի, նաև Տեղահանության կենտրոնում գտնվող վագոնավարների անունները» և հավելել, որ «գրանցամատյաններ պատրաստվեն առանց ծնողների կամ խնամակալների մնացած երեխաների ցուցակներով»⁵⁸:

Ըստ մեր ձեռքի տակ եղած որոշ օսմանյան փաստաթղթերի՝ Գալիպն իսկապես խոսել է Նայիմ էֆենդուի հետ: 1916 թ. օգոստոսի 7-ին Դեյր էլ Զորի մութասարիֆին ուղարկված հեռագրում Թալեաթ փաշան խոսում է հայ արհեստավորների ծառայություններն օգտագործելու քաղաքականության մասին: Այնուամենայնիվ, ներքին գործերի նախարարը նաև նշում է, որ գաղթականների ճամբարի ղեկավարը՝ Գալիպը, չի կարող արհեստավորների կամայական ընտրություն կատարել⁵⁹: 1916 թ. հուլիսի 29-ով թվագրված մեկ այլ հեռագրում Թալեաթը նշում է,

զբաղվող պաշտոնյաներն էին:

Օսմանյան կայսրության այս գերատեսչությունը բառացի կոչվում էր Harbiye Nezareti՝ Պատերազմի նախարարություն, սակայն գրքում տարբեր տեղերում հեղինակը նաև նշել է Պաշտպանության նախարարություն: Այսինքն՝ տեքստում դրանք օգտագործվում են որպես իրար փոխարինող եզրույթներ:

որ Եփրատի հովտում մեծ թվով հայերի առկայությունը սպառնալիք է զինվորական փոխադրամիջոցների համար, ու պահանջում է հայերին այդտեղից տեղափոխել: Այդ նպատակով սայլապաններին հենց նույն հայերից էին ընտրելու⁶⁰: Այլ կերպ ասած, այս հեռագրերում Թալեաթի արժարժած թեմաները հետաքննության առարկա են եղել:

Իր ցուցմունքում Նայիմը նշել է, որ գրեթե բոլոր հայերն իրենց գրանցել են որպես մասնագիտության տեր, բայց ինքնանձամբ այդ գործընթացին չի մասնակցել: Նա անգամ պընդել է, որ Գալիպին զգուշացրել է, որ դա ճիշտ չէ:

«Ընդհանուր տեղահանության ենթակա անձանց վերադարձը պետք է կարգավորվի Ներքին գործերի նախարարության հրամաններով: Մենք դա չենք կարող անել»:

Չնայած այս ամենին՝ Նայիմը պաշտպանել է Գալիպին՝ նշելով.

«Ես երբեք չեմ լսել փողի դիմաց տեղահանության ուղի փոխելու մասին»:

Նայիմը հերքել է, որ աչք է փակել հայերին Հալեպ փախչելու փաստաթղթեր տրամադրելու հարցում: Նա նշել է. «Իմ ծառայության ընթացքում փախուստի դեպքեր չեն եղել: Տեղահանությունները ժամանակավորապես հետաձգվել են, տեղահանության գրասենյակները (Մեսքենեում) միառժամանակ փակվել են: Այդ ընթացքում մի քանի հայեր փախել են Հալեպ: Ինչպես է հաջողվել՝ գումար վճարելով, թե այլ եղանակով, ես տեղյակ չեմ»⁶¹: Հասկանալի է, թե ինչու է Նայիմ էֆենդին հերքել իր ներգրավվածությունը, անգամ տեղյակ լինելը: Պատճառն այն է, որ ինքն էլ է եղել այն պաշտոնյաների մեջ, որոնք կաշառքով

խոյս տալու և Հալեպ վերադառնալու հնարավորություն են տվել հայերին: Փրկագներն իսկապես մեծ են եղել:

Մեսքենեի ճամբարից փրկված հայերի հուշերում փոխգընդապետ Գալիպն ու իր շքախումբը եղել են հայ արհեստավորներին և սայլապաններին կաշառքով ընտրողները: Օրինակ՝ այդ օրերին Մեսքենեում եղած Գրիգոր Անկութը գրում է.

«Գալիպ բեյը նշանակվել է թիկունքի ապահովման պետ՝ Մեսքենեից Դեյր էլ Զոր: Նա իր նոր աշխատանքին է անցել՝ գաղթի ենթակա խմբերից արհեստավորների ու բանվորների ընտրելով: Դա խոշոր չափի կաշառքների հնարավորություն էր: Բոլոր հայերը գիտեին Դեյր էլ Զորի սարսափներն ու վայրագությունները և շոայլ խոստումներով (անգամ մրցակցելով) Գալիպ բեյին համոզում էին կաշառք վերցնել: Փոխարենը նրանք ընտանիքով մնում էին Համամում կամ զինվորական ճամբարներից մեկում: Այդպիսով, ամեն ընտանիքի համար նրանք վճարում էին հինգ օսմանյան լիրա»⁶²:

Այս ամենը վկայում է, որ 1916 թ. ամռանը Մեսքենեում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ Անտոնյանի ու Նայիմի տրամադրած տեղեկությունները ճիշտ են: Մի խումբ հարուստ հայերի՝ Հալեպ փախչելու թույլտվության ժամանակահատվածը, որ Նայիմը քննարկել էր Անտոնյանի հետ, համընկնում է վերոնշյալ ամսաթվի հետ:

Նայիմ էֆենդուն հիշատակող օսմանյան փաստաթղթերը

Արդեն նշել ենք, որ մեր ձեռքի տակ կան Նայիմ էֆենդու անվան հիշատակությամբ երեք օսմանյան փաստաթղթեր:

Երկուսն առնչվում են ականավոր հայ մտավորական ու պատգամավոր Գրիգոր Զոհրապին⁶³: Այս թղթերի բնօրինակները պետք է որոնել Փարիզի Պողոս Նուբար գրադարանում: Դրանք, սակայն, չեն հիշատակվում ո՛չ Նայիմի հուշերում, ո՛չ Անտոնյանի գրքում⁶⁴: Առաջինը 1915 թ. նոյեմբերի 11-ին Հալեպի նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկի գրած նամակն է Տեղահանության փոխտնօրեն Աբդուլահադ Նուրիին: Նամակին կից գրության մեջ Նուրին նշում է. «Նայիմ էֆենդի, որդիս, գնա էյուպ բեյի մոտ: Նա պետք է որ մի տեղ գրանցված լինի: Մանրամասն հետաքննիր: Գտածներդ հանձնիր թղթին»⁶⁵:

Երկրորդ փաստաթուղթը 1915 թ. նոյեմբերի 17-ով թվագրված հեռագիր է, որը ներքին գործերի նախարար Թալեաթն ուղարկել է Հալեպի նահանգապետին: Թալեաթը նշել է, որ Գրիգոր Զոհրապը, որի ներկայությունն անցանկալի էր Ստամբուլում, ուղարկվել է 6-րդ բանակի վերահսկողության տակ գտնվող շրջան, և որ այս մասին իրեն արդեն տեղեկացրել են: Զոհրապը, ըստ հեռագրի, «զոհվել է պատահարի հետևանքով», հետաքննությունն իրականացրել են «Ուրֆայի մութասարիֆն ու Եփրատի ճակատի թիկունքի ապահովման պետը»: Հետաքննության փաստաթղթերն ուղարկվել էին Հալեպի թիկունքի ապահովման պետին, և Թալեաթը Հալեպի նահանգապետին խնդրում էր նշանակել հարցը հետաքննող պաշտոնյա⁶⁶: Հեռագիրը ստանալուց հետո նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկը նոյեմբերի 19-ին նյութն ու հարակից գրությունն ուղարկել է Աբդուլահադ Նուրիին: Գրության մեջ ասվում էր. «Ես երեկ խոսեցի նրա հետ: Կարծում եմ՝ այդ թղթերը կորպուսի հրամանատար Շևքի փաշայի մոտ են: Փնտրիր նրա մոտ»: Նույն օրը Նուրին դիմել է Նայիմին՝ խնդրելով իրավիճակի հետաքննություն

անցկացնել: Նա էլ նոյեմբերի 22-ին մեկ այլ գրություն է կցել առ այն, որ հետաքննության «փաստաթղթերը Շևքի փաշայի մոտ չէին»: Նոյեմբերի 24-ի մեկ այլ լրացումով Նուրին հավելել է. «Սա մի հեռու տեղ պահիր, Նայիմ էֆենդի»⁶⁷:

Երրորդ փաստաթուղթը Թալեաթ փաշայի՝ 1915 թ. դեկտեմբերի 1-ին ուղարկած հաղորդագրությունն է, որի ձեռագիր պատճենը կա Նայիմի հուշերում: Դրա լուսանկարն Անտոնյանն օգտագործել է իր գրքի բոլոր երեք հրատարակություններում⁶⁸: Հեռագրում Թալեաթը հաղորդում է, որ տարբեր շրջաններում գործող ամերիկյան հյուպատոսությունները որոշ տեղեկություններ են ձեռք բերել հայերի գաղթի իրական պատկերի մասին: Նա այդ եզրահանգմանն էր եկել Ստամբուլում ԱՄՆ դեսպանության հուշագրից, որը կազմվել էր Վաշինգտոնի ուղիղ հրահանգով: Թալեաթը պահանջում էր ուշադիր լինել, որ հայերի գաղթի ընթացքում ակնբախ որևէ միջադեպ չգրանցվեր քաղաքների, գյուղաքաղաքների ու բնակավայրերի հարակից շրջաններում: Թալեաթի խնդիրն այդ շրջաններում գտնվող օտարերկրացիներին համոզելն էր, որ գաղթի պատճառը զուտ բնակչության վերաբնակեցումն է: Դրա համար էլ քաղաքական նկատառումով ժամանակավորապես որոշ կարեկցական վերաբերմունք էր անհրաժեշտ, իսկ սովորական միջոցառումները՝ սպանությունները, պետք է ի կատար ածվեին հատուկ վայրերում:

Ավելին, Թալեաթը հրահանգել էր գտնել, ձերբակալել ու դատել Ամերիկայի հյուպատոսություններին տեղեկություններ փոխանցողներին: Նահանգապետ Աբդուլհալիկն ու Նուրին դեկտեմբերի 3-ին, 4-ին ու 5-ին այս հեռագրերին կից գրություններ են ավելացրել Ամերիկայի հյուպատոսներին տեղեկություններ փոխանցողներին բացահայտելու միջո-

ցառումների թեմայով: Այս գրություններն ավարտվել են հետևյալ տողերով. «Գրել Նայիմ էֆենդուն: ...Նա տեղյակ է»⁶⁹:

Այս փաստաթղթերը, այսպիսով, անհերքելի ապացույցներ են, որ Նայիմ էֆենդի անունով օսմանյան պաշտոնյա իսկապես գոյություն է ունեցել:

Նայիմ էֆենդու տեղակայման վայրերն ու Նրա կապն Անտոնյանի հետ

Ցավոք, մենք քիչ տեղեկություններ ունենք Նայիմի անձնական կյանքի ու մասնագիտական գործունեության մասին: Միակ հրական աղբյուրը Նրա հեղինակած նյութերն են ու Թուրքիայի Գլխավոր շտաբի հրատարակած փաստաթղթերը, որոնցում Նրա մասին հիշատակումներ կան: Անտոնյանի հրատարակած Նայիմի հուշերում, որոնց բնօրինակներն այժմ մեր ձեռքի տակ չեն, Նայիմը նշում է, որ նախքան Տեղահանության տնօրինությունում նշանակվելն ինքը եղել է Ռեջիի քարտուղարը* Ռաս ու Այնում⁷⁰: Նայիմը պնդում է, որ Հալեպում Նուրիի ժամանելուց օրեր առաջ է նշանակվել Նուրիի աշխատանքին աջակցելու նպատակով: «Ես ժամանեցի Հալեպ: Ճակատագրի կամքով նշանակվեցի Աբդուլահադ Նուրիի բեյի գրասենյակի գլխավոր քարտուղար: Նա 3-4 օր առաջ էր եկել, որպես Տեղահանությունների գլխավոր տնօրենի օգնական»⁷¹:

Աբդուլահադ Նուրիի նշանակման հստակ օրը հայտնի չէ: Շյուքրու բեյը⁷², որը նախկինում եղել էր Հալեպում Ցեղերի ու գաղթականների վերաբնակեցման տնօրինության ղեկավարը,

* Ռեջին Օսմանյան կայսրությունում ծխախոտի մենաշնորհ ունեցող կազմակերպություն էր:

1915 թ. հոկտեմբերի 8-ի հեռագրում ցանկություն է հայտնել, որ որևէ մեկը Տնօրինությունում աշխատանքի նշանակվի: Նա նշել է. «Անհրաժեշտ է այնպիսի մարդու ուղարկել, որը կան կօգնի Հալեպի նահանգապետին, կան կլինի նահանգապետի օգնականը գաղթականներին ուղարկելու և վերահսկելու գծով»⁷³: 1915 թ. հոկտեմբերի 13-ի պատասխան հեռագրում ներքին գործերի նախարար Թալեաթը Շյուքրու բեյի կարծիքն է հարցրել Աբդուլահադ Նուրի բեյին գլխավոր տնօրեն նշանակելու վերաբերյալ⁷⁴: Սա ապացուցում է, որ մինչև այդ տարեթիվը Շյուքրու բեյը պիտի արդեն պաշտոնավարելիս լիներ: Այսպիսով, եթե մենք անգամ չգիտենք ստույգ տարեթիվը, եղած փաստաթղթերի հիմքով կարելի է որոշակի վստահությամբ պնդել, որ նա իր աշխատանքը սկսել է նոյեմբերի սկզբին:

Նուրին Ստամբուլից դուրս է եկել 1915 թ. նոյեմբերի 1-ին՝ նոր նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկի ուղեկցությամբ: Դրանից երկու օր առաջ, հոկտեմբերի 30-ին, ներքին գործերի նախարար Թալեաթը Շյուքրու բեյին ուղարկած հեռագրում գրել է. «Հալեպի նահանգապետն ու Աբդուլահադ Նուրի բեյը կմեկնեն երկուշաբթի»⁷⁵: Նոյեմբերի 7-ին Հալեպից ուղարկված մեկ այլ հեռագրում նշվում է, որ նոր նահանգապետը երեկոյան հասել է Հալեպ⁷⁶: Այս տեղեկությունների հիման վրա կարող ենք եզրակացնել, որ Նայիմն իր պարտականությունների կատարմանն անցել է 3-4 օր անց:

Իր հուշերում Նայիմը նշում է, որ իրեն պետք է ուղարկեին Մեսքենեի ծամբար՝ հետագա տեղահանություններով զբաղվելու համար: Թեև նա ժամկետ չի նշում, սակայն գրում է, որ «Մեսքենե ուղարկվելուց հետո, որպես գաղթականների տեղահանությամբ զբաղվող պաշտոնյա, այնտեղ մնացել

է 2 ամիս»⁷⁷: Թուրքիայի զինվորական արխիվը հրատարակել է 1916 թ. ամռանը տեղի ունեցած հարցաքննությունները: Դրանց զննությամբ Գալիպը Նայիմին հարցաքննության է կանչել մայիսի սկզբին: Սա նշանակում է, որ Նայիմն այդ ժամանակ Մեսքենեում է եղել⁷⁸: Մեսքենե գործուղվելու պատճառն այն էր, որ ճամբարից ու մերձակայքից կազմակերպվող տեղահանությունն ընթանում էր անկանոն ձևով: Իր հուշերի մի մասում, որի բնօրինակը մեր ծեռքի տակ չկա, Նայիմը նշում է, որ կանչվել է էյուպ բեյի մոտ: Նա ասել է.

«Նայիմ էֆենդի, Մեսքենե ուղարկվող պաշտոնյաներից մենք օգուտ չտեսանք: Հիմա դու ես զբաղվելու այդ հարցով ու տեղյակ ես վերևից եկող հրամաններին: Տես՝ հանկարծ այդ մարդկանց (հայերին) ողջ չթողնես: Թե պետք է, սպանիր նրանց անձամբ. դա մեծ հաճույք է»⁷⁹:

1916 թ. նոյեմբերին, Գալիպի հետաքննության գործում ցուցմունք տալու պահին, Նայիմն արդեն տեղահանության հարցերով պատասխանատուն չէր: Նա աշխատում էր Հալեպի քաղաքային հացահատիկի շտեմարանում: Ոչ մի տեղեկություն չկա, թե ինչու է նա նոր աշխատանքի նշանակվել և երբ է այս աշխատանքը թողել: Նախորդ պաշտոնից հեռանալու, նրա պնդումով, պատճառը պահանջված արտաքսումը չկատարելն էր: Իր հուշերի այդ մասում, որը հրատարակել է Անտոնյանը, Նայիմը նշում է. «Ես այնտեղ մնացել եմ 2 ամիս: Միայն մեկ անգամ եմ իրականացրել գաղթականների տեղահանություն: Ուղարկածս մարդկանց թիվը չէր գերազանցում երեք տասնյակը»: Անտոնյանը, ընդհանուր առմամբ, պաշտպանում է այս թեզն ու ինքն էլ է կրկնում Նայիմին՝ նշե-

լով. «Նայիմն այս գործին հարմար չէր, որովհետև չար մարդ չէր: Նա ձևականորեն կազմակերպեց մի քանի արտաքսում դեպի Դեյր էլ Զոր, սակայն շուտով նրանք (վերադասները) կորցրին հավատը Նայիմի նկատմամբ ու նրան հետ կանչեցին, որովհետև չէր գաղթեցրել ամբողջ ճամբարը»⁸⁰:

1916 թ. հուլիսի 11-ին Հալեպի նահանգապետ Մուստաֆա Աբդուհալիկի հեռագրերն ու հետաքննությունները (տես 49-րդ և 52-րդ հղումները) վկայում են, որ Մեսքենեից հայերի արտաքսումն իրոք կատարվել է անկանոն ձևով, ինչպես նշում էր Նայիմը: Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռոսլերն Անտոնյանի գրքի վերաբերյալ Թեհլիրյանի դատավարությանը տված զեկույցում ևս նմանատիպ տեղեկություններ է տրամադրել:

Նա նշում է.

«Ինձ ծանոթ շատ իրադարձություններ նկարագրված են բացառիկ ճշգրիտ: Մյուսները, որոնց ծանոթ չեմ, պարզում են այն գործընթացները, որոնց ես ականատես էի, բայց չէի կարողանում բացատրություն գտնել: Այդպես է մեծ թվով հայերի վերադարձը Մեսքենեից Հալեպ: 13-րդ էջում հեղինակը համոզիչ բացատրում է, որ Նայիմ բեյը, ինչպես և Մեսքենեի ճամբարի տնօրեն Հուսեյն բեյը, չեն կատարել իրենց ստացած զարհուրելի հրամանները»⁸¹:

Նայիմի ճշմարտացիությունը հաստատվում է նաև Հաքքը բեյի պատմությամբ: Նա Հալեպում Տեղահանությունների տնօրենի օգնականն էր: Հաքքը բեյը Հալեպից Մեսքենե էր ուղարկվել 1916 թ. օգոստոսի 8-ին՝ գաղթի ու կոռուպցիայի վերաբերյալ բողոքներով զբաղվելու և զեկույց պատրաստելու համար: Հաքքըն ևս ցուցմունք է տվել Գալիպի ու նրա ընկերների վերաբերյալ հետաքննության գործով:

Նա նշում է.

«Ինձ առաջադրանք է տրվել հետաքննություն սկսել Մեսքենեի Տեղահանությունների գլխավոր տնօրինությունից Հալեպի նահանգապետին ուղարկված բազում զեկույցների վերաբերյալ, որովհետև Մեսքենեից տեղի ունեցող արտաքսումը չի ընթանում ըստ պլանի: Հետաքննությունը սկսել եմ Մեսքենե հասնելուն պես Տեղահանությունների գլխավոր տնօրինությունից: Պարզել եմ, որ գաղթը չի կազմակերպվում կանոնավոր ձևով: Ըստ տեղեկությունների՝ առևտրականներն ու վագոնավարները կաշառքով ազատվում էին գաղթից՝ առևտրական լինելու պատրվակով»⁸²:

Հաքքը բեյի պատմությունից կարելի է եզրակացնել, որ Նայիմի պաշտոնանկությունը կապված է եղել կաշառակերության դեպքերի հետ: Պատճառներից մեկն էլ այն էր, որ գաղթի կազմակերպումը լիովին դադարել էր դեպի Մեսքենե ու այնտեղից էլ դեպի այլ վայրեր: Անտոնյանը ևս Հալեպի ճամբարների մասին իր անտիպ նոթերում նշում է, որ Նայիմը հարցաքննվել է մի քանի հայ ընտանիքների՝ Մեսքենեից կաշառքով փախչելու հնարավորություն տալու համար: Չնայած հարկադրանքին հարցաքննության ժամանակ Նայիմը չի մատնել Անտոնյանին ու մյուս հայերին:

Անտոնյանի խոսքով.

«Նայիմ Սեֆա բեյը Մեսքենեից կանչվել է Հալեպ, որտեղ նրան ներկայացրել են ճամբարից փախած հայերի ցուցակը: Նրան հարցրել են՝ ճանաչո՞ւմ է այդ հայերին և երբևէ հանդիպե՞լ է Մեսքենեում: Նայիմը երդվել է, որ առաջին անգամ է լսում այդ անուն-

ները: Չսայած Նայիմի՝ անստեղյակի դեր խաղալուն՝ նրան շուտով ստիպել են թողնել պաշտոնը»⁸³:

Մենք դժվար թե իմանանք՝ եղել է հետագա հետաքննություն, որը հանգեցրել է Նայիմի պաշտոնանկությանը, թե՛ այս հետաքննությունը կապված է եղել Գալիպի ու նրա ընկերների դատավարության հետ: Գլխավոր շտաբի հրատարակած նյութերից պարզ է դառնում, որ Գալիպի հետաքննության ժամանակ Նայիմն արդեն իր նախկին պաշտոնին չի եղել: Այնուամենայնիվ, նա Հալեպում էր, կանչվել էր վկայություն տալու: Ահա թե ինչու է հավանական, որ նա մեկ այլ հետաքննության պատճառով է պաշտոնից հեռացվել: 1916 թ. հուլիսի 5-ին Ուրֆայի մութասարիֆ Ֆեթիի բեյին Թալեաթի ուղարկած հեռագրից պարզվում է, որ հետաքննություններն ու պաշտոնանկությունները շարունակվել են ամբողջ ամառ: Հեռագրում Թալեաթը նշել է մի հետաքննության մասին, որը «իրականացվում է Ռաքքայի ենթաշրջանում գաղթականների վերաբնակեցման ու սննդի մատակարարման հարցում պաշտոնական դիրքի չարաշահումների ու կաշառակերության գործով: Ակնհայտ էր դարձել, որ դրա անհրաժեշտությունը կա»⁸⁴:

Կից գրագրությունից պարզ է դառնում, որ Ռաքքայում կոռուպցիայի ու ապօրինությունների թեմայով հետաքննությունը սկսվել է 1916 թ. մարտին⁸⁵: Գիտենք, որ 1916 թ. հուլիսի 19-ին Թալեաթը հեռագիր էր ուղարկել Հալեպ՝ պահանջելով աշխատանքից հեռացնել պաշտոնական դիրքը չարաշահողներին⁸⁶: Ամբողջ գրագրությունից կարելի է հասկանալ, որ 1916 թ. գարնանն ու ամռանը մեծ թվով հայեր կարողացել են փախչել գաղթականների ճամբարներից՝ կաշառք տալու միջոցով, ինչն էլ հանգեցրել է հետաքննություններ սկսելուն: Գուցե Նայիմին

Հալեպ են կանչել ու պաշտոնանկ արել այս գործի հետևանքով:

Մեսքենեում գրած նոթերում Անտոնյանը մանրամասն նկարագրում է Նայիմի հետ իր հանդիպումն ու դրա արդյունքները: Մենք տեղյակ չենք՝ որ ամսին է Անտոնյանը ժամանել Մեսքենե: Հեղինակը տարեթիվ չի նշում: Ռիտա Կույունջյանն Անտոնյանի կենսագրությունում նշում է մոտավոր ժամանակը՝ 1916 թ. փետրվար⁸⁷: Անտոնյանն ասում է. «Իմ Մեսքենե ժամանումից հետո երկու այլ անձինք ևս նշանակվեցին պաշտոնի»: Նրանցից մեկը Նայիմն էր: Ըստ Անտոնյանի՝ Նայիմը մարդ էր, «որը վստահություն էր վաստակել գաղթականների շրջանում: Նա հարբեցող էր, մուլի խաղացող ու, փողի մըշտական կարիք ունենալով, սիրում էր կաշառք վերցնել: Նրա կարգավիճակը թույլ էր տալիս գաղթականներին ասել, որ ֆինանսական նվիրաբերումների շնորհիվ՝ կարելի է ընտանիքով փախչել Հալեպ: Նայիմի շնորհիվ մեծ թվով հարուստ ընտանիքներ, հիմնականում Ադանայից ու Կոնիայից, կարողացան լքել Մեսքենեն ու հասնել Հալեպ»⁸⁸:

Անտոնյանը ճամբարում մնացել է 5 ամիս: Նա Մեսքենեից Հալեպ մեկնել է 1916 թ. հունիսին⁸⁹: Գրիգոր Անկութը, որը հուշեր է գրել Մեսքենեում եղած ժամանակ, նշում է, որ հունիսի 9-ին Անտոնյանից նամակ ստանալուց հետո մեկնել է Մեսքենե ու տեսել նրան⁹⁰: Մեսքենեում եղած ժամանակ Անտոնյանը հյուրընկալվել է Քոնիայից եկած Բոյաջյանների վրանում ու անգամ օգտվել նրանց ազգանունից⁹¹: Հավանական է, որ մայիսին նա Նայիմի հետ բանակցել է Հալեպ մեկնող 16 հայ ունևոր ընտանիքներին փրկելու հարցով⁹²:

Մեսքենեի մասին նոթերում Անտոնյանը խոսում է Նայիմի հետ ծանոթության մասին: Նա նշում է, թե ինչ է պատահել,

երբ Նայիմը եկել է Ադանայի ընտանիքներից մեկի վրան՝ նախաճաշի: Սուրճ խմելիս Նայիմն ուղիղ տեքստով ասել է, որ հարավ մեկնող բոլոր հայերը սպանվելու են, ու լավագույն տարբերակը տեղում առժամանակ սպասելն է հնարավորության դեպքում Հալեպ փախչելու համար: Ըստ Նայիմի՝ դա լիովին իրագործելի էր⁹³:

Ո՛չ հայ ընտանիքները, ո՛չ Անտոնյանը Նայիմին չէին վրստահում, սակայն այլ տարբերակ չունեին⁹⁴: Ի վերջո, Նայիմը պատրաստել է փախուստի պլան ու Անտոնյանին խնդրել է մեկնել Հալեպ՝ Նախլի անունով մի արաբ կառապանի հետ հանդիպելու: Անտոնյանը մանրամասն հիշատակում է իրենց ուղին և ճանապարհի դժվարությունները: Նա չորս-հինգ օրից հասել է Հալեպ ու գտել կառապանին: Այսպիսով, Անտոնյանի առաքելությունը տվել է իր պտուղները:

Նա նշում է.

«Հետագայում որոշ ընտանիքների անդամներ բռնվեցին Հալեպում՝ Մեսքենեից ապօրինի փախչելու համար: Ինձ նույնպես ձերբակալեցին, սակայն արագ ազատեցին՝ ընկերներիս տրամադրած փաստաթղթի շնորհիվ: Մյուսներին առերեսեցին Նայիմի հետ, որը վերադարձել էր Հալեպ: Նա երդվեց Աստծո անունով, որ նրանց չի տեսել Մեսքենեում: Այսպիսով, այդ մարդիկ ազատ արձակվեցին: Կառապան Նախլին, որին ևս ձերբակալել էին, համառորեն հերքեց իր մասնակցությունը: Շատ արաբներ դավարատորեն են անում: Նախլիին ամիսներ շարունակ պահեցին բանտում, բայց նա չմատնեց ոչ մեկին»⁹⁵:

Անտոնյանի ու Նայիմի հարաբերությունները շարունակվել

են նաև դրանից հետո: Նայիմը երբեք շանտաժի չի ենթարկել հայ ընտանիքներին, պարզապես պահանջել է ավելի շատ գումար, երբ դրա կարիքն ունեցել է: Անտոնյանի միջոցով պահանջած գումարները, ըստ Անտոնյանի, մեծ չեն եղել⁹⁶: Նայիմի ու Անտոնյանի միջև ձևավորվել է վստահության մթնոլորտ, որի արդյունքում 1918 թ. նոյեմբերին Անտոնյանը գնել է Նայիմի հուշերն ու կից թղթերը:

Հիշարժան վերջին կետն այն է, որ Անտոնյանի նշած Տեղեկատվության մասին համաձայնագիրը, որ հրատարակել է Թուրքիայի Գլխավոր շտաբը, չի սահմանափակվում կոռուպցիայի ու հայ գաղթականների՝ Հալեպ փախչելու հարցով: Օրինակ՝ հարցաքննության ժամանակ Գալիպն ու իր շրջապատը ցուցմունք են տվել, որ սպանել են Սոֆյանների ընտանիքն ու շուկայում վաճառել նրանց ունեցվածքը: Իրենց հուշերում Անտոնյանն ու Անկութը մանրամասն անդրադարձել են այս դեպքին⁹⁷: Հատկանշական է, որ այս սպանության մանրամասները նշված են նաև համաձայնագրում:

Նայիմ էֆենդու անձի ու բնավորության մասին

Արամ Անտոնյանն իր գրքում, ապա նաև 1921 թ. հունիսի 10-ին Սողոմոն Թեհլիրյանի փաստաթանին մանրամասն գրած նամակում Նայիմին ներկայացնում է խիստ դրական լույսի ներքո (տե՛ս Հավելված 5): Իր գրքում նա Նայիմին կոչում է «խղճի ձայն»: Երկու դեպքում էլ Անտոնյանը գիտակցաբար ստում է՝ հերքելով, որ Նայիմը Մեսքենեում կամ Հալեպում կաշառք է ստացել գաղթականներից:

Գրքում Անտոնյանը գրում է.

«Երբ կեղծ անուններով Հալեպում նորից ձերբակալվեցինք, կառավարությունը չկարողացավ ապացուցել, որ մենք փախել ենք Մեսքենեից: Նայիմ բեյի ցուցմունքը կարող էր բացառիկ կարևոր լինել այս առումով, բայց նա մեզ չմատնեց, ոչ էլ ինչ-որ բան պահանջեց դրա դիմաց: Իրականում նա կարող էր ամեն ինչ էլ պահանջել ունևոր ընտանիքներից, որովհետև նրանք գիտեին, որ արտրվելու դեպքում մահն անխուսափելի էր»⁹⁸:

Նույն կերպ Թեհլիրյանի փաստաբանին հղած նամակում Անտոնյանը Նայիմին բնորոշում է որպես «բացառիկ լավ ու անվնաս մարդ»: Սակայն 1918 թ. գրառումներից գիտենք, որ Անտոնյանը նրան բնութագրում է որպես խմիչքին տրված ու խաղամոլ մի մարդու, որը շարունակում էր Հալեպում մարդկանցից գումար պահանջել նույնիսկ նրանց մեկնելուց հետո:

Մերի Թերզյանին տարիներ անց (հուլիսի 28, 1937 թ.) գրած նամակում Անտոնյանն ընդունում է, որ իր գրքում ու Թեհլիրյանի փաստաբանին գրած նամակում դիտմամբ սխալ է ներկայացրել Նայիմին:

Նա նշում է.

«Այս ամենը գրում եմ խիստ գաղտնիությունը պահելու պայմանով՝ ելնելով քո հետաքրքրությունից: Ես գրքումս ներկայացրել եմ բոլորովին այլ Նայիմի: Նրա մասին ճշմարտության վերհանումը որևէ օգուտ չունի: Նայիմ բեյն ամբողջովին անբարոյական կերպար էր»:

Անտոնյանը նաև խոստովանել է Թերզյանին.

«Բեռլինում Թեհլիրյանի փաստաբաններին տված հուշագրում, որի պատճենը կցում եմ, կտեսնես, թե ինչ պայմաններում մենք ձեռք բերեցինք գրքումս ներկայացված փաստաթղթերը: Հուշա-

գիրն ավարտուն չէ: Կային հատվածներ, որ չէի կարող նշել գըրքումս կամ Թեիլիրյանի փաստաբանների նամակում, որպեսզի չվարկաբեկեմ Նայիմ բեյին, որն այդքան էլ մաքուր մարդ չէր»⁹⁹:

Ինչո՞ւ էր Անտոնյանը թաքցնում իր կարծիքը Նայիմի մասին: Նամակից կարելի է կռահել, որ հեղինակի մտահոգությունն այն չէր, որ Նայիմը խմիչքին ու խաղերին տրված բարոյագուրկ պաշտոնյա է, և նրա տեղեկությունները հավաստի չեն համարվի: Ըստ Անտոնյանի՝ Նայիմը «բացառություն չէր Հալեպի վարչակազմում, որում կային այնպիսի ստահակներ, որոնց համեմատ Նայիմ բեյը սուրբ էր»¹⁰⁰:

Անտոնյանը չի սխալվում: Մայր Ազմիի՝ 1916 թ. հունիսի 20-ին Ստամբուլ ուղարկած զեկույցում Հալեպի օսմանյան պաշտոնյաների մասին կարդում ենք.

«Վստահ եղեք, որ բացի նահանգապետից, բոլոր կարևոր պաշտոնյաները Հալեպում հսկայական գումարներ են ստանում: Ընդունեք սա որպես իրողություն: Ամեն մեկը գողանում է: Կարծես դա սովորական երևույթ է, մեր վստահությունը վայելողներից մինչև մեզ չհանդիպածները՝ ստորին օղակներում: Նույնիսկ անուններ տալու կարիք չկա»¹⁰¹:

Օսմանյան պաշտոնյաների շրջանում տարածված էին ոչ միայն կոռուպցիան ու կաշառակերությունը, այլև հարբեցողությունն ու խաղամոլությունը:

Թալեաթ փաշան, որը բազում պատմություններ էր լսել Բարոն Հոթելի մասին, 1916 թ. հուլիսի 22-ի հեռագրում գրել է.

«Տեղեկություններ կան, որ արտասահմանյան քաղաքացիություն ունեցող մի հայ՝ Բարոն անունով, իր անվամբ հյուրանոց ունի Հա-

լեպում: Այն օգտագործվում է ոչ այնքան որպես ճանապարհորդների հյուրատուն, որքան խաղամոլության որջ: Խաղադրույքների համար վարկեր տրամադրելով՝ այն ծառայում է տարբեր տեղերից ժամանող բարձրաստիճան պաշտոնյաների հաճույքներին: Այս և այլ եղանակներով Բարոնն ազդում է նահանգի ղեկավարության վրա՝ հասնելով իր նպատակներին»:

Այնուհետև Թալեաթը պահանջել է այն պաշտոնյաների ցանկը, որոնք հարբեցողության ու խաղամոլության պատճառով հյուրանոցի սեփականատիրոջ ազդեցության տակ են հայտնվել¹⁰²:

Ի պատասխան Թալեաթի պահանջի՝ Հալեպի նահանգապետ Աբդուլհալիկը նշել է.

«Բարոնի մասին տեղեկությունները ճիշտ են: Բարձրաստիճան պաշտոնյաների աջակցությունը վայելելով՝ նա կառավարում է ստորադասներին: Այս աջակցությանն ու ազդեցությանը հասնելու համար նա դիմում է բոլոր միջոցներին. ամեն առիթով խաղում է հյուրանոցում, ներգրավում բարձրաստիճան պաշտոնյաների: Ամեն պաշտոնյա, որը թուլություն ունի կանանց ու խաղերի հանդեպ, ի վերջո, դառնում է Բարոնի ընկերը»¹⁰³:

Եվ այսպես, եթե խնդիրը Նայիմի կաշառակերությունը, հարբեցողությունն ու խաղամոլությունը չէ, ապա ինչո՞ւ է Անտոնյանը ստել: Բացատրության համար թերևս հարկ է ավելի մոտիկից ծանոթանալ Նայիմի բնույթին:

«Նայիմը լիովին անբարո կերպար էր: Նա ուներ թուլություններ, որոնց պատճառով ստիպված էր առևտրի դիմել, բայց՝ ոչ բոլոր դեպքերում: Տարբերությունը զգալի է: Մեր երկար հարաբերու-

թյունների ընթացքում նա երբեք չի ստել: Կարճ ասած, նա հակասական կերպար էր՝ լավ ու վատ գծերով: Իմ գրածից կարելի է կռահել, որ մենք կարողացել ենք օգուտ քաղել լավ գծերից՝ առանց անհանգստանալու վատերի համար: Ես մշտապես մտածում եմ նրա մասին ու համակրանք ունեմ, ինչը ժամանակի ընթացքում չի փոխվել: Ես մշտապես վտանգների եմ ենթարկվել նրա հետ հարաբերությունների պատճառով, ինչը բնորոշ է իմ արկածախնդիր էությանը: Նա երբեք չի դավաճանել ինձ»¹⁰⁴:

Ահա այս պատճառով է Անտոնյանը վստահել Նայիմին: Նա շարունակում է.

«Ի մի բերելով կարելի է ասել, որ նա լավ մարդ էր: Չնայած համընդհանուր չարիքին, որով շրջապատված էր, Նայիմն ամենից շատ էր վստահություն ներշնչում: Նրան միշտ կարելի էր վստահել»¹⁰⁵:

Անտոնյանի գրածից պարզ է դառնում, որ իր համար խնդիրը ոչ թե Նայիմի հարբեցողությունն ու կաշառակերությունն են եղել, այլ «մեր ձեռքում գործակալ դառնալը. նա դավաճանել է իր երկրին»: Նրա «հարբեցողությունն ու խաղամոլությունը թերություններ էին», որոնք հանգեցրին «դավաճանության»¹⁰⁶: Ըստ Անտոնյանի՝ այն տեղեկությունները, որ հաղորդել էր հայրենիքի դավաճանը, չէին կարող համարվել արժանահավատ: Այս պատճառով էլ երկար ժամանակ նա թաքցրել է Նայիմի մասին իր կարծիքը:

Իրականում Օրելի ու Յուլջայի փաստարկը հիմնվում է Նայիմի հարբեցողության ու խաղամոլության, նրա հանդեպ Անտոնյանի ունեցած հակակրանքի վրա: Դրանից ելնելով հեղինակները նշում են, որ նման մարդու փաստաթղթերը չէին կարող արժանահավատ լինել: Նրանց հաջորդող հեղինակներից շատերը

շարունակել են կասկածել փաստաթղթերի իսկությանը՝ նկատի առնելով Նայիմի բնավորության թերությունները: Օրելն ու Յուզան այսպես են բացատրում Անտոնյանի վարքագծի պատճառները.

«Մարդու մտքում աներկբա ծագում է այս թնջուկի պատասխանը. Նայիմ էֆենդու կերպարը կասկածի տակ է դնում նրա «հուշերի» ու «փաստաթղթերի» արժանահավատությունը: Անտոնյանը վրատահաբար գիտեր, որ չի կարելի արժանահավատություն ակնկալել հարբեցող, խաղամոլ ու բանականությունից զուրկ մեկից»¹⁰⁷:

Ավելորդ է նշել, որ կոռումպացված հարբեցողի հուշերում ու նրա տրամադրած փաստաթղթերի տեղեկությունները վիճելի են ու քննարկման ենթակա: Եթե շարժվենք հեղինակների տրամաբանությամբ, ապա այս ժամանակաշրջանում դժվար թե Հալեպում գտնվեր մի պաշտոնյա, որն արժանահավատ տեղեկություն կտար: Ակնհայտ է, որ նման մարդկանց տրամադրած փաստաթղթերը կարող են նույն հաջողությամբ լինել և՛ բնօրինակ, և՛ կեղծիք: Նույնչափ հավանական է, որ նյութերի *մի մասն* իրական է, *մյուսը*՝ կեղծ: Բարեբախտաբար, բացի Նայիմի անհատական բնավորության գծերը քննելուց, կան նաև այլ միջոցներ, որոնք լույս կսփռեն այն հարցի վրա, թե իրո՞ք նյութերն իրական են:

Նույնիսկ եթե հուշերն իրական են, կարո՞ղ են փաստաթղթերը կեղծ լինել

Մինչև այսօր շարունակվող բանավեճը կարելի է ամփոփել հետևյալ կերպ. Թալեաթին վերագրվող հեռագրերի կեղծ լինելու առաջին փաստարկն այն է, որ Նայիմ Էֆենդի անունով պաշտոնյա չի եղել: Այսինքն՝ գոյություն չունեցող մարդը չէր կարող հուշեր գրել, դրանք հանձնել Անտոնյանին, ուստի այս ամենն Անտոնյանի հորինածն է: Սակայն սա սխալ ենթադրություն է: Օսմանյան կայսրության վերջին շրջանում անկասկած եղել է Նայիմ անունով պաշտոնյա, ու այդ հուշերը նա է գրել: Անտոնյանը դրանք ոչ հնարել է, ոչ էլ փոփոխել: Պարզապես նա հրատարակել է իր մոտ եղած հուշերի մի մասը:

Ամեն դեպքում, եթե անգամ մեր ենթադրությունը ճիշտ է, մեկ հարց մնում է մուֆ: Հնարավոր է, որ Նայիմն ինքն է կեղծել իր հուշերն ու կից փաստաթղթերը: Իմանալով, որ հայերն ամենուր փնտրում են կոտորածներն ապացուցող փաստաթղթեր, մշտապես փողի պակաս ունեցող Նայիմը միթե չէր կարող պատրաստել դրանք՝ գումար վաստակելու համար:

Օրելն ու Յուզան Նայիմի փաստաթղթերի կեղծ լինելու մասին իրենց դրույթը հիմնավորել են 12 կետով¹: Դրանցից ութն ուղղակիորեն վերաբերում են թղթերի իրական լինելու հար-

ցին. (1) փաստաթղթերի տակ ստորագրությունները կեղծ են, (2-3) տարեթվերում լուրջ անճշտություններ կան, (4) թվականներն ու համարներն իրականության հետ կապ չունեն, (5) ծածկագիր հեռագրերը կազմված են թվերի այնպիսի համակցությունից, որը կապ չունի իրական գաղտնագրման մեթոդների հետ, (6) փաստաթղթերի էջերում «բիսմիլլահ»-ի* նշանները կեղծ են, (7) որոշ բացատրություններ ու նկարագրություններ օսմաներենում գոյություն չունեն, (8) բնօրինակների թղթի այդպիսի տեսակ օսմանյան պաշտոնյաները չէին գործածում:

Այս պնդումների բոլոր կետերը կարևոր են և մանրակրկիտ անդրադարձի կարիք ունեն: Այնուամենայնիվ, նշենք, որ 4-րդ և 5-րդ կետերն առանձնահատուկ ծանրակշիռ փաստարկներ են:

Ներքին գործերի նախարարության գաղտնագրման գրասենյակի գրանցամատյանը

4-րդ կետով Օրելն ու Յուջան պնդում են, որ փաստաթղթերի թվականներն ու համարները չեն համապատասխանում օսմանյան արխիվում պահվող նյութերին: Նրանք մեջբերում են Ներքին գործերի նախարարության հաղորդագրությունների ելքի ու մուտքի գրանցամատյանը, որտեղ արձանագրված են Հալեպ ուղարկված գաղտնագրված հեռագրերը²: Գրանցամատյանի ու Նայիմի տրամադրած փաստաթղթերի թվականներն ու համարներն իրոք տարբերվում են: Այսինքն՝ դրանք արձանագրված չեն գրանցամատյաններում: Ելնելով սրանից հեղինակները պնդում են, որ Նայիմի փաստաթղթերը կեղծ են:

* «Բիսմիլլահ» եզրույթն արաբերենից անցել է օսմաներենին, ապա՝ թուրքերենին և նշանակում է «Ի փառս Աստծո»:

Այստեղ, սակայն, հետաքրքիր մի հանգամանք կա. արխիվի այն փաստաթղթերը, որոնց հղում են անում հեղինակները, փակի տակ են և հասանելի չեն հետազոտողներին: Ստացվում է տարօրինակ մի վիճակ. գրանցամատյանների ուսումնասիրության վրա արգելք է դրված, բայց միևնույն ժամանակ դրանցում նշված անսաթվերն ու համարներն օգտագործվում են որպես ապացույց: Եթե հետազոտողների մուտքն արգելված է նյութերն ուսումնասիրելու համար, ապա Օրելի ու Յուզայի պնդումները հնարավոր չէ ստուգել: Դրանք քիչ արժանահավատ են դառնում: Եվ նրանք, ովքեր իրենց փաստարկի հիմքում այս գրանցամատյանների գաղտնագրված հեռագրերն են դնում, պարտավոր են պնդել, որ այդ նյութերը հասանելի դառնան մյուս հետազոտողներին:

Կա հատկանշական ևս մեկ փաստ. հեռագրերը Հալեպ ուղարկվել են ոչ միայն Ներքին գործերի նախարարությունից: Բազում հիշատակություններ կան, որ նախարար Թալեաթը, որը հեռագրատան նախկին աշխատակից էր, իր տանն ունեցել է մասնավոր հեռագրագիծ և գործածել է այն: Թալեաթը, այսպիսով, կապ է պահել կայսրության շրջանների հետ, տեղեկացել իրադարձությունների մասին: Այդ ժամանակաշրջանում Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարար Հալիլ Մենթեշեն գրում է, որ Թալեաթին մի առավոտ այցելել է Երեբատանի իր տանը: Թալեաթի տեսքը զարմացրել է նախարարին. նրա աչքերն արյունով էին լցված: Մենթեշեի հարցին Թալեաթը պատասխանել է.

«Էրզրումի նահանգապետ Թահսինից հայերի մասին մի քանի հեռագիր եմ ստացել, որոնք նյարդերս լրիվ քայքայեցին: Ամբողջ գիշեր չկարողացա քնել»³:

ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն ևս մի նմանատիպ դեպք է հիշել: Նա գնացել է Թալեաթի տուն՝ նրանից մի հարցում օգնություն խնդրելու: Մորգենթաուն գրում է, որ Թալեաթը խոստացել է օգնել:

«Նա նստեց սեղանին ու սկսեց աշխատել հեռագրական ապարատով: Երբեք չեմ մոռանա այդ պատկերը. հսկայամարմին թուրքը՝ գորշ պիժամայով ու կարմիր գլխարկը գլխին, գործի էր դրել իր հեռագրական ապարատի բանալին: Նրա կինն ամուսնուն նայում էր փոքր պատուհանի միջով, միջօրեի արևը լուսավորում էր սենյակը:

Այդ պահին Թալեաթի ստացած հեռագրի նորությունը քիչ մնաց քար գցեր գործիս գլխին: Գործիքի վրա երկար աշխատելուց հետո Թալեաթի դեմքը գունատվեց ու կատաղի դարձավ..»⁴:

Մորգենթաուի պնդմամբ՝ Թալեաթի տանը եղած երկու ժամվա ընթացքում իրենց խոսակցությունը պարբերաբար ընդհատվում էր նոր ստացվող հեռագրերով⁵:

Սակայն մենք չենք հիմնվում միայն ականատեսների պատահական վկայությունների վրա: Թալեաթի կինը՝ Հայրիե խանունը, ևս հաստատում է Մենթեշեի ու Մորգենթաուի պատմածները: 1982 թ. հարցազրույցում նա նշել է, որ իսկապես տանն ունեցել են հեռագրական ապարատ, որից Թալեաթն օգտվել է: Հայրիե խանունը մասնավորապես ասել է. «Իհարկե, Թալեաթն օգտագործում էր դա. նահանգապետերին հրամաններ էր ուղարկում այդ ապարատով»⁶: Ինչպիսի՞ թվագրման համակարգ էր օգտագործում Թալեաթն իր հեռագրերում: Հազիվ թե պարզենք սա, բայց կարող ենք ասել,

որ այս հանգամանքն ավելի է մեծացնում Նայիմի փաստաթղթերի թվագրումների ստույգության հավանականությունը:

Գաղտնագրված հեռագրերն ու գաղտնագրման ձևը

Նայիմի հեռագրերի իսկության շուրջ Օրելի ու Յուլջայի ամենակարևոր պնդումն այն է, որ այս փաստաթղթերում միայն թվերից բաղկացած գաղտնագրման համակարգը սխալ է: Ընդհանուր առմամբ, Նայիմն Արամ Անտոնյանին է տրամադրել 7 գաղտնագրված հեռագրեր՝ 5-ը՝ երկնիշ, 2-ը՝ եռանիշ գաղտնագրերով: Ժամանակագրական առումով դրանք դասավորվում են այսպես. (1) 1915 թ. սեպտեմբերի 29 [եռանիշ], (2) 1915 թ. դեկտեմբերի 9 [երկնիշ]⁷, (3) 1915 թ. դեկտեմբերի 26 [երկնիշ], (4) 1916 թ. մարտի 20 [եռանիշ], (5) 1916 թ. մարտի 20 [երկնիշ], (6) 1917 թ. հունվարի 23 [երկնիշ], (7) ? 1917 թ. մարտ [երկնիշ]⁸:

Օրելն ու Յուլջան պնդում են, որ այս երկնիշ ու եռանիշ բոլոր գաղտնագրերը ստեղծել է ոչ թե Նայիմը, այլ Անտոնյանը: Նրանք գրում են.

«Անտոնյանն այս բազմանիշ թվերից բաղկացած փաստաթղթերը գաղտնագրված հեռագրեր է ներկայացնում՝ հույս ունենալով, որ այդպես արժանահավատ կթվան: Իրականում դրանք ոչ մի աղերս չունեն այդ ժամանակաշրջանում օգտագործված գաղտնագրման համակարգի հետ»⁹:

Հեղինակներն այս պնդումը հիմնավորում են երկու փաստարկով: Նախ՝ գաղտնագրման ցանկացած համակարգ օգտագործվել է միայն կարճ ժամանակահատվածում, ըստ

Նրանց՝ 6 ամսից ոչ ավելի, քանզի «պատերազմի պայմաններում անհնար է պատկերացնել գաղտնագրման համակարգի օգտագործում՝ առանց փոփոխություններ մտցնելու»¹⁰: Հեղինակները, սակայն, չեն բացատրում, թե այդ ժամանակահատվածները երբ են սկսվել ու ավարտվել¹¹: Ըստ հեղինակների՝ Նայիմն ու Անտոնյանն այդ տարիների ծածկագրման ձևերը չեն իմացել: Դրա ապացույցն այն է, որ նույն՝ եռանիշ գաղտնագրերի խմբին պատկանող փաստաթղթերի ժամանակային տարբերությունը գրեթե վեց ամիս է: Հեղինակները մեջբերում են Նայիմի՝ եռանիշ գաղտնագրով երկու փաստաթղթերի ամսաթվերը (1915 թ. սեպտեմբերի 29 և 1916 թ. մարտի 20): Ըստ նրանց՝ այդ ժամկետում գաղտնագրման մեթոդը չէր կարող կրկնվել, ուստիև փաստաթղթերը հորինվածք են:

Օրելի ու Յուլջայի հաջորդ փաստարկը. որոշակի ժամանակաշրջանում փաստաթղթերը գաղտնագրվել են միևնույն քանակի նիշերով: Այսինքն՝ միևնույն ժամանակահատվածում տարբեր քանակի նիշեր ունեցող ծածկագրեր չեն կիրառվել: Օրինակ՝ ըստ հեղինակների՝ 1915 թ. օգոստոսի 26-ից դեկտեմբերի 11-ը գաղտնագրումը կատարվել է հնգանիշ թվերով միայն, իսկ քառանիշ թվերով գաղտնագրումն ուժի մեջ է մտել 1916 թ. մարտից: Հեղինակները հստակ օրջեն նշում: Ըստ նրանց տրամաբանության՝ այս ընթացքում ուղարկված ցանկացած հեռագիր, որը գաղտնագրվել է թվերի այլ քանակով, միանգամից կարելի է կեղծիք համարել:

Այսինքն, եթե 1915 թ. օգոստոսի 26-ից մինչև դեկտեմբերի 11-ը գաղտնագրման համակարգը հնգանիշ թվերով էր, ապա այդ շրջանի փաստաթղթերը, որոնք Նայիմը տրամադրել էր Անտոնյանին, ակնհայտորեն պետք է կեղծ համարել (օրի-

նակ՝ 1915 թ. սեպտեմբերի 29-ի եռանիշ և դեկտեմբերի 9-ի երկնիշ ծածկագրերով հեռագրերը):

Կարճ ասած, Նայիմի հեռագրերի կեղծ լինելու փաստարկն Օրելն ու Յուզան կառուցում են մի ենթադրության վրա, ըստ որի վեց ամսից քիչ ժամանակահատվածում օգտագործվել են նույն քանակի նիշերով գաղտնագրեր: Այս պնդումներն անհիմն են ու սխալ: Նախքան հեղինակների պնդումը խորությամբ ուսումնասիրելը, օգտակար կլիներ օսմանյան արխիվների գաղտնագրված հեռագրերի մասին մի քանի դիտարկում անել¹²:

Գաղտնագրման հարցի որոշ ընդհանուր դիտարկումներ

Մենք ուսումնասիրել ենք մեծ թվով գաղտնագրված հեռագրեր այն տասնյակ հազարներից, որոնք ուղարկվել են 1914 թ. Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու օրերից մինչև 1918 թ. մարտը: Հատկանշական է, որ Ներքին գործերի նախարարությունն ունեցել է գաղտնագրման իր եղանակը, որը չի հայտնել պետական մյուս գերատեսչություններին: Նախարարությունը դեմ է եղել իր գաղտնագրման մեթոդի կիրառության ընդլայնմանը: Օրինակ՝ 1914 թ. դեկտեմբերի 3-ին Ներքին գործերի նախարարության հեռագրով զգուշացվել էր Հալեպի նահանգապետ Ջելալ բեյը, որը Դեյր էլ Զորի հարցով գաղտնագրման բանալին հայտնել էր Սիրիայում թուրքական չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային: Նախարարությունը չէր թույլատրում գաղտնագրածման մեթոդները փոխանցել ուրիշներին¹³: 1918 թ. նմանատիպ մի հեռագիր նշում էր, որ Ներքին գործերի նա-

խարարությունն արգելում է իր գաղտնազերծման մեթոդները հայտնել բանակի հրամանատարներին¹⁴: Սակայն որոշ դեպքերում այլ գերատեսչությունների թույլ է տրվել հաղորդակցվել Ներքին գործերի նախարարության գաղտնագրերով: Օրինակ՝ 1918 թ. մարտի 10-ին Սուլեյմանիեի օսմանյան հյուպատոս Մահմուդ բեյի հեռագրում կարդում ենք.

«Քանի որ նախարարության գաղտնազերծման համակարգը կասեցվել է, անհրաժեշտ է հաղորդակցվել Ներքին գործերի նախարարության գաղտնագրերով¹⁵»:

Ներքին գործերի նախարարությունն իր հերթին կիրառել է գաղտնագրման տարբեր եղանակներ՝ տեղական քաղաքացիական պաշտոնյաների ու այլ գերատեսչությունների, հատկապես բանակի ու Ռազմական նախարարության հետ հաղորդակցվելու համար: 1914 թ. դեկտեմբերի 6-ին երկրի բոլոր նահանգներ ուղարկված հաղորդագրությամբ Ռազմական նախարարության ու քաղաքացիական պաշտոնյաների միջև գաղտնագրված հաղորդակցության եղանակ է համարվում կորպուսի հրամանատարների միջև գործող կապը¹⁶: Երբ գոյություն ունեցող մեթոդները չեն օգտագործվել, ստեղծվել են հատուկ գաղտնագրման բանալիներ: Օրինակ՝ 1915 թ. մայիսի 11-ի շրջաբերականում նշվում է, որ Ներքին գործերի նախարարությունը Ռազմական նախարարության և նահանգների ու շրջանների միջև կապի համար պատրաստել ու գործի է դրել նոր գաղտնագրման բանալի: Հեռագիրը նաև պահանջում է հաղորդագրությունները Ռազմական նախարարություն և ընդհանուր պարենավորման գրասենյակ ուղարկել այդ բանալու միջոցով: Հատուկ հիշեցումը պահան-

ջում էր չօգտագործել Ներքին գործերի նախարարության գաղտնագրման բանալին¹⁷:

Որոշ դեպքերում Ներքին գործերի նախարարության ստեղծած գաղտնագրման համակարգը հատուկ նպատակ է ունեցել ծառայել բանակի հրամանատարության և տարբեր շրջանների տեղական պաշտոնյաների հաղորդակցմանը: Այդպիսի օրինակ է 1916 թ. մարտին Ներքին գործերի նախարարության զեկույցը, որով 6-րդ տեսակի գաղտնագրման կոդը տրվում է 3-րդ բանակի հրամանատար Վեհիբ փաշային՝ տարբեր շրջանների ու նահանգների հետ կապ պահելու համար¹⁸: Նմանապես 1918 թ. հոկտեմբերի 9-ին բոլոր նահանգներ ուղարկված շրջաբերականը պահանջում է, որ 6-րդ տեսակի գաղտնագրման բանալին մասամբ օգտագործվի Մննդի և մատակարարման նախարարության հետ հաղորդակցության համար¹⁹:

Գոյություն ունեցող փաստաթղթերից կարելի է եզրակացնել, որ հատուկ գաղտնագրման միջոցներ են ստեղծվել այն պաշտոնյաների համար, որոնք գործուղվում էին շրջաններ կամ արտասահման: Երկու այդպիսի հայտնի օրինակ են Բաղդադ գործուղված Հատուկ կազմակերպության պաշտոնյա Սուլեյման Ասկերին²⁰ և պատերազմի տարիներին պաշտոնական հանդիպումների համար Գերմանիա գործուղված Հալիլ Մենթեշեն²¹: Նմանատիպ տեղեկություններ կան մի քանի մարդկանց հուշերում: Օսմանյան շրջանի ամենահայտնի պաշտոնյաներից մեկը՝ Ֆայիք Հյուրշիտ Գյունդայը, Բաղդադում աշխատանքի անցնելիս իմացել է, որ էնվեր փաշան հատուկ գաղտնագրման բանալիների գիրք է ուղարկել հայտնի արաբ գործիչներից մեկին՝ չմիջնորդավորված հաղորդակցություն ապահովելու համար²²:

Ներքին գործերի նախարարության ներսում անգամ օգտագործվել են գաղտնագրման տարբեր միջոցներ: Նահանգների ու գավառների հաղորդակցման գրատեսակը տարբերվել է Ստամբուլում գործողից: 1915 թ. մարտի 9-ին Ներքին գործերի նախարարությունը հեռագիր է ուղարկել Իսմիթ և Մենթեշե՝ հետևյալ բովանդակությամբ.

«Նախկինում մեր ուղարկած և այժմ գործածվող գաղտնագրման բանալիները պետք է պահել հարևան գավառակների ու գավառների հետ կապի համար: Այժմ ուղարկում ենք բանալի, որը պետք է օգտագործվի Բարձր դռան, նահանգների ու ինքնավար գավառների հետ կապի համար: Հետևաբար, դուք պետք է այլ բանալի օգտագործեք գավառների հետ կապի համար: Այս հարցում պետք է հստակություն մտցնել»²³:

Փաստորեն, Ներքին գործերի նախարարությունն օգտագործել է գաղտնագրման երկու տիպ: Մեկը կազմվել է տարբեր թվանշաններից, մյուսը՝ տառախմբերից, ու կոչվել *huruf-i mukatta* (տառերի փոխարինում): Մեր ձեռքի տակ եղած նյութերից կարող ենք եզրակացնել, որ երկրորդ եղանակը ծառայել է Ստամբուլի ու նահանգների միջև գրագրությանը: Դրանք էլ իրենց հերթին բաժանվել են ինքնավար գավառների: Քանի որ տառախմբերով գաղտնագրումը հեշտ էր գաղտնագրված, 1915 թ. ապրիլի 25-ին բոլոր նահանգներ ու շրջաններ ուղարկված հրամանը պահանջում էր վերջ դնել գաղտնագրման այդ ձևին: Հրամանում նշվում էր.

«Մեզ հայտնի է դարձել, որ որոշ շրջաններ իրենց հարևան գյուղերի ու բնակավայրերի հետ հաղորդակցվում են տառերից բաղկա-

ցած գաղտնագրման միջոցով: Այս մեթոդն այլևս չպետք է օգտագործվի գաղտնիության պահպանման համար, քանի որ այն հեշտ է բացահայտվում»²⁴:

1915 թ. օգոստոսի 2-ի մեկ այլ շրջաբերականով հրամայվում էր գաղտնագրման բանալիներն այրել.

«Ձեր հսկողությամբ այրեք գաղտնագրերի բանալիների գրանցամատյանը: Այն պարունակում է *Huruf-u Mukatta*, որն օգտագործվում է կառավարության և նահանգների՝ գավառների հետ ունեցած կապը պահելու համար: Ջեկուցե՛ք իրավիճակի մասին»²⁵:

Այդ ամբողջ ընթացքում թվանշային գաղտնագրման համակարգն օգտագործվել է երկուսից մինչև հինգ նիշերով: Թեև արխիվների ուսումնասիրության ընթացքում մենք հանդիպեցինք վեցից մինչև ինը տարբերակների, սակայն դրանք որևէ հեռագրում գործածված չէին: Որպես կարևոր օրինակ, կարելի է նշել 1915 թ. ապրիլի 10-ի հուշագիրը, որն ուղարկել է Ներքին գործերի նախարարության հատուկ քարտուղարությունը: Այն պահանջում է.

«Հաշվի առնելով, որ Նիդդեյի գավառն ու Էսքիշեհիրի գավառակը վերածվում են ինքնավար գավառների, պետք է վեցերորդ, յոթերորդ և ութերորդ գաղտնագրման բանալիների մեկ-երկու օրինակ ուղարկել դրանց կառավարիչներին»²⁶:

Սեպտեմբերի 6-ին Էրզրումից Ներքին գործերի նախարարությունն ուղարկված հերթական հեռագիրը նշում է.

«Տեղեկացնում ենք, որ յոթերորդ տեսակի գաղտնագրման բանալիների գիրքը տեղ է հասել»^u:

Իններորդ ձևի գաղտնագրման բանալու մասին նշված է մեկ այլ հեռագրում, որ Դեյր էլ Զորից Ներքին գործերի նախարարություն է ուղարկվել 1918 թ. հուլիսի 28-ին: Ըստ դրա՝ հետաքննությամբ պարզվել է, որ հաղորդագրությունը կազմել է Ներգաղթյալների վերաբնակեցման տնօրինությունը՝ իններորդ տեսակի գաղտնագրով²⁸:

Մեզ պատահել են միայն երկնիշից հնգանիշ գաղտնագրեր, սակայն ոչ երբեք՝ վեցանիշից իննանիշ խմբերով փաստաթղթեր: Հնարավոր պատճառներից մեկն այն է, որ 6, 7, 8, 9 թվերը ոչ թե պատկանում են տարբեր ինքնուրույն խմբերի, այլ միևնույն՝ հավանաբար քառանիշ ու հնգանիշ խմբի թվերից են: Եվ իսկապես յուրաքանչյուր նիշերի խումբ ունի մի քանի թիվ, այսինքն՝ գաղտնագրման մի քանի համակցություն՝ կոմբինացիա: Ներքևում ցույց կտանք, որ, օրինակ, քառանիշ խումբն ունի առնվազն ինը թվային կոմբինացիա²⁹: Մեկն էլ գաղթականների հարցերով գլխավոր քարտուղարի օրինակն է, որի գրասենյակն օգտագործել է երկնիշ թվեր ու գաղտնագրման առնվազն տասնհինգ համակցություն: Կարելի է եզրակացնել, որ 6, 7, 8, 9 թվերի խմբերը վերաբերում են ոչ թե նիշերի ներսում հեռագիրը գաղտնագրելուն, այլ այդ խմբի մեջ դրանք գաղտնազերծելուն³⁰:

Մեր հաջորդ դիտարկումն այն է, որ, անկախ հեռագրի գաղտնագրման նիշերի խմբից, սկզբում նշվում է, թե ինչպես պետք է այն գաղտնազերծել: Օրինակ՝ 1915 թ. դեկտեմբերի 25-ին Ստամբուլ ուղարկած հեռագրում Հալեպի նահանգապետը տալիս է հետևյալ բացատրությունը.

«Համար հինգ: Այսօր ցանկանում եմ շրջել նահանգի հարավային

ու հարավարևելյան հատվածներում: Իմ ուղարկած գաղտնագիրը պետք է բացել գաղտնագրերի վեցերորդ տարբերակով»³¹:

Սա ցույց է տալիս, որ նահանգապետն իր հեռագիրը գաղտնագրել է հինգ թվերի խմբով, տեղեկացրել Ստամբուլ, որ շարունակելու է ուղարկել հնգանիշ հեռագրեր, սակայն դրանք պետք է կարդալ վեցերորդ համարի բանալիով: Այս պատճառով էլ հեռագրերի սկզբում հաճախ հանդիպում ենք երկու, երեք, չորս, հինգ, վեց, յոթ, ութ, ինը թվերի, բայց հեռագրերը կարծես գաղտնագրված են քառանիշ ու հնգանիշ թվերով: Երկնիշ թվերով գաղտնագրման մեկ այլ օրինակ էլ կա. երկնիշ թվեր պարունակող փաստաթղթերի սկզբում կարելի է կարդալ. «Գաղտնագրված է Գաղթականների վերաբնակեցման տնօրինության համար 15 տարբերակով»³²:

Գաղտնագրման ձևի վերաբերյալ մեր վերջնական դիտարկումն այն է, որ Ներքին գործերի նախարարության տարբեր գրասենյակներ ու վարչություններ օգտագործել են տարբեր նիշերի խմբեր: Օրինակ՝ Նայիմի՝ Անտոնյանին տված հեռագրերի մեծ մասը գրված է երկնիշ գաղտնագրերով: Սա սպասելի է, քանի որ երկնիշ գաղտնագրերի համակարգն օգտագործում էին Ցեղերի ու գաղթականների գրասենյակի տնօրինությունը և լքված գույքի հանձնաժողովը: Այս փաստն ինքնին կարևոր ապացույց է, որ Նայիմի փաստաթղթերն իրական են:

Շատ դեպքերում համապատասխան գերատեսչության անվան կողքին նշվել է, թե գաղտնագրման ինչ տեսակ և թվերի ինչ խումբ են օգտագործվել: 1915 թ. սեպտեմբերի 2-ին ու 21-ին գաղթականների վերաբնակեցման տնօրեն Շյուքրի բեյի՝ Ստամբուլ ուղարկած երկու հեռագրերն այսպիսին են. «Բացել


Գաղթականների գրասենյակի տնօրինության գաղտնագրով»³³: Տրապիզոնից ուղարկված մեկ այլ հեռագիր նույնպես նշում է. «Գաղտնագրված է Գաղթականների գրասենյակի տնօրինության համար 15 եղանակով»³⁴: Այս երկու հեռագրերը ևս գաղտնագրված են երկնիշ թվերով:

Հավանաբար տարիների ընթացքում նիշերի օգտագործման փոփոխություններ են եղել գերատեսչությունների միջև: Կարելի է ենթադրել, որ, 1916 թ. սեպտեմբերից սկսած, երկնիշ թվերով գաղտնագրերն օգտագործվել են նաև Ներքին գործերի նախարարության ու բանակի միջև հաղորդակցության համար³⁵:

Երբեմն որոշ վարչությունների զգուշացրել են չօգտագործել մյուսների գաղտնագրման եղանակները: Օրինակ՝ լքված գույքի շրջանային հանձնաժողովներ ուղարկված շրջաբերականը պահանջում է «նախարարության գաղտնագրման բանալին չօգտագործել» գրավոր հաղորդակցության համար, փոխարենն օգտագործել Գաղթականների գրասենյակի տնօրինության գաղտնագիրը³⁶: Հանձնաժողովների համար նախատեսված գաղտնագրերը երկրի նահանգներ են ուղարկվել առանձին: Օրինակ՝ 1915 թ. սեպտեմբերի 22-ին Նիդդեի լքված գույքի հանձնաժողովի նախագահին ուղարկված հեռագիրը նշում է. «Գաղտնագրման բանալիների գիրքն ուղարկել ենք փոստով»³⁷:

Եթե գաղտնագրի բանալիներն անհասանելի էին լինում որոշ վայրերում կամ իրավիճակներում, ապա պաշտոնյաներն իրավունք ունեին օգտագործել տեղական իշխանությունների գաղտնագրման բանալին: Օրինակ՝ մի հեռագրում կարդում ենք.

«Քանի որ համապատասխան գաղտնագրման բանալին դեռ չի ուղարկվել Լքյալ գույքի հանձնաժողովի նախագահին, պարտա-



Նկար 1. DH.SFR., 472/111-1, ֆինանսների նախարար
Զավիթի գաղտնագիրը Բեռլինից:

դիր է, որ համապատասխան հեռագրերն ուղարկվեն նախարարության գաղտնագրով»:

Տեղական իշխանություններն այս մասին իմացել են հատուկ հրամանով: Նրանցից պահանջել են իրենց գաղտնագրերը տրամադրել վերոնշյալ հանձնաժողովներին: «Շրջաններին հեռագիր է ուղարկվել, որ նրանք այդ գաղտնագրման պատճենը հանձնեն Լքյալ գույքի հանձնաժողովների նախագահներին»³⁸:

Գոյություն են ունեցել նաև հատուկ գաղտնագրման համակարգեր, որոնք տարբերվել են վերոնշյալ ձևերից: 1915 թ.

մայիսի 27-ին ֆինանսների նախարար Ջավիթ բեյի՝ Բեռլինից ուղարկած հեռագիրն այդպիսին էր: Հեռագիրը գաղտնագրվել է հնգանիշ թվերով: Սկզբում նշված չէ, թե ինչպես պետք է գաղտնագրվի: Ստամբուլում համապատասխան պաշտոնյան այն բացել է իբրև քառանիշ գաղտնագրով հեռագիր: Այսինքն՝ վերցրել է առաջին հնգանիշ թվի առաջին չորս նիշն ու գաղտնագրվել, հետո մնացած մի թիվը կացրել է երկրորդ հնգանիշ թվի առաջին երեք նիշերին՝ ստեղծելով քառանիշ թիվ, որն էլ նորից գաղտնագրվել է: Այսպիսով, երկրորդ հնգանիշ թվից մնացել է երկու նիշ, որոնք էլ պաշտոնյան միացրել է երրորդ հնգանիշ թվի երկու նիշերին ու այսպես շարունակ³⁹ (տե՛ս Նկար 1):

Ցավոք, ավելի մանրամասն տեղեկություն ստանալու հնարավորություն չունենք, քանի որ գաղտնագրման բանալիների գրանցամատյանները, տարբեր նիշերով գաղտնագրերի բանալիները հասանելի չեն հետազոտողներին:

Տարբեր ժամանակաշրջաններին հատուկ գաղտնագրման մեթոդների հարցը

Վերոնշյալ համատեքստում կարելի է ավելի մանրամասն ուսումնասիրել Օրելի ու Յուլջայի պնդումը գաղտնագրման նիշերի մասին: Ըստ նրանց՝ Օսմանյան տոմարով 1331-1332 թթ. (այսինքն՝ 1915-1916 թթ.) օգտագործվել են միայն երկնիշ, քառանիշ ու հնգանիշ թվերով գաղտնագրեր, բայց ոչ՝ եռանիշ⁴⁰: Սակայն հետագայում կտեսնենք, որ այս պնդումը սխալ է: Թեև հազվադեպ, բայց 1915 թ. եռանիշ թվեր օգտագործվել են գաղտնագրման համար: Այժմ հարկ է քննարկել այլ հարց:

Օրելի ու Յուլջայի պնդմամբ՝ Անտոնյանի գնած Նայիմի հեռագրերը կեղծ էին, քանի որ գաղտնագրման յուրաքանչյուր եղանակն օգտագործվել է վեց ամսից պակաս ժամանակահատվածում: Օսմանյան արխիվների մեր ուսումնասիրության ընթացքում երբեք չենք հանդիպել մի փաստաթղթի, որը կվկայի, որ տվյալ նիշերն ուժի մեջ են միայն վեց ամսվա ընթացքում: Ավելին, մեզ չի հանդիպել որևէ տեղեկություն, որ գաղտնագրման որևէ թվանշան պետք է կիրառվի որոշակի ժամանակահատվածում: Եվ էլի 1914 թ. գաղտնագրման բանալիների տեսրից պարզ է դառնում, որ գաղտնագրերը փոփոխվել են տարին մեկ:

Տեսորի առաջին էջի վերնագրում նշված է՝ «Բոլոր շրջանների հետ հաղորդակցության համար նախատեսված գաղտնագրման բանալի» և «Բարձր դռան հետ հաղորդակցության համար նախատեսված գաղտնագրման բանալի»: Ցուցումներում նշված է, որ անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել գաղտնագրման բանալիների գրանցամատյանների պահպանմանը, որպեսզի բանալիները չհայտնվեն անվստահելի մարդկանց ձեռքում: Հատուկ նշված է, թե որ նիշերի/թվերի խմբի համար է այդ գրանցամատյանը պատրաստվել⁴¹:

Հեշտ է նկատել, որ տարբեր ամսաթվերով տեղական իշխանություններին ուղարկված գաղտնագրման բանալիներն ինչ-որ փոփոխության են ենթարկվել տարվա ընթացքում: Դժվար է պարզել, թե ինչ հանգամանքներում են փոխվել դրանց ձևն ու ոճը: Որոշ հեռագրերից կարելի է եզրակացնել, որ դրանք վերաձևվել, փոխվել կամ առնվազն վերանվանվել են տարին մեկ, ինչպես վերոնշյալ օրինակում: Օրինակ՝ 1915 թ. մայիսի 4-ին վանի նահանգ ուղարկված պատասխան հեռագրում կարդում ենք.

«Քանի որ 1330 թ. փետրվարի 28-ին չեք հաղորդել նոր գաղտնագրման բանալին, պարզ չէ, թե Ձեր նշած գրանցամատյանը նախորդ, թե՛ այս տարվանն է»⁴²:

Կարող ենք հաստատապես պնդել, որ, օրինակ, օսմանյան տարվա սկզբում՝ մարտին, գաղտնագրման բանալիները փոխվել են, բայց դժվար է վերջնական եզրակացության հանգել՝ ելնելով փաստաթղթերի պատմություններից ու տարեթվերից: Միևնույն ժամանակ, 1914 թ. նոյեմբերից մինչև 1918 թ. մարտ ուղարկված ծածկագիր հեռագրերից կարելի է եզրակացնել, որ երկնիշ, քառանիշ, հնգանիշ եղանակներն օգտագործվել են, և այդ ընթացքում դրանց կիրառումը որևէ կերպ չի սահմանափակվել: Եղել են ժամանակահատվածներ, որ օգտագործման հաճախականությունը նվազել է հատկապես քառանիշ ու հնգանիշ թվերով գաղտնագրերի դեպքում: 1914 թ. նոյեմբերին ամենից շատ օգտագործվել են հնգանիշ ծածկագրերը:

Երկրորդ ամենահաճախ հանդիպող գաղտնագիրը քառանիշն է: Բացառիկ դեպքերում կարելի է հանդիպել երկնիշ ու եռանիշ թվերով ծածկագրված հեռագրերի: 1915 թ. հունվարի կեսից զգալիորեն ավելացել են քառանիշ գաղտնագրերը: Փետրվարին դրանք դարձել են ամենահաճախ օգտագործվողները: Հնգանիշ գաղտնագրումներն աճել են հունիսին և հուլիսի կեսին ու կրկին դարձել ամենաշատ օգտագործվողը: Այսպես շարունակվել է մինչև 1916 թ. փետրվար: Մարտապրիլին քառանիշ թվերով հեռագրերը կրկին ավելացել են ու 1916 թ. մայիսի դրությամբ դարձել ամենատարածվածը՝ իրենց դիրքը պահպանելով առնվազն մինչև 1918 թ. մայիս,

որտեղ էլ ավարտվում է մեր արխիվային հետազոտությունը: Ամփոփենք. այս ժամանակահատվածում հիմնականում օգտագործվել են քառանիշ ու հնգանիշ գաղտնագրման մեթոդներ՝ փոփոխական հաճախականությամբ: Այդ փոփոխությունները, սակայն, կտրուկ չեն եղել, այլ արվել են աստիճանաբար՝ շաբաթների ու ամիսների ընթացքում: Ամեն դեպքում ժամանակային առումով դրանց օգտագործման արգելք ու սահմանափակում չեն եղել:

Քառանիշ ու հնգանիշ գաղտնագրերի միաժամանակյա օգտագործումն իր պատճառներն ուներ. նոր հեռագրերի բանալիները մեկ միասնական ձև չունեին, և դրանց գրանցամատյանները երբեմն ուշացումներով էին ուղարկվում ու ստացվում:

Օրինակ՝ 1914 թ. դեկտեմբերի 16-ին նահանգային իշխանություններ ուղարկված շրջաբերականից պարզվում է, որ նահանգների միջև հաղորդակցության նոր գաղտնագրերի բանալիների գրանցամատյանն ուղարկվել էր նախատեսվածից, այսինքն՝ դեկտեմբերից շուտ: Հաղորդագրությամբ նահանգների ու գավառների կառավարիչներին խնդրում էին «լինել չափազանց զգուշավոր՝ գաղտնագրման բանալիների պահպանման հարցում»⁴³: Նույն հաղորդագրությամբ փորձ էր արվում պարզել, թե գաղտնագրման բանալիների բոլոր գրանցամատյաններն են տեղ հասել:

Դեկտեմբեր-հունվարին գրանցամատյանների հասցեատերերի ու ստանալու ժամկետների վերաբերյալ հարցուպատասխանները շարունակվել են: 1915 թ. դեկտեմբերի 29-ին Բաղդադի նահանգապետ Սուլեյման Նազիֆին ուղղված հեռագիրը խնդրում էր վերցնել Ռաշիտ բեյի ունեցած գաղտնագրման

բանալին և դրանով հաղորդակցվել: Նախորդ բանալին գործածությունից դուրս էր համարվում⁴⁴: 1915 թ. հունվարի 4-ին Բոլուի, Անկարայի ու Դիարբեքիի նահանգներ ուղարկված մի քանի հեռագրեր նշում են, որ գաղտնագրման բանալիները տեղ չեն հասել կամ տերերը չեն վերցրել: Հեռագրերը պահանջում են հնարավորինս շուտ ստանալ բանալիները⁴⁵:

Նմանատիպ իրավիճակ առաջացել է նաև 1915 թ. մարտին, երբ նոր գաղտնագրի բանալու գրանցամատյան է ուղարկվել նահանգներ ու գավառներ: Մարտի 31-ին Կոնիա, Ադանա, Անթալիա ուղարկված հեռագրերն իրենց հասցեատերերին հավաստիացնում էին, որ բանալիների գրանցամատյանները ճանապարհին են⁴⁶: Սեբաստիայի, Մամուրեթյուլազիզի, Բիթլիսի, Վանի ու Կեսարիայի նահանգների ու գավառների համար նոր բանալիներն ուղարկվել են 1915 թ. ապրիլի 7-ին՝ տեղական վարչակազմերից պահանջելով ստանալուց հետո անմիջապես արձագանքել⁴⁷: Հալեպի նահանգի համար բանալու գրանցամատյանն ուղարկվել է ավելի ուշ՝ ապրիլի 17-ին⁴⁸: Ստամբուլից ոչ հեռու գտնվող Քյութահյայի շրջան գրանցամատյանները հասել են միայն 1915 թ. ապրիլի 28-ին⁴⁹: 1915 թ. մայիսի 1-ի հեռագիրը մեծ թվով նահանգների ու գավառների հարցում էր անում գրանցամատյանները ստանալու մասին⁵⁰: Վանի ու Բիթլիսի նահանգներին նույն հարցումն ուղարկվել է մեկ օրում՝ 1915 թ. մայիսի 26-ին⁵¹: Դիարբեքիի, Սիվերեքի, Դեյր էլ Զորի, Բաղդադի ու Բասրայի համար ուղարկված գրանցամատյանները հունիսի 2-ի դրությամբ դեռ տեղ չէին հասել⁵²: Գաղտնագրման նոր բանալիները սկսել են ուղարկել հուլիսի 8-ից սկսած⁵³:

Իրավիճակը բնութագրող ամենաուշագրավ օրինակը մեր

հայտնաբերած փաստաթուղթն է, որը ցույց է տալիս, թե երբ են նահանգային իշխանություններ ուղարկվել 6-րդ, 7-րդ, 8-րդ ձևի գաղտնագրերի բանալիների գրանցամատյանները: Ըստ ներքին գործերի նախարարության ցուցակի՝ դրանք ուղարկվել են 1915 թ. մայիսի 11-ի ու օգոստոսի 21-ի միջև ընկած ժամանակահատվածում: Գրանցամատյանն առաջինն ուղարկվել է Բուրսա քաղաք 1915 թ. մարտի 11-ին: Երկու օր անց մեկ ուրիշ հեռագիր ուղարկվել է Բալըքեսիր: Հեռագրեր ստացած նահանգային ու գավառային կենտրոններից էին նաև Էդիրնեն (մարտի 20), Այդընը (ապրիլի 12), Ուրֆան (ապրիլի 15), Դեյր Էլ Զորը՝ վեցերորդ և յոթերորդ ձևի (մայիսի 12), ութերորդ ձևի (մայիսի 31), Տրապիզոնը (հունիսի 3), Կաստամոնուն (հուլիսի 8), Հիջազն ու Եմենը (օգոստոսի 21)⁵⁴:

Արխիվում կատարած մեր հետազոտության ընթացքում պարզել ենք, որ ամեն թվանշային խմբում գաղտնագրման բանալին փոխվել է, բայց այդ տարբերվող թվային կոմբինացիաներն օգտագործվել են նաև այլ եղանակներով: Օրինակ՝ մենք հայտնաբերել ենք երկնիշ թվերի գաղտնագրման առնչվածն 6 տարբեր թվային կոմբինացիաներ: (Գաղթականների գրասենյակի տնօրինության ղեկավարն իր ձեռքի տակ ուներ առնվազն 15 թվախումբ): Օսմանյան արխիվներում հայտնաբերած փաստաթղթերի մեծ մասը գրված էր 15-րդ գաղտնագրման եղանակով, այսինքն՝ 15 թվերի համադրմամբ: Մենք այսպիսի 100 փաստաթուղթ ենք հայտնաբերել: Այս թվային խումբն օգտագործվել է գաղտնագրումների ամբողջ ժամանակաշրջանում՝ առանց սահմանափակման: Օրինակ՝ 1915 թ. սեպտեմբերի 3-ին Էսքիշեհիրից (DH.ŞFR., 486/138) ու 1916 թ. հուլիսի 6-ին Սամսունից (DH.ŞFR., 524/105) ուղարկված հե-

ռագրերը նույն թվային խմբին են պատկանում: Այս երկու փաստաթղթերի միջև ավելի քան տասն ամսվա տարբերություն կա: Նույն ժամանակահատվածում օգտագործվել են նաև այլ երկնիշ թվային խմբեր: Մեկ այլ օրինակ՝ քառանիշ թվերով գաղտնագրման համակարգից: Քառանիշ ծածկագրումով առնվազն ինը տարբեր թվային համադրումներ են եղել: Այդ ընթացքում զուգահեռ օգտագործվել են տարբեր թվային խմբեր:

Այսպես, 1915 թ. հուլիսի 6-ին (DH.ŞFR., 478/110) Անկարայից ուղարկված հեռագիրը գաղտնագրված է քառանիշ թվերով՝ հինգ թվերի օգտագործումով: Նույն քառանիշ տարբերակով և նույն թվերից բաղկացած մեկ այլ հեռագիր ուղարկվել է 1916 թ. սեպտեմբերի 7-ին: Ժամանակային տարբերությունն ավելի քան 13 ամիս է: Գտնվել են նաև քառանիշ թվերով գաղտնագրված մի քանի հեռագրեր, բայց նույն ժամանակաշրջանում և տարբեր թվախմբերով: Հաշվի առնելով համեմատաբար նոր գաղտնագրերի բաժանման հարցում տիրող անփութությունն ու խառնաշփոթը՝ արխիվում կարելի է գտնել բազում փաստաթղթեր, որոնք շեշտում են «մինչև նոր բանալին ուղարկելը նախկին գաղտնագրման բանալիով հաղորդակցվելու անհրաժեշտությունը»⁵⁵: Նշվում է նաև, որ ուշացումների պատճառով նահանգային իշխանությունները որոշ դեպքերում միմյանց հետ կարող են հաղորդակցվել իրենց հայեցողությամբ ընտրված գաղտնագրման թվերով: 1914 թ. նոյեմբերի 30-ին Բուրսա ուղարկված հեռագրից կարելի է եզրակացնել, որ այն ուղարկվել է նաև բոլոր տեղական իշխանություններին: Այս հեռագիրը ծանուցում էր գաղտնագրման հին բանալիները վերադարձնելու անհրաժեշտության մասին: Նահանգային

ու գավառային կառավարիչներին թույլ էր տրվում ենթակա վարչական շրջանների հետ հաղորդակցվել իրենց ընտրած գաղտնագրային նիշերով⁵⁶: Այս փաստաթղթերի ուսումնասիրությունից դժվար է եզրակացնել, թե գաղտնագրումը համակարգված է եղել: Ավելի ճիշտ կլինի փաստել, որ այդ քառսն ունեցել է մեկ կանոն՝ խառնաշփոթ ստեղծել:

Նայիմի հեռագրերի անիրական լինելու հիմնավորման օգտին ներկայացվող ապացույցները

Օսմանյան արխիվների գաղտնագրված առանձին հեռագրեր մանրամասն ուսումնասիրելուց հետո անդրադառնանք Օրելի ու Յուջայի այն պնդմանը, թե այդ հեռագրերի թվային խմբերը չեն համապատասխանում օսմանյան Ներքին գործերի նախարարության աշխատանքին, ուստի կեղծ են:

1915 թ. սեպտեմբերի 29-ով ու 1916 թ. մարտի 20-ով թվագրված եռանիշ երկու հեռագրերի լուսանկարները հրատարակել է Անտոնյանը: Հեղինակների պնդմամբ՝ երկու հեռագրերի միջև ժամկետը բավական երկար է դրանց իրական լինելու համար:

Նրանք գրում են.

«Այս իրավիճակից կարելի է եզրակացնել, որ նույն գաղտնագրման եղանակն օգտագործվել է մինչև վեց ամիս: Պատերազմի պայմաններում անհնար էր, որ գաղտնագրման բանալին այդքան երկար ժամանակ չփոխվեր»⁵⁷:

Նրանց պնդումը, սակայն, լուրջ սխալ է: Օսմանյան արխիվում կան եռանիշ եղանակով գաղտնագրված հեռագրեր,

որոնց միջև ընկած ժամանակահատվածը շատ ավելի երկար է, քան վերոնշյալ երկու հեռագրերինը: Օրինակ՝ Դերսիմի շրջանի կառավարիչ Սաբիթի 1914 թ. ապրիլի 8-ի հեռագրի (DHՏՖՐ., 423/27) և Վանի նահանգապետ Ջևդեթի 1914 թ. նոյեմբերի 5-ի հեռագրի (DH.ՏՖՐ., 451/134) միջև ժամանակահատվածը յոթ ամիս է: Օրելի ու Յուզայի տրամաբանությամբ՝ այս հեռագրերից գոնե մեկը կեղծ պետք է լիներ: Իհարկե, նրանք կարող են պնդել, որ հեռագրերից մեկը գրվել է մինչև պատերազմը, իսկ վեց ամսվա կանոնը գործել է դրանից հետո: Սակայն մենք ունենք օրինակներ նաև պատերազմական շրջանից՝ Վանի նահանգապետ Ջևդեթի 1914 թ. նոյեմբերի 5-ի (DH.ՏՖՐ., 451/134), Նեջևֆի գավառի նախկին կառավարիչ Սամիի 1915 թ. ապրիլի 17-ի, Հյուդավենդիգարի (Բուրսայի) նահանգի քաղաքացիական ծառայության տեսուչ Ֆուաթի 1915 թ. դեկտեմբերի 7-ի (DH.ՏՖՐ., 500/53) եռանիշ հեռագրերը: Ջևդեթի ու Ֆուաթի հեռագրերի միջև ժամանակահատվածը 13 ամիս է, Սամիի և Ֆուաթի հեռագրերինը՝ 8: Սա ուղղակիորեն ջախջախում է 6 ամիս ժամանակահատվածի գոյության մասին հեղինակների պնդումը:

Հեղինակների պնդումը, թե «անհնար» է, որ նիշերը գաղտնագրման համար օգտագործվեին վեց ամսից ավելի ժամանակահատվածում, բնականաբար, վերաբերում է ոչ միայն եռանիշ, այլև երկնիշ, քառանիշ, հնգանիշ թվերին: Այսինքն, եթե մենք գտնենք Նայիմի եռանիշ գաղտնագրերով հեռագրերին զուգահեռ օգտագործված երկնիշ հեռագրեր վեց ամսվա ընթացքում, ապա ըստ հեղինակների՝ դրանք ևս պետք է կեղծիք համարվեն: Մինչդեռ վերևում արդեն ապացուցեցինք, որ նույն ժամանակահատվածում ոչ միայն այդպիսի


ծածկագրեր են օգտագործվել առանց սահմանափակումների, այլև դրանց համար կիրառվել են տարբեր թվային խմբեր:

Լրացուցիչ օրինակ է Հալեպի գաղթականների վերաբնակեցման տնօրինության ղեկավար Շյուքրուի (DH.ŞFR., 491/24) 1915 թ. սեպտեմբերի 28-ի և Լքված գույքի վերացման հանձնաժողովի 1916 թ. մարտի 26-ի հեռագրերի միջև վեցամսյա ժամանակահատվածը: Գուցե ասեն՝ սա էլ է կեղծիք: Իրավամբ, արդեն բավական է այս հարցի մեջ խորանալը, ամեն ինչ ակնհայտ է: Արդեն նշեցինք, որ օսմանյան արխիվները լի են տասնյակ հազարավոր երկնիշ, եռանիշ, հատկապես քառանիշ և հնգանիշ գաղտնագիր հեռագրերով, որոնք օգտագործվել են պատերազմի ընթացքում՝ առանց ժամկետային սահմանափակման:

Օրելն ու Յուզան ջանում են նաև մեկ այլ տեսանկյունից վարկաբեկել Նայիմի 1915 թ. սեպտեմբերի 29-ի եռանիշ հեռագիրը: Նրանք նշում են.

«Ոչ մի կապ գոյություն չունի կեղծ հեռագրի ուղարկման տարեթվի՝ 1321 թ. սեպտեմբերի 16-ի (1915 թ. սեպտեմբերի 29-ի) դրությամբ գործող գաղտնագրման համակարգի ու Անտոնյանի օգտագործած համակարգի միջև: Գաղտնագրման համար այդ ժամանակ օգտագործել են ոչ թե եռանիշ, այլ հնգանիշ թվեր»⁵⁸:


Իրենց պնդումը հիմնավորելու համար հեղինակները հրապարակել են 1915 թ. օգոստոսի 26-ին ու դեկտեմբերի 11-ին Թալեաթի ուղարկած երկու գաղտնագրված հեռագրերը: Այնուհետև հեղինակները, հղում անելով 1915 թ. սեպտեմբերի 29-ի Նայիմի հեռագրին, նշում են. «Անտոնյանի հեռագրերի անիրական լինելը հստակ է, քանի որ դրանք իրականում ուղարկվել են նշված ժամանակահատվածում»⁵⁹: Մի կողմ



DH.ŞFR.00500.00053.001

Նկար 2. DH.ŞFR., 500/53, քաղաքացիական ծառայության տեսուչ Ֆուաթի գաղտնագրված հեռագիրը:

թողնելով ժամանակահատվածների ընտրությունը՝ նշենք, որ Գլխավոր շտաբի արխիվից երկու հեռագրերի հիման վրա արված հեղինակների պնդումը, թե կոնկրետ գաղտնագրման մեթոդը գործել է սահմանափակ ժամանակահատվածում, ուղղակի ֆանտաստիկա է: Այսպիսի օրենք չի եղել, ու այդ մասին պնդումը պարզապես հորինվածք է: Ավելին, օսմանյան արխիվները լի են նշված ժամանակահատվածում ուղարկված երկնիշ, եռանիշ, քառանիշ, հնգանիշ գաղտնագրերով գրված հարյուրավոր հեռագրերով: Եթե ընդունենք Օրելի ու Յուզայի փաստարկը, ապա պետք է այս հեռագրերի մեծ մասը համա-



DH.ŞFR.00490.00096.001

Նկար 3. DH.ŞFR., 490/96, Գաղթականների վերաբնակեցման տնօրինության ղեկավար Շյուքրուի գաղտնագրված հեռագիրը, 1915 թ. հոկտեմբերի 12:

րենք կեղծիք: Օրինակ՝ կեղծիք պետք է համարել Բուրսայից քաղաքացիական ծառայության տեսուչ Ֆուաթի 1915 թ. դեկտեմբերի 7-ի մեր նշած հեռագիրը («Ժամանել եմ Բուրսա, երկու օրից կմեկնեմ Գենլիկ»⁶⁰) (տես՝ Նկար 2):

Նույնը վերաբերում է երկնիշ գաղտնագրման համակարգին: Հալեպի գաղթականների վերաբնակեցման տնօրինության ղեկավար Շյուքրու բեյը 1915 թ. սեպտեմբերի 25-ին հեռագիր է ուղարկել գաղթի ընթացքում Հալեպ հասած հայերին քշելու մասին⁶¹:

Մեկ այլ հեռագիր նա ուղարկել է նոյեմբերի 21-ին՝ գնացքի կայարաններում ու այլ բնակավայրերում գաղթականների կուտակումներն արգելելու մասին, ու նշել, որ հայերին

արտաքսելու ջանքեր են գործադրվում⁶² (տե՛ս Նկար 3): Այսինքն՝ Օրելի ու Յուզայի տրամաբանությամբ՝ այս և տասնյակ այլ հեռագրեր կեղծիք են⁶³:

1915 թ. օգոստոսի 26-ի ու դեկտեմբերի 11-ի միջև ընկած ժամանակահատվածում օգտագործված քառանիշ գաղտնագրով հարյուրավոր հեռագրերի օրինակներ կան՝ ուղարկված յուրաքանչյուր ամիս: Նշենք 1915 թ. օգոստոսի 29-ին Դիարբեքիից (DH.ŞFR., 486/25), 1915 թ. օգոստոսի 30-ին Ուրֆայից (DH.ŞFR., 486/4), 1915 թ. սեպտեմբերի 3-ին Եմենից (DH.ŞFR., 487/51), 1915 թ. սեպտեմբերի 30-ին Ադանայից (DH.ŞFR., 491/97), 1915 թ. հոկտեմբերի 19-ին Սեբաստիայից (DH.ŞFR., 494/25), 1915 թ. հոկտեմբերի 30-ին Կոնիայից (DH.ŞFR., 495/33), 1915 թ. նոյեմբերի 2-ին Սեբաստիայից (DH.ŞFR., 495/85), 1915 թ. նոյեմբերի 16-ին ու 23-ին Կեսարիայից (DH.ŞFR., 497/82; 498/63), 1915 թ. դեկտեմբերի 2-ին Մոսուլից (DH.ŞFR., 499/77) տրված հեռագրերը:

Օրելի և Յուզայի պնդմամբ՝ այս ժամանակահատվածում օգտագործվել է միայն հնգանիշ հեռագիրը: Եթե այս պնդումը ճշմարիտ է, ապա քառանիշ գաղտնագրով հարյուրավոր հեռագրերը կեղծ են: Կարճ ասած, այս հեղինակները 1915 թ. սեպտեմբերի 29-ի Նայիմի հեռագրերի մասին ասում են.

«Ոչ մի կապ չկա Անտոնյանի գաղտնագրման համակարգի ու ժամանակին գործածած իրական գաղտնագրման եղանակների միջև, քանի որ այդ ընթացքում օգտագործվում էին միայն հնգանիշ ծածկագրեր»:


Սա սխալ պնդում է: Հեղինակների եզրակացությունը, թե «Անտոնյանի հեռագրերի կեղծ լինելը հստակ է»⁶⁴, հիմնվում է վերոնշյալ փաստարկի վրա, ուստի և անհիմն է⁶⁵: 1916 թ.

մարտի 20-ի՝ Նայիմի եռանիշ գաղտնագրով հեռագրի մասին հեղինակներն ասում են.

«Այդ ժամանակ օգտագործվող համակարգը եղել է քառանիշ: Դա ապացուցված է գլխավոր շտաբի արխիվում՝ դարակ՝ 139, թղթապանակ՝ 1762, ծրար՝ 187: Քանի որ Աստոնյանը չգիտեր իրականում գործածվող գաղտնագրման համակարգը, գրել է, կամ իր համար գրել են կեղծ եռանիշ թվերով հեռագիր»⁶⁶:

Սա տարօրինակ դիրքորոշում է: Բավական խնդրահարույց գիտական մոտեցում է հղում անելը մի անհասանելի աղբյուրի, որի արժանահավատությունն անհնար է հաստատել, ու հենց դրա հիման վրա կեղծ հռչակել մնացած բոլոր փաստաթղթերը:

Օրելն ու Յուզան ակնկալում են, որ իրենց փաստարկներն առանց աղբյուրների հասանելիության *առաջին հայացքից* հավանության կարժանանան: Դա անընդունելի ակնկալիք է: Նրանց պնդումը, որ «քառանիշ գաղտնագրման համակարգը գործի է դրվել 1916 թ. մարտից», մտացածին է: Օսմանյան արխիվում մենք հաշվել ենք մարտ ամսվա բոլոր փաստաթղթերը: Մարտի 1-31-ն ընկած ժամանակահատվածից մնացել է 216 գաղտնագրված հեռագիր, որոնց մեծամասնությունը գաղտնագրված է ոչ թե քառանիշ, այլ հնգանիշ թվերով: Նրանց մեջ են նաև երկնիշ թվերով գաղտնագրված չորս հեռագրեր⁶⁷: Ավելին, Նայիմի վերոնշյալ փաստաթղթի ուղարկման օրից՝ մարտի 20-ից, պահպանվել է առնվազն տասը հեռագիր, որոնցից 4-ը՝ հնգանիշ, 6-ը քառանիշ գաղտնագրով են⁶⁸: Այսինքն՝ հեղինակների պնդումը, որ գաղտնագրերի մեթոդները փոխվել են ըստ ժամանակահատվածի, չի հաստատվում: Կամ էլ ստացվում է, որ բոլոր երկնիշ ու հնգանիշ




DH.SFR.00513.00073.001

Նկար 4. DH.SFR.,513/73, գաղտնագրված հեռագիր Նիդդեից, 1916 թ. մարտի 18:

հեռագրերը կեղծիք են (տես Նկարներ 4 և 5):

Ավելացնենք նաև, որ ներքին հաղորդակցման հեռագրերի համար 2, 3, 4 և 5 թվային խմբերով հեռագրեր են օգտագործվել: Անգամ նույն օրն ուղարկվել և ստացվել են տարբեր թվային խմբերով ծածկագրված հեռագրեր: Սա արդեն բավական է ապացուցելու համար, թե ինչքան անհիմն են Օրելի ու Յուլջայի պնդումները: Ահա այդ տասնյակ օրինակներից մի քանիսը՝ թվագրված ըստ տարիների.

1914 թ. դեկտեմբերի 26՝ եռանիշ (450/86), քառանիշ (450/69) ու հնգանիշ (450/71) գաղտնագրված հեռագրեր,



DH.SFR.00513.00101.001

Նկար 5. DH.SFR., 513/101, գաղտնագրված հեռագիր Տրապիզոնից, 1915 թ. մարտի 20:

1915 թ. մարտի 18 և 20 (Վանի նահանգ)՝ եռանիշ (DH.ՏՖՐ., 464/16), (Մուղլայի ու Իզմիրի նահանգներ) քառանիշ (DH.ՏՖՐ., 464/25 և /27) և (Սեբաստիայի նահանգ) հնգանիշ (DH.ՏՖՐ., 464/40) գաղտնագրված հեռագրեր:

1916 թ. մայիսի 6 (Մարաշի նահանգ)՝ հնգանիշ (518/79), (Ջանիկի գավառ) երկնիշ (DH.ՏՖՐ., 518/90) և (Կաստամոնուլի նահանգ) քառանիշ (518/94) հեռագրեր:

Այս բոլոր օրինակներից բխում է հետևյալ պարզ ճշմարտությունը. Օսմանյան կայսրության պատերազմական շրջանի գաղտնագրության մասին Օրելի ու Յուլջայի յու-

րաքանցուր փաստարկ կեղծ է: Դրանք չեն կարող օգտագործվել Նայիմի հեռագրերի իսկությունը հաստատելու կամ հերքելու համար: Արխիվային նյութերն ապացուցում են, որ Նայիմի տրամադրած փաստաթղթերը գրված են պատերազմական շրջանի Օսմանյան կայսրության գաղտնագրման կանոններով:

Տողերով թղթերի օգտագործման հարցը

Նայիմի փաստաթղթերի հորինվածք լինելու մասին Օրելի ու Յուզայի պնդումներից մեկը վերաբերում է նաև թղթի տեսակին: Օրելն ու Յուզան կարծում են, որ փաստաթղթերից մեկը տողեր ունի, ինչը վկայում է, որ դա կեղծ է: Ըստ նրանց՝ այդ փաստաթղթերից մեկը գրվել է 76 համարը կրող թղթի վրա, սակայն չունի պաշտոնական կնիք: Օրելն ու Յուզան նաև շեշտում են, որ այսպիսի թուղթ, որը հիշեցնում է ֆրանսիական դպրոցների գեղագրության դասերի ոճը, չի օգտագործվել օսմանյան պաշտոնական գրագրությունում⁶⁹:

Այս հեռագրի նկարը, որ 1916 թ. մարտի 20-ին Գաղթականների գրասենյակի տնօրինության ղեկավար Նուրին ուղարկել է Ներքին գործերի նախարարություն, գաղտնագրված է երկնիշ թվերով: Այն հրատարակվել է Անտոնյանի գրքի հայերեն ու ֆրանսերեն տարբերակներում: Նայիմն իր հուշերում այս հեռագրի բովանդակությունը վերծանել է հետևյալ կերպ.

«Ստացած տեղեկություններից պարզ է դառնում, որ մինչև օրս Բաբի և Մեսքենեի շրջանում 35,000, Հալեպի արսորի շրջան Բարլըքում 10,000, Դիպսիի, Աբուհարարի ու Համամի շրջանում 20,000,

Ռաս ուլ Այնում 35,000 և ընդհանուր առմամբ 95,000 հայ մահացել է տարբեր պատճառներով»⁷⁰:

Հեղինակների այն դատողությունը, որ տողերով թղթերը չեն օգտագործվել օսմանյան գրասենյակներում, ուստի Նայիմի հեռագրերը կեղծ են, պարզապես անհասկանալի է: Իրականում նշված ժամանակաշրջանում տողերով թղթերն օգտագործվել են օսմանյան պաշտոնական գրագրության մեջ: Օսմանյան արխիվները լի են Ներքին գործերի նախարարության համար տողերով թուղթ մատակարարելու պահանջագրերով: Ահա մի քանի օրինակ. «100 հատ տողերով թուղթ ուղարկել Ընդհանուր անվտանգության տնօրինության մատակարարումների բաժնից»⁷¹, «Հաշվապահության վարչության՝ տողերով թղթի պահանջը»⁷², «Մասնավոր քարտուղարության համար գնված տողերով փաստաթղթերի գումարի վճարումը»⁷³:

Այս ու նմանատիպ մյուս փաստաթղթերը մեջբերելու ամենակարևոր շեշտադրումն այն է, որ Ներքին գործերի նախարարությունը պահանջում էր գաղտնագրված հեռագրերը գրել տողերով թղթի վրա: Պատճառն ակնհայտ է: Միայն այդպես պաշտոնյաները կարող էին խուսափել գաղտնագրման/գաղնազերծման նիշերի տողերը խառնելուց: Սխալներն այս եղանակով ուղղելով՝ հնարավոր կլիներ խուսափել ավելորդ ու անիմաստ գրագրությունից: 1913 թ. հոկտեմբերին, պատերազմից առաջ, բոլոր շրջանների վարչակազմերին այս պահանջով ընդհանուր շրջաբերական է ուղարկվել:

Առաջին անգամ կառավարության ուշադրությունն այս խնդրին հրավիրել է Մեծ վեզիրի գրասենյակը՝ 1913 թ. հոկ-

տեմբերի 29-ին տեղեկացնելով Ներքին գործերի նախարարությանը: Փաստաթուղթը վերնագրված էր «Տողերով թղթերի վրա գաղտնագրերի շարադրման ու վարչական կենտրոններ ուղարկելու մասին»: Վեզիրի գրասենյակը հաղորդում էր, որ երկու մեծ խմբաքանակով Վանի նահանգ ու Հաքքարիի գավառ ուղարկվող հարյուրավոր հեռագրեր, որոնք *Գևարի քայմաքամը* հանձնել է տեղական հեռագրային գրասենյակ, խիտ են գրված ու դժվարընթեռնելի են: Այդպես կարելի էր սխալներ թույլ տալ գաղտնագրելիս: Նման խնդիր կարող էր առաջանալ նաև այլ շրջաններում: Այսպիսով, վեզիրի աշխատակազմը պահանջել է գրավոր տեղեկացնել բոլոր նահանգային ու վարչական կենտրոններին և գաղտնագրված հեռագրերն ուղարկել տողերով թղթի վրա:

Նույն հաղորդագրությունում Մեծ վեզիրի աշխատակազմը նաև նշում է, որ Արտաքին գործերի նախարարությունը ևս տողավոր թղթեր է օգտագործել գաղտնագրված հեռագրերի համար⁷⁴: Մեծ վեզիրի աշխատակազմը նման բովանդակությամբ հաղորդագրություն է ուղարկել նաև Պետական խորհրդի* նախագահին⁷⁵: Այս գրությանն ի պատասխան՝ 1913 թ. նոյեմբերի 24-ին Ներքին գործերի նախարարությունը շրջաբերական է ուղարկել բոլոր նահանգներին ու ինքնավար գավառներին, որ շրջաններ ուղարկվող գաղտնագրված հեռագրերը գրեն տողերով թղթի վրա: Նշվում էր.

«Գաղտնագրված հեռագրերի տողերը որոշ տեղերում խիտ են ու գրելիս մեծ թվով սխալների պատճառ են դառնում: Դրա համար

* Պետական խորհուրդը (Şura-yı Devlet) Օսմանյան կայսրության բարձրագույն դատական խորհուրդն էր 1868-1922 թթ.:

բոլոր վարչական շրջաններին տեղեկացնում ենք, որ անհրաժեշտ է գաղտնագրել լայն տողեր ունեցող թղթերի վրա՝ սխալներից խուսափելու և լրացուցիչ գրագրությունից զերծ մնալու համար»⁷⁶:

Այսպիսով, Օրելի ու Յուջայի պնդումը, թե Նայիմի ունեցած հեռագրի տողերով թուղթը վկայում է կեղծիքի մասին, լիովին անհիմն է: Գաղտնագրումը հավասար ու կոկիկ չէր, ուստի տողերն օգնում էին լուծել այդ խնդիրը: Այն հանգամանքը, որ Նայիմի փաստաթղթերից մեկը տողերով է, ապացուցում է ոչ թե դրա կեղծ, այլ հակառակը՝ իրական լինելը:

Եզրափակիչ դիտարկում

Նայիմի՝ Անտոնյանին տված գաղտնագիր հեռագրերը նման են օսմանյան արխիվում գտնվածներին: Դրանց իրական լինելը *կասկած չի հարուցում* ոչ մի հարցում, ուստիև այդ փաստաթղթերը կարող են բնօրինակները լինել: Նայիմն աշխատել է Գաղթականների գրասենյակի տնօրինությունում, որտեղ օգտագործվել է երկնիշ գաղտնագիր: Այսպիսով, լիովին տրամաբանական է, որ Նայիմն Անտոնյանին փոխանցած լինի մեծ մասամբ երկնիշ գաղտնագրով փաստաթղթեր: Հիմնական դժվարությունն այն է, որ այսօր չունենք այդ շրջանում օգտագործված գաղտնագրերի բանալիները. գաղտնազերծող եղանակներով գրանցամատյանները փակ են հետազոտողների համար:

Օսմանյան արխիվներում կա միայն 1914 թ. բանալիների գրանցամատյանը: Ըստ դրա՝ եռանիշ գաղտնագրերն օգտագործվել են միայն 1914 թ.⁷⁷: Այդ համակարգն ուժի մեջ է եղել

մինչև 1915 թ. մարտը (օսմանյան տոմարով՝ Նոր տարի), որից հետո հանվել է գործածությունից: 1915 թ. մարտի 7-ին Հիջազից, Եմենից ու Մեդինայից բացի բոլոր շրջաններ ուղարկված հրամանը պահանջում էր.

«Հաշվի առնել, որ նախկինում Բարձր դրան ու երկրի շրջանների միջև հաղորդակցության եռանիշ գաղտնագրման բանալին գործածությունից դուրս է դրվել ու այրվել: Մնացած պատճենները պետք է այրվեն ձեր ներկայությամբ: Այդ մասին հաղորդեք մեզ (Ստամբուլ)»⁷⁸:

Պատասխան հեռագրերում տեղական իշխանությունները հաղորդել են եռանիշ գաղտնագրի բանալիներն այրելու մասին: Չնայած այս պահանջին ու դրա ենթադրյալ կատարմանը՝ եռանիշ գաղտնագրերը շարունակել են օգտագործել: Օրինակ՝ Վանի նահանգապետ Ջևդեթի հեռագրերը 1915 թ. մարտի 17, 18, 22-ին (DH.ŞFR., 465/60, 91, 126), Մոսուլի նահանգապետի անունից նրա քարտուղար Բեսիմի հեռագրերը 1915 թ. ապրիլի 3-ին (DH.ŞFR., 466/146) ու ապրիլի 6-ին (DH.ŞFR., 467/23), Նեջեդ գավառի նախկին կառավարիչ Սամիի հեռագրերը 1915 թ. ապրիլի 5-ին (DH.ŞFR., 467/10): Իշխանությունները 1915 թ. օգոստոսի 2-ին կրկնել են եռանիշ գաղտնագրերի բանալիների գրանցամատյաններն այրելու հրամանը⁷⁹: Դա էլ լիովին չի կատարվել, ինչն ապացուցում է 1915 թ. դեկտեմբերի 7-ի հեռագիրը, որի հեղինակն էր քաղաքացիական ծառայության տեսուչ Ֆուաթը (DH.ŞFR., 500/53): Կարևոր է նաև արձանագրել, որ արխիվում մեր հայտնաբերած եռանիշ հեռագրերից ոչ մեկը 1914 թ. բանալիով չէր գաղտնագրվել: Սա նշանակում է, որ 1915 թ. եռանիշ գաղտնագրերի համար նոր բանալի է ստեղծվել:

Մեր եզրակացությունն այն է, որ, առանց գաղտնագրման

բանալու գրանցամատյանները տեսնելու, անհնար է վերջնական կարծիք կազմել Նայիմի՝ Անտոնյանին տված երկնիշու եռանիշ գաղտնագրերով հեռագրերի մասին: Թեմայի վրա լույս սփռելու համար 1915-1918 թթ. գրանցամատյանները պետք է հրապարակվեն ու հասանելի լինեն հետազոտողների համար: Արխիվում մեզ պատահած որոշ փաստաթղթերից կարելի է եզրակացնել, որ աշխատակիցներն այդ գրանցամատյանները պահպանում ու օգտագործում են:

Արխիվում աշխատող գիտնականները տեղյակ են, որ պատոնյաները տարբեր շրջանային կենտրոններից ստացած գաղտնագիր հեռագրերը վերծանել են նույն էջի վրա: Հետազոտողներն այս փաստաթղթերը կարողանում են կարդալ թվերի վերևում նախկինում կատարված վերծանումների շնորհիվ: Մինչդեռ դրանցից ոչ բոլորն են ժամանակին վերծանվել: Այդպիսի փայլուն օրինակ է DH.ŞFR., 523/90 հեռագիրը: Այն երեք էջանոց փաստաթուղթ է՝ գրված 1916 թ. հունիսի 21-ին, գաղտնագրված չորս նիշով: Հետազոտողներն այս հեռագիրը վերծանման նպատակով չեն օգտագործել: Այն չի կրում այդպիսի նշաններ, բայց արխիվային նյութերի կատալոգում դրա բովանդակությունը հայտնի է: Այն հաղորդում է, որ «թշնամին սկսել է Ջեդդայի ռմբակոծությունը, օսմանյան զինվորների ու ապստամբների միջև շարունակվել է փոխհրաձգությունը»: Ահա թե որն է բացատրությունը. 1916 թ. այս գաղտնագրերի բանալիների գրանցամատյանը պահպանվել է, արխիվի աշխատողներն այն գործածել են: Դա նրանց թույլ է տվել վերծանել փաստաթուղթն ու կազմել սեղմագիրը: Այստեղից էլ հարց է ծագում. ինչո՞ւ են այդ գրանցամատյանները հետազոտողների համար փակ: Ինչ պատճառով: Կարևորագույն հարցերից

մեկն այն է, որ անգամ այդ իրադարձություններից 100 տարի անց հետազոտողներին արգելված է ուսումնասիրել 1914-ից հետո տրված հեռագրերի գրանցամատյանները:

Սա կասկածի լուրջ հիմքեր է տալիս: Սա նաև Նայիմի փաստաթղթերի իսկության ու ճշմարտացիության ապացույց կարելի է համարել: Եթե գրանցամատյանների գաղտնագրման համակարգերն ապացուցեին հեռագրերի ու մյուս փաստաթղթերի կեղծ լինելը, ապա գլխավոր շտաբի արխիվներից օգտվելու իրավունք ստացած հետազոտողները վաղուց կհրապարակեին իրենց ուսումնասիրության արդյունքները: Այսպիսով, այն փաստը, որ գրանցամատյանները հասանելի չեն հետազոտողների լայն շրջանակին, պետք է համարել Նայիմի փաստաթղթերի իսկությունը հաստատող հավաստի ապացույց:

Փաստաթղթերի ամսաթվերի ու նահանգապետերի ստորագրությունների հարցը

Մեր փաստարկները կառուցելով օսմանյան արխիվի նյութերի վրա՝ ցույց տվեցինք, որ իսկապես գոյություն է ունեցել Նայիմ էֆենդի անունով պաշտոնյա, նա գրել է հուշեր, դրանք հիմնրված են հեղինակի կյանքի իրադարձությունների վրա: Նմանապես, վկայակոչելով օսմանյան արխիվները, մենք պարզեցինք, որ Նայիմի՝ Անտոնյանին վաճառած հեռագրերի գաղտնագրության եղանակը համընկնում է օսմանյան կառավարության կիրառած տարբերակին: Ավելին, Հալեպից ուղարկած տողավոր թղթերի օգտագործումն ու երկնիշ գաղտնագրերը, որոնք նախկինում փաստաթղթերի կեղծ լինելու ապացույց են եղել, այժմ հաստատում են դրանց իրական լինելը:

Մնում է միայն Նայիմի փաստաթղթերից մեկի ամսաթվերի ու Հալեպի նահանգապետ Աբդուլհալիկի ստորագրության իսկության հարցը:

Օրելի ու Յուջայի պնդումները, որ դրանք կեղծ են, նման են այս հեղինակների մյուս դատողություններին. երկու դեպքում էլ սխալ են:

Որպեսզի ընթերցողն ավելի հեշտ ընկալի քննարկումը, կրկնենք հիմնական կետերը: Նայիմն Անտոնյանին է հանձնել ընդհանուր առմամբ 26 փաստաթուղթ: Դրանցից 8-ը չեն ընդգրկվել Նայիմի ձեռագիր հուշերում: Այդ 8-ից 6-ն օսմանյան խորհրդարանի պատգամավոր Գրիգոր Զոհրապի մասին են ու գտնվում են Փարիզի Պողոս Նուբար գրադարանում: Մնացած 2-ը Հատուկ կազմակերպության ղեկավար Բեհաեդդին Շաքիր բեյի հեռագրերն են: 18 այլ փաստաթղթեր են հիշատակվում Նայիմի հուշերում: Անտոնյանը հրատարակել է դրանցից 12-ը, նաև Բեհաեդդինի 2 հեռագրերը: (Այսպիսով, Անտոնյանի հրատարակած փաստաթղթերը 14-ն են): Այդ 26 հեռագրերից 7-ը գաղտնագրված է երկնիշ ու եռանիշ տարբերակներով: Այդ 7-ից 5-ի նկարներն Անտոնյանը ներկայացրել է իր գրքում: Կան նաև 12 վերծանված հեռագրեր նահանգապետ Աբդուլհալիկի ստորագրությամբ: Անտոնյանը ներկայացրել է դրանցից 7-ի նկարները: Մենք արդեն հերքել ենք տողավոր թղթի ու գաղտնագրման մեթոդների վրա հիմնված պնդումը, թե փաստաթղթերը հորինվածք են: Մնում է պարզել փաստաթղթերի կեղծ լինելու պնդումը՝ հիմնված դրանցից մեկի ամսաթվի ու 12 վերծանված հեռագրերի ստորագրությունների վրա:

Փաստաթղթերի ամսաթվերն իրո՞ք ապացուցում են դրանց կեղծ լինելը

Օրելն ու Յուզան պնդում են, որ սեպտեմբերի 16-ին (օսմանյան օրացույցով՝ 3-ին) Ստամբուլից Հալեպ ուղարկված համար 502 հեռագրի ամսաթիվն ապացուցում է, որ փաստաթուղթը կեղծ է: Նահանգապետի ստորագրության մոտ գրված է *5 minhi*, որը նշանակում է սեպտեմբերի 5 (ժամանակակից օրացույցով՝ սեպտեմբերի 18)⁸⁰: Իրականում Աբդուլհալիկն իր պաշտոնին նշանակվել է 1915 թ. հոկտեմբերի 3-ին ու փաստացի Հալեպ է ժամանել միայն նոյեմբերի 7-ին՝ պաշտոնը ստանձնելու⁸¹: Հեղինակները պնդում են, որ նախքան պաշտոն ստանձնելը նահանգապետի ստորագրած փաստաթուղթը չի կարող իրական լինել: Օրելն ու Յուզան այս խնդիրը բարձրացնում են՝ ելնելով միայն ամսաթվի սխալից, մինչդեռ առնվազն 5 նմանատիպ փաստաթուղթ կանոյնչափ խնդրահարույց: Այսինքն՝ պաշտոնավարման օրվան նախորդող ամսաթվերով հինգ փաստաթուղթն էլ կրում են Աբդուլհալիկի ստորագրությունը: Դրանցից չորսը նշված են Նայիմի հուշերում՝ (1) 1915 թ. սեպտեմբերի 16, (2) 1915 թ. հոկտեմբերի 12, (3) 1915 թ. հոկտեմբերի 16, (4) 1915 թ. հոկտեմբերի 25⁸²: Կա ևս մեկ փաստաթուղթ, որը նշված չէ հուշերում և առնչվում է հայ պատգամավոր Գրիգոր Զոհրապի սպանությանը: Այն թվագրված է 1915 թ. հոկտեմբերի 17-ով ու պահվում է Պողոս Նուբար գրադարանում:

Հեղինակների տրամաբանությամբ՝ Աբդուլհալիկի ստորագրությամբ այս 5 փաստաթղթերը կեղծիք են, քանի որ թվագրված են նախքան նշանակումը: Այս պնդումը սխալ

է մի քանի պատճառով: Իր հուշերում Նայիմը նշում է, որ պատահաբար նշանակվել է գաղթականների գրասենյակի տնօրենի պաշտոնակատար Աբդուլահադ Նուրիի գլխավոր քարտուղար: Նուրին այդ պաշտոնին էր անցել 3-4 օր առաջ⁸³: Նահանգապետ Աբդուլհալիկն ու Գաղթականների գրասենյակի տնօրինության ղեկավարը Հալեպ էին ժամանել միասին, ինչը նշանակում է, որ Նայիմը պաշտոնի է անցել 1915 թ. նոյեմբերի կեսին: Նայիմը գիտեր նրանց ժամանման ամսաթիվը և, եթե ցանկանար կեղծել թղթերը, դրանց վրա կդներ նահանգապետի ժամանումից *հետո եկող* որևէ այլ ամսաթիվ: Այսպիսի փաստաթղթերը 5-ն են: Սա համոզիչ փաստ է, որ դրանք ոչ թե կեղծված են, այլ հակառակը՝ իրական: Օրելն ու Յուզան մեծապես սխալվելով չեն հավատացել, որ հեղինակն իսկապես Նայիմն է, և ոչ թե Անտոնյանն է կեղծել դրանք: Երկրորդ՝ միայն փաստաթղթի ամսաթվի սխալը չի կարելի համարել կեղծ լինելու անհերքելի ապացույց: Հակառակը, ոչ ճիշտ նշված ամսաթիվը կարելի է նույնիսկ իրական համարել: Եթե յուրաքանչյուր սխալ ամսաթվով թուղթ կեղծիք է, ապա օսմանյան արխիվները լի են կեղծված փաստաթղթերով: Ահա երեք այդպիսի օրինակ, որպես իմ պնդման ապացույց:

Առաջին հեռագիրը ներքին գործերի նախարարի անունից ոմն Շյուքուր 1915 թ. ապրիլի 1-ին ուղարկել է Սիվասի նահանգ: Նա պահանջում է տեղեկություններ հաղորդել շրջանի քրդերի մասին: Հեղինակը հետաքրքրվում է քրդերի ու թուրքական գյուղերի բնակչության հարաբերություններով, որոնց մասին իրեն հաղորդել էին 1916 թ. փետրվարի 10-ին: Բնականաբար, 1915 թ. ապրիլի 1-ի հեռագիրը չէր կարող հղում

անել 10 ամիս հետո գրվելիք մեկ այլ հաղորդագրության: Ուրեմն հեղինակը կան դա գրել է 1916 թ. ապրիլի 1-ին, կան էլ նախորդ հեռագիրն է տրվել ավելի վաղ՝ 1915 թ. փետրվարի 10-ին: Նշված ամսաթվերից մեկն ու մեկը պարզապես ուղարկողի աշխատանքային սխալն է⁸⁴:

Երկրորդ օրինակն օսմանյան արտաքին գործերի նախարարության 1915 թ. դեկտեմբերի 1-ի հաղորդագրությունն է Ներքին գործերի նախարարությանը: Տեքստում նշված մի իրադարձություն տեղի է ունեցել նույն թվականի դեկտեմբերի 13-ին: Նշվում է նաև նոյեմբերի 31 ամսաթիվը, որն ուղղակի չի կարող գոյություն ունենալ: Կրկին ակնհայտ է, որ կան փաստաթղթի ամսաթիվն է սխալ, կան բովանդակության ամսաթվերը⁸⁵:

Երրորդ օրինակը Հալեպից ուղարկած մի հեռագիր է 1332 թ. (1916 թ.) փետրվարի 24/25 ամսաթվով: Այսպիսի ամսաթիվ օսմանյան օրացույցում գոյություն չունի: Օսմանյան կառավարությունն օգտագործել է Ռուսիի օրացույցը⁸⁶, որը Գրիգորյան օրացույցի հետ 13 օրվա տարբերություն ուներ: Պատերազմի ժամանակ կառավարության որոշմամբ՝ 1332 թ. (1916 թ.) փետրվարի 15-ից հետո բոլոր օրերը ջնջվում էին օրացույցից, ու սկսվում էր մարտի 1-ը՝ հիմք դնելով նոր թվագրության: Այսպիսով, 1332 թ. փետրվարի 24/25 ամսաթիվ իրականում չէր կարող լինել:

Եթե բոլոր ամսաթվային սխալները համարվեին փաստաթղթի իսկությանը կասկածելու հիմք, ապա վերոնշյալ հեռագրերը կեղծիք կորակվեին: Սա թյուր մոտեցում է: Ապացուցեցինք, որ օսմանյան արխիվներում կան նմանատիպ սխալներով տասնյակ փաստաթղթեր:

Երրորդ փաստարկը, որի եզրակացության համար միայն ամսաթվի սխալը բավարար չէ, փաստաթղթերի բովան-

դակությունն է: Դրանց ոճն ու տրամաբանությունը լիովին համընկնում են ժամանակաշրջանի օսմանյան պաշտոնական գրագրության հետ և չեն պարունակում հայերի սպանությանն ու բնաջնջմանը վերաբերող հրամաններ: Այսինքն՝ փաստաթղթերում չկա այնպիսի տեղեկություն, որից կարելի է եզրակացնել, որ դրանք հորինելու որևէ շարժառիթ եղել է: Օրինակ՝ 1915 թ. հոկտեմբերի 12-ի մի հեռագրում նշվում է.

«Խորհուրդ ենք տալիս մինչև այժմ տղամարդկանց խմբերի որոշ հայտնի անհատների հանդեպ ցուցաբերած վերաբերմունքը կիրառել նաև նրանց կանանց ու երեխաների հանդեպ՝ դա վստահելով հուսալի պաշտոնյաների»:

1915 թ. սեպտեմբերի 16-ի մեկ այլ փաստաթղթում կարդում ենք.

«Տեղեկություններ կան, որ տեղական բնակիչներից ոմանք ու որոշ պաշտոնյաներ ամուսնացել են հայ կանանց հետ: Պահանջում ենք ամեն գնով կանխել այդ երևույթն ու այդ կանանց աքսորել առանձին»:

Այս երևույթի ամենատիպիկ օրինակներից է 1915 թ. հոկտեմբերի 25-ով թվագրված մի փաստաթուղթ, որով Ներքին գործերի նախարարությունը Հալեպի իշխանություններից պահանջում է *«մեկ շաբաթում հավաքել և ուղարկել 1331 թ. սեպտեմբերի 25-ի համար 1923 գաղտնի գրության մեջ նշված բոլոր փաստաթղթերը»*: Ակնհայտ է, որ իմաստ չկար կեղծել պարզապես նախկին գրություն պահանջող փաստաթուղթը: Ցույց տվեցինք, որ 1915 թ. հոկտեմբերի 25-ին գրված այս փաստաթղթի լուսանկարն Անտոնյանը չի օգտագործել և չի հրատարակել իր գրքում:

Նույնը վերաբերում է 1915 թ. հոկտեմբերի 17-ով թվագրված փաստաթղթին, որը գտնվում է Պողոս Նուբար գրադարանում: Այն պահանջում է Ստամբուլի հայ պատգամավոր Գրիգոր Զոհրապի սպանության հետաքննության թղթերն ունշում, որ «*հայ պատգամավոր Գրիգոր Զոհրապը մահացել է ճանապարհին տեղի ունեցած պատահարից*»: Ծիծաղելի կլիներ անդել, որ այս փաստաթուղթը կեղծիք է: Չէ որ այն հետազայում կարող էր օգտագործվել Զոհրապի սպանությունը հերքելու նպատակով: Մինչդեռ Օրելի ու Յուլայի անդամաբ՝ գրքի նպատակը «թուրքերին պաշտոնապես մեղադրանք առաջադրող ապացույցների տարածումն է»⁸⁷: Եթե գրքի նպատակն իրոք դա է, ապա տարօրինակ է, թե ինչո՞ւ է նրանց անդամաբ կեղծ փաստաթուղթը վկայում, որ Զոհրապի մահը ոչ թե սպանություն է, այլ պատահար: Հարկ է նշել, որ Անտոնյանը չի սահմանափակվել միայն Նայիմի փաստաթղթերի հրապարակումով: Օրինակ՝ նա գրքում զետեղել է էնվեր փաշայի հեռագիրը: Այսինքն՝ Անտոնյանը չպետք է հակված լիներ հենց այս հեռագրի բովանդակությունը տարածելուն⁸⁸:

Մնում է պարզել, թե ինչու և ինչպես է Մուստաֆա Աբդուլհալիկի ստորագրությունը հայտնվել հեռագրերի վրա, երբ նա դեռ չէր ստանձնել պաշտոնը: Պատասխանը շատ պարզ է: Հավանաբար նա փաստաթղթերին ծանոթացել է աշխատանքային պարտականություններին անցնելուց հետո և ուղարկել է Գաղթականների գրասենյակի տնօրինություն, որտեղ աշխատում էր Նայիմը: Իր հերթին պարզ է դառնում, թե ինչպես են դրանք հայտնվել Նայիմի ձեռքում: Այս իրավիճակը հատուկ է օսմանյան պաշտոնյաներին:

Նախքան Աբդուլհալիկը Հալեպի նահանգապետի պաշ-

տոնը զբաղեցնում էր Բեքիր Սամին, որի պաշտոնավարումը տևել է մինչև 1915 թ. հոկտեմբերի 3-ը⁸⁹: Քննարկվող բոլոր փաստաթղթերը, բացի 1915 թ. սեպտեմբերի 16-ով թվագրվածից, գրվել են Սամիի պաշտոնանկությունից հետո⁹⁰: Սամիի հեռանալուց հետո նահանգապետի ժամանակավոր պարտականությունները կատարել է քաղի (իսլամական դատարանի դատավոր) Հալիտը: Մեր ունեցած նյութերից կարելի է եզրակացնել, որ Հալիտը պատասխանել է միայն Ստամբուլից ստացված հրատապ լուծում պահանջող գրություններին: Այն փաստաթղթերը, որոնք վերաբերում էին ապագա գործողություններին կամ քաղաքական ուղղվածություն ունեին, Հալիտը թողել է նոր ժամանող նահանգապետի հայեցողությանը⁹¹:

Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներով թվագրված Նայիմի հեռագրերն ուսումնասիրելիս՝ ակնհայտ է դառնում, որ դրանք վերաբերում են որոշակի հարցերի շուրջ խորհուրդներին ու առաջարկներին: Իր նշանակումից հետո նոր նահանգապետը կարդացել է դրանք և ուղղել համապատասխան գերատեսչություններին ու անձանց: Այլ կերպ ասած, հեռագրերի բովանդակությունը չունեի ցնցող բացահայտումներ, հանուն որոնց կեղծիքներ անելու կարիք լիներ: Փաստաթղթեր ուղարկելու կրկնվող պահանջներն ու Զոհրապի «պատահական» մահն այնպիսի զորեղ ապացույցներ չեն, որ արժանի լինեին հորինելու:

Նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկի ստորագրությունների հարցը

Նայիմի թղթերի անհրական լինելու վերաբերյալ Օրելի և Յուլջայի մյուս փաստարկը նահանգապետ Աբդուլհալիկի

Կեղծ ստորագրությունների մասին է: Հեղինակներն իրենց անդումը հիմնավորում են՝ ներկայացնելով նահանգապետի ստորագրության մի օրինակ, որը մնացել է օսմանյան արխիվներում (Ներքին գործերի նախարարության երկրորդ վարչության փաստաթղթերում): Նայիմի փոխանցած փաստաթղթերի ու այս մեկի ստորագրությունների միջև աննշան տարբերություններ կան: Մենք երկու ուրիշ տեղից էլ ենք գտել նահանգապետի ստորագրությունների նմուշներ: Մի մասը գտնվել է օսմանյան արխիվում՝ Ներքին գործերի նախարարության գաղտնագրման գրասենյակում: Մյուս մասը հրատարակվել է Թուրքիայի գլխավոր շտաբի զինվորական պատմության ու ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի արխիվի 7-րդ և 8-րդ հատորներում: Դրանք վերնագրված են այսպես. «Հայերի գործունեությունն արխիվային նյութերով, 1914-1918 թթ.»:

Եթե Նայիմի փաստաթղթերը համեմատենք երկրորդ վարչության փաստաթղթերի հետ, կտեսնենք, որ ստորագրությունների տարբերություններն աննշան են: Ավելին, զննելիս ավելի մեծ ուշադրություն են գրավում ոչ թե տարբերությունները, այլ նմանությունը: Ամենամեծ տարբերությունը զգացվում է, երբ երկրորդ վարչության և Նայիմի տրամադրած ստորագրությունները համեմատում ենք գաղտնագրման գրասենյակի նմուշների հետ: Գլխավոր շտաբի հրատարակած նյութերի ստորագրություններն իրենց հերթին լիովին տարբերվում են վերոնշյալներից (տես Նկար 6):

Ստորագրությունների նկարից նկատելի է, որ Աբդուլհալիկն օգտագործել է առնվազն 4-5 տեսակ ստորագրություն՝ մեկը մյուսից նկատելի տարբեր: Պատճառն այն է, որ նա երբեմն

Սյունակ 1	Սյունակ 2	Սյունակ 3	Սյունակ 4	Սյունակ 5	Սյունակ 6
	Boghos Nubar library 	79/199 	79/188 	80/221 	GR 7 s. 408
Մալե Թեյ 	Boghos Nubar library 	80/018 	78/158 	84/113 	GR 7 s. 523
	Andonian 	79/132 	77/008 	79/216 	
	Andonian 	77/059 	79/074 	79/061 	
	Andonian 	79-4/028 	78/178 	77/042 	
	Andonian 	77/041 	77/095 	91/221 	
	Andonian 	80/11 	80/029 		
	Andonian 	79/186 	80/071 		

Նկար 6. Նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկի ստորագրությունները:

Սյունակ 1

Հանրապետության շրջանի և Ներքին գործերի նախարարության հանրային անվտանգության վարչության ստորագրությունները:

Սյունակ 2

Պողոս Նուբար գրադարանի ու Անտոնյանի ներկայացրած ստորագրությունները:

Սյունակներ 3, 4, 5

Ներքին գործերի նախարարության գաղտնագրման գրասենյակի ստորագրությունները:

Սյունակ 6

Գլխավոր շտաբի արխիվի նյութերի ստորագրությունները:

ստորագրել է՝ օգտագործելով անուն-ազգանունը, երբեմն՝ միայն անունը: Օրելի ու Յուլյայի ներկայացրած երկրորդ վարչության ստորագրությունները, նաև Նայիմի փաստաթղթերում եղածն անուն-ազգանունով տարբերակներն են: Արաբական տառերով ստորագրությունը մոտիկից նայելիս՝ ակնհայտ երևում են օգտագործված անունն ու ազգանունը: Ստորագրության առաջին մասի օղակների շարքն իր ձևով համապատասխանում է «Մուստաֆա» բառին: Երկրորդ մասը համընկնում է «Աբդուլհալիկ» բառի հապավման հետ:

Իրենց հերթին, գաղտնագրման գրասենյակի ստորագրությունները կրում են միայն «Աբդուլհալիկ», իսկ գերագույն շտաբի հրապարակումները՝ միայն «Մուստաֆա» անունները: Ե՛վ երկրորդ վարչության, և՛ Նայիմի թղթերում «Մուստաֆաները» նման են, սակայն երկրորդ «Աբդուլհալիկ» բառերը թեթևակի տարբերվում են: Նայիմի փաստաթղթերի ամենամեծ տարբերությունն այն է, որ ձախից կտրուկ հետ կորացող գիծը տարածվում է ամբողջ անվան վրա: Համեմատության համար նշենք, որ երկրորդ վարչությունում ստորագրության գիծը կարճ է ու չի տարածվում ամբողջ անվան վրա՝ սահմանափակվելով միայն «Աբդուլհալիկ» բառով:

Հիմնվելով սրա վրա Օրելն ու Յուլյան պնդում են, որ Նայիմի փաստաթղթերն Անտոնյանի հորինածն են: Ինչպես նախորդ դեպքերում, հեղինակները սխալվում են. նրանց փաստարկը մի քանի թերություն ունի:

Նախքան դրանց անդրադառնալը նշենք, որ տարբերվում են ոչ միայն երկրորդ վարչության փաստաթղթերի և Նայիմի փաստաթղթերի ստորագրությունները, այլև հենց երկրորդ վարչության թղթերի ստորագրությունների նմուշները:

Դրանցից մի քանիսում բառերի վրայով ձգվող գիծն ուղիղ է, մյուսներում՝ կոր: Ավելին, Հանրապետության շրջանում նրա օգտագործած որոշ ստորագրություններում ընդհանրապես գիծ չկա՝ ո՛չ շարունակվող, ո՛չ էլ ներքև իջնող:

Այսպիսով, սխալ է ստորագրությունների տարբերությամբ որոշել փաստաթղթերի իսկությունը: Մեր դիտարկմամբ՝ Նայիմի փաստաթղթերի իրական լինելու լավագույն ապացույցն այն է, որ դրանցում կան նահանգապետի *տարբեր ստորագրություններ*: Օրինակ՝ Գրիգոր Զոհրապին վերաբերող 1915 թ. նոյեմբերի 11-ի փաստաթղթի ստորագրությունը լիովին տարբերվում է բոլոր մյուսներից (տե՛ս ստորագրությունների ցուցակի Նայիմ էֆենդու սյունակի առաջին ստորագրությունը): Նայիմի տրամադրած մյուս բոլոր փաստաթղթերում Մուստաֆա Աբդուլհալիկի անուն-ազգանունը կա, այնինչ այդ մեկը միայն «Աբդուլհալիկ» անվամբ է ստորագրված: Մի պահ մտածենք՝ մի՞թե *կեղծել* փորձող մարդը *տարբեր* ստորագրություններ կդներ:

Երկրորդ պատճառը, թե ինչու այս փաստաթղթերը կեղծ չեն: 1915 թ. նոյեմբերի 11-ով թվագրված ու նմանատիպ ստորագրությամբ այլ փաստաթղթեր մենք հայտնաբերել ենք օսմանյան արխիվներում: Դրանք Ներքին գործերի նախարարության գաղտնագրման գրասենյակից են և ստորագրված են միայն «Աբդուլհալիկ» տարբերակով: Մուստաֆա Աբդուլհալիկի՝ այդպիսի հարյուրից ավելի ստորագրություն կա: Այս բազմազանության պատճառն այն է, որ Աբդուլհալիկը 1917 թ. ապրիլից մինչև 1918 թ. սեպտեմբեր եղել է Ներքին գործերի փոխնախարար: Աբդուլհալիկն էր ստորագրում հեռագրերը՝ դրանց գաղտնագրումից և շրջանների տարբեր

պաշտոնյաներին ուղարկելուց առաջ: Դրանցից առնվազն մեկը 1918 թ. սեպտեմբերի 24-ին գրել է հենց ինքը:

Հօգուտ Նալիմի թղթերի իսկության՝ 3-րդ փաստարկն այն է, որ անգամ Ներքին գործերի նախարարության գաղտնագրման գրասենյակում եղած ստորագրությունների միջև կան լուրջ տարբերություններ: Դրանք կարելի է տեսնել ներկայացված աղյուսակում: Սյունակում Աբդուլհալիկի առաջին վեց ստորագրությունները տարբերվում են ոչ միայն երկրորդ վարչության, գլխավոր շտաբի ու Նալիմի հուշերի նմուշներից (աջից երկրորդ սյունակ), այլև գաղտնագրման գրասենյակի այլ փաստաթղթերի ստորագրություններից⁹²: Մի կողմ թողնելով ստորագրությունների մյուս խմբերը (երկրորդ վարչություն, գլխավոր շտաբ ու Նալիմի հուշեր)՝ արդեն այս վեցը բավարար էին պնդելու համար, որ գաղտնագրման գրասենյակի մյուս բոլոր ստորագրությունները հորինվածք են:

Ստորագրությունների իսկության օգտին 4-րդ փաստարկը գաղտնագրման գրասենյակի ու Նալիմի փաստաթղթերի ստորագրությունների «Աբդուլհալիկ» բառի խիստ նմանությունն է: Այս երկու խմբի ստորագրություններում էլ ամբողջ անվան երկայնքով գիծ կա:

Ստորագրությունների իրական լինելու 5-րդ ապացույցն աչքի է զարնում գլխավոր շտաբի հրատարակած նյութերում (*Armenian Activities in the Archive Document, 1914-1918*): 7-րդ հատորի երկու ստորագրություններում նշված է միայն անունը, որը խիստ տարբեր է մյուս բոլորից (տես մեր ցուցակի վերջին սյունակը)⁹³:

Ելնելով Օրելի ու Յուլջայի տրամաբանությունից՝ կարելի է պնդել, որ գլխավոր շտաբի ու գաղտնագրման գրասենյակի

բոլոր ստորագրությունները կեղծ են, որովհետև տարբերվում են երկրորդ վարչության նմուշներից: Անգամ գաղտնագրման գրասենյակի բոլոր վեց ստորագրությունների տարբերությունից կարելի է հապշտապ ասել, որ դրանք կեղծիք են: Նմանապես գլխավոր շտաբի հրատարակած նյութերից կարելի է եզրակացնել, որ հորինված են Աբդուլհալիկի մյուս ստորագրությունները: Այսինքն՝ այս բոլոր նմուշներից ո՛րը համարենք «իսկական», մյուսներն ինքնըստինքյան կդառնան կեղծ:

Դժվար է ասել՝ ինչու է Աբդուլհալիկն ընտրել ստորագրելու տարբեր ոճեր: Կարելի է պնդել, որ սա պատահականություն չէ, և նա գիտակցաբար ընտրել է իր ստորագրության այս կամ այն տարբերակը:


Գլխավոր ապացույցը, սակայն, օսմանյան արխիվային փաստաթուղթն է՝ DH.ŞFR., 79/139 (տե՛ս ստորագրությունների աղյուսակի առաջին տողը՝ Ներքին գործերի նախարարության գաղտնագրման գրասենյակ-1): Այդ ստորագրությունից նկատելի է, որ Աբդուլհալիկը սկսում է իր անունով (Մուստաֆա), բայց հետո գիծ է քաշում դրա վրա ու բավարարվում միայն ազգանունով ստորագրությամբ (Աբդուլհալիկ):

Գաղտնագրման գրասենյակի բոլոր փաստաթղթերն ունեն այդ առանձնահատկությունը: Եթե ազգանունով ստորագրությունները համադրենք ջնջած անունների հետ, կստանանք լիարժեք ստորագրությունը՝ Նայիմի փաստաթղթերի նմուշներին շատ նման: Սա հերթական ապացույցն է, որ Աբդուլհալիկը դիտմամբ է օգտագործել տարբեր ստորագրություններ: Նայիմի հուշերի ստորագրությունների իրական լինելու ևս մեկ ապացույց կա՝ փաստաթղթերի վրայի՝ Մուստաֆա Աբդուլհալիկի ձեռագիր գրառումները: Անգեն աչքով նայելիս անգամ՝

Աշխատակիցների ձևագիրը	Նահանգապետի ձևագիրը
<p>Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 152 (սկստումների 16, 1915)</p> <p>تقریر زکریا حفیظہ اجلاس اولی در سید و محمد بنبر در شب سید و لوب و نویہ اولوز رضیہ یوز حفیظہ</p>	<p>تقریر زکریا کو در شب سید و لوب در سید و محمد بنبر در شب سید و لوب و نویہ اولوز رضیہ یوز حفیظہ</p>
<p>Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 153 (հոկտեմբերի 12, 1915)</p> <p>تقریر زکریا کو در شب سید و لوب در سید و محمد بنبر در شب سید و لوب و نویہ اولوز</p>	<p>تقریر زکریا کو در شب سید و لوب در سید و محمد بنبر در شب سید و لوب و نویہ اولوز</p>
<p>Անտոնյան, Մեծ ոճիրը, էջ 184 (նոյեմբերի 18, 1915)</p> <p>تقریر زکریا کو در شب سید و لوب در سید و محمد بنبر در شب سید و لوب و نویہ اولوز رضیہ یوز حفیظہ</p>	<p>تقریر زکریا کو در شب سید و لوب در سید و محمد بنبر در شب سید و لوب و نویہ اولوز رضیہ یوز حفیظہ</p>

Նկար 7. Նահանգապետ Արդուլիալիկի ու օսմանյան գրասենյակային աշխատողի ձեռագրերի համեմատությունը:

տարբերվում են երկու ձեռագրեր: (տես Նկար 7): Դրանցից մեկը բուն տեքստն է, որը գրել է Ստամբուլից Հալեպ ուղարկած հեռագրերը վերձանող պաշտոնյան: Երկրորդ ձեռագիրը հիմնական տեքստի ներքևում է: Այստեղ նահանգապետի ցուցումներն ու կարճ նկատառումներն են, որոնք ուղղված են հասցեատիրոջը: Օրինակ՝ «գաղթականների հարցերով տնօրենի օգնականին»: Մյուսների վրա էլ ցուցումներ կան:

<p>Պաղոս Նուբար գրադարան (հոկտեմբերի 17, 1915)</p>	<p>Նևազրի կոդ 91/221 (սեպտեմբերի 24, 1918)</p>
	
<p>Անտոնյան, Մեծ ոճիքը, էջ 136 (դեկտեմբերի 1, 1915)</p>	<p>Ռազմական արխիվ, հատոր 7, էջ 408 (օգոստոսի 8, 1916)</p>
	
<p>Անտոնյան, Մեծ ոճիքը, էջ 152 (սեպտեմբերի 16, 1915)</p>	<p>Ռազմական արխիվ, հատոր 7, էջ 523 (հունվարի 18, 1917)</p>
	

Նկար 8. Օսմանյան արխիվի ու Անտոնյանի հրատարակած՝ Աբդուլհալիկի ձեռագրերի համեմատությունը:

Օրինակ՝ «Հանդիպել եք ժանդարմերիայի հրամանատարին», «Հանդիպեք ոստիկանապետին», «Խոսեք ոստիկանապետի հետ՝ առանց հիշատակելու գաղտնագրված հեռագիրը», «Կան կազմակերպված մարդիկ, ինչպես ձեր նշաճները», «Խիստ կարևոր. գաղթականների հարցերով տնօրենի տեղակալին»⁹⁴:

Նույնիսկ անգեն աչքով նայելիս՝ ակնհայտ է, որ այս գրառումները նման են իրար, ունեն լիովին այլ ոճ՝ բուն տեքստից

տարբերվող: Մենք ցույց կտանք մեր ձեռքի տակ եղած այն տեղեկությունները, ըստ որոնց՝ գրառումների հեղինակը նահանգապետ Աբդուլհալիկն է: Գաղտնագրման գրասենյակի և գլխավոր շտաբի հրատարակությունների նահանգապետի ձեռագրի մյուս օրինակները խիստ նման են իրար: Անգամ խորը զննելու կարիք չկա՝ դրանք նման են Նայիմի փաստաթղթերի ձեռագրին (տե՛ս Նկար 8):

Այդ փաստաթուղթը, որ գտնվել է գաղտնագրման գրասենյակում, Բաթում ուղարկված Աբդուլհալիկի հեռագիրն է: Հեղինակը նշում է, որ կրկին նշանակվել է Հալեպի նահանգապետ և պետք է անմիջապես մեկնի այնտեղ⁹⁵:

Մենք բացահայտել ենք նահանգապետին պատկանող առնվազն 5 ձեռագիր նամակ ու 2 նշում՝ գլխավոր շտաբի հրատարակած փաստաթղթերի 7-րդ և 8-րդ հատորներում⁹⁶: Դրանց մի մասի բովանդակությունը նույնական է օսմանյան արխիվներում մեր հայտնաբերած գաղտնագիր հեռագրերի հետ: Կասկած չկա՝ նահանգապետի ձեռագիրն է: Օրինակ՝ 1916 թ. հուլիսի 26-ի՝ Աբդուլհալիկի ձեռագիր գրառումը, հրատարակված գերագույն շտաբի ԱԹԱՍԵ ինստիտուտի 7-րդ հատորում, նույն DH.ŞFR. 526/60 փաստաթուղթն է, որ գտնվել է գաղտնագրման գրասենյակի նյութերում: Ամբողջական անունը նշված է հեռագրի ներքևի մասում: ԱԹԱՍԵ-ի հրատարակած նյութերի ու օսմանյան արխիվի փաստաթղթերի միջև նմանություններ կան: Օրինակ՝ նշումներից մեկում ասվում է. «Իրավիճակը լրացուցիչ ուսումնասիրելու համար որոշվել է գաղթականների գրասենյակի փոխտնօրենի օգնական Հաքքը բեյին ուղարկել Մեսքենե»⁹⁷: Այս գրությունը վերաբերում է Մեսքենեի հետաքննությանը, որին մենք անդ-

րադարձել ենք «Իրո՞ք գոյություն է ունեցել Նայիմ Էֆենդի անունով օսմանյան պաշտոնյա» գլխում:

Այսպիսով, Մուստաֆա Աբդուլհալիկի բոլոր գրությունները նույնական են Նայիմի փաստաթղթերում եղածների հետ: Նայիմի փաստաթղթերի ձեռագիրն ու ստորագրությունները կեղծիք համարելը նույնն է, ինչ օսմանյան արխիվների փաստաթղթերի իսկությունը մերժելը:

Եվ վերջապես, Նայիմի փաստաթղթերի ձեռագրերը մեկը մյուսից տարբերվում են անգամ անզեն աչքով: Սա ապացուցում է, որ վերծանումը կատարել են տարբեր պաշտոնյաներ: Իրատեսական չէ մտածել, թե Նայիմն ունեցել է 4-5 ձեռագրով գրելու վարպետություն, ինչի շնորհիվ էլ ստեղծել է այդ փաստաթղթերը: Այս տեսակի պնդումներին հնարավոր չէ լուրջ վերաբերվել:

Փաստաթղթերի քննադատության վերաբերյալ մի վերջին հավելում

Նայիմի փաստաթղթերի կեղծ լինելու՝ Օրելի ու Յուլջայի գըլխավոր փաստարկը հայերի ոչնչացման մասին հրամանների առկայությունն է հեռագրերում: Հիշեցնենք, որ հեղինակների հիմնական ասելիքը սա էր. «Պնդումը, թե հայերին Առաջին աշխարհամարտում սպանել է օսմանյան կառավարությունը, պարզապես տարիներ ի վեր թուրքերի դեմ վարվող սև քարոզչություն է»: Ըստ նրանց՝ «հայերը, մասնավորապես՝ Անտոնյանը, հորինել են փաստաթղթեր, որոնց նպատակն է բոլոր թուրքերին սևացնելը»:

Հեղինակները պնդում են, որ իրենց նպատակն է «մանրա-

մասն ուսումնասիրել Անտոնյանի գրքում տեղ գտած ու պաշտոնական համարվող ամեն փաստաթղթի ձևն ու բովանդակությունը և ապացուցել, որ դրանք կեղծիք են»⁹⁸:

Քանի որ քննարկումը ծավալվել է հենց այս տեսանկյունից, ապա հասարակության մեջ տպավորություն է ստեղծվել, թե բոլոր այս փաստաթղթերը ստեղծել են հայերը, իսկ հայերին կոտորելու հրամանները (հատկապես Աբդուլհալիկի ստորագրությամբ), նաև Անտոնյանի գրքում տպված նկարները, կեղծ են: Մենք արդեն ապացուցեցինք, որ դրանք Անտոնյանի ստեղծածը չեն, այլ գնված են Նալիմից: Այդ փաստաթղթերն ունեն նաև մեկ այլ բացառիկ կարևորություն: Աբդուլհալիկի ստորագրած փաստաթղթերից ոչ մեկը հայերին կոտորելու հրաման չի պարունակում⁹⁹: Նյութերի իսկության տեսանկյունից սա շատ կարևոր է: Հասարակության մեջ այս փաստաթղթերի սխալ ընկալումը պետք է փոխել:

Նալիմի բոլոր հեռագրերն ուղադրությամբ կարդալիս՝ պարզ է դառնում, որ հայերին կոտորելու մասին կա 8 փաստաթուղթ: Դրանցից 2-ը գաղտնագրված է եռանիշ թվերով, և մենք ունենք դրանց լուսանկարը: Մյուս 6-ի նկարները չկան. դրանք վկայակոչվում են միայն Նալիմի հուշերում ձեռագրերի պատճեններով: Այս 6 փաստաթղթերից 4-ը մեր ձեռքի տակ են, վերցված են Նալիմի հուշերի մի մասից: Մյուս 2-ը չունենք, և դրանք ընդգրկված են Անտոնյանի հրատարակած հուշերում: Հայերին կոտորելու հրամաններ պարունակող վերոնշյալ 8 փաստաթղթերի վրա չկա Աբդուլհալիկի ստորագրությունը: Այսինքն՝ Հալեպի նահանգապետի ստորագրած փաստաթղթերից ոչ մեկն ուղղակիորեն սպանության հրաման չի պարունակում:

Յոթ փաստաթղթերի նկարներ տպել ենք մեր գրքում: Դրանցից 5-ն առնչվում է աքսորի ենթակա կանանց ու երեխաների հանդեպ ձեռնարկված միջոցառումներին: Մեկը քննարկում է Դեյր էլ Զորը հայերի վերաբնակեցման վայր դարձնելու հարցը, մյուսն առնչվում է շրջանում ԱՄՆ հյուպատոսությունների գործունեությանը: Անտոնյանի չօգտագործած՝ Աբդուլհալիկի ստորագրությամբ 3 փաստաթղթերից առաջինը հրամայում է ուղարկել նախկինում պահանջած, բայց դեռ չառաքած թղթերը: Երկրորդը պահանջում է արգելել լուսանկարահանումը գաղթի ճանապարհին, երրորդը կարգադրում է հայ աքսորյալների բոլոր հեռագրերն ու բողոքներն ուղարկել նրանց աքսորի վերջնական հանգրվան:

Աբդուլհալիկի ստորագրությամբ 2 փաստաթղթերը, որոնք գտնվում են Պողոս Նուբարի գրադարանում, վերաբերում են Գրիգոր Զոհրապի մահվանը: Մեկը նշում է, որ նա զոհվել է ճանապարհին պատահարի հետևանքով: Մյուսը ներառում է Զոհրապի մասին հարցերի ցանկ՝ երբ է ժամանել Հալեպ, ինչ հյուրանոցում է մնացել և այլն: Այսինքն՝ իմաստ չկար կեղծել այնպիսի թղթեր, որոնք հեշտորեն կարելի է գտնել օսմանյան արխիվներում: Ահա այս նոր փաստերի լույսի ներքո հարկ է վերստին ու հանգամանորեն ուսումնասիրել Նայիմ էֆենդու հուշերը:

Նայիմ Էֆենդու հիշատակած մարդիկ ու իրադարձությունները, որոնց իսկությունը հաստատված է օսմանյան փաստաթղթերով


Նայիմն իր ձեռագիր պատճեններում հաճախ է տեղեկություններ ավելացրել այն իրադարձությունների մասին, որոնց ականատես է եղել: Այս իրողության առանձնահատկությունն այն է, որ այդ ամենին իրազեկ կարող էր լինել միայն Գաղթականների գրասենյակի տնօրինությունում աշխատած մարդը: Այստեղ անհրաժեշտ ենք համարում օսմանյան արխիվներում մեր հայտնաբերած փաստաթղթերի լույսի ներքո ուսումնասիրել Նայիմի տրամադրած տեղեկություններն ու մանրամասները:

Մեր նպատակն է ցույց տալ, որ Նայիմի հիշատակած իրողությունները լիովին համընկնում են այն իրադարձություններին, որոնք բազմիցս հիշատակվում են օսմանյան արխիվներում: Այդ նպատակով օգտագործել ենք մեր ձեռքի տակ եղած նրա հուշերի պատճենը: Որոշ դեպքերում հղում ենք արել նաև Անտոնյանի հրատարակած այն հատվածներին, որոնք մեր տրամադրության տակ չեն:

Կառավարության որոնած հայերը


Իր հուշերում Նայիմը գրում է, որ կառավարությունը, առաջին

հերթին՝ ներքին գործերի նախարար Թալեաթը, հաճախ են տեղեկություններ հավաքել որոշ հայերի ու նրանց ընտանիքների մասին: Հարցումները հատկապես այն մարդկանց մասին էին, որոնց թույլ էին տվել վերադառնալ մինչև արտաքսումը բնակված վայրը կամ մնալ Հալեպում: Օրինակ՝ «Ներքին գործերի նախարարության հեռագիրը **Լեոն Ամիրայանի, Թորոս Չաղապյանի** ընտանիքներին, **Դիշչեքենյաններին, Հազարապետյաններին** ու **Չորբաջյաններին** կարգադրում էր մնալ ու բնակվել Հալեպում, բայց նահանգապետը նրանց արտաքսել է: Այս մարդկանց մի մասը զրհվել է ճանապարհին»¹ (տե՛ս Նկար 1):



Նկար 1. Նայիմ էֆենդուի հուշերում տեղ գտած չորս հայերի ազգանունները:

Նայիմի հուշերից կարելի է եզրակացնել, որ Թալեաթը գաղտնագրված հեռագրով պահանջել է, որ նշված ընտանիքներին ու մարդկանց Հալեպում մնալու թույլտվություն տան: Հալեպի նահանգապետը նրանց արդեն արտաքսած է եղել, ենթադրաբար՝ Դեյր էլ Զոր: Այս ընտանիքների որոշ անդամներ ողջ են մնացել: Նայիմը նշում է, որ այդ մասին հեռագիր է եղել, բայց ինքը մանրամասներ չի հիշում և տեղեկությունն ընդհանուր առմամբ ներկայացնում է իր իմացածի չափով: Մենք արխիվում հայտնաբերեցինք Թալեաթի հեռագիրը, որն իրոք համապատասխանում էր Նայիմի գրածին: 1916 թ. մարտի 14-ին Հալեպ ուղարկված հեռագիրը ներքին



Նկար 2. Թալեաթի հեռագրի հայկական անունները, 1916 թ. մարտի 14:

գործերի նախարարի անունից պահանջում է, որ նշյալ մարդիկ չաքսորվեն, այլ մնան Հալեպում (տես՝ Նկար 2):

Ըստ բովանդակության՝ մարաշցի Մելքոն Հազարապետյանը, Լևոն Ամիրայանը, Հովսեփ Դիշչեքենյանը, Նշան ու Սանթուի Բուրունսուզյանները, Կոստան ու Հովնան Վարժապետյանները, այնթապցի Հանա Քյուրեքչյանը, քիլիսցի Թորոս Չաղլապյանը, որոնք Հալեպում էին գտնվում, չպետք է աքսորվեին, այլ՝ մնային այնտեղ: Իրավիճակի մասին պետք էր հաղորդել Ստամբուլ²:

Նայիմի հուշերի իսկությունը հավաստող ավելի հստակ ապացույց դժվար է պատկերացնել: Կասկածից դուրս է, որ միայն Գաղթականների գրասենյակի տնօրինության աշխատողը կարող էր իմանալ այդ հեռագրի գոյության մասին ու այդ մարդկանց թվարկել անուն առ անուն: Կարևոր է նաև նշել, որ Անտոնյանն այս տեղեկությունն էական չի համարել և դուրս է թողել հրատարակված տարբերակից:


Սողոմոն Կույումջյանի դեպքը

Իր հուշերում Նայիմը հիշատակում է ոմն Սողոմոն Կույումջյանի հետ պատահած մի դեպք: Կոզանից պատգամավոր ընտրված Նալբանդյանի բարեկամ Սողոմոնն աքսորվել էր Հալեպի նահանգի Մաարա գավառակ: Նալբանդյանը կարողացել է Թալեաթին համոզել, որ բարեկամին թույլ տա գալ ու բնակվել Հալեպում: Ըստ Նայիմի՝ այս հարցով Թալեաթը հեռագիր է ուղարկել Հալեպի Գաղթականների գրասենյակի տնօրինություն: Սողոմոնը եկել է Հալեպ ու ներկայացրել իր տեղափոխման հայտը: Նահանգապետը, սակայն, դի-

մումի տակ մակագրել է, որ նա պետք է մնա Մաարայում:

Օրեր անց Մաարայի ճամբարը լիովին դատարկելու հրաման է տրվել: Սողոմոնը կրկին դիմել է Հալեպում բնակվելու թույլտվության համար, սակայն Գաղթականների գրասենյակի տնօրինության ղեկավար Աբդուլահադ Նուրին չի համաձայնել՝ «չնայած Հալեպում բնակվելու մասին նախարարի հրամանին»:


Նա նշել է, որ այդ անձը փախել է Մաարայից ու այստեղ շարունակում է անհանգստություն պատճառել Գաղթականների գրասենյակի տնօրինությանը, դրա համար էլ պետք է արքայազնը: Նահանգապետ Աբդուլհալիկն ընդունել է Նուրիի պատ-



Նկար 3. Սողոմոն Կույունջյանը Նայիմի հուշերում:


ճառաբանությունը, ու Սողոմոնն արքայազն է³ (տես Նկար 3):

Նկատենք, որ այս անգամ ևս Նայիմը Սողոմոն Կույունջյանի մասին օսմանյան որևէ փաստաթուղթ չի ներկայացրել: Նա ընդամենը պատմել է իր հիշածը: Մինչդեռ այժմ մեր



Նկար 4. Սողոմոն Կոյունջյանի հիշատակումն օսմանյան փաստաթղթերում:

ձեռքի տակ բավականաչափ օսմանյան փաստաթղթեր կան, որոնք բավարար են Նալբանդյանի ու Կոյունջյանի պատմությունն իրական համարելու համար⁴: Այս փաստաթղթերից պարզ է դառնում, որ Կոզանի պատգամավոր Նալբանդյանը բարեխոսել է ոչ միայն Սողոմոնի, այլև շատ այլ բարեկամների համար: Օրինակ՝ 1915 թ. հոկտեմբերի 12-ին Հալեպի նահանգ է ուղարկվել մի հեռագիր, որում պահանջվում էր


 ՀԱՅԿԻ
 Ազգային
 գրադարան


Ճեմարան

Եզր	Անուն և անուն	Գրքի անուն
1	Գրքի անուն	Մեծ Եղբայր
2	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
3	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
4	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
5	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
6	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
7	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
8	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
9	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
10	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
11	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
12	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
13	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
14	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
15	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
16	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
17	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
18	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
19	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
20	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
21	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ
22	Գրքի անուն	Երեսնամյա հիշատակ

57/12/5

Նկար 4. (Շարունակություն):

պարզաբանում տալ «պատգամավոր Նալբանդյան էֆենդու եղբայր Գևորգ Նալբանդյանի Կոզան վերադարձի մասին»⁵: Հետագայում 1915 թ. նոյեմբերի 19-ի դիմումի մեջ Նալբանդյանն անուն առ անուն նշել է իր 21 ազգականներին ու պահանջել, որ նրանց թույլ տրվի վերադառնալ իրենց տներն ու հետ ստանալ բռնագանձած գույքը⁶ (տես Նկար 4):



Նկար 4. (Շարունակություն):

Այս թեմայի շուրջ բավականաչափ գրագրություն կա Ներքին գործերի նախարարության տարբեր գերատեսչությունների ու Հալեպի նահանգապետի գրասենյակի միջև: Ներքին գործերի նախարարը 1915 թ. հոկտեմբերի 5-ին Հալեպ հեռագիր է հղել՝ հարցնելով խնդրո առարկա անձանց աքսորի և գտնվելու վայրի մասին: 1916 թ. հունվարի 4-ին նախարարության ևս մեկ հեռագիր հարցրել է, թե Սողունն Կույունջյանն ու իր ազգականները դեռևս Հալեպի մերձակայքում են: Գրագրությունից պարզ է դառնում, որ Սողունն այդ ժամանակ Հալեպից դուրս էր հաստատվել: Հեռագրում նաև պնդում կար, որ «նախարարությունն առանձին հրամանով» չի պահանջել, որ նա մնա Հալեպում⁷:

Կրկին պարզ է, որ միայն Գաղթականների գրասենյակի

տնօրինության աշխատակիցը կարող էր տիրապետել այնպիսի տեղեկության, ինչպիսին Նայիմի տրամադրածն էր: Մենք ցույց տվեցինք, որ դա լիովին համապատասխանում է օսմանյան փաստաթղթերում մեր գտած օրինակներին: Հավելենք, որ Անտոնյանը բավականաչափ չի կարևորել Սողոմոն Կոյունջյանի պատմությունը, ուստի այն չի ներառել իր գրքի հրատարակած տարբերակում:

Հայ պատգամավորներն ու նրանց ազգականները

Կոզանի պատգամավոր Նալբանդյանի միջամտությունն իր ազգականների օգտին բացառություն չի եղել: Դա բազում դեպքերից մեկն է: Անտոնյանի հրատարակած հուշերի պատճենում, որը մենք չունենք, Նայիմը պնդում է, որ բոլոր հայ պատգամավորները միջամտել են իրենց ազգականների համար: Նրանք հույս են ունեցել կանխել արտաքսումը կամ էլ Հալեպ ուղարկվելուն պես թույլ տալ, որ հաստատվեն այնտեղ: Սակայն այս փորձերը հաճախ ապարդյուն են եղել: Ըստ Նայիմի՝ դրա մեղավորը նահանգապետ Աբդուլհալիկն է եղել: Նայիմը հիշատակում է այդ խնդրին նրա մոտեցումը. «Այդ մարդը հայության թշնամին էր ու ջանում էր հանուն թուրքերի բնաջնջել հայ ժողովրդին: Գաղթականների գրասենյակի տնօրինությանը տված նրա հրամանների դաժանությունն անբացատրելի է: Օսմանյան խորհրդարանի որոշ հայ անդամներ գուցե հազարավոր խնդրանքների գնով ներքին գործերի նախարարությունից թույլտվություն են կորզել, որ իրենց ընտանիքները մնան Հալեպում: Նախարարությունն այս մասին ցուցումներ է ուղարկել նահանգապետին,

բայց նա թաքցրել է հրամաններն ու ընտանիքներին քշել անապատ: Ես գիտեմ այդպիսի տասնհինգից քսան ընտանիք, որոնց մնալը պահանջել է նախարարությունը, բայց նրանց աքսորել են»⁸:

Օսմանյան արխիվներում կան տասնյակ փաստաթղթեր, որոնք հաստատում են Նայիմի հուշերի ճշմարտացիությունը: Նայիմը նշում է, որ ընդհանուր կամ առանձին պատգամավորների անունից հատուկ հրամաններ ու ցուցումներ են ուղարկվել հայ պատգամավորներին ու նրանց ընտանիքները Հալեպ չաքսորելու պահանջով: Փաստաթղթերից երևում է, որ սա խնդրի մի փոքր մասն էր և չէր սահմանափակվում միայն Հալեպով: Օրինակ՝ 1915 թ. օգոստոսի 15-ին բոլոր նահանգներ հեռագիր է ուղարկվել, որով պահանջվում էր չաքսորել հայ պատգամավորներին ու նրանց ընտանիքի անդամներին: Այդ նահանգների մեջ էր Հալեպը, որտեղ աքսորներ էին կազմակերպում⁹: Նմանապես, արխիվների ուսումնասիրությունից պարզվում է, որ, չնայած այս հրահանգներին, պատգամավորներն ու նրանց ընտանիքները, այնուամենայնիվ, աքսորի են ենթարկվել:

Հաստատող օրինակներից է Իզմիրի հայ պատգամավոր Օնիկ էֆենդու և իր ազգականների պատմությունը: Սկզբում հեռագիր է ուղարկվել պատգամավորի ազգականների բնակության քաղաքներ՝ թույլ տալու համար, որ աքսորվելու փոխարեն նրանք տեղափոխվեն Ստամբուլ¹⁰: Աքսորված հարազատների դեպքում, ի հեճուկս հրահանգի, նրանց ուղարկել են գաղթի ճանապարհի բնակավայրեր՝ Ադանա (Տարսուս)¹¹, Աֆյոն¹², Կոնյա¹³ և Այդըն¹⁴: Հեռագիրը պահանջել է թույլատրել, որ տուն վերադառնան կամ մնան տվյալ բնակավայրում¹⁵:

Կրկին, չնայած հրահանգներին, նրա որոշ ազգականներ աքսորվել են մինչև Հալեպ: Հետևել է Հալեպ ուղարկված նոր հեռագիր, որը պահանջում էր այդ ազգականներին տուն վերադառնալու թույլտվություն տալ:¹⁶ Սակայն, ինչպես մյուս դեպքերում, Օսիկի բարեկամները, ի վերջո, աքսորվել են մինչև Դեյր էլ Զոր: Այս առումով կարևոր է դիտարկել հոկտեմբերի 5-ի ու նոյեմբերի 14-ի երկու հեռագրերի պատասխանները ոմն Արտակի Արուսյանի մասին¹⁷: Նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկը երկրորդ հեռագրին ի պատասխան գրել է. «Մինչև մենք կստանայինք Իզմիրի պատգամավոր Իսսան Օսիկի ազգական Արտակի Արուսյանի մասին հեռագիրը, նա արդեն վերաբնակեցման էր ուղարկվել Դեյր էլ Զոր»¹⁸:

Հերթական օրինակը վերաբերում է Մարաշի պատգամավոր Հըրլաքյանի¹⁹ ազգականներին: Այս հարցի շուրջ գրագրությունը պարզում է նաև նահանգապետ Աբդուլհալիկի նկարագիրը՝ ըստ Նայիմի հուշերի: Հաղորդագրություններից առաջինը Թալեաթն է ուղարկել Հալեպ 1915 թ. օգոստոսի 15-ին: Նախարարը պահանջում է «պատգամավոր Հըրլաքյան էֆենդուն և իր ընտանիքը չարտաքսել» Հալեպից²⁰: Հոկտեմբերի 24-ին Թալեաթը հեռագրում է Հըրլաքյան էֆենդու եղբայրների մասին. «Մարաշի պատգամավոր Հըրլաքյան էֆենդու եղբայրներին թողեք Հալեպում»²¹: Հրամանը չի կատարվել, ու եղբայրներն արտաքսվել են: Թալեաթը պարզել է, որ Հըրլաքյանի եղբայրները Բիրեջիքում են: 1916 թ. մայիսի 7-ին նա նոր հեռագիր է ուղարկել Ուրֆայի գավառ՝ պահանջելով, որ «Ավետիս Հըրլաքյանն իր երեխաների, կնոջ, խնամիների ու ազգականների հետ վերադառնա Հալեպ»²²:

Հըրլաքյանի եղբայրն իր ընտանիքով վերադարձել է Հա-

լեպ, սակայն Աբդուլհալիկը նորից անտեսել է հրամանն ու արտաքսել նրանց: 1916 թ. մայիսի 18-ին Աբդուլհալիկի գրասենյակ ուղարկած հեռագրում Թալեաթը հիշեցնում է, որ հեռագրեր են ուղարկվել Ուրֆայի գավառ՝ հրահանգելով Բիրեջիքից Հալեպ վերադարձնել Մարաշի պատգամավոր Հըրլաքյանի եղբայր Ավետիսին ու նրա ընտանիքը: Թալեաթը նշում է, որ իր տեղեկությամբ այդ մարդիկ հետ են գնացել Հալեպ, բայց այնտեղից նորից աքսորվել են: Նախարարը կրկնել է իր հրամանը՝ Հալեպում գտնվող ազգականներին Մարաշ վերադարձնել, իսկ աքսորվածներին հետ բերել²³:

Հըրլաքյանի մյուս բարեկամների համար նմանատիպ այլ հեռագրեր են ուղարկվել: Օրինակ՝ 1916 թ. մարտի 14-ին Թալեաթը հեռագիր է ուղարկել Հալեպ՝ պահանջելով, որ Մարաշի պատգամավոր Հըրլաքյան էֆենդու ազգականները վերադարձվեն Մարաշ: Նրանք այդ ժամանակ Այնթապից Հալեպ էին ուղարկվել²⁴: Սակայն այդ բարեկամները, ի վերջո, աքսորվել են Դեյր էլ Զոր: Նույն օրը Թալեաթն իմանալով այդ մասին հեռագրել է Դեյր էլ Զոր՝ պահանջելով անմիջապես Հալեպ վերադարձնել այդ մարդկանց²⁵: Ենթադրելով, որ հրամանը կատարվել է, 15 օր անց նա ևս մեկ հեռագիր է ուղարկել Հալեպ՝ պահանջելով Հըրլաքյանի բարեկամներին հետ ուղարկել Մարաշ²⁶: Կրկին Աբդուլհալիկն արհամարհել է այս հրամաններն ու նրանց արտաքսել Մեսքենե: Թալեաթը մայիսի 29-ին նոր հեռագրով նահանգապետից համառորեն պահանջել է Մեսքենեից անմիջապես Մարաշ ուղարկել Հըրլաքյանի ազգականներին²⁷:

1916 թ. հունիսի 14-ի մեկ այլ հեռագրից պարզ է դառնում, որ նահանգապետն արհամարհել է Թալեաթի այդ հրամանը

և՛ պատգամավորի ազգականներին ուղարկելով Դեյր էլ Զոր: Հեռագրում Թալեաթը հակիրճ տեղեկացնում է նահանգապետին, որ Մարաշի պատգամավոր Հըրլաքյանի ազգականներն ուղարկվել են Մեսքենե: Անհրաժեշտ է նրանց վերադարձնել Մարաշ: Չնայած բազում պնդումներին՝ նրանց Մեսքենեից ուղարկել են Դեյր էլ Զոր: Այնուհետև Թալեաթն Աբդուլհալիկին հարցրել է, թե ինչու են արտաքսել այդ մարդկանց՝ չնայած իր հրամաններին: Թալեաթը պահանջել է անմիջապես նրանց վերադարձնել Մարաշ՝ «նրանց արտաքսման պատճառները պարզելուց հետո»²⁸: Այսբանից հետո էլ Հըրլաքյանի ազգականների մասին հարցումները շարունակվել են նաև 1917 թ.²⁹:

Արխիվային նյութեր կան, որ նմանատիպ հեռագրեր ուղարկվել են նաև այլ հայ պատգամավորների ազգականների համար: Վերջին օրինակը, որ կբերենք, Հալեպի պատգամավոր Արթին Բոշգեզենյան էֆենդու բարեկամների մասին է: Ամենավաղ գրագրությունն այս հարցով 1915 թ. սեպտեմբերի 25-ին է եղել Թալեաթի ու Հալեպի նահանգի, մասնավորապես՝ նահանգապետ Աբդուլհալիկի միջև: Այնտեղ նշվում է. «Քանի որ տեղեկացվել ենք, որ Հալեպի պատգամավոր Արթին Գեզենյան էֆենդու կնոջ հայրը՝ Պետրոս Աշճյանը, եղբայրը՝ Մեսրոպ Գեզենյանը և զարմիկ Սարգիս Կարաջյան աղան հիմա Հալեպում են, նրանք պետք է տեղում մնալու թույլտվություն ստանան»³⁰: Թալեաթը 1915 թ. հոկտեմբերի 4-ի իր հաղորդագրությունում ցուցակին այլ անուններ է ավելացրել ու կրկնել պատգամավոր Արթին Գեզենյանի քեռուն ու եղբայրներին Հալեպում թողնելու հրամանը³¹: Այնուամենայնիվ, այդ մարդկանց մի մասն արքտրվել է:

1915 թ. նոյեմբերի 15-ին Սիրիայի նահանգ ուղարկած մեկ

այլ հեռագրում Թալեաթը պնդում է, որ Արթինի կնոջ եղբայրն ու նրա որդին աքսորվել են մի քանի ազգականների հետ ու գտնվում են Համայի գավառի Սելիմիե գավառակում: Նախարարը պահանջում է ընտանիքներով հանդերձ նրանց վերադարձնել Հալեպ ու այդ մասին տեղեկացնել իրեն³²: Հրամանը կրկնվել է 1916 թ. հունվարի 4-ին Հալեպ ուղարկված հեռագրում. «Արթին Բոշգեզենյան էֆենդու եղբայր Տիգրան Թերզիի ու նրա կնոջ արտաքսումը պետք է կասեցնել ու նրանց թողնել Հալեպում»³³:

Թալեաթը հավանաբար չի ստացել հավաստիացում, քանի որ 1916 թ. հունվարի 16-ին նորից պահանջել է «Հալեպի պատգամավոր Արթին էֆենդու եղբայր Տիգրան Թերզի Բոշգեզենը պետք է մնա Այնթապում, իսկ եթե արդեն արտաքսվել է, պետք է վերադարձվի ու հաստատվի Այնթապում»³⁴: Աբդուլհալիկը, ի վերջո, 1916 թ. հունվարի 23-ին պատասխանել է հեռագրին. «Հալեպի պատգամավոր Արթին էֆենդու եղբայր Տիգրան Թերզի Բոշգեզենյանը չի աքսորվել, մնացել է Այնթապում»³⁵: Հետագա փաստաթղթերից, նաև Նայիմի պնդումներից սակայն կարելի է եզրակացնել, որ Աբդուլհալիկը պարզապես արհամարհել է այդ հրամաններն ու շարունակել արտաքսել Արթինի բարեկամներին: Օրինակ՝ 1915 թ. դեկտեմբերի 18-ի հեռագրում Թալեաթը կրկնում է նախորդ հրահանգը. «Այնթապցի Տիգրան Թերզի Բոշգեզենյանը՝ պատգամավոր Արթինի եղբայրը, իր քեռի այնթապցի Հովհաննես Բոշգեզենյանի, կնոջ՝ Հակոբյանի ու ընտանիքի հետ պետք է մնա Այնթապում»³⁶: Նա ևս մեկ հեռագիր ուղարկել է 1917 թ. փետրվարի 19-ին. «Այս հրամանը պետք է ի կատար ածվի՝ ըստ 1916 թ. դեկտեմբերի 18-ի հեռագրի, որը վերաբե-

րում էր այնթապցի պատգամավոր Արթինի եղբայր Տիգրան Թերզի Բոզգեզենյանին, նրա քեռի այնթապցի Հովհաննես Բոզգեզենյանին, կնոջը՝ Հակոբյանին ու ընտանիքին, որոնք այժմ Այնթապում են»³⁷: Փաստաթղթերը վկայում են, որ նահանգապետն այս հրամանները նույնպես անտեսել է:

Ի պատասխան՝ Թալեաթը 1917 թ. մարտի 10-ին հեռագիր է ուղարկել նահանգապետին՝ ըստ ամսաթվերի հիշեցնելով ուղարկած բոլոր հեռագրերն ու հրահանգները: Թալեաթը նաև նշել է, որ լսել է պատգամավորի բարեկամներին իր հրահանգներին հակառակ Մեսքենե ուղարկելու մասին: «Մենք իմացել ենք, որ պատգամավոր Արթինի եղբայր այնթապցի Տիգրան Թերզի Բոզգեզենյանն իր քեռի այնթապցի Հովհաննես Բոզգեզենյանի, կնոջ՝ Հակոբյանի ու ընտանիքի հետ արտաքսվել է Այնթապից՝ չնայած նրանց մնալու վերաբերյալ 1916 թ. դեկտեմբերի 18-ի ու 1917 թ. փետրվարի 19-ի իմ հեռագրերին: Մենք նաև տեղյակ ենք, որ նրանք այժմ Մեսքենեում են»³⁸: Բարկացած Թալեաթը նաև հարցրել է՝ որն է պատճառը, որ, չնայած իր բազմաթիվ հեռագրերին, նրանց արտաքսել են³⁹:

Այս իրադարձությունները ցույց են տալիս միայն մեկ բան. Նայիմի տրամադրած տեղեկությունները ճիշտ են: Ակնհայտ է, որ միայն Գաղթականների գրասենյակի տնօրինության աշխատակիցը կարող էր իմանալ այս ամենը:

Որբերին Հալեպից Ստամբուլ արտաքսելու հարցը

Նայիմն իր հուշերում հիշատակում է Հալեպում հավաքված հայ որբերին առնչվող մի միջադեպ⁴⁰: Ըստ նրա՝ գերմանացի

մի տիկին հայ երեխաների մի խումբ հավաքել է Հալեպում ու կառավարությանը ստիպել հոգ տանել նրանց մասին: Սակայն Հալեպի նահանգապետն ու գաղթականների գրասենյակի տնօրենը, դժգոհ լինելով այս իրավիճակից, պահանջել են փակել այդ որբանոցները: Ի վերջո, ներքին գործերի նախարար Թալեաթը միջամտել է՝ հրահանգելով երեխաներին ուղարկել Սիվաս (Սեբաստիա): Փող չլինելու պատճառով այդ հրահանգը չի կատարվել: Հետագայում երեխաներն ուղարկվել են Ստամբուլ:

Նայիմն այսպես է նկարագրել եղելությունը.

«Այդ ժամանակ մի գերմանացի մարդասեր կին կար, կարծեմ, Քոխ անունով: Նա այլոց օգնությամբ ու նաև անձամբ հավաքել էր 100-200 անմեղ երեխայի ու կառավարությանը հորդորում էր հոգ տանել նրանց մասին: Այդ կարեկցական քայլը կատաղեցրել էր նահանգապետին ու Գաղթականների գրասենյակի տնօրինությանը: Սակայն նրանք հրապարակավ ձայն չէին հանում:

Այս գթասիրտ ու կարեկից կինը երեխաների հանդեպ մայրական խնամք էր տածում, որ նրանք ապրեն: Կառավարությունը խորամանկ քայլ արեց. պատասխանը հետևյալն էր.

«Բոլոր երեխաներին կտանենք Սիվաս: Այնտեղ նրանց համար մեծ որբանոց կբացվի»: Նպատակը, սակայն, նրանց ճանապարհին սպանելն էր: Ինձ էր հանձնարարվել նրանց ուղարկելն ու այդ ամենը կազմակերպելը: Երեխաները պետք է հատուկ պաշտոնյայի ուղեկցությամբ գնացքով ժամանեին Էրեղլի, ապա՝ Սիվաս: Ես պետք է տեղակայվեի Էրեղլիում: Այդ ժամանակ Գաղթականների գրասենյակի տնօրինության գումարն արդեն սպառված էր: Նոր ֆինանսավորումն ուշացավ, ու այդ ամբողջ

գործընթացը կանգնեց: 7-8 ամսից երեխաներին մի կերպ ուղարկեցին Ստամբուլ»⁴¹:

Նայիմը կնոջ անունը ճիշտ է հիշում: Այդ կինը Հալեպի գերմանական համայնքի ազդեցիկ դեմքերից մեկն էր՝ մադամ Քոխը: Նա 1915 թ. դեկտեմբերին 4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշային համոզել էր որբանոց բացել Հալեպի հայ երեխաների խնամքի համար: Շվեյցարացի Բեատրիչե Ռոհները հրավիրվել էր տնօրեն աշխատելու⁴²:

Նայիմը նաև Անտոնյանին է տրամադրել այս թեմայի շուրջ Թալեաթի երկու հեռագրերը: Առաջինը գրված է 1917 թ. հունվարի 28-ին:

«Մեզ տեղեկացրել են, որ որոշ նշված անձանց (eşhas-i malume)* զավակներ ընդունվել են տարբեր տեղերում բացված որբանոցներ: Քանի որ պետությունն այս երեխաների ապրելու մեջ վստահ բացի ոչ մի այլ բան չի տեսնում, ուրեմն ամեն ոք, որ կկերակրի, կպահի, կկարեկցի նրանց, կգործի կառավարության դեմ՝ անկախ նրանից, թե ո՞րը կլինի նրանց պատճառաբանությունը՝ իրադրությունը չհասկանալը, երեխաների անելանելի վիճակն ի ցույց դնելը, իրադրության լրջությունը չըմբռնելը: Այսպիսով, տեղեկացնում ենք, որ ոչ մի քայլ չպետք է անել այդ երեխաներին որբանոց ընդունելու կամ այլ որբանոցներ կառուցելու ուղղությամբ»⁴³:

Երկրորդ հեռագիրը գրվել է 1917 թ. փետրվարի 5-ին: Կարդում ենք.

* «Նշված անձինք» եզրույթը հեռագրերում օգտագործվում էր հայերի մասին խոսելիս:

«Քանի որ գաղթականների մեջ զոհված մուսուլման զինվորների հազարավոր որբեր ու այրիներ կան, որոնք կարոտ են աջակցության ու հովանու, անիմաստ է միջոցներ վատնել որոշ նշված անձանց լքյալ և ունեզուրկ երեխաների վրա: Նրանք ապագայում խնդիրներ են հարուցելու ու վնաս են հասցնելու մեր պետությանը: Այս մարդկանց պետք է հեռացնել արտաքսման շարայությունով, իսկ ովքեր մինչև այժմ օգնություն են ստացել, պետք է ուղարկվեն Սիվաս՝ ըստ վերջին հրահանգների»⁴⁴:

Մեր ձեռքի տակ օսմանյան արխիվի բազում փաստաթղթեր կան, որոնք հաստատում են Նայիմի տեղեկությունները: Օրինակ՝ 1916 թ. փետրվարի 10-ին Հալեպի նահանգապետի հեռագիրը, որն ուղարկված է Ստամբուլ: Նահանգապետը դժգոհում է հայ որբերին գերմանացիների հսկողությամբ որբանոցներում հավաքելու մասին Ջեմալ փաշայի հրահանգից: Հեռագրում նշվում է.

«Այստեղ կա առնվազն 530 ծնողազուրկ ու առանց խնամքի երեխա: Բողոքական հայ երեխաներն արդեն ստացել են բողոքական կրթություն, իսկ մնացածը հանձնվել են մի գերմանացի կնոջ խնամքին՝ Ջեմալ փաշայի համաձայնությամբ: Ես Ջեմալին դեռ Դամասկոսում ասացի, որ բացարձակապես անթույլատրելի են համարում հայերին ծառայող երկու հաստատությունների՝ որբանոցների գոյությունը: Ավելի նպատակահարմար է երեխաներին ուղարկել Ստամբուլ կամ Անատոլիայի որոշ շրջաններ»⁴⁵:

Եթե հայ երեխաներին հնարավոր չլիներ տանել որևէ այլ վայր, նահանգապետը կողմ էր նրանց Ստամբուլ ուղարկելուն՝ չնայած դժվարություններին: Այդ մասին առաջին առաջարկը նա արել է 1915 թ. դեկտեմբերի 7-ին⁴⁶: Պատասխան

չստանալով նահանգապետը 1916 թ. փետրվարի 6-ին ուղարկել է երկրորդ հեռագիրը. «Հայ երեխաներին այստեղից Ստամբուլ ուղարկելու իմ պնդմանն ի պատասխան՝ ոչ մի հրահանգ չեմ ստացել»: Այնուհետև նահանգապետը կրկնել է երեխաներին Ստամբուլ կամ Անատոլիայի այլ քաղաքներ ուղարկելու խնդրանքը⁴⁷:

Թալեաթը չի համաձայնել Ստամբուլի տարբերակին, ու որոշվել է երեխաներին ուղարկել Սիվաս՝ «կրթության ու ճուլման» նպատակով: Երեխաներին հնարավորինս շուտ տեղափոխելու համար նա պահանջել է, որ նահանգապետը կապվի Սիվասի ղեկավարության հետ⁴⁸: Նույն օրն իրավիճակի մասին զեկուցվել է նաև Սիվաս.

«Նպատակահարմար չէ Հալեպի հայ որբերին պահել տեղում կամ էլ ուղարկել Ստամբուլ: Նրանց կրթվելու ու ճուլվելու լավագույն վայրը Սիվասն է: Կապ հաստատեք Հալեպի հետ, որ երեխաներն ուղարկվեն այստեղի տարբեր որբանոցներ»⁴⁹:

Երեխաներին Սիվաս տեղափոխելու գումարը, սակայն, տեղ չի հասել, և նահանգապետ Աբդուլհալիկը 1916 թ. ապրիլի 2-ին հեռագրով հարցում է արել այդ մասին.

«Ձերդ գերազանցության գրասենյակը հաստատել է այս երեխաներին Սիվաս տեղափոխելը, սակայն նրանք չեն ուղարկվել, որովհետև գաղթականների ու ներգաղթյալների համար գումարը դեռ չի հատկացվել»⁵⁰:

Նահանգապետն ամբողջ մայիսին շարունակել է պնդել, որ որբանոցները փակվեն: Նա կրկնել է իր կարծիքը, թե Հալեպում գերմանացիների ղեկավարությամբ հաստատության

ստեղծումը տեղին չէ⁵¹: Ըստ Աբդուլհալիկի՝ Բեատրիչե Ռոհները պատրաստ էր գնալ ու որբանոց հիմնել կառավարության առաջարկած այլ վայրում⁵²:

Հատկացումների համար նախատեսված ամիսներին անգամ գումարը տեղ չէր հասնում: Ի վերջո, Թալեաթը 1916 թ. օգոստոսի 13-ին անձամբ հետաքրքրվել է որբերին տեղափոխելու համար պահանջվող գումարի մասին⁵³: Այս անգամ էլ Սիվասի նահանգն է պահանջել անհրաժեշտ գումարը՝ երեխաներին իրենց մոտ ուղարկելու ծախսերը հոգալու համար⁵⁴:

Հալեպի նահանգապետի՝ 1916 թ. դեկտեմբերի 1-ի հեռագրից կարելի է հասկանալ, որ այդ պահի դրությամբ երեխաները դեռ ուղարկված չեն եղել: Աբդուլհալիկը նշում է, որ սպասում է ուղարկելու վերջնական վայրի մասին հրամանին: Նա նաև հայտնում է, որ այդ ընթացքում երեխաների թիվն աճել է.

«Հալեպի հայ որբերը, որոնց թիվն անցնում է 1,500-ը, պետք է Սիվաս ուղարկվեին, բայց դեռ չեն ուղարկվել՝ ռազմական իրադրությունից ելնելով: Նպատակահարմար չէ, որ այդ երեխաները մնան այստեղ կամ հայերի հսկողությանը հանձնվեն: Հայտնեք նրանց արտաքսման վայրի մասին ձեր ցանկությունը»⁵⁵:

Նահանգապետը ևս մեկ փորձ է արել: 1916 թ. դեկտեմբերի 26-ին Ներքին գործերի նախարարությանը տեղեկացրել է, որ մոտ 2,500 հայ երեխաներ են կուտակվել տարբեր որբանոցներում, ու նրանց թիվն աճում է օրեցօր: Նա նշում է, որ անհրաժեշտ է երեխաներին արտաքսել որևէ տեղ, և ակնկալում է արտաքսման վայրի մասին հնարավորինս արագ հրաման⁵⁶: Այդ ամիսներին Թալեաթն իրոք զբաղված է եղել երեխաների արտաքսության վայրի ընտրությամբ: 1916 թ. դեկտեմբե-

րի 11-ին նա գաղտնի նամակ է գրել Կրթության նախարարու-
թյուն՝ Հալեպի հայ որբերին վերաբնակեցնելու վայրի մասին
հարցումով և հիմնավորելով, որ անընդունելի է նրանց այն-
տեղ թողնելը⁵⁷: Երկու շաբաթ անց նրան պատասխանել են,
որ երեխաներին կարելի է ցրել մի քանի վայրում՝ Պարտի-
զակ, Ադաբազար, Իզմիթ, իսկ մնացածին բերել Ստամբուլ⁵⁸:

Թալեաթը 1917 թ. հունվարի 4-ին զեկուցել է, որ հարմար չէ
Հալեպի որբերին Ստամբուլ տեղափոխելը: Նրանց փոխա-
րեն Ստամբուլ էին բերվելու հարևան շրջանների որբերը: Իսկ
նրանց նախկին տեղակայման վայրեր կտեղափոխվեին Հա-
լեպի որբերը⁵⁹: Ի վերջո, երեխաներն ուղարկվել են տարբեր
նահանգներ:

Աբդուլհալիկի պնդմամբ՝ մադամ Ռոհների որբանոցը փակ-
վել է 1917 թ. մարտին: Այսպիսով, պատահական չէ, որ Նայիմի
տրամադրած Թալեաթի հեռագրերը գրվել են 1917 թ. սկզբին,
որբանոցի փակման շրջանում: Ըստ գերմանական փաս-
տաթղթերի՝ հայ որբերը հիմնականում ուղարկվել են Կոնիա,
Իզմիթ, Բալըքեսիր ու Ադաբազար⁶⁰, մի մասն էլ՝ Ստամբուլ,
ըստ Նայիմի նշումների: 1917 թ. հուլիսի 17-ին Ջեմալ փաշան
հեռագրել է Հալեպի թիկունքի ապահովման կենտրոնակայան՝
տեղեկացնելով, որ մոտ 1,000 որբ է ուղարկվելու Ստամբուլ⁶¹:

Նայիմի գրածը հաստատվում է նաև Բեատրիչե Ռոհների
հուշերով: Նա գրում է, որ Ջեմալին հանդիպել է 1915 թ. դեկ-
տեմբերին ու ստացել հայ երեխաներին խնամելու համար
որբանոց բացելու թույլտվություն: Ջեմալի միակ պահանջն
է եղել, որ Ռոհները բավարարվի Հալեպի սահմաններով ու
դուրս չգա քաղաքից: Ռոհները նաև հաստատում է նահան-
գապետ Աբդուլհալիկի՝ հայերի հանդեպ թշնամական մոտե-

ցումը: Այս մասին նաև Նայիմն էր խոսում: «Նահանգապետը համակրանք չուներ մեր հանդեպ, բայց հարկադրված էր բավարարել մեր ամենահրատապ պահանջմունքները»⁶²:

Ռոհները հարկադրված էր 1917 թ. մարտի սկզբին փակել որբանոցը: Նա 1917 թ. հոկտեմբերի 8-ին դիմել է օսմանյան Ներքին գործերի նախարարություն՝ երկրից հեռանալու համար: Այս պահանջը մտահոգել է նախարարությանը: Նույն օրը Թալեաթը Հալեպի ու Մարաշի նահանգապետերին գրություն է ուղարկել՝ հարցնելով նրանց կարծիքը: Հալեպի այդ ժամանակվա նահանգապետ Բեդրին հոկտեմբերի 17-ին տվել է հետաքրքիր պատասխան, որը նաև հաստատում է Նայիմի պատմությունը: Նա գրել է.

«Ռոհները հայտնի է նաև որպես Բեատրիչե Ռոզա, բազում կապեր է հաստատել հայերի հետ այստեղ ու դարձել «հայերի բարեկամ»: Այդ անձը մի ժամանակ բաշխել է Հալեպում Ամերիկայի հյուպատոսարանի միջոցով ստացվող եվրոպական ու ամերիկյան օգնությունը, որը հայերի համար էր նախատեսված: Դրամական միջոցները նվազելուց հետո նա մեկնել է Մարաշ ու զգալի տեղեկություններ հավաքել հայերին վերաբերող դեպքերի մասին: Նրա Եվրոպա մեկնելը, այսպիսով, անբարենպաստ ու անցանկալի է»⁶³:

Ի վերջո, Էնվեր փաշան ստիպված է եղել միջամտել: Նա Գերմանիայի հորդորներից հետո պահանջել է հարցը դրական լուծել, քանի որ հակառակ դեպքում հավանական էր Գերմանիայի ու Շվեյցարիայի բացասական արձագանքը: Այսպիսով, Էնվեր փաշայի՝ 1917 թ. դեկտեմբերի 3-ի հատուկ թույլտվությամբ Ռոհները մեկնել է Գերմանիա: Հեռագրում նշվում է.

«Հաշվի առնելով, որ Մարաշի օգնության կազմակերպության տնօրենի պաշտոնում իր ծառայությունը հաջողությամբ է իրականացրել, և որ գերմանական ու շվեյցարական որոշ շրջանակներում մեր քայլը դրական արձագանք կտա, քաղաքականապես նպատակահարմար է նշված անձին թույլ տալ Ստամբուլից մեկնել Գերմանիա: Դա առաջ կբերի նաև Ստամբուլում Գերմանիայի դեսպանության գնահատանքը»⁶⁴:

Հայ երեխաների սպանող Մեսքենեի ու Ռաքքայի մերձակայքում

Նայիմն իր հուշերում ներկայացնում է 1915 թ. դեկտեմբերի 25-ի հեռագիրը: Թալեաթը հրահանգել է հավաքել այն երեխաներին, որոնք բավականաչափ փոքր են և չեն հիշի իրենց ընտանիքի տառապանքներն ու կրած անարդարությունները: Իսկ մյուսներին հրահանգել է միացնել արտաքսման շարասյուններին⁶⁵: Հեռագրից բացի՝ Նայիմը ներկայացնում է կարճ ծանոթագրություն ու նկարագրում դրա հետ կապված իրադարձությունները:

«Երկար բացատրություն գրելու կարիք չկա: Հեռագրի բովանդակությունը պարզ է: Երկու, երեք, չորս տարեկան են երեխաները, որոնք չեն կարող հիշել իրենց ծնողների տեսած ողբերգությունը: Այդ տարիքից մեծ երեխաները դատապարտվում էին մահվան: Իսկապես դա էր նրանց ճակատագիրը: Ինչ կատարվեց Մեսքենեի որբանոցի երեխաների հետ: Նրանք բոլորը մահացան, սպանվեցին»⁶⁶:

Մեսքենեի հայ որբերին սպանելու համար Նայիմը մեղադրում է Հալեպի գաղթականների գրասենյակի տնօրենի օգ-

Նական Հաքքը բեյին: Նա Հաքքըին մեղադրում է նաև Մեսքենեից Ռաքքա, Ռաքքայից Դեյր Էլ Զոր գաղթի ճանապարհին հայ երեխաների մահվան հարցում: Նայիմը նշում է.

«Համամը, որ Ռաքքայի մերձակայքում է, մահվան ու ստորացման դժոխք է: Կորստից ու զրկանքներից ամենից շատ տուժում էին կանայք ու երեխաները: Իրավիճակի գնահատման թղթապանակը գլխավոր տնօրենի օգնական Աբդուլահադ Նուրի բեյի ձեռքում էր: Հաքքը բեյն ավելի խորացրեց այդ աղետը՝ հրամայելով սպանել գաղթից փրկված մի քանի հարյուր երեխաների: Նա այդ գործերի պատասխանատու նշանակեց ռումելիացի մի պատվագուրկի՝ Ռեսուլ անունով: Այդ մարդը գործել էր աշխարհի բոլոր անբարոյականությունները, նրան վտարել էին ոստիկանությունից: Նա այնքան էր զարգացրել սպանելու հանդեպ իր սերը, որ այն դարձրել էր սրբազան գործ»⁶⁷:

Անտոնյանն իր գրքի տպագրված տարբերակում չի ներառել Նայիմի այս նկարագրությունները: Հակառակը, նա հղում է անում այլ հեռագրի, որը մենք չունենք: Անտոնյանն ամփոփում է հենց իր բառերով: Հեռագրի բովանդակությունն այս է.

«Գաղտնագրված հեռագիր Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգ: Ռազմակայանների հավաքած ու Ռազմական նախարարության հրամանատարության տակ պահվող հայ երեխաներին խնամելու պատրվակով և առանց կասկածներ հարուցելու հավաքել Գաղթականների գրասենյակի տնօրինության գրասենյակներում ու կոտորել: Ընթացքի մասին տեղեկացնել: 1916 թ. մարտի 7, ներքին գործերի նախարար Թալեաթ»:

Հետո Անտոնյանը գրում է.

«Կարճ ժամանակ անց Հաքքըն սպանել է Մեսքենեից Դեյր էլ Զոր ձգվող վերջին շարասյան մեջ մնացած մարդկանց, հետո հավաքել բոլոր որբերին ու արտաքսել Դեյր էլ Զոր: Այստեղ էլ ավարտվել է արյունահեղությունը, որովհետև այլևս մարդ չկար սպանելու: Հավաքված որբերի թիվն ավելի քան 300 էր, սակայն նրանցից մոտ 100-ը Դեյր էլ Զոր չհասան»⁶⁸:

Այստեղ հարկ է նշել երեք կարևոր կետ: Առաջին՝ Մեսքենում որբանոցի բացումը: Երկրորդ՝ Հաքքըն այն մարդն է, որ նշանակվել է Մեսքենում աշխատելու, փակել է որբանոցն ու դրա բնակիչներին դատապարտել մահվան: Երրորդ՝ վերոնշյալ ռումելիացու՝ Ռեսուլի նշանակումն արտաքսման ու կոտորածների գործն իրականացնելու համար: Այս բոլոր փաստերը հաստատվում են օսմանյան արխիվի փաստաթղթերով ու գաղթն ապրած հայերի հիշողություններով:

Մենք նախապես նշել էինք 1916 թ. ամռանը սկսված հետաքննության և այն մասին, որ Թալեաթը տեղյակ չի եղել Մեսքենում որբանոցի բացման մասին: 1916 թ. օգոստոսի 4-ին Հալեպ ուղարկված հեռագրով Թալեաթը հարցրել է՝ ում հրամանով է այն բացվել, և որ գերատեսչությունն է հոգացել ծախսերը⁶⁹: Այս հեռագիրն ուղարկվել է հուլիսի կեսից հետո, երբ Մեսքենից արտաքսումներն արդեն դադարել էին ու Հալեպի նահանգապետը բողոքել էր հայերի համար բացված որբանոցից: Հաքքըն այս հեռագրից հետո է ժամանել Մեսքենե և ակնկալվում էր, որ նա կվերսկսի արտաքսումն ու որբանոցը փակելուց հետո երեխաներին կկցի Դեյր էլ Զոր գնացող շարասյուններին:

Այս և այլ փաստաթղթերում բավականաչափ տեղեկություններ կան, որ Հաքքընին ենթակա պաշտոնյաներից մեկը պայքարել է որբանոցի ու նրա ղեկավարների հետ, ի վեր-

ջո, հասել դրա դատարկմանն ու փակմանը: Այս հարցում մեր ամենակարևոր տեղեկությունների մի մասը քաղված է ճամբարի հրամանատար, փոխգնդապետ Գալիպից: Նա նշանակվել է Մեսքենեում թիկունքի ապահովման պետ ու սկզբում որբանոցի բացման պատասխանատուն է եղել: Օսմանյան կառավարության կոռուպցիան ու ապօրինությունները հետաքննելու մասին պատմող հատվածում ներկայացրել ենք Գալիպի հիշատակումը, որ որբանոց բացելու գրավոր հրամանը 1916 թ. մայիսի 16-ին ստացել է հրամանատարի գրասենյակից: Ըստ այդ հրամանի էլ սպան որբանոցը բացել է հունիսի սկզբին: Դրա ղեկավարումը քաղաքացիական կառավարման է հանձնվել օգոստոսի 18-ին: Գալիպը որբանոցի բանալին հանձնել է Հաքքըին՝ գաղթականության գրասենյակի տնօրենի օգնականին⁷⁰: 1917 թ. մարտի 1-ին ներքին գործերի նախարարը հեռագրով Հալեպի նահանգապետի գրասենյակից հետաքրքրվել է, թե «Հաքքը բեյն ուր է ուղարկելու որբերի շարասյունը»⁷¹:

Ցեղասպանությունից փրկվածների հիշողություններում բազում վկայություններ կան Հաքքըի արարքների վերաբերյալ: Օրինակ՝

«Հաքքը բեյը հավաքեց Մեսքենեի ճամբարից հարավ բնակվող երեխաներին և ուղարկեց Դեյր էլ Զոր: 800-ից ավելի երեխաներ, մեծ մասը՝ հիվանդ ու հաշմանդամ, հյուծվեցին ու մահացան ճանապարհին: 800 որբերի ուղարկել են 17 վագոններով: Նրանք ողջ-ողջ այրվել են»⁷²:

Մահվան ուղարկողը, հասկանալի է, Հաքքը բեյն էր: Ժամանակակիցների որոշ հուշեր նաև հաստատում են, որ որբերին

սպանելու առաջադրանքն այդ պատվազուրկ ռումելիացի Ռեսուլին հենց Հաքքըն է տվել: Օրինակ՝ Գրիգոր Անկութը գրում է, որ Ռեսուլին Հաքքըն բեյն է նշանակել իր տեղակալ: Հալեպի ու Դեյր էլ Զորի միջև մնացած հայ գաղթականներին վերացնելու համար Հաքքըն բեյն իր տեղակալ Ռեսուլի հետ նրանց քշել է Եփրատի երկայնքով ներքև: Այսպիսով, նրանց հասցրել են Դեյր էլ Զոր ու անգամ՝ ավելի հարավ: Մոտ 300 տղամարդ ու պատանի, որոնք փրկվել էին Համամի ճամբարում, հատուկ շարասյունով քշվել են հարավ: Կան հավաստի տեղեկություններ, որ նրանք սպանվել են Ռաքքայում, Սեբկայից հարավ: Այլ տեղերից մենք լսել ենք, որ Շամիեի շրջանում 300 երեխաների լցրել են քարայրը, ապա վառելիք լցրել ու ողջ-ողջ այրել⁷³:

Կարճ ասած, ինչպես Անտոնյանն է բնորոշում, Հաքքըն «արել է այն, ինչ Նայիմ բեյն ու Մեսքենեի ճամբարի տնօրեն Հուսեյն էֆենդին ի վիճակի չեն եղել: Եփրատի երկայնքով կուտակված բոլոր հայերին նա է գաղթեցրել դեպի Դեյր էլ Զորի սպանդանոց»⁷⁴: 1917 թ. փետրվարի 14-ին Հալեպի նահանգապետը զեկուցել է. «Աքսորից փախած հայերը կրկին աքսորվել են Դեյր էլ Զոր՝ գաղթականների գրասենյակի տնօրենի օգնական Հաքքըն բեյի վերահսկողության տակ»⁷⁵:

Հաքքըն հավանաբար լավ է կատարել իր պարտականությունները, որովհետև 1917 թ. փետրվարի 22-ին Թալեաթը Հալեպի նահանգապետին ուղարկած հեռագրում հարցրել է, թե Հաքքըն իր պարտականությունների կատարումը շարունակելու համար ֆիզիկական աջակցության կարիք ունի⁷⁶: Նահանգապետ Աբդուլհալիկը փետրվարի 25-ին պատասխանել է, որ շարունակելու կարիք չկա, որովհետև Հաքքըն

արդեն հայ որբերի շարասյունով մեկնել է Ստամբուլ⁷⁷: Թերևս մնում է հավելել, որ Հաբբըն այդ շրջան էր ուղարկվել ոչ միայն արտաքսումն ու կոտորածները վերսկսելու, այլև կոռուպցիան ու ապօրինությունները հետաքննելու, նաև գաղթականներից մեծ քանակով կաշառք էր ստացել⁷⁸:

Երկաթգծի հայ աշխատավորների արտաքսումը

Նայիմը տրամադրել է Բաղդադի երկաթգծի հայ աշխատավորների արտաքսման մասին Թալեաթի 3 հեռագրերը և հակիրճ հավելվածով բացատրել տեղեկությունը: Առաջին հեռագիրը համար 801-ն է՝ ուղարկված 1916 թ. հունվարի 8-ին:

«Որոշվել է, որ բոլոր հաստատությունների, երկաթգծի ծառայության ու կառուցման մեջ ներգրավված բոլոր հայերը ևս պետք է արքտրվեն վերաբնակեցման վայրեր: Այս մասին Ռազմական նախարարությունից կարգադրություններ են ուղարկվել բնակի հրամանատարներին: Հաղորդեք արդյունքների մասին»:

Նայիմը հավելում է, որ երկաթգծի կառուցման ու գործունեության մեջ ներգրավված մարդիկ հիմնականում հայեր էին: Կառավարությունն այս հրամանը տվել է՝ վախենալով, որ նրանք կդավաճանեն իշխանությանը: Այս հրամանին ի պատասխան՝ երկաթգծի թիկունքի ապահովման հարցով հանձնակատարից պահանջել են տրամադրել հայ աշխատողների ցուցակը⁷⁹:

Առաջին հեռագրին հաջորդել են երկուսը՝ համար 840-ը (1916 թ. հունվարի 29) և համար 845-ը, որն ուղարկվել է որպես նախորդի լրացում: Առաջինում կարդում ենք հետևյալը.

«Կարելի է հասկանալ, որ 40-50 հազար հայեր կան, մեծ մասը՝ որբեր ու այրիներ, որոնք ապրում են Ինթիլիի ու Այըրանի ճամբարից մինչև Հալեպ՝ երկաթգծի երկայնքով: Ամենամեծ պատիժը հասնելու է նրանց, ովքեր բանակի հաղորդակցային ամենակարևոր ուղու վրա այսպիսի չքավորություն ու աղքատություն են ստեղծել: Ադանայի նահանգապետին հաղորդելուց հետո պետք է հայերին արագ արտաքսել վերաբնակեցման վայրեր՝ առանց Հալեպով անցնելու: Մեկ շաբաթում հաղորդեք արդյունքի մասին»⁸⁰:

845-րդ հեռագրում կարդում ենք.

«Չսայած անհնար էր Ինթիլիի ու Այըրանի ճամբարներում մնացած հայերին գաղթեցնելը, քանի դեռ նրանք չեն ավարտել շինարարությունը, միևնույն է, նրանց ընտանիքների մնալն այդ տարածքներում անթույլատրելի էր համարվում: Ընտանիքները պետք է ժամանակավորապես բնակեցվեին Հալեպի շրջակա գյուղերում ու ավաններում, խնամակալ չունեցող կանայք ու երեխաները պետք է նախորդ ցուցումների համաձայն արտաքսվեին»⁸¹:

Ըստ Նայիմի՝ երրորդ հեռագրի պատճառը եղել է երկաթգծային ընկերության ինժեներների բողոքը, որ հայերին արտաքսելը կնշանակի դադարեցնել շինարարությունը⁸²: Սակայն այս հրամանին ի պատասխան՝ երկաթուղային հայ բանվորների ընտանիքները տեղափոխվել են Հալեպ՝ «շարասյուն շարասյան հետևից»: Նախատեսվում էր, որ այս մարդիկ նախապես պետք է հաստատվեին գյուղերում: Նրանց անունները գրանցել էին, ստեղծել մատյաններ և այդպես խեղճ մարդկանց հույսի նշույլ տվել:

«Սակայն հույսն ապարդյուն էր: Ոստիկանությունը նրանց քշում էր

այդ շրջանից: Այդ մարդիկ պաշտոնական խնդրանքներ ու դիմումներ էին ուղղում, պաշտոնյաներն էլ ցույց էին տալիս, թե դրանք լրջորեն հաշվի են առնում: Սակայն դիմումներին ընթացք տալու կարիք չկար. դիմողները հաշված օրերի ընթացքում հայտնվում էին Մեսքենեի սարսափների ու բարբարոսության ճիրաններում: Այս խեղճ, չքավոր կանայք ու աղջիկները դառնում էին տեղական բնակչության ու ժանդարներիայի լկտի ցանկությունների զոհը»⁸³:

Նայիմի պատմությունից կարելի է հասկանալ, որ երկաթգծի կայարաններում ու շինարարությունում աշխատող հայերի արտաքսումը եղել է պլանավորված: Միայն երկաթգծային ընկերության նախազգուշացման հետևանքով, այն է թե՛ աշխատանքը կկանգնի առանց հայերի, որոշ աշխատողների թույլ են տվել մնալ, նրանց ընտանիքներին էլ՝ վերաբնակվել Հալեպի մերձակայքում: Սակայն այս դադարը ժամանակավոր էր. ռազմական երկաթգծերի հանձնաժողովը սկզբում ցուցակագրել է երկաթուղային բոլոր հայերի անունները, ապա նրանց ընտանիքներով արտաքսել Դեյր էլ Զոր:

Օսմանյան փաստաթղթերը վկայում են, որ Նայիմի տեղեկությունը լիովին ճիշտ է: Նախ նշենք, որ Թալեաթի համար 801 հեռագրի տեղեկության երկու մասերը հաստատվում են օսմանյան փաստաթղթերով: Իսկապես, Ինթիլի-Այըրանից մինչև Հալեպ, երկաթգծի երկայնքով, կուտակված են եղել 40-50 հազար հայ որբեր ու այրիներ: Այս թվերը նաև հիշատակվում են 1915 թ. նոյեմբերի 6-ի ու 9-ի երկու հեռագրերում, որոնք համապատասխանաբար ուղարկել են Ադանայի նահանգապետ Հաքքըն ու Օսմանիեի գավառապետ Ֆեթիհը:⁸⁴ Երկրորդ կետն այն է, որ երկաթգծից հայերի արտաքսումը եղել է Ռազմական նախարարության պահանջով:

Հայ երկաթուղայինների արտաքսումը կնճռոտ խնդիր էր, բազում վայրիվերումներով: Սկզբում որոշված է եղել չարտաքսել բոլոր աշխատավորներին⁸⁵՝ նույնիսկ նկատի առնելով տեղական պաշտոնյաների բազում հեռագրերը, թե երկաթգծի վրա աշխատող հայերի թիվն անթույլատրելի մեծ է: Նրանք պնդում էին, որ այդ թիվը սպառնում է անվտանգությանը, ու պետք է նվազեցնել այն⁸⁶: Հետագայում, սակայն, հատուկ հանձնաժողով է ստեղծվել՝ որոշելու համար, թե ով և ինչ հիմքով է արտաքսվելու⁸⁷: 1915 թ. սեպտեմբերի 25-ին Հալեպի գաղթականների գրասենյակի տնօրեն Շյուքրու բեյը հեռագիր է ուղարկել՝ պահանջելով «կազմել այն հայ արհեստավորների ու աշխատավորների ցուցակը, որոնք ներգրավված են երկաթգծի գործունեության ու շինարարության մեջ: Նպատակն այն էր, որ կայարանների տնօրեններն արտաքսման ենթակա և արտաքսումից ազատված հայերին բաշխեն ռազմական ու քաղաքացիական երկաթուղու հանձնակատարների վրա, որպեսզի անմիջապես արտաքսվեն այն բազմաթիվ աշխատողները, որոնց տարբեր պատրվակներով պահում են կայարանների տնօրեններն ու ինժեներները»⁸⁸:

Ռազմական նախարարությունն այն կարծիքին էր, որ երկաթգծի աշխատակիցների ու նրանց ընտանիքների արտաքսումը պետք է կասեցվի, մինչև նշված հանձնաժողովը վերջնական որոշում կայացնի⁸⁹: Դա, ի վերջո, տեղի ունեցավ հոկտեմբերի կեսին: Հանձնաժողովը որոշել էր, որ բոլոր հայերը պետք է արտաքսվեն ու փոխարինվեն մուսուլման աշխատակիցներով: Եվ քանի որ որոշ առաջադրանքներ պահանջում էին առանձնահատուկ տեխնիկական վար-

պետություն ու գիտելիք, այդ գործերից հայերին ազատելը կատարվելու էր փուլ առ փուլ: Այսպիսով, երկաթգծային ընկերությունը պետք է պատրաստեր նման աշխատակիցների ու աշխատանքների գրանցամատյաններ: Այդ նպատակով ընկերության ներկայացուցիչները պետք է համագործակցեին նահանգապետների ու գավառապետների հետ⁹⁰:

Ջեմալ փաշան այն կարծիքին էր, որ արտաքսման հետաձգումը սպառնում է անվտանգությանը, ուստի պատասխանատուներին հորդորում էր շտապել⁹¹: Ռազմական նախարար Էնվերը ևս այդ կարծիքին էր: Այդ պատճառով նա Թալեաթին հեռագրով հայտնել է, որ հայ աշխատավորների տեղերը պետք է զբաղեցնեն մուսուլմանների գումարտակները⁹²: 1915 թ. հոկտեմբերի 27-ին գլխավոր կենտրոնակայանի երկաթգծի վարչությունը Բաղդադի երկաթգծի զինվորական կոմիսարին հեռագրել է՝ պահանջելով Բաղդադի երկաթգծում աշխատող հայերի ցուցակը: Ցուցակագրումն ավարտվել է նույն թվականի դեկտեմբերի 8-ին⁹³:

Այս հարցով ամենակարևոր որոշումներից մեկը կայացվել է 1915 թ. նոյեմբերի 11-ին Հալեպում: Հանդիպմանը մասնակցել են Ջեմալ փաշան, Հալեպի նահանգապետ Աբդուլհալիկը, գաղթականների գրասենյակի տնօրեն Շյուքրու բեյն ու անվտանգության հարցերով գլխավոր քարտուղար Իսմայիլ Ջանփոլաթը, որը հատուկ այդ նպատակով եկել էր Ստամբուլից: Որոշվել է, որ Հալեպը մաքրվի ոչ տեղացի հայերից, երկաթուղում աշխատող հայերին էլ թողնեն բանակի տրամադրության տակ⁹⁴:

1915 թ. դեկտեմբերի սկզբին Ջեմալը սկսել է Ինթիլիի շրջակայքի հայերի արտաքսումը: Այստեղ նրանց թիվը մեծ էր⁹⁵:

Երկաթուղին աշխատեցնող գերմանական ընկերությունը, սակայն, դժգոհել է, որ դա հանգեցնում է աշխատանքի ընդհատումների: Դրանից հետո Ջեմալը ժամանակավորապես դադարեցրել է հայերի արտաքսումը⁹⁶: Գերմանացիները չեն բավարարվել այս փաստարկով և մեծ ճնշում են գործադրել բանակի հրամանատար Ջեմալի վրա: Ոչ միայն արտաքսումն է դադարեցվել, այլև որոշ հայեր աքսորից վերադարձվել են իրենց նախկին աշխատանքին: Հալեպի նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկը 1916 թ. հունվարի 23-ին դժգոհել է, որ այդ իրավիճակն ուղղակիորեն ազդում է արտաքսումների վրա: Նա Ռազմական նախարարությունից պահանջել է գերմանական ընկերությանը բացատրել կազմակերպվող արտաքսման կարևորությունը⁹⁷:

Այս հարցում կառավարության առջև խնդիր են հարուցել ոչ միայն Գերմանիայի իշխանությունները⁹⁸: Կաշառքի միջոցով մեծ թվով հայեր կեղծ փաստաթղթեր են ներկայացրել ու, որպես աշխատավորներ, մնացել են երկաթուղու կայարաններում կամ շինարարությունում⁹⁹: 1916 թ. հունվարի 16-ին Ներքին գործերի նախարարությունը գրություն է ներկայացրել համապատասխան նահանգներ՝ պահանջելով այն մարդկանց ցուցակը, որոնք արտաքսումից ազատվել են բացակա լինելու պատճառով¹⁰⁰: Ավելին, ընկերությունից պահանջվել է նաև այն անձանց ցուցակը, որոնք երկաթգծում վերստին աշխատանքի են ընդունվել¹⁰¹:

Ըստ Նայիմի՝ այս ցուցակները պատրաստել է թիկունքի ապահովման զինվորական գրասենյակը: Հալեպի գրասենյակը, օրինակ, ներկայացրել է Հալեպի երկաթուղում աշխատող 3,134 մարդու անուն: Հետագայում, սակայն, նրան-

ցից միայն 430-ն է աշխատելու իրավունք ստացել: Ներքին գործերի նախարարությունը պահանջել է այդ ցուցակների ավելորդ մարդկանց արտաքսել¹⁰²: Ներքին գործերի նախարարությունը 1916 թ. ապրիլի 17-ին ևս մեկ հաղորդագրությամբ հարցրել է՝ երկաթուղու հանձնակատարներն ավարտել են ցուցակներ կազմելը¹⁰³: Երկու օր անց Աբդուլհալիկը պատասխանել է, որ ընդամենը երկու գրանցամատյան է պատրաստ՝ միայն Ինթիլիի շրջանի հայ աշխատավորների ու արհեստավորների ցուցակներով: Մնացած բոլոր պաշտոնյաների, աշխատավորների և այլոց գրանցամատյանները դեռ պատրաստ չեն¹⁰⁴:

Այս ընթացքում տարբեր երկաթուղային կայարաններում ու կառուցման վայրերում հանգրվանած հայերի թիվն աճել է: Թալեաթը 1916 թ. փետրվարի 15-ին Ջեմալին ուղղած նամակում տեղեկացրել է, որ նա ընկերությանը թույլատրել է Այըրան, Ինթիլի ու Իսլահիե շրջաններում աշխատելու նպատակով պահել մոտ 300 հայ արհեստավորի, բայց հայերի թիվն իրականում մոտ 7,000 է: Թալեաթը հարցրել է՝ այսքան մեծաթիվ հայերի մնալու թույլտվությունը Ջեմալինն է¹⁰⁵: Ադանայի նահանգապետ Հաքքըն 1916 թ. հունվարի 22-ի հեռագրում պնդել է, որ հայերի թիվն իրականում մոտ 10,000 է¹⁰⁶: Ջեմալը ծանր է տարել այս փաստն ու Թալեաթին գրել է, որ տեղյակ չի եղել իր թույլ տվածից ավելի մեծ թվով հայերի մասին: Նա հայտնել է, որ հանձնարարել է հետաքննություն անցկացնել, ավելացած հայերին արտաքսել արդեն որոշված ուղղություններով¹⁰⁷:

Թալեաթն այս պատասխանն անմիջապես ուղարկել է Ադանայի ու Հալեպի նահանգապետերին:

«4-րդ բանակի հրամանատար Ջեմալ փաշան մեզ տեղեկացրել է, որ Այըրան, Իսթիլի ու Իսլահիեի շրջաններում թույլատրելի սահմանը գերազանցող բոլոր հայերն ուղարկվելու են որոշված վայրեր»¹⁰⁸:

Այսուհանդերձ, հայ երկաթուղայինների արտաքսման խընդիրները շարունակվել են մինչև 1916 թ. մարտ, երբ Վանի նահանգապետ Ջևդեթը նշանակվել է Ադանայի նահանգապետ¹⁰⁹: Պաշտոնը ստանձնելուց անմիջապես հետո նա սկսել է այդ աշխատավորների արտաքսումը: Հունիսի 18-ին Ստամբուլ հղած զեկույցում Ջևդեթը գրում է, որ անտեսել է գերմանական ընկերության դժգոհությունն ու հայ աշխատավորներին ընտանիքներով գաղթեցրել է Ամանոսի մերձակայք: Նրա խոսքով՝ Տավրոսի շրջանում երկաթուղու շինարարությանը մասնակցող ու այդպիսով գաղթից ազատված հայերի արտաքսումից հետո Ադանայի մյուս բոլոր հայերը ևս պետք է նույն կերպ անվերադարձ արքորվեն¹¹⁰:

Իրականում բոլոր հայ աշխատավորները չէ, որ արտաքսվել են: Նրանք անփոխարինելի վարպետներ էին: Գերմանական ընկերությունը զգուշացրել էր, որ այդ մարդկանց արտաքսումը կհանգեցներ երկաթգծի գործունեության խափանմանը: Այսպիսի հանգամանքներում երկաթգծի անձնակազմ համարվող հայերի ընտանիքները մնացել են Հալեպում, աշխատավորների ընտանիքներն ունեցել են զինվորականի կարգավիճակ¹¹¹: Այսպիսով, հայ երկաթուղայինների խնդիրն իշխանություններին անհանգստացրել է ամբողջ 1917 թ. ընթացքում: Նայիմն իր հուշերում նշել է.

«Երկաթուղու բոլոր աշխատավորները հայեր էին և, չնայած հայու-

թյան կրած տառապանքներին, այդ մարդիկ ընդհանուր մոբիլիզացիայի 4-5 տարվա ընթացքում հավատարմորեն աշխատեցին: Երկաթուղում չգրանցվեց ոչ մի միջադեպ»¹¹²:

Երկաթգծի կոմիսար Հայրի բեյը

Իր հուշերում Նայինը հիշատակում է նաև Հայրի բեյին, որն աշխատում էր Հալեպի երկաթուղային կոմիսարիատում: Նրա անունը կապված է երկաթուղու աշխատակից հայերի արտաքսման հետ.

«Երկաթուղու շինարարությունում ու աշխատանքի մեջ ներգրավվածների մեծ մասը հայ էր: Կառավարությունը հրահանգեց արտաքսել նրանց՝ վախենալով դավաճանությունից: Ի պատասխան հրամանի՝ երկաթուղու հանձնակատարից պահանջեցին հայ աշխատակիցների ցուցակը: Այս հարցում երկաթգծի հանձնակատար Հայրի բեյը և Ջեմալ փաշան մեծ մարդասիրություն դրսևորեցին»¹¹³:

Կան մի քանի կարևոր օսմանյան փաստաթղթեր, որոնք հիշատակում են Հայրիին, բայց դժվար է վստահաբար պնդել, թե ով էր նա: Փաստաթղթերը վկայում են, որ Հայրին մեծ թվով հայ կանանց ու աղջիկների իր ընտանիքի միջոցով գաղտնի տեղափոխել է Ստամբուլ և փրկել նրանց: Հայրի բեյի՝ հայերին օժանդակելու հանգամանքը նույնիսկ հետաքննության առիթ է դարձել, բայց ոչ դեպքի վայրում բռնվելու պատճառով: Պարզապես նրա եղբոր կինը, վիրավորված ամուսնուց՝ էմիրից բաժանվելու փաստից, ոստիկանությունում ցուցմունք է տվել նրա ընտանիքի դեմ¹¹⁴:

Գրագրությունից պարզվում է, որ 1916 թ. մարտին Հայրին սկզբում 2 հայ կնոջ օգնել է փախչել Ստամբուլ: Նա փախուստը կազմակերպել է իր մոր, կնոջ, եղբոր՝ Էմիրի կնոջ և այլ հարազատների միջոցով: 40 օր անց Հայրին անձամբ 3 հայ կանանց է տարել Ստամբուլ և այդ քաղաքում ազգական չունեցողների համար օթևան է գտել: Քանի որ Հայրին Հալեպի երկաթգծի կոմիսարիատում էր աշխատում, Թալեաթն անձամբ է զբաղվել հետաքննությամբ ու այս գործով կապ է պահել Էնվերի և մյուսների միջև: Ստամբուլի ոստիկանությանն ու Հալեպի նահանգապետին ուղարկած հեռագրերում Թալեաթը պնդել է, որ Հայրիի փրկած ու Ստամբուլ տարած հայերը Հայկական կոմիտեի անդամներ են:

Առկա փաստաթղթերում Հայրիի ցուցմունքները չկան, բայց մենք հարցաքննության հատվածներից կարող ենք կռահել, որ նա հերքել է մեղադրանքները: Ավելին, Հայրին նշել է, որ կանանց Ստամբուլ է տարել նահանգապետ Աբդուլհալիկի թույլտվությամբ, որը, սակայն, Թալեաթին հեռագրով պատասխանել է, որ նման թույլտվություն երբեք չի տվել: Ըստ նահանգապետի՝ Հայրին այս հայ կանանց հագցրել է մուսուլմանի հագուստ: Երբ ճանապարհին փաստաթղթեր են պահանջել, պնդել է, որ իր կինը, բարեկամն ու համագյուղացին են: Քանի որ մուսուլմանների տեղաշարժը սահմանափակված չէր, այս կանայք առանց որևէ արգելքի գնացք են նստել¹¹⁵:

Թալեաթին ուղարկած Էնվերի հեռագրերից ակնհայտ է դառնում, թե որքան է նա կարևորել այս խնդիրը: Ըստ նախարարի՝ Հայրին գնացքների անվտանգության պատասխանատուն էր: Հայրին կանանց թույլ էր տվել իսլամական գլխաշոր կապել ու այդպես երթևեկել մինչև Ստամբուլ, թեև թույլտվություն չունե-

ցող մարդկանց արգելված էր երկաթուղով ճամփորդել: «Իր դիրքն ու իշխանությունը չարաշահելու» համար նա պետք է պատժվեր, որ «մյուսների համար զգուշացում լիներ»¹¹⁶:

Այս կանանց մի մասը հետագայում բռնվել է Ստամբուլում, սակայն առնվազն մեկին Հայրին ազատել է ոստիկանությունից գրավ վճարելով: Իրավիճակը բարկացրել է Թալեաթին: Ոստիկանության տնօրինությանն ուղղված հեռագրում նա պահանջել է փախուստի համար բռնված բոլոր կանանց ենթարկել գաղթից խուսափողների պատժին, այսինքն՝ անմիջապես արտաքսել:

Այդ հարցում ներքին գործերի նախարարի այսչափ բարկությունն ու ներգրավումը զարմանալի են թվում, բայց արխիվի նյութերից պարզ է դառնում պատճառը: Թալեաթը վախենում էր, որ հայերը, Սիրիայից հասնելով Ստամբուլ, կպատմեին իրենց հետ կատարվածը: Սիրիայից Ստամբուլ հասած ամեն հայ կոտորածների ականատես ու վկա էր Թալեաթի համար: Նրանց ներկայությունը սպառնում էր կոտորածները գաղտնի պահելու իր մտադրությանը: Թալեաթն իր անհանգստությունն այսպես է փոխանցել էնվերին.

«Այսպիսով, անչափ կարևոր է, որ նրանք չքայլեն Ստամբուլի փողոցներով, քանի որ լիովին տեղյակ են, թե ինչ է կատարվում այն շրջաններում: Այդ մարդիկ կարող են վկայել իրադարձությունների մասին: Ավելին, դրանք այն կանայք են, որոնք հավաքվել են Հալեպում՝ վերաբնակեցման ուղարկվելու համար: Նրանք կարող են հեշտությամբ կապված լինել հայ հեղափոխականների հետ, որոնցից ամեն չարիք կարելի է սպասել: Այդ հեղափոխականների տեղեկությունները կանայք կարող են հասցնել Ստամբուլի հայերին»¹¹⁷:

Թալեաթն ուզում էր ամեն գնով կանխել այդպիսի զարգացումները:

Հայրի բեյին վերաբերող փաստաթղթերն ու տեղեկությունները ևս մեկ ապացույց են, որ Նայիմի պատմությունը ճիշտ է:

Ամերիկյան հյուպատոսություններն ու գաղթի ճանապարհին արված լուսանկարները

Նայիմի հուշերի ամենակարևոր հատվածներից են արտասահմանցի, առաջին հերթին՝ ամերիկացի և գերմանացի պաշտոնյաների, միսիոներների տեղեկություններն ու փաստաթղթերը, որոնք նրանք ուղարկել են հայերի աքսորավայրերից: Գերմանիան, որպես Կենտրոնական տերությունների՝ «ավագ գործընկեր», Առաջին աշխարհամարտի ժամանակ բազում զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաների է գործուղել Օսմանյան կայսրություն, որը ռազմական առումով ավելի թույլ էր, քան մյուս անդամ երկրները: Շատ պաշտոնյաներ տեղակայված են եղել հենց այն շրջաններում, որոնց հայ բնակիչները գաղթի են ենթարկվել: Անգամ մինչև պատերազմը չեզոք դիրք զբաղեցրած ԱՄՆ որոշ հյուպատոսներ ու միսիոներներ աշխատում էին այդ շրջաններում: Նրանք կանոնավոր զեկույցներ էին գրում Ստամբուլի իրենց դեսպանություն՝ ականատեսի աչքով ներկայացնելով իրադարձությունները: Որոշ դեպքերում նրանք կարողացել են նույնիսկ

* Կենտրոնական տերություններ - Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Օսմանյան կայսրության և Բուլղարիայի միջև կնքված դաշինք, որը հայտնի է նաև Քառյակ դաշինք անունով: Եղել է Առաջին համաշխարհային պատերազմի երկու հիմնական դաշինքներից մեկը (1914-1918 թթ.): Այս դաշինքը պարտություն կրեց Անտանտից և լուծարվեց:

լուսանկարահանել ճանապարհներին կիտված դիերը: Այդ զեկույցները երբեմն հայտնվում էին Արևմուտքի մամուլում՝ տարածելով Օսմանյան հողի վրա հայերի բնաջնջման պատմությունները: Այդ նկարները, զեկույցներն ու տեղեկագրերը ստանալուց հետո Գերմանիայի ու Ամերիկայի կառավարությունները Ստամբուլում իրենց դեսպանությունների միջոցով դիվանագիտական նոտաներ էին ուղարկում Բարձր դուռ: Օսմանյան իշխանությունները, այդ ամենից վրդովված, տարբեր միջոցներով փորձում էին կանխել այդպիսի զեկույցների ստացումը¹¹⁸:

Նայիմն իր դիտարկումների հետ ներկայացնում էր Թալեաթի երկու հեռագրերը: Դրանք այդ ժամանակաշրջանում հյուպատոսությունների ու օտարերկրացի պաշտոնյաների գործունեությունը սահմանափակելու մասին էին: Առաջին հեռագիրը գրվել է 1915 թ. դեկտեմբերի 1-ին: Թալեաթը դժգոհում է ամերիկյան հյուպատոսություններից, որոնք շրջաններում տարբեր աղբյուրներից տեղեկություններ են հավաքում և ուղարկում մայրաքաղաքի իրենց դեսպանություն: Թալեաթը նշել է, որ ԱՄՆ դեսպանության բողոքի վերջին նոտան հիմնված է եղել նման տեղեկությունների վրա: Նա պահանջել է, որ քաղաքների, գյուղերի ու այլ բնակավայրերի մոտակայքով հայերին քշելու ժամանակ ուշադիր լինեն, որպեսզի չանտեսվի որևէ ուշագրավ միջադեպ: Թալեաթը շեշտել է, որ հյուպատոսություններին նման տեղեկություններ տվողներին պետք է ձերբակալել ու դատել հատուկ զինվորական դատարաններում¹¹⁹:

Թալեաթը 1915 թ. դեկտեմբերի 24-ին ուղարկած իր երկրորդ հեռագրում հետևյալ ցուցումներն է տվել.

«Ըստ տեղեկությունների՝ որոշ հայ լրագրողներ այցելում են այդ շրջաններ, լուսանկարում, վկայություններ հավաքում կատարվող աղետների մասին, ապա հանձնում տեղի ամերիկյան հյուպատոսին: Այսպիսի վնասարար մարդկանց պետք է ձերբակալել ու վերացնել»¹²⁰:

Այս հաղորդագրության մասին Նայիմն իր դիտարկումներն է ավելացրել.

«Թալեաթի առաջադրանքում ներգրավվել են քաղաքացիական ծառայողները: Անգամ ամերիկյան հյուպատոսության շրջակայքում հատուկ հետախուզում իրականացնող պաշտոնյա կար: Հայտնում են, որ տեսել են «ժամանակի» կամ հայկական այլ թերթի որևէ լրագրողի դեսպանատուն մտնելիս: Բայց պետք չէ մեծ կարևորություն տալ այս միջադեպերի հետաքննությանը: Ի վերջո, այդ մարդկանցից ոչ մեկին չեն բռնել»¹²¹:

Ամերիկյան պաշտոնական փաստաթղթերը հաստատում են Նայիմի տեղեկությունները: Օրինակ՝ ամերիկյան մի զեկույցում կառավարության քաղաքականությունը Հալեպում այսպես է բնորոշվում.

«Կառավարությունն անմիջապես կանխում է գաղթականներին օգնելու ցանկացած փորձ, լրտեսները շարունակ հետևում են ամերիկյան հյուպատոսությանը»¹²²:

Օսմանյան արխիվներում կան տասնյակ փաստաթղթեր այն մասին, որ օտարերկրյա դիվանագետներին ու միսիոներներին արգելվել է հանդիպել արտաքսվող հայերի հետ, լուսանկարել գաղթի ճանապարհը: Հյուպատոսություններին լուսանկարներ ու փաստաթղթեր տրամադրող մարդկանց

դեմ հետաքննություն է իրականացվել: Այս փաստաթղթերը բավարար են պնդելու համար, որ Թալեաթի հեռագրերի նկարագրություններն ու Նայիմի տրամադրած բացատրությունները ճշմարիտ են¹²³:

Երկրի շրջաններ ուղարկված Ներքին գործերի նախարարության հեռագրերում, որոնց հեղինակը սովորաբար Թալեաթն էր, պահանջվում էր հայ գաղթականների շարասյունները չուղարկել այնպիսի վայրեր, ուր օտարերկրացիներ են այցելում: Մի քանի հրաման վերաբերում էր օտարերկրյա հյուպատոսությունների և հայերի ուղիղ շփումների արգելմանը, տարբեր տեսակի աջակցությունները խոչընդոտելուն¹²⁴:

Երկրի շրջաններ նաև նախազգուշացում է ուղարկվել, ըստ որի խստորեն կպատժվի այն օսմանյան պաշտոնյան, որը կթերանա իր այս պարտականություններում:

«Բարձր հրամանատարության գրասենյակից եկած հաղորդագրությանն ի պատասխան՝ հայտնում ենք բոլոր շրջաններին, որ եթե որևէ զեկույցից կամ հետաքննությունից իմացվի, որ այդ պաշտոնյաներն առանց կառավարական մարմինների միջնորդության հայերին թույլ են տվել գաղտնի և առանց միջնորդավորման օգտվել ամերիկյան կամ գերմանական ֆոնդերից, ապա նրանք խստորեն կպատժվեն»¹²⁵:

Հատկապես 1916 թ. արգելել են Սիրիայում ազատ տեղաշարժվել ոչ միայն հյուպատոսության աշխատակիցներին ու միսիոներներին, այլև բոլոր օտարերկրացիներին¹²⁶:

Ամենաակտիվ հյուպատոսներից մեկը եղել է Ջեսս Ջեքսոնը՝ Հալեպում ԱՄՆ հյուպատոսը: Նրա գործողություններն են դարձել Թալեաթի նշված հեռագրերի պատճառը: Գրաքննու-

թյան համար պատասխանատու օսմանյան պաշտոնյաների զեկույցում նշվում է.

«Ամերիկա ու տարբեր երկրներ ուղարկված նամակներում Հալեպ քշվող հայերն օգտագործում են Հալեպում Ամերիկայի հյուպատոսության հասցեն՝ դրամ և նամակներ ստանալու համար»¹²⁷:

Հալեպի նահանգապետ Բեքիր Սամին ու նրա իրավահաջորդ Մուստաֆա Աբդուլհալիկը պարբերաբար դժգոհել են հյուպատոս Ջեքսոնից: Օրինակ՝ Սամին 1915 թ. հոկտեմբերի 5-ին Ներքին գործերի նախարարությանը տեղեկացրել է, որ «պարոն Ջեքսոնը մշտապես խառնվում է հայերի հարցին, գաղտնի գումար է տալիս օտարերկրյա քաղաքացիներին, միջնորդում, որ հայերը տեղեկություններ փոխանակեն երկրի արևելյան շրջանների իրադարձությունների մասին»¹²⁸: Նահանգապետը հյուպատոսին թուլամորթ է կոչում և զգուշացնում, որ մի օր նա ներքաշվելու է տիաճ միջադեպի մեջ: Սամին պահանջում է, որ «հյուպատոսն այստեղից հեռացվի հնարավորինս շուտ»¹²⁹:

Սամին հաջորդաժ Աբդուլհալիկը շարունակել է նույն դժգոհությունները: Ի պատասխան Թալեաթի՝ 1916 թ. հոկտեմբերի 30-ի հեռագրի, որը կարգադրում էր հետաքննություն անցկացնել հայերին գաղտնի գումարներ փոխանցելու վերաբերյալ, Աբդուլհալիկը հաղորդում է. «Հետաքննությունից պարզ է դարձել, որ հայերի մի մասին գումարն ուղարկվել է Հալեպի ամերիկյան հյուպատոսության միջոցով նրանց Հալեպ ժամանելուն պես»: Նա հավելում է, որ շատ հայեր խոստովանել են, որ փողը ստացել են հյուպատոսությունից, իսկ Ջեքսոնն առանց տատանվելու իր երեսին ասել է, որ օգնում է հայերին»¹³⁰:

Ամերիկյան դիվանագետների ջանքերին կառավարությունը պատասխանում էր հյուպատոսություններ ելումուտ անողների խիստ վերահսկմամբ, կասկածելիների ձերբակալությամբ կամ կալանավորմամբ: Կառավարությունն այնքան եռանդով է գործել, որ հյուպատոս Ջեքսոնը, ի վերջո, այդ մասին հայտնել է Ստամբուլում ԱՄՆ դեսպանություն: Բողոքներին ի պատասխան՝ Թալեաթը հարկադրված է եղել 1916 թ. մարտի 8-ի հեռագրով զգուշացնել նահանգապետ Աբդուլհալիկին. «Ամերիկյան դեսպանությունը տեղեկացնում է, որ իր Հալեպի հյուպատոսությունը վերահսկվում է, ելումուտ անող մարդիկ վրդովված են իրենց հանդեպ արված ոտնձգություններից»: Թալեաթը կարգադրել է անհրաժեշտ ցուցումներ տալ, որ հյուպատոսության վերահսկողությունը չկատարվի այդքան ակնհայտ և բողոքի պատճառ չդառնա¹³¹: Թալեաթի ցանկությամբ հյուպատոսության վերահսկողությունը պետք է կատարվեր այնպես, որ դժգոհություններ չառաջացնեն:

Մարտին գրած իր պատասխանում Աբդուլհալիկը նախարարին տեղեկացրել է.

«Հայ գաղթական հարյուրավոր տղամարդիկ ու կանայք ամեն օր հավաքվում են հյուպատոսության առջև ու փող են ստանում»:

Նույնիսկ ԱՄՆ կամ կայսրության այլ բնակավայրեր ուղարկվող նամակները հայերն ԱՄՆ հյուպատոսություն են բերում՝ չվստահելով օսմանյան իշխանություններին: Ըստ նահանգապետի՝ ոստիկանությունն իր աշխատանքը կատարում էր ոչ թե դիտորդի նման, այլ մարդկանց փողոցում հետևելով ու հսկելով՝ ըստ օրենքի: Այդ վերահսկողության շնորհիվ՝ որոշ փաստաթղթեր են առգրավվել և ուղարկ-

վել զինվորական դատարան: Աբդուլհալիկը հավելել է.

«Հյուպատոսություններ ելումուտ անող անձինք, որոնք պատմում են իրենց հանդեպ ոտնձգությունների մասին, հայեր են: Նրանք Օսմանյան քաղաքացիություն ունեն: Կարելի է ենթադրել, որ փող են ստացել՝ անկախ իրենց կարգավիճակից ու հասարակական դիրքից»¹³²:

Նայինը նշում է, որ այս ջանքերը մեծ արդյունք չեն տվել: Չնայած կառավարության ձեռնարկած քայլերին՝ ամերիկյան ու հատկապես գերմանական հյուպատոսություններն ու միսիոներները շարունակել են Ստամբուլի իրենց դեսպանատներ ուղարկել զեկույցներ ու այլ գրություններ, ըստ որոնց՝ արտաքսման իրական նպատակը հայերի բնաջնջումն էր: Ամենացցուն փաստերը գաղթի ճանապարհին կուտակված դիերի լուսանկարներն էին:

Ճանապարհին մնացած դիերի հարցը

Հայերին բնաջնջելու օսմանյան կառավարության մտադրության ամենակարևոր վկայություններն այն լուսանկարներն են, որոնք պատկերում են հայ գաղթականների շարասյունների հուսահատությունն ու լքվածությունը, ճանապարհին մահացածների անթիվ դիերը: Սա է պատճառը, որ օսմանյան իշխանություններն անհրաժեշտ էին համարում ճանապարհը մաքրել դիերից, որ դրանք չլուսանկարեն: Այս մասին Նայինը ներկայացնում է երկու հեռագիր Թալեաթից և Հալեպի գաղթականների գրասենյակի տնօրինությունից: Հեռագրերն ուղեկցվում են մեկնաբանություններով ու տեղեկություններով:

Առաջին հեռագիրը տրվել է 1916 թ. հունվարի 11-ին:

«Քանի որ օտարերկրյա զինվորականները տեսել ու նկարել են ճանապարհի երկայնքով թափված դիերը, Դուք պետք է ուշադիր լինեք, որ դրանք առանց թաղելու չմնան»:

Նայիմը հավելում է.

«Օրը 700-800 հայ էր մահանում աղետից, չքավորությունից ու հիվանդություններից: Նրանց թաղում էին ցեխում, մարմինների մնացորդները ցրիվ էին տալիս գիշատիչ թռչունները: Ուղղակի մարդու խիղճ էր տանջում: Այս տեսարաններին տեղյակ ավստրիացի ու գերմանացի սպաները զեկույցներ էին գրում իրենց երկրներ: Թալեաթ փաշան իմանալով այդ մասին ցանկանում էր կոծկել հանցանքներն ու թաղել դիերը: Բայց եթե նույնիսկ երկրի ու երկնքի տեղն էլ փոխես, միևնույն է, այս սարսափները մոռանալ չի լինի»¹³³:

Երկրորդ հեռագիրը գրել է Հալեպի գաղթականների գրասենյակի տնօրինությունը: Կարդում ենք.

«Չպետք է թույլ տաք՝ գեթ մեկ հայ մնա Բաբում: Արտաքսման կազմակերպման Ձեր վճռականությունն ու ուժը միայն կարող են երաշխավորել դրա արդյունքը: Պարզապես հոգ տարեք, որ ճանապարհներին կամ բաց երկնքի տակ դիեր չմնան: Հաղորդեք առավելագույն գումարը, որ վճարում եք այդ գործի համար վարձած մարդկանց:

Մի՛ զբաղվեք տրանսպորտ հայթայթելով. նրանք կարող են գնալ նաև ոտքով: Մահացածների ցուցակը, որ ուղարկում եք ամեն շաբաթ, մեզ չի բավարարում: Կարծես այդ մարդիկ լավ էլ հանգիստ ապրում են այդտեղ:

Գաղթը ճամփորդություն չէ: Ուշադրություն մի՛ դարձրեք հուսահատության ու հոգեվարքի ճիչերին ու բողոքներին: Նահանգային կառավարությունից անհրաժեշտ գրություններն արդեն ուղարկվել են քայմաքամին: Դուք պետք է մեծ ջանքեր գործադրեք այս հարցում»¹³⁴:

Երկրորդ հեռագրին ուղեկցող գրությունում Նայիմը նշում է.

«Ըստ վերջին հրամանի՝ Բաբի բոլոր գաղթականները արտաքսվելու էին 24 ժամում: Նրանք կարող էին հագնել, ինչ ուզում էին: Միևնույն է, այս արտաքսումն ավարտվելու էր նրանց մահով: Ձմռանը ոտաբոբիկ ու բաց գլխով նրանք ընկնում ու մահանում էին ճանապարհին: Բաբից Մեսքենե գնացող ճանապարհի երկայնքով դաշտերը լիքն էին հայերի դիերով: Իմանալով, որ դիերն անթաղ են մնացել, կառավարությունը տագնապի մեջ ընկավ: Լուր ստանալով, որ օտարերկրացիները տեսել են այդ պատկերները, կառավարությունը կարգադրեց թաղել դիերը: Բահեր ու փոցխեր գտան, գերեզմանափորներ նշանակեցին: Այսպիսով, հույս ունեին թաքցնել քրեական հանցանքի հետքերը»¹³⁵:

Օսմանյան արխիվային փաստաթղթերը հաստատում են Նայիմի տրամադրած երկու հեռագրերի ու բացատրությունների ճշմարտացիությունը: Արխիվներում կան զեկույցներ, որոնք վերաբերում են օտարերկրացիներին, հատկապես՝ գերմանացիներին: Նրանք հիշատակում են ճանապարհներին թափված դիերի ու գաղթի քարավանների նկարահանումների մասին: Օրինակ՝ Դեյր էլ Զորի գավառապետ Ալի Սուաթը 1916 թ. հունվարի 24-ին Ստամբուլ ուղարկած հեռագրում գրում է.

«Իրաք գնացող գերմանացի սպաները դիտավորյալ հիվանդ հայերի են փնտրում կամ մահացածների դիեր, որ նկարեն»¹³⁶:

1916 թ. հոկտեմբերի 30-ին օսմանյան մի պաշտոնյա երկար զեկույց է գրել Մեսքենեից Դեյր էլ Զոր գաղթի ճանապարհի վերաբերյալ: Նա նշում է.

«Երբ արդեն որբացած գաղթական երեխաներն արտաքսվում էին Դեյր էլ Զոր, Բաղդադից վերադարձող որոշ գերմանացի սպաներ լուսանկարում էին նրանց»¹³⁷:

Գոյություն ունեն բազում օսմանյան արխիվային փաստաթղթեր, հատկապես հեռագրեր, որոնք Ստամբուլից ուղարկվել են շրջաններ՝ պահանջելով հեռացնել ճամփեզրին թափված դիերն ու թաղել: Այս նյութերի զգալի մասը ձեռք է բերվել 1918 և 1919 թթ. հայերի արտաքսումների ու կոտորածների համար պատասխանատու երիտթուրք ղեկավարների դատին նախորդած հետաքննությունների ընթացքում: Շատ հեռագրեր հետագայում, նաև որպես ապացույցներ, ներկայացվել են դատավարությանը: Այս հեռագրերից բավական շատ մեջբերումներ են արվել Միություն և առաջադիմություն կուսակցության կենտրոնական կոմիտեի անդամների ու Հատուկ կազմակերպության առաջնորդների «Մեծ դատ» կոչվող դատավարության մեղադրական եզրակացությունում:

Այս հեռագրերի մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Թալեաթի ու Ջենալի ուղարկածները: 1915 թ. հուլիսի 14-ին Ջենալի՝ Դիարբեքիի նահանգապետին ուղարկած հեռագիրը նշում է.

«Քանի որ Եփրատից հարավ թափված մարմինները հավանաբար ապստամբական գործողությունների հետևանքով սպանված հայերի դիերն են, դրանք պետք է թաղվեն այնտեղ, որտեղ գտնեք, որպեսզի չերևան»: Իր պատասխանում նահանգապետը

գրել է, որ դրանք հավանաբար Էրզրումից Մամուրեթյուլազիզ բերված մարդկանց դիերն են: Ապստամբության ընթացքում սպանվածների դիերը կան փտել են, կան նետվել ձորերը, կան, ինչպես սովորաբար, այրվել են»¹³⁸:

1915 թ. օգոստոսի 3-ին համանման հեռագիր Թալեաթն ուղարկել է Դիարբեքիրի ու Էլազըղի նահանգներ, Ուրֆայի ու Դեյր Էլ Զորի գավառներ: Նա տեղական իշխանություններին կարգադրել է «ճանապարհների դիերն ու նրանց թողած իրերը թաղել, ոչ թե լցնել ձորերը, գետերը կամ լճերը»¹³⁹: Եվս մեկ հեռագիր, որից մեջբերում են արել մեղադրականում: Մամուրեթյուլազիզի նահանգապետ Սաբիթը 1916 թ. հունվարի 2-ին գրել է Մալաթիայի գավառապետին: Սաբիթը տեղեկացրել է, որ Ներքին գործերի նախարարությունից իրեն հայտնել են՝ եթե մարմինները շարունակեն ցրված մնալ գավառակների տարածքում, տեղի քայմաքամը, ավանի կառավարիչը (նահիեի մյուդիրը) և ժանդարմերիայի հրամանատարն անմիջապես կհեռացվեն ու կդատվեն¹⁴⁰:

Մեղադրական եզրակացությունում այս հեռագիրը նշված չէ, սակայն հասանելի է Գերգերյանի գրադարանում: Հեռագրում Սաբիթը հղում է կատարում հունվարի 1-ին Թալեաթից ստացած հեռագրերին: Ըստ դրանց՝ զեկույցներ կան, որ որոշ շրջաններում դիեր են մնում բաց երկնքի տակ: Նա կարգադրել է, որ եթե նահանգի տարածքում չթաղված դիեր կան, ապա պատասխանատու կողմերին պետք է խստորեն հրահանգել թաղել դրանք: Եթե պարզվի, որ անթաղ դիեր, այնուամենայնիվ, մնացել են, ապա այդ շրջանի պատասխանատու պաշտոնյան կհեռացվի: Նախարարությունը պետք է տեղյակ լինի իրավի-

ճակին¹⁴¹: Այս հեռագրի բովանդակությունը գրեթե նույնական է Նայիմի՝ 1916 թ. հունվարի 11-ի հեռագրի հետ: Պարզ է դառնում, որ դեկտեմբեր-հունվարին կառավարության օրակարգի կարևոր հարցերից մեկը եղել է ճանապարհները դիերից մաքրելը:

Դիերը ճանապարհներից մաքրելու և թաքցնելու՝ շրջաններ ուղարկված հրամաններն իրագործելն ավելի դժվար խնդիր էր, քան կարելի էր պատկերացնել: Մարդկանց մարմիններ էին թափված ոչ միայն դաշտերում ու ճանապարհներին, այլև ջրային տարածքներում, հատկապես Տիգրիսում: Այստեղ այնքան դի կար, որ շատ մարմիններ Դիարբեքիից հասնում էին մինչև Մոսուլ: Գերմանացի սպաներն ու պաշտոնյաները, այդ շրջանում ճամփորդելիս, անցել են գյուղերով, որոնք մահվան հովիտներ են եղել: Օրինակ՝ Մոսուլի գերմանական հյուպատոսը տեսել է կիսաթաղված բազում դիեր: Շատ վայրերում մարմիններն ուղղակի մնացել էին եկեղեցիներում կամ ընկած էին ջրհորի մեջ: Այս դիվանագետների գրավոր զեկույցներն ու նկարները կանոնավոր ուղարկվում էին Ստամբուլի դեսպանություն: Բարձր դուռ ուղարկված դիվանագիտական նոտաներից պարզ է դառնում, որ այդ զեկույցներն ու նկարներն իսկապես մեծ ազդեցություն էին ունեցել¹⁴²:

Օսմանյան կառավարությունը, ի վերջո, եզրակացրել է, որ պարզապես լուսանկարելու արգելքը բավարար չէ: Թուրք կառավարիչները սկսել են գերմանացի քաղաքացիական ու զինվորական պաշտոնյաներին սպառնալ, որ նրանց կձերբակալեն ու կդատեն, որպես պատերազմի հանցագործների: Այս հարցում հատկապես աչքի է ընկել Ջեմալ փաշան: Տեղեկանալով, որ Բաղդադի երկաթգծի գերմանական անձնակազմը լուսանկարում է հայերի գաղթը, նա 1915 թ. սեպտեմ-

բերի 10-ին նամակ է հղել ընկերության տնօրենին: Ջեմալը գրել է, որ լսել է, թե Բաղդադի երկաթուղու որոշ աշխատակիցներ և ինժեներներ նկարել են հայերի տեղահանությունը: Նա կարգադրել է, որ այդ նկարներն ու պատճենները 48 ժամում հանձնեն Ռազմական ոստիկանություն: Ավելին, չորրորդ քանակի հրամանատար Ջեմալը նաև սպառնացել է գերմանացի պաշտոնյաներին, որ նկարները չհանձնած բոլոր մարդիկ դատվելու և պատժվելու են պատերազմի դաշտն առանց թույլտվության նկարելու հանցանքի համար¹⁴³:

Կասկածյալ հայերի հետաքննությունը Դյորթյուլում ու Հաճնում

Իր հուշերում Նայիմն անդրադառնում է նաև այնպիսի դեպքերի, որոնք հիմա քննարկում ենք: Նա հիշատակում է Դյորթյուլի ու Հաճնի շրջաններում մի քանի հայերի նկատմամբ իրականացվող հետաքննությունները: Այդ մարդիկ կասկածելի էին թվացել իշխանություններին, որովհետև ենթադրաբար լուսանկարել էին գաղթի ճանապարհներն ու ուղարկել Ստամբուլ: Ներկայացնենք միայն մեկ օրինակ:

Նայիմն իր հուշերում ընդգրկել է 1915 թ. հոկտեմբերի 25-ի հեռագիրը, որով նախարարը հրամայել է մեկ շաբաթում հավաքել և իրեն ուղարկել պահանջվող փաստաթղթերն ու 1915 թ. հոկտեմբերի 8-ի համար 1923 գաղտնի գրությունը¹⁴⁴: Նայիմը չի տվել Թալեաթի հեռագրի բնօրինակը, սակայն բավական մանրամասն նկարագրել է այն.

«Այդ գաղտնի գրագրությունում նշվում է, որ պետք է գտնել

Դյորթյուլի, Հաճնի ու Մերսինի մի քանի հայտնի հայերի: Նրանց պետք է համոզել, որ ցուցմունք տան այն մասին, որ դաշնակներն ամենուր ենթակառուցվածքներ են նախապատրաստել պատերազմի ժամանակ ապստամբելու համար: Պետք է հատուկ ուշադրություն դարձնել, որ նրանք ազդեցիկ հայեր լինեն»¹⁴⁵:

Նայիմն ասում է, որ այս թեմայով հետաքննություն է անցկացվել: Նա հավելում է, որ այդ ընթացքում որոշ անձինք են ձերբակալվել ու բանտարկվել:

«Ես տեղյակ եմ, որ որոշ ցուցմունքներ արձանագրել է կոմիտեն, որի կազմում են ռազմական դատարանի մի սպա, Արդարադատության նախարարությունից մի մարդ և գաղթականների գրասենյակի տնօրեն Էյուբ բեյը: Ձերբակալվածներին անգամ նկարել են: Վերջնական արդյունքին, սակայն, ես տեղյակ չեմ»¹⁴⁶:

Օսմանյան արխիվները լի են Դյորթյուլի ու Հաճնի շրջանների հայ հեղափոխականների հետաքննության մասին նյութերով: Նայիմը պնդում է, որ Ներքին գործերի նախարարությունը կարգադրել է զեկույցներ պատրաստել այդ շրջանների այն հայերի մասին, որոնք կասկածվում են հայկական հեղափոխական կազմակերպություններին անդամակցելու մեջ: Կասկածյալներին պետք է լուսանկարելին և այդ նկարներն ուղարկելին մայրաքաղաք¹⁴⁷: Օրինակ՝ Ներքին գործերի նախարարությունը 1916 թ. մարտի 19-ին Հալեպի նահանգի իշխանություններից պահանջում էր «Սուլեյմանիե գավառակում բռնված հայ ավազակների ձերբակալության լուսանկարներն ուղարկել մայրաքաղաք՝ նրանց հանցանքների ապացույցների հետ»¹⁴⁸: Կառավարությունն անգամ ուղարկել է երկրորդ

վարչության պետ Էսադ Բեյին՝ համոզվելու համար, որ այդ լուսանկարները կհավաքվեն¹⁴⁹:

Ամբողջ գարուն Հալեպ են ուղարկվել հեռագրեր՝ կարգադրելով լուսանկարել Ադանայի, Մարաշի, Հալեպի շրջանների (որոնց կազմում են Դյորթյուն ու Հաճնը) կասկածելի հայերին և նկարներն ուղարկել մայրաքաղաք: Նայիմն այս մասին հիշատակել է, որովհետև ժամանակին (1915 թ. ձմեռ և 1916 թ. գարուն) աշխատել է Գաղթականների գրասենյակի տնօրինությունում: Բացի մարտի 19-ի նշված հեռագրից՝ կառավարությունն այդ թեմայով ուրիշ հեռագրեր է կանոնավոր ուղարկել Հալեպ: Երեք օրինակ բերենք: 1916 թ. մայիսի 3-ի հեռագիրը պահանջում է տեղեկություններ ուղարկել հայ զինված ավազակախմբերի հարցով վարույթի ու հետաքննության վերաբերյալ¹⁵⁰: 5 օր անց ուղարկված մյուս հեռագիրը պահանջում է նկարել, հավաքել և մայրաքաղաք ուղարկել հայ զինված խմբերին, նրանց աջակիցներին, առգրավված զենքերը և այլն¹⁵¹: 1916 թ. մայիսի 9-ի հեռագիրը կրկին պահանջում է լուսանկարել հայ զինված խմբերը և հետաքննության վերաբերյալ մանրակրկիտ զեկույցի հետ ուղարկել մայրաքաղաք¹⁵²:

Որոնք էին հետաքննության արդյունքները: Նայիմը նշում է, որ որոշ անձանց ձերբակալել են և ցուցմունքներ վերցրել: Գործի վերջնական արդյունքին նա տեղյակ չէր: Դա լիովին բացատրելի է, որովհետև Նայիմը Գաղթականների գրասենյակի տնօրինության իր պաշտոնը թողել է մինչև ամառ: Հենց ամռանն էլ կառավարությունը հետաքրքրվել է հետաքննության արդյունքի մասին: 1916 թ. հուլիսի 13-ին Թալեաթը Հալեպ ուղարկած մի հեռագրով հարցրել է, թե երբ

պետք է ակնկալել ռազմական դատարան ուղարկված հեղափոխական կոմիտեների ղեկավարների դատավարությունների ավարտը: Նա հետաքրքրվել է նաև, թե արտաքսված ավազակախմբերի անդամների դատը երբ է վերջանալու: Թալեաթը պահանջել է անձամբ իրեն տեղեկացնել մինչև այդ պահը ռազմական դատարանների անցկացրած հետաքննությունների ու դատավարությունների մասին¹⁵³:

Այսպիսով, այն, ինչ Նայիմը գրել է հուշերում, իր տեսած իրադարձություններն են, որոնք հաստատվում են նաև օսմանյան արխիվների նյութերով:

Նայիմ էֆենդու հուշերի միասնական ու վերջնական տարբերակ գոյություն չունի: Կան երկու տարբեր տեքստեր: Մեկն օսմաներեն (թուրքերեն) բնօրինակն է, որը հայտնաբերել ենք Գերգերյանի արխիվում, երկրորդը՝ Անտոնյանի հրատարակած հատվածների հավաքածուն: Երկուսն էլ նույն հուշերն են, սակայն զգալի տարբերություններ կան, քանի որ Անտոնյանը չի հրատարակել օսմաներեն նյութի մի քանի էջ: Պարզապես որոշ տեղերում Անտոնյանը մի քանի էջ կարևոր չի համարել ու շրջանցել է: Կամ Անտոնյանի գրքում կան հատվածներ, որոնք օսմաներեն տեքստում բացակայում են: Բացատրությունն այն է, որ Անտոնյանն այդ բնօրինակ թերթերն ուղարկել է Ստամբուլի դատավարությանը:

Հավելված 1.1-ն օսմաներեն տեքստի բնօրինակի ամբողջական թարգմանությունն է: Հավելված 1.2-ում Անտոնյանի գրքի այն հատվածներն են, որոնք չկան օսմաներեն տեքստում: Մի քանի էջեր օսմաներեն բնօրինակում համընկնում են Անտոնյանի գրքի հայերեն հրատարակության համապատասխան հատվածների հետ: Այդ դեպքերում մենք օգտագործել ենք օսմաներեն տարբերակը: Այս երկու փաստաթղթերի հա-

մադրությամբ էլ ստանում ենք Նայիմի հուշերի վերջնական տարբերակը:

Հավելված 1.1

Նայիմ էֆենդու օսմաներեն բնօրինակ տեքստը

(1) [01]

Բաբի մի գյուղացի վերցրել էր 2 երեխաների՝ 10 և 8 տարեկան: Նրանք չունեին հայր, մայր կամ ուրիշ մեկն այս աշխարհում: Օրեր անց այս մարդը երեխաներին տարել էր Հալեպ շորեր գնելու: Երեխաներին, սակայն, բռնեցին դատավորը, զինվորներն ու ոստիկանները: Հետաքննությամբ պարզվեց, որ նրանք այն բազում որբացած երեխաներից են:

Գործի փաստաթղթերում Աբդուլահադ Նուրի բեյը գրել էր. «Հասկանալի է, որ այս երեխաները ծնող կամ խնամակալ չունեն: Ինչևէ, նրանց պետք է արտաքսել մյուսների հետ, քանի որ հնարավոր է՝ երեխաների բարեկամները Դեյր էլ Զորում են»:

Այս փաստաթղթերը հասան նահանգապետին: Նահանգապետն ասաց. «Գործեք՝ ըստ կանոնակարգի և հրամանների»: Այս երկու մանուկներին փրկեց ոստիկանության վարչական բաժնի աշխատակից Խաչատուր էֆենդին¹:

(2) [02]

Ներքին գործերի նախարարությունը կարգադրել էր Կոզանի պատգամավոր Նալբանդյան էֆենդու բարեկամ Սողոմոն Կույունջյանին, որին վերաբնակեցրել էին Մաա-

րայի գավառակում, Նալբանդյանի խնդրանքով Հալեպ տեղափոխել: Գաղթականների գրասենյակ հասած այս հրամանից հետո Սողոմոն Էֆենդին պաշտոնական խընդրագիր և դիմում էր ներկայացրել: Դիմումի ներքևում գրել էին, որ նա պետք է վերաբնակեցվի Մաարայում: Նրա դիմումը մերժվեց: Օրեր անց հրաման եկավ, որ Մաարայի ճամբարը դատարկվի: Սողոմոն Էֆենդին կրկին դիմեց: Ըստ Ներքին գործերի նախարարության հրամանի՝ նա պետք է տեղափոխվեր Հալեպ, բայց Աբդուլահադ Նուրի բեյը պատասխանեց. «Քանի որ այս մարդը փախել է Մաարայից, եկել է այստեղ ու շարունակում է անհանգստացնել Գաղթականների գրասենյակի տնօրինությանը, ուրեմն պետք է նրան մյուսների հետ աքսորի ենթարկել»: Նահանգապետն ընդունեց այս պատճառաբանությունը: Այս գործի և իր վերաբերյալ հետագա կարգադրությունների թղթերը Սողոմոն Էֆենդու ձեռքում էին: Դիարբեքիից ունեզուրկ և միայնակ մի կնոջ մոտ ափսե էին գտել, որի վրա պատկերված էին Հայաստանի անկախությունը խորհրդանշող նկարներ:

(3) [03]

Կնոջն իր ափսեով հանդերձ տարան Գաղթականների գրասենյակի տնօրինություն: Ափսեին մեծ կարևորություն տվեցին: Կնոջը հարցրին՝ որտեղից է այն ձեռք բերել: Կինն ասաց, որ այն իր մոտ է երկար տարիներ, բայց պատկերների նշանակության մասին ոչինչ չգիտի: Ժանդարմերիայի գրասենյակում կնոջը կտտանքների ենթարկեցին 8-10 օր: Այնտեղ էլ նա, ի վերջո, մահացավ տանջանքներից ու քաղցից:

Ոստիկանությունը մասնակից չէր այս հանցագործություններին: Ոստիկանապետ Ֆիքրի բեյը հայրենասիրություն ու արժանապատվություն ցուցաբերեց այս հարցում:

Այնթապցի Սուլթան անունով մի կին կարի խանութ էր բացել և աշխատում էր 7-8 հոգու հետ: Աշխատողները միայն այրիներ էին ու երիտասարդ աղջիկներ: Նրանցից մի 15-16 տարեկան աղջկա ոստիկանությունը բռնել էր: Նա հայտնել էր, թե որտեղ է աշխատում: Մի խառնակիչ ոստիկան էլ փնտրել-գտել էր աղջկա հետ աշխատող մյուս կանանց ու ձերբակալել:

(4) [04]

Աղջկան ուղարկեցին գաղթականների գրասենյակ: Այս խեղճ կանայք ու աղջիկները, որ հավաքվել էին օրվա հացի մի քանի մանրադրամ վաստակելու, բռնվեցին մի կեղծ պատրվակով՝ իբր Հալեպում ուրիշներն էլ կմիանան նրանց, և ընդհանուր գաղթը կխափանվի: Այսպիսով, նրանց ուղարկեցին Քարլըքի ճամբար, այնտեղից էլ արտաքսեցին:

Սա շատ տարօրինակ դեպք էր:

Ամասիայի գավառի Մերզիֆոն (Մարզվան) բնակավայրից մի ընտանիք գաղթը սկսելուց օրեր առաջ իսլամ էր ընդունել և այս մասին լուր ուղարկել ընտանիքի ավագին, որը Չորումում էր: Կնոջ ու երեխաների կրոնափոխման մասին իմանալով՝ այդ մարդը ևս իսլամ ընդունեց: Բայց սա նրանց չփրկեց արտաքսումից: Այդ մարդն աքսորվեց մինչև Հալեպ: Այստեղ նա դիմում գրեց: Չորումում իր կրոնափոխությունն ու Մերզիֆոնում ընտանիքի իսլամ ընդունելը վկայակոչելով՝ նա խնդրում էր, որ իրենց թույլ տան վերադառնալ նախկին

բնակավայր: Դիմումն ուղղված էր Ա՝ Չորումի, Ա՝ Մերզիֆոնի կառավարություններին: Թեև պարզ էր, որ այդ մարդն իսլամ է ընդունել և ստացել է Յուսուֆ Զիյա անունը, Աբդուլահադ բեյն ասաց. «Կարևոր չէ՝ ընդունել է, երբ է ընդունել, միևնույն է, չի ազատվում գաղթից,

(5) [05]

Նա ենթակա է աքսորի և կարող է իր ընտանիքին միանալ Դեյր էլ Չորում»: Նահանգապետը հաստատեց այդ որոշումը:

Անկարայից մի հոգևորականի, որ բերվել էր Ջեդիդե, Բաբուլ Ֆարաջի ոստիկանապետ Ֆևզի էֆենդին ձերբակալեց ժամը ութին ու տարավ Քարլըք²: Այստեղ նրան հրազենով սպանեցին և թաղեցին զորանոցի կողքի մահմեդական գերեզմանոցում: Հաջորդ օրն այդ մասին տեղեկացրին Գաղթականների գրասենյակի տնօրինությանը:

Սիվասից, Խարբերդից ու այլ վայրերից եկած հայերին սպանելու և ունեզրկելու հրամանը գրվել էր Հալեպում և ուղարկվել Ռումկալեի *քայմաքամին*: Նա տեղի քրդերից խմբեր կազմեց և ուղարկեց Սամսաթ: Ադրյամանի ուղիով Բեհսինի եկող հայ գաղթականների խմբերը սպանվեցին ճանապարհին: Ոմանց նետեցին Եփրատը: Ըստ մի պաշտոնական զեկույցի՝ միայն Սամսաթի շրջանում մոտ տասնչորս հազար հայի սպանել է քրդերի ասպատակող ավազակախումբը:

(6) [06]

Ներքին գործերի նախարարության համար 603 հեռագրի

պատճենը, 1915 թ. նոյեմբերի 18

Մեզ տեղեկություններ են հասել, որ մի քանի մահմեդական ընտանիքներ վերցրել են հայերի որբ երեխաների, որոնք արտաքսված էին Սիվասի, Մամուրեթյուլազիզի ու Դիարբեքիի նահանգներից և մեռնում էին ճանապարհին: Նրանց կան որդեգրել են, կան ծառաներ դարձրել: Արդ հաղորդում ենք Ձեզ, և սա որպես հուշագիր ընդունեք, որ Ձեր նահանգում այսպիսի յուրաքանչյուր երեխայի պետք է հավաքեք և ուղարկեք վերաբնակեցման շրջաններ: Այս թեմայի շուրջ քննարկումներ անցկացրեք ժողովրդին հասկանալի ձևով:

Ներքին գործերի նախարարության համար 502 հեռագրի պատճենը, 1915 թ. սեպտեմբերի 16

Առաջարկում ենք, որ նախկինում Ձեր նշած վերաբերմունքը հայ տղամարդկանց հանդեպ կիրառեք նաև նրանց երեխաների ու կանանց նկատմամբ: Եվ թող դա կատարեն հուսալի պաշտոնյաներ³:

(7) [07]

Ներքին գործերի նախարարության համար 537 հեռագրի պատճենը, 1915 թ. հոկտեմբերի 12

Լուրեր են ստացվել, որ տեղական որոշ բնակիչներ և կառավարության որոշ պաշտոնյաներ ամուսնացել են հայ կանանց հետ: Հորդորում ենք կանխել այդ երևույթը և այլոց հետ արտաքսել այդ կանանց:

Ներքին գործերի նախարարության համար 544 հեռագրի

պատճենը, 1915 թ. հոկտեմբերի 16

Ավելի վաղ 1915 թ. սեպտեմբերի 15-ի համար 1843 գրությամբ բացատրել ենք Դեյր էլ Զորի նահանգի ընտրությունը, որպես վերաբնակեցման շրջան: Ճանապարհին հայերի հանդեպ տեղի բնակչության գործած հանցանքներն ու ապօրինությունները երաշխավորում են, որ կառավարության նպատակները կկատարվեն: Դրա համար էլ իրավական հետաքննություն անցկացնելու կարիք չկա: Այս մասին հաղորդել ենք Դեյր էլ Զորի և Ուրֆայի գավառներ:

(8) [08]

Ներքին գործերի նախարարության համար 563 հեռագրի պատճենը, 1915 թ. հոկտեմբերի 25

Խնդրում ենք պատրաստել ու մեկ շաբաթում ուղարկել 1923-րդ փաստաթուղթն ու 1915 թ. հոկտեմբերի 8-ի գրությամբ մեր պահանջած մյուս փաստաթղթերը:

Ըստ այս գաղտնի գրության՝

«պետք է գտնել Դյորթյուլի, Հաճնի ու Մերսինի որոշ հայտնի հայերի: Նրանց պետք է համոզել, որ ցուցմունք տան, որ դաշնակներն ամենուր ենթակառուցվածքներ են նախապատրաստել պատերազմի ժամանակ ապստամբելու համար: Պետք է համոզված լինել, որ այդ հայերն իսկապես ազդեցիկ դեմքեր լինեն»:

(9) [09]

Թեև այս հեռագրին ի պատասխան որոշ քայլեր ձեռնարկվեցին, բայց ես տեղյակ չեմ՝ ովքեր և ինչ են արել:

Այդ շրջանում որոշ մարդիկ ձերբակալվեցին ու բանտարկվեցին: Գիտեմ, որ մի քանի ցուցմունքներ գրանցել են կոմիտեի անդամները՝ զինվորական դատարանի մի սպա, Արդարադատության նախարարությունից մի հոգի և գաղթականների գրասենյակի տնօրեն էյուբ բեյը:

Այս ձերբակալված մարդկանց անգամ նկարել են: Սակայն արդյունքին տեղյակ չեմ: Այստեղից հրաման է ուղարկվել ժանդարմերիային, որ նրանք հոգ տանեն ճանապարհին անջուր և սոված մնացած գաղթականների համար⁴:

Գաղթականների գրասենյակի տնօրենի օգնականի գրասենյակից Բաբի Գաղթականների գրասենյակի տնօրենության ղեկավար Մուհարրեմ բեյին ուղղված համար 344 գաղտնի գրության պատճենը, 1917 թ. փետրվարի 2

«Համոզված եմ՝ Դուք կգնահատեք այն վստահությունը, որ նահանգապետի գրասենյակն ունի Ձեր հանդեպ, նաև՝ դրա շնորհիվ Ձեզ վստահված գործի կարևորությունը:

(10) 10

Չպետք է թույլ տաք՝ գեթ մեկ հայ մնա Բաբում:

Արտաքսման կազմակերպման Ձեր վճռականությունն ու ուժը միայն կարող են երաշխավորել դրա արդյունքները: Պարզապես հոգ տարեք, որ ճանապարհներին կամ բաց երկնքի տակ դիեր չմնան: Հաղորդեք առավելագույն գումարը, որ վճարում եք այդ գործի համար վարձած մարդկանց:

Մի՛ զբաղվեք տրանսպորտ հայթայթելով. նրանք կարող են գնալ նաև ոտքով: Մահացածների ցուցակը, որ ուղարկում եք ամեն շա-

բաթ, մեզ չի գոհացնում: Կարծես այդ մարդիկ լավ էլ հանգիստ ապրում են այդտեղ:

Գաղթը ճամփորդություն չէ: Ուշադրություն մի դարձրեք հուսահատության ու հոգեվարքի ճիչերին ու բողոքներին: Նահանգային կառավարությունից անհրաժեշտ գրություններն արդեն ուղարկվել են քայմաքամին: Դուք պետք է մեծ ջանքեր գործադրեք այս հարցում»:

(11) 11

Գաղտնագրված հեռագիր էր եկել Ներքին գործերի նախարարությունից, որ Լևոն Ամիրայանի, Թորոս Չաղլասյանի, Դիշչեքենյանի, Հազարապետյանի ու Չորբաջյանի ընտանիքները մնան ու վերաբնակեցվեն Հալեպում, բայց նահանգային իշխանություններն արտաքսեցին այս ընտանիքները: Նրանց մի մասը զոհվեց ճանապարհին:

Համամը, որ Ռաքքայի մերձակայքում է, մահվան ու ստորացման դժոխք էր: Կորստից ու զրկանքներից ամենից շատ տուժում էին կանայք ու երեխաները: Իրավիճակի գնահատման թղթապանակը գլխավոր տնօրենի օգնական Աբդուլահադ Նուրի բեյի ձեռքում էր: Հաքքը բեյն ավելի խորացրեց այդ աղետը՝ հրամայելով սպանել գաղթից փրկված մի քանի հարյուր երեխաների: Նա նշանակեց Ռեսուլ անունով մի պատվազուրկ կերպարի, որը Ռումելիայից էր և այդ գործերի պատասխանատուն էր: Այդ մարդը գործել էր աշխարհի բոլոր անբարոյականություններն ու վտարվել ոստիկանությունից: Նա սպանելու հանդեպ սերն այնքան էր զարգացրել իր մեջ, որ դա դարձրել էր սրբազան գործ:

(12) 12

Չնայած այս ամենին, չպետք է մոռանալ, որ այս գործերն անող ծառայողների, դաժանություններ ու ճնշումներ բանեցնողների մեջ թուրքեր գրեթե չկային: Այլ ազգերի ներկայացուցիչներ էին՝ ռումելիացիներ, չերքեզներ, չեչեններ:

Չորս ամիս առաջ Ռումկալեում մի դեպք տեղի ունեցավ: Սիվասից մի արժանապատիվ ու մաքուր աղջիկ՝ Բիննազ անունով, երեք տարի դիմադրել էր կառավարական պաշտոնյաների ու հասարակության անդամների ոտնձգություններին: Հանուն իր պատվի՝ նա երբեք դատի չէր տվել ոչ մեկին: Ի վերջո, նորանշանակ *քայմաքամը* փորձեց գրավել նրա «անառիկ ամրոցը»: Աղջիկը, հասկանալով, որ անզոր է դիմագրավել պաշտոնյային, փախավ Բեհիսնի: Ի պատասխան՝ *քայմաքամն* ութ զինվորով մի գումարտակ ուղարկեց նրա հետևից: Քայմաքամը նաև նամակ գրեց Բեհիսի իր գործընկերոջը՝ աղջկան մեղադրելով գողության մեջ: Նրանք խեղճ աղջկան կառքով հետ բերեցին *քայմաքամի* մոտ:

(1) 13

Դեյր էլ Ջորի մութասարիֆ Ալի Սուլաթ բեյի դեմ Հալեպի նահանգապետի՝ Ներքին գործերի նախարարություն ուղղած հաղորդագրության պատճենը.

Գաղթականների գրասենյակի տնօրենի օգնական Աբդուլահադ Նուրի բեյը վերջերս էր գնացել Ռաս ուլ Այն՝ հետաքննելու, թե ուղարկված հայերի որ մասն է գնացել, և որ մասն է հաստատվել այնտեղ: Բեյի զեկույցից պարզվում է, որ Դեյր էլ Ջորի

մութասարիֆ Սուաթն այդ մարդկանց դիտավորյալ է պահում: Հազարավոր հայերի կուտակումներ են եղել այս փոքր, բայց ռազմավարական կարևորություն ունեցող Ռասս ուլ Այնի գավառակում: Հայերին չեն կարողացել արտաքսել՝ պատճառ բռնելով, թե «միջոցներ չենք ունեցել»: Այդ գործողությունը տապալողներին պատասխանատվության ենթարկելու բազմաթիվ հաղորդագրություններ են եղել, բայց արդյունք չեն ունեցել:

Հայերին պաշտպանելու և խնամելու դեպքերը զարմանալիորեն շատ են եղել: Անգամ տեղեկություններ կան, որ Սուաթն անձամբ է մաքրել ու կերակրել երեխաներին, սգացել նրանց ծնողների կորուստը: Այնտեղ հաստատված հայերը բարեկեցության մեջ են և դրա համար պարտական են Ալի Սուաթ բեյին: Եթե այս իրավիճակը շարունակվի, կձգձգվի նրանց արտաքսումը Հալեպից: Դրա համար անհրաժեշտ է Ձերդ գերազանցության միջամտությունը՝ քայլեր ձեռնարկելու համար:

1916 թ. հունվարի 5

Նահանգապետ՝

Մուստաֆա Աբդուլհալիկ

Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգապետին ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1917 թ. հունվարի 28

Մեզ տեղեկացրել են, որ որոշ նշված անձանց զավակներ ընդունվել են տարբեր տեղերում բացված որբանոցներ: Քանի որ պետությունն այս երեխաների ապրելու մեջ վնասից բացի ոչ մի այլ բան չի տեսնում, ուրեմն ամեն ոք, որ կկերակրի, կպահի, կկարեկցի նրանց, կգործի կառավարության դեմ: Անկախ նրանից, թե ո՞րը կլինի նրանց պատճառաբանություն-

Նր՝ իրադրությունը չհասկանալը, երեխաների անելանելի վիճակն ի ցույց դնելը, իրադրության լրջությունը չըմբռնելը:

(2) 14

Այսպիսով, տեղեկացնում ենք, որ այդ երեխաներին որբանոց ընդունելու կամ որբանոցներ կառուցելու ոչ մի քայլ չպետք է անել:

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգապետին ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1916 թ. դեկտեմբերի 14⁵

Բնաջնջման ենթակա ամենակարևոր զանգվածը հոգևորականությունն է: Մեծ սխալ է թույլ տալ, որ նրանք հեռանան ու բնակություն հաստատեն Սիրիայի ու Երուսաղեմի նման վտանգավոր շրջաններում: Այս անձինք հակված են կառավարության դեմ չարամիտ դավադրություն կազմակերպել: Այս մարդկանց բնակության լավագույն վայրն այնտեղ է, որտեղ նրանց կկոտորեն: Խորհուրդ ենք տալիս նման վերաբերմունք դրսևորել:

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգապետին ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1916 թ. մարտի 4

Բանակի հրամանատարության պահանջը՝ այդ մարդկանց որոշ խմբերի զինվորական ծառայության վերցնել և այդպես բանակը համալրել արհեստավորներով ու վարպետներով, կատարվել է ամենայն մանրամասնությամբ: Հաշվի է առնվել այն հանգամանքը, որ նրանց չի կարելի քաղաքներում պահել և պետք է ուղարկել պատերազմի դաշտ: Այսպիսով, ճանապարհների շինարարության վրա մնացողները կլինեն պատերազմի թատերաբեմից հեռու, իսկ նրանց ընտանիքները չեն ընդգրկվի արտաքսվողների ընդհանուր ցուցակ: Քանի որ այս մասին Ներքին գործերի նախարարությունը հատուկ ցուցումներ է ուղարկել բանակների հրամանատարներին, այդ անձանց պետք է վերաբերվել, ինչպես հարկն է:

Ներքին գործերի նախարար

(3) 15

Ներքին գործերի նախարարությունից Ուրֆայի մութասարիֆին ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1915 թ. սեպտեմբերի 21

Նման որբանոցի կարիքը չկա: Հիմա էներգիա ծախսելու և կարեկցանքից ելնելով որբերին կերակրելու ու պահելու ժամանակը չէ: Անհամբեր սպասում ենք արտաքսման մասին Ձեր զեկույցին:

Ներքին գործերի նախարար

Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգային կառավարությանն ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1915 թ. հոկտեմբերի 22

Թուրքական հողում հայերի բոլոր իրավունքները, օրինակ՝ կյանքի և աշխատանքի իրավունքները, վերացված են: Ոչ ոք, օրորոցի բարուրից սկսած, չպետք է ողջ մնա: Կառավարությունը պատասխանատվություն է ստանձնում այս իրավիճակի համար: Այս հրամանին համարժեք քայլեր արդեն ձեռնարկվել են որոշ նահանգներում: Չնայած մեր որոշմանը՝ որոշ մարդիկ ծածուկ արժանանում են հատուկ վերաբերմունքի՝ նրանց չեն ուղարկում վերջնական հանգրվաններ: Ավելին, նրանք ազատորեն թափառում են Հալեպի շուրջ և կառավարության համար երկրորդ խնդիրն են ստեղծում:

Տգիտության պատճառով նյութական շահերը, բնականաբար, ավելի վեր են դասվում, քան հայրենասիրությունը: Եթե մարդիկ կան, որոնք չեն հասկանում կառավարության քաղաքականությունն այս հարցում, նրանց պետք է անպայման արգելել պաշտպանել կամ փրկել նշված անձանց:

(4) 16

Հայերին արտաքսելու հարցում ոչ մի պատճառաբանություն կամ բացառություն չի ընդունվում՝ անկախ նրանից կին է, երեխա, թե քայլելու ունակությունից զրկված մարդ: Դուք չպետք է ժամանակ կորցնեք. գործի անցեք հոգով ու սրտով: Այն *ուժն ու արագությունը*, որով դուք նրանց կոչնչացնեք ճանապարհի դժվարությունների ու կյանքին սպառնացող զրկանքների միջոցով, կբացառեն որևէ միջամտություն ձեր գործին՝ ի տարբերություն այլ վայրերի:

Ռազմական նախարարությունն ընդհանուր հրաման է տվել բանակի ղեկավարությանը, որ Թիկունքի ապահովման

վարչությունը չխառնվի արտաքսման այս խնդրին: Տեղեկացրեք ծառայությունն իրականացնող սպաներին, որ պատասխանատվության մասին չմտահոգվեն, այլ մտածեն միայն այս գործի իրական նպատակի մասին: Ամեն շաբաթ տեղյակ պահեք գործադրած ջանքերի արդյունքի մասին:

Ներքին գործերի նախարար՝
Թալեաթ

Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգային կառավարությանն ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1917 թ. փետրվարի 16

Մուստաֆա Նաջիլ բեյի ղեկավարած պատվիրակությունը, որն ուղարկվել էր Ուրֆա՝ հետաքննություն անցկացնելու և հայերի հեղափոխական գաղափարների ու գործունեության մասին փաստաթղթեր ձեռք բերելու համար,

(5) 17

իր պարտականությունների կատարումից հետո զբաղվելու է Ձեր նահանգի՝ Այնթապի ու Քիլիսի նմանատիպ միջադեպերով: Շահագրգիռ կողմերին հաղորդեք, որ օժանդակեն նրանց ջանքերին:

Ներքին գործերի նախարար՝
Թալեաթ

Հայերի մասին գիրքը, որ հետո հրատարակվեց, այս պատվիրակության գործունեության արդյունքն էր⁶:

Դեյր էլ Զորի մութասարիֆ Զեքիի՝ Հալեպի նահանգապե-

տին ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1916 թ. օգոստոսի 13

Ես ստացել եմ Ներքին գործերի նախարարության հրամանը, որ նախատեսվող արտաքսումների նախօրեին, լույսը դեռ չբացված, պետք է փոխել Հալեպում գտնվողների բնակության վայրը: Այս առումով զեկուցեք, թե դեռևս որքան կշարունակվեն արտաքսումները:

Մութասարիֆ Զեքի

Հալեպի նահանգապետի գրասենյակից Այնթապի մութասարիֆությանն ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1917 թ. հունվարի 24

Թույլ չտաք, որ Ձեր գավառի տարածքի Սվասի ու Մամուրեթյուլազիզի հայերն իրար հետ շփվեն և հավաքվեն: Հարցը լուծեք Ձեզ արդեն ծանոթ ցուցումների շրջանակում ու հաղորդեք արդյունքի մասին:

(6) 18

Այս հեռագիրը գրվել է նրանց համար, ովքեր այդ շրջաններում սպանում էին հայերին: «Հարցը լուծեք Ձեզ արդեն ծանոթ ցուցումների շրջանակում» նշանակում է սպանել: Մեկ շաբաթ անց Այնթապի մութասարիֆը վերոնշյալ պաշտոնյայից ստացել է գրագրության պատասխանը:

1917 թ. հունվարի 24

Հալեպի նահանգապետի գրասենյակ

Նշված գավառի մութասարիֆի հաղորդագրությունից պարզ-

վում է, որ ավելի քան 500 հայեր, մեծ մասը՝ կանայք ու երեխաներ, վերոնշյալ նահանգից եկել և հաստատվել են Ռումկալեում: Նրանց աքսորել են (քուրդ պահապանների ուղեկցությամբ, համաձայն վերոնշյալ ցուցումների, որ այլևս չվերադառնան):

Այս հաղորդագրության իմաստն այն է, որ մոտ 500 հայեր, շատերը՝ կանայք ու երեխաներ, սպանվել են հրամանի համաձայն: «Որ այլևս չվերադառնան» և «քուրդ պահապանների ուղեկցությամբ» արտահայտություններն այդ են վկայում:

(7) 19

Գաղթականների գրասենյակի տնօրինության ղեկավարի օգնականից գլխավոր տնօրենին ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1916 թ. փետրվարի 26⁷

Բացի արհեստավորի ու վարպետի կարգավիճակով Սիրիա բերվածներից՝ հայերի միայն մեկ քառորդ մասն է հասել վերաբնակեցման վայր: Մեծ մասը զոհվել է ճանապարհին բնական պատճառներից: Պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել արտաքսելու նրանց, ում տարբեր հիմնավորումներով դեռ չեն քշել Հալեպից:

Այս հեռագրից պարզվում է, որ կատարվել են կենտրոնական կառավարության՝ Թալեաթի հրամաններն ու ցանկությունները: Հայերը մահանում էին կամ սպանվում: Այդ տեղեկությունները հաղորդվում էին պաշտոնապես:

(1) 20

Երկար ժամանակ մտադրություն կար ոչնչացնել (կայսրության)

հայկական տարրը, որ դարեր շարունակ ջանացել է սասանել մեր պետության ամուր հիմքերն ու լուրջ սպառնալիք է ներկայացրել կառավարության համար: Մեր սուրբ պարտքն իրագործելու հարմար պայմաններ չեն եղել: Այժմ խոչընդոտներ այլևս չկան, ու հայրենիքն այս վտանգավոր տարրից փրկելու ժամանակն է: Անհրաժեշտ է գիտակցաբար ու լիարժեք նվիրվածությամբ գործել, վերացնել «հայ» անունը Թուրքիայում, առանց խղճին ու կարեկցանքին տրվելու վերջ դնել նրանց գոյությանը: Նաև պետք է ուշադիր լինել, որ այս գործով զբաղվող մարդիկ լինեն արժանապատիվ ու պարկեշտ՝ մեր նպատակին հասնելու համար:

Ներքին գործերի նախարար

Սա հեռագրի պատճենն է, որը գտնվել է գաղթականների գրասենյակի տնօրենի օգնականի թղթերում: Պարզ չէ՝ երբ են այն գրել, և ով է հեղինակը:

3/691

Հալեպի նահանգապետի գրասենյակ

Արևելյան նահանգների այն հայերը, որոնք մեր ձեռքն են ընկել, պետք է բնաջնջվեն գաղտնի եղանակներով:

1915 թ. դեկտեմբերի 5

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

(2) 21

Այս հաղորդագրությունը ստանալուց հետո ոստիկա-

նությունն անմիջապես հետաքննություն անցկացրեց և, վերահսկողության տակ առնելով ընդհանուր արտաքսման ենթակա մարդկանց, բոլորին կոտորեց:

Հալեպի նահանգապետի գրասենյակ

723

Հալեպի շրջակայքում հանգրվանած հայերին պետք է ուղարկել վերաբնակեցման վայրեր՝ առանց վայրկյան հապաղելու: Դրանից հետո հաղորդել արդյունքի մասին:

1915 թ. դեկտեմբերի 16

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Արտաքսումների սկզբում Հալեպը վերաբնակեցման վայր դարձավ, և դրանից հետո մեծ թվով գաղթականներ հաստատվեցին հարակից գյուղերում: Խեղճ գաղթականները սկսեցին աշխատել իրենց վերաբնակեցման վայրերում՝ հուսալով, որ վատթարագույնն անցել է: Այս հեռագիրը ստացվելուց հետո ձիավոր ու հետիոտն ժանդարմներ ուղարկվեցին այդ շրջաններ՝ հետապնդելով հազարավոր մարդկանց: Նրանց քշեցին գյուղերից, ու շատերը սպանվեցին:

(3) 22

Հալեպի նահանգապետի գրասենյակ

745

Ըստ տեղեկությունների՝ մի քանի հայ լրագրողներ այցելում

են այդ շրջաններ, լուսանկարում, վկայություններ հավաքում կատարվող աղետների մասին, ապա հանձնում տեղի ամերիկյան հյուպատոսին: Այսպիսի վնասարար մարդկանց պետք է ձերբակալել ու վերացնել:

1915 թ. դեկտեմբերի 24

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Թալեաթի առաջադրանքում ներգրավվել են քաղաքացիական ծառայողները: Անգամ ամերիկյան հյուպատոսության շրջակայքում հատուկ հետախուզում իրականացնող պաշտոնյա կար:

Հայտնում են, որ «ժամանակի» կամ հայկական այլ թերթի լրագրողի տեսել են դեսպանատուն մտնելիս: Բայց այս միջադեպերի հետաքննությանը պետք չէ մեծ կարևորություն տալ: Ի վերջո, այդ մարդկանցից ոչ մեկին չեն բռնել:

Հալեպի նահանգապետի գրասենյակ

762

С. 1915 թ. դեկտեմբերի 15

Եթե հայերը ցանկանում են արտաքսումից խուսափելու համար իսլամ ընդունել, նրանց պետք է տեղեկացնել, որ կրոնափոխ կարող են լինել միայն վերաբնակեցման վայրերում:

1915 թ. դեկտեմբերի 30

Ներքին գործերի նախարար

Թալեաթ

(4) 23

Այն շրջանում, երբ արտաքսումները թափ հավաքեցին, ամեն օր տեղեկություններ ստացվեցին հազարավոր մահացողների մասին: Որոշ խեղճ մարդիկ դիմեցին իշխանություններին՝ իսլամ ընդունելու համար: Նրանք ասում էին, թե «գուցե մահմեդական դառնալով փրկվենք»: Մեկ-երկու հոգու թույլատրեցին:

Երբ խնդրագրերը շարունակվեցին, նոր թույլտվությունների համար դիմում ուղարկվեց նախարարություն և ստացվեց վերոնշյալ պատասխանը:

Հալեպի նահանգապետի գրասենյակ

801

Որոշվել է, որ բոլոր հաստատությունների, երկաթգծի ծառայության ու կառուցման մեջ ներգրավված հայերը ևս պետք է արքային վերաբնակեցման վայրեր: Այս մասին Ռազմական նախարարությունից կարգադրություններ են ուղարկվել բանակի հրամանատարներին: Հաղորդեք արդյունքների մասին:

1916 թ. փետրվարի 8

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Երկաթուղու շինարարությունում ու աշխատանքում ներգրավված մարդկանց մեծ մասը հայ էր: Կառավարությունը հրահանգեց արտաքսել նրանց՝ վախենալով հայերի դա-

վաճանությունից: Ի պատասխան՝ երկաթուղու հանձնակատարից պահանջեցին հայ աշխատակիցների ցուցակը: Այս հարցում երկաթգծի հանձնակատար Հայրի բեյն ու Ջեմալ փաշան մեծ մարդասիրություն դրսևորեցին: Սակայն պետք է ընդունել, որ Թալեաթն անարդար վարվեց: Երկաթուղու բոլոր աշխատավորները հայեր էին և,

(5) 24

չնայած հայության կրած տառապանքներին՝ այդ մարդիկ ընդհանուր մոբիլիզացիայի 4-5 տարվա ընթացքում հավատարմորեն աշխատեցին: Երկաթուղում չգրանցվեց ոչ մի միջադեպ:

Հալեպի նահանգապետի գրասենյակ
809

Նկատվել է, որ օտարերկրյա սպաները նկարում են ճամփեզրին մեծ թվով կուտակված հայերի մարմինները: Դրա համար հորդորում ենք այս դիերը չթողնել բաց երկնքի տակ, այլ՝ թաղել:

1916 թ. հունվարի 11

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Օրը 700-800 հայ էր մահանում աղետից, չքավորությունից ու հիվանդություններից: Նրանց թաղում էին ցեխում, մարմինների մնացորդները ցրիվ էին տալիս գիշատիչ թռչուններ-

րը: Ուղղակի մարդու խիղճ էր տանջում: Այս տեսարաններին տեղյակ ավստրիացի ու գերմանացի սպաները զեկույցներ էին գրում իրենց երկրներ: Իմանալով այդ մասին՝ Թալեաթ փաշան ցանկանում էր կոծկել հանցանքներն ու թաղել դիե-րը: Բայց եթե նույնիսկ երկրի ու երկնքի տեղն էլ փոխես, միև-նույն է, այս սարսափները մոռանալ չի լինի:

(6) 25

Այս խղճալի տեսարանները դիպչում էին ոչ միայն քրիստո-նյանների, այլև մուսուլմանների սրտի լարերին:

Հալեպի նահանգապետի գրասենյակ

820

Հաղորդում ենք բոլորին, որ Հյուսիսից շարունակաբար եկող հայերը պետք է անմիջապես ուղարկվեն վերաբնակեցման վայրեր՝ շրջանցելով գյուղերը, բնակավայրերն ու քաղաքները:

1917 թ. հունվարի 17

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Այս հեռագրի նպատակը համոզվելն էր, որ հայ գաղթա-կանները կմնան ճանապարհին ու կմահանան՝ չդիմանալով գաղթի դժվարություններին: Այս դեպքում նրանք կենթարկ-վեն սովի ու զրկանքների, իսկ, գյուղերով ու քաղաքներով անցնելիս, հայերին կգթային ու կօգնեին:

(7) 26

Հալեպի նահանգապետի գրասենյակ

830

Պետք է հավաքել սնունդ ու տալ հայերի այն որք երեխաներին, որոնք չեն կարող հիշել իրենց ծնողների տառապանքները, իսկ մնացածին միացնել գաղթի շարասյուններին:

1917 թ. հունվարի 25

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Երկար բացատրություն գրելու կարիք չկա: Հեռագրի բովանդակությունը պարզ է: Երեխաները, որոնք չեն կարող հիշել իրենց ծնողների տեսած ողբերգությունը, երկու, երեք, չորս տարեկան են: Դրանից մեծ երեխաները դատապարտվում էին մահվան: Դա էր իսկապես նրանց ճակատագիրը: Ինչ պատահեց Մեսքենեի որբանոցի որբերի հետ: Նրանք բոլորը մահացան, սպանվեցին:

(8) 27

Հալեպի նահանգապետի գրասենյակ

840

Կարելի է հասկանալ, որ 40-50 հազար հայեր կան, մեծ մասը՝ որբեր ու այրիներ, որոնք ապրում են Ինթիլիի ու Այըրանի ճամբարից մինչև Հալեպ, երկաթգծի երկայնքով: Ամենամեծ

պատիժը հասնելու է նրանց, ովքեր բանակի ամենակարևոր հաղորդակցային ուղու վրա այսպիսի չքավորություն ու աղքատություն են ստեղծել: Ադանայի նահանգապետին հաղորդելուց հետո պետք է հայերին արագ արտաքսել վերաբնակեցման վայրեր՝ առանց Հալեպով անցնելու: Մեկ շաբաթում հաղորդեք արդյունքի մասին:

1917 թ. հունվարի 29

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Ինքն էլ է ընդունում՝ ինչ կարող էին անել այս խեղճերը՝ կանայք, առանց ծնողների ու խնամակալների մնացած երեխաները: Նրանք այնտեղ ամիսներով մնում էին: Այդ մարդկանց ներկայությունն ինչ կարող էր տալ: Միթե որևէ մեկն իսկապես վախենում էր այդ խեղճ արարածներից, որոնք մարդկային վերաբերմունքի փշրանքներ էին ակնկալում: Ոչ, նրանցից չէին վախենում,

(9) 28

պարզապես խնդիր էր դրված վերացնել թուրքերի պատմությունն ու փայլուն ապագան ապականող հայերին:

Հալեպի նահանգապետի գրասենյակ

845

Սա համար 840 հեռագրի հավելվածն է՝ ուղարկված 1917 թ. հունվարի 29-ին:

Չնայած անհնար էր Ինթիլիի ու Այըրանի ճամբարներում մնացած հայերին գաղթեցնելը, քանի դեռ նրանք չէին ավարտել շինարարությունը, միևնույն է, այդ տարածքներում նրանց ընտանիքների մնալն անթույլատրելի էր համարվում: Ընտանիքները պետք է ժամանակավորապես բնակեցվեին Հալեպի շրջակա գյուղերում ու ավաններում, իսկ խնամակալ չունեցող կանայք ու երեխաները պետք է արտաքսվեին՝ համաձայն նախորդ ցուցումների:

(10) 29

Այս մարդկանցից շատերի ընտանիքները Հալեպ էին բերվել գաղթի տարբեր շարասյուններով: Նախատեսվում էր, որ այս մարդիկ պետք է հաստատվեին գյուղերում: Նրանց անունները գրանցել էին, ստեղծել մատյաններ և խեղճ մարդկանց այդպիսով հույսի նշույլ տվել: Սակայն հույսն ապարդյուն էր: Ոստիկանությունը նրանց քշում էր այդ շրջանից: Այդ մարդիկ պաշտոնական խնդրանքներ ու դիմումներ էին ուղղում, պաշտոնյաներն էլ ցույց էին տալիս, թե դրանք լրջորեն հաշվի են առնում: Սակայն դիմումներին ընթացք տալու կարիք չկար. դիմողները հաշված օրերի ընթացքում հայտնվում էին Մեսքենեի սարսափների ու բարբարոսության ճիրաններում: Այս խեղճ, չքավոր կանայք ու աղջիկները դառնում էին տեղական բնակչության ու ժանդարմերիայի լկտի ցանկությունների զոհը:

Նրանց ամուսինները, հայրերը և եղբայրները ներգրավված էին զինվորական գործում, մինչդեռ դուստրերն ու հարսները մնում էին լքված ու սպանվում էին:

(11) 30

Նախարարության «Այս մարդկանց ընտանիքները բնակեցրեք Հալեպի շրջակայքում» հրամանից հետո հեռագիր եկավ, որը մերժում էր նախորդ հրամանը:

860

Հալեպի նահանգապետի գրասենյակ

1917 թ. փետրվարի 9-ի հեռագրի պատասխանը

Այս մարդիկ պետք է անմիջապես արտաքսվեն վերաբնակեցման վայրեր: Պետք է համոզված լինել, որ հետագայում նրանց կմիանան արական սեռի բարեկամները:

1917 թ. փետրվարի 15

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Տարօրինակ է: Փաստորեն այլևս կարիք չկար թույլտվություն հարցնել այս ընտանիքների գնալու կամ մնալու վերաբերյալ. Ներքին գործերի նախարարությունն արդեն հրամայել էր, որ այդ մարդիկ վերաբնակեցվեն Հալեպի շրջակա գյուղերում և բնակավայրերում:

Հետագայում սեփական որոշման հանդեպ նախարարության անտարբերությունը վկայեց, որ կառավարությունում հայերի հանդեպ կարեկցանք չէր մնացել:

(12) 31

Հալեպի նահանգապետի գրասենյակ
853

Քանի որ գաղթականների մեջ զրհված մուսուլման զինվորների հազարավոր որբեր ու այրիներ կան, որոնք կարոտ են աջակցության ու հովանու, անհմաստ է միջոցներ վատնել որոշ նշված անձանց լքյալ և ունեզուրկ երեխաների վրա: Նրանք ապագայում խնդիրներ են հարուցելու և վնաս են հասցնելու մեր պետությանը: Այս մարդկանց պետք է հեռացնել արտաքսման շարասյուներով, իսկ ովքեր մինչև այժմ օգնություն են ստացել, պետք է ուղարկվեն Սվազ՝ ըստ վերջին հրահանգների:

1917 թ. փետրվարի 5

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Ինչպիսի սարսափելի դաժանություն: Կարծես հացի վերջին կտորն են վերցնում անմեղ էակներից, որոնց միակ մեղքը հայ ծնվելն էր: Մերժում են անգամ նրանց ապրելու իրավունքը:

(13) 32

Այդ ժամանակ մի գերմանացի մարդասեր կին կար՝ կարծեմ Քոխ անունով: Նա այլոց օգնությամբ ու նաև անձամբ հավաքել էր հարյուրից երկու հարյուր անմեղ երեխայի ու կառավարությանը հորդորում էր հոգ տանել նրանց մասին:

Այդ կարեկցական քայլը զայրացրել էր նահանգապետին ու Գաղթականների գրասենյակի տնօրինությանը: Սակայն նրանք հրապարակավ ձայն չէին հանում:

Այս գթասիրտ ու կարեկից կինը երեխաների հանդեպ մայրական խնամք էր տաճում, որ նրանք ապրեն:

Կառավարությունը խորամանկ քայլ արեց. նրանց պատասխանը հետևյալն էր. «Բոլոր երեխաներին կտանենք Սվազ: Այնտեղ նրանց համար մեծ որբանոց կբացվի»: Նպատակը, սակայն, նրանց ճանապարհին սպանելն էր: Ինձ էր հանձնարարվել նրանց ուղարկելն ու այդ ամենը կազմակերպելը: Երեխաները պետք է հատուկ պաշտոնյայի ուղեկցությամբ գնացքով ժամանեին Էրեղլի, ապա՝ Սվազ: Ես պետք է տեղակայվեի Էրեղլիում: Այդ ժամանակ Գաղթականների գրասենյակի տնօրինության գումարն արդեն սպառված էր: Նոր ֆինանսավորումն ուշացավ, ու այդ ամբողջ գործընթացը կանգնեց: 7-8 ամսից երեխաներին մի կերպ ուղարկեցին Ստամբուլ:

(14) 33

Եթե այս հրամանը տված մարդու՝ Թալեաթ փաշայի ներսում իսլամի նշույլ լինե՞ր՝ չարը բարուց չտարբերող, նա չէր սպանի աղքատ, որք ու խեղճ էակներին, որոնց ծնողները ենթարկվել էին ծեծի ու հալածանքների, որոնք որբացել էին հենց իր հրամանների ու դաժանության պատճառով: Ինչպես է պատմությունը հիշելու այս բռնակալներին, որոնք սևացրին մի մեծ ժողովրդի պատմությունը:

Հալեպի նահանգապետի գրասենյակ

745

Վնաս չէ հայերից ընդունել բողոքներ պարունակող հեռագրերը, սակայն կարիք չկա ժամանակ ու էներգիա ծախսել քննությունների և հետաքննությունների վրա: Դա ժամանակի կորուստ է: Բողոքողներին տեղեկացրեք, որ իրենց իրավունքների հարցերով կարող են դիմել վերաբնակեցման վայրերում:

1917 թ. հունվարի 22

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

(15) 34

Այս գաղտնագրված հեռագրի պատճառը հետևյալն է. տարբեր տեղերից բողոքի գրություններ էին գալիս նահանգապետի գրասենյակ ու Գաղթականների գրասենյակի տնօրինություն: Գաղտնի հրահանգ ուղարկվեց նահանգապետին և փոստի ու հեռագրության Հալեպի գրասենյակ, որ այդպիսի գրություններ չընդունեն:

Կարծեմ գլխավոր տնօրենը գրել էր փոստի և հեռագրության նախարարություն, որն էլ դիմել էր Թալեաթ փաշային, թե՛ հեռագրեր ընդունել, այնուամենայնիվ, արժեր: Պետական եկամուտները կավելանային հեռագրերի վճարներից, բայց որովհետև հայերն արդեն իրավագուրկ էին այս երկրում, անգամ ապրելու իրավունքից էին զրկված, այդ գրություններին ընթացք չէին տա: Ինչ հնարավոր ազդեցություն

կունենային մահվան դատապարտվածների բողոքները: Այս դիմումները գերեզմանից եկող ձայների էին նման: Կառավարությունը, սակայն, սարսափած էր: Նրանց համար ծանր էր լսել, չէին կարողանում տանել այդ ձայները:

(16) 35

Կարճ ասած, մի հոգի անգամ չկար, որ չհեկեկար այս անխիղճ հանցանքների պատճառով:

Հավելված 1.2

Հատվածներ Նայիմ Էֆենդու հուշերից՝ Արամ Անտոնյանի հրատարակությամբ

Այստեղ Նայիմի օսմաներեն հուշերի այն կորած հատվածներն են, որոնք հրատարակել է Արամ Անտոնյանը: Ի շահ տեքստի սահուն ընթերցանության՝ մենք պահպանել ենք օսմաներենի արդեն ունեցած հատվածներն ու Արամ Անտոնյանի բացատրությունները: Այսպիսով, Նայիմի տեքստը սովորական տառատեսակով է, Անտոնյանինը՝ շեղատառ, Անտոնյանի բացատրությունները՝ փակագծերի մեջ, մուգ տառատեսակով: Մնացած բոլոր դեպքերում, եթե հատուկ նշում չկա, տողատակերի բոլոր հղումներն Անտոնյանի տեքստերն են:

Էջերը ևս համապատասխանում են Անտոնյանի գրքին: Որոշ տեղերում մենք հարկ ենք համարել չնշել Անտոնյանի արած տողատակի նշումները, որովհետև նա հղում է կատարում իր գրքի այլ էջերի, ինչն այս դեպքում կարևոր չէ:

Գլուխ առաջին

Նայիմ բեյի հիշողությունները սկսվում են Ռասս ուլ Այնի ջարդի նախապատրաստության օրերից: Ռասս ուլ Այնը հազիվ 50 տուն ունեցող չեչենների հիմնած փոքր կայարան է Միջագետքի նախկին կայսրության ավերակների վրա: Սկզբում այն Դեյր էլ Ջորի կառավարությանը ենթակա աննշան վայրերից էր, սակայն, Բաղդադի երկաթգծի վրա գտնվելու շնորհիվ, հանկարծ մեծ կարևորություն ստացավ: Քայմաքամը, որը նախկինում նստում էր չեչենների Սոֆա գյուղում, տեղափոխվեց Ռասս ուլ Այն: Նայիմ բեյի հիշատակած ժամանակներում քայմաքամ Յուսուֆ Ջիյա բեյն էր, որ չկարողացավ կատարել ջարդի հրամաններն ու պաշտոնանկ արվեց:

Այստեղից խոսքը տալիս են Նայիմ բեյին:

Հայերի կոտորածների ու գաղթի պատմությունը, որ «թուրք» անունը մարդկության մշտական անեծքին արժանացրեց, խամրեցնում է մինչև օրս պատմությանը հայտնի բոլոր սարսափելի դեպքերը: Թուրքիայի լայնարձակ տարածքում ո՛ր անկյունն էլ նայեք, ո՛ր խորշն էլ փնտրեք, ամենաանգութ կերպով խողխողված հազարավոր հայերի դիեր կգտնեք:

Ես դեռևս չէի զբաղվում գաղթականության տեղափոխման խնդրով և Ռասս ուլ Այնում Ռեջիի քարտուղարն էի: Գյուղի դիմաց, գետի եզերքին, տեսա դժբախտների քարավան՝ բաղկացած հարյուրավոր կանանցից ու երեխաներից: Նրանք ամեն առավոտ գյուղ էին գալիս մուրալու: Ոմանք էլ ջուր էին կրում և ջանում ապրել ձեռք բերած մի կտոր հացով:

Քանի դեռ ամառ էր, կարողանում էին ապաստան գտնել ժայռերի ու ծմակների մեջ, հողակույտերի ձեղքերում: Սակայն ձյուն-

ռանը, գիշերային լռության մեջ, լսվում էին ցրտից ու սովից մահացողների ձայները: Գյուղի չեչեն բնակչությունը լսում էր այդ ձայները, բայց այս հոգեվարքի ճիչերը ոչ մեկին չէին տանջում:

Երբեք չեմ մոռանա այն գիշերը: Քայմաքամի տանն էինք: Դրսում ավերիչ փոթորիկ սկսվեց: Քիչ անց լսվեցին փոթորկի տակ մնացած թշվառների ողբն ու հեծեծանքը: *Քայմաքամ Յուսուֆ* Ջիյա բեյը շատ պարկեշտ ու բարեխիղճ մարդ էր: Իրար հետ մի աղայի տնից ու մի քանի այլ տեղերից երկու-երեք վրան գտանք: Տասը-տասնհինգ ժանդարմների ու ժողովրդի օգնությամբ վրանները տեղադրեցինք, որ խեղճերը քիչ թե շատ պատսպարվեն: Նրանց մահը ողբերգական էր, բայց ավելի սրտակեղեք էր, երբ շները հոշոտում էին մեռած մարմինները:

Այդ մարդիկ Սվազի, Դիարբեքի, Խարբերդի թշվառ հայ գաղթականների քարավանների մնացորդներն էին: Հինգ-վեց նահանգների մոտ մեկ միլիոն բնակչությունը տեղահանվել էր: Ամեն քարավանից մինչև աքսորավայրը 100-150 մարդ էր մնում, հիմնականում՝ կանայք ու տղաներ: Դա էլ ապացույց էր, որ ճանապարհին ջարդելով էին քշում:

Քանի դեռ Նայիմ բեյը Ռասս ուլ Այնում էր, Կոստանդնուպոլսի շրջակայքից ու Կիլիկիայից հարյուր հազարավոր արտաքսված գաղթականները դեռ այսպեղ չէին հասել: Հետո նրանք երկաթուղով կամ ոտքով հասան այսպեղ, ու տրվեց կոտորելու հրամանը:

Նայիմ բեյն այսպես է շարունակում:

Ես ժամանեցի Հալեպ: Ճակատագրի բերումով 3-4 օր առաջ գաղթականների գրասենյակի գլխավոր տնօրենի օգնական նշանակված Աբդուլահադ Նուրի բեյն ինձ դարձրեց իր գլխավոր քարտուղարը:

Թեև Ռաս ուլ Այնուն էի գտնվում, բայց անգամ աչքովս տեսնելուց հետո չէի հասկանում այդ ոճիրների իրական նպատակը: Հետո միայն պարզեցի դրանց իմաստն ու բնույթը: Մեզ ուղարկած գաղտնագիր հեռագրերը կարդալիս՝ սարսափում էի: Մի մեծ ժողովուրդ՝ իր կանանցով ու երեխաներով, դատապարտվում էր մահվան:

Պետական խորհրդի որոշմամբ՝ տեղահանվածների բնակության վայրը Հալեպի Մաարա ու Բաբ գավառակներից տեղափոխվեց Խաբուր գետի շրջան (Դեյր էլ Զորի մոտ), և ես հասկացա, որ սա պարզապես դրամա չէ, այլ ավելի զարհուրելի բան:

Նայիմ բեյի այս վերջին պարբերությունը հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, որ նախկինում Կոստանդնուպոլսի մերձակայքից, Անատոլիայի երկաթուղու գծից ու Կիլիկիայից մի հոծ բազմություն հաջողել էր տեղավորվել Հալեպի նույնանուն նահանգի գյուղաքաղաքներում՝ Այազում, Քիլիսում, Բաբում, Մաարայում, Մանբիջում: Չգիտեմ՝ պետական խորհրդի որոշումն էր, թե ոչ: Այնուամենայնիվ, այդ գաղթականները խոշոր կաշառքներով մնացել էին նշված վայրերում, բայց շուտով պիտի տեղահանվեին ու քշվեին վար՝ մասամբ Ռաս ուլ Այնուն, մասամբ էլ Դեյր էլ Զորում կոտորվելու: Իրականում գաղթականների համար մի որոշակի աքսորավայր չկար: Նրանց անդադար մի տեղից մյուսն էին քշում: Երբեմն քայլելու ճանապարհին նրանք պարզապես սպառվում էին:

.....

Նայիմը շարունակում է պատմել, որ մի օր Ներքին գործե-

րի նախարարությունը հետևյալ գաղտնագրված հեռագիրն է ուղարկել:

Նշված մարդկանց աքտորելու նպատակը հայրենիքի բարօրության ապահովումն է: Որովհետև նրանք, որտեղ էլ ապրեն, չեն հրաժարվի իրենց անհիժված գաղափարներից: Պետք է աշխատենք հնարավորինս նվազեցնել նրանց թիվը⁸:

Այս հեռագիրը հասել էր 1915 թ. նոյեմբերին: 8 ամիս անց, առանց նահանգապետի մակագրության, այն տրվեց Աբդուլահադ Նուրի բեյին: Նույն երեկոյան, թուրքական ժամանակով 11:30, գաղթականների գրասենյակի տնօրեն էյուբ բեյն ու ժանդարմերիայի հրամանատար էմին բեյը շտապեցին Աբդուլահադ Նուրի բեյի մոտ: Նուրի բեյն իսկույն նրանց հաղորդեց ստացած հեռագրի մասին. հանդիպումը տևեց մոտ մեկ ժամ: Խոսակցության թեման հայերի բնաջնջման մեթոդներն էին: էյուբ բեյը բացահայտ կոտորելու կողմնակից էր: Սակայն Աբդուլահադ Նուրին խորամանկ գտնվելով մերժեց այդ գաղափարը: Նրա կարծիքով լավագույն տարբերակը գաղթականներին զրկանքների ու ձմռան միջոցով վերացնելն էր: Դա հնարավորություն կտար ապագայում պաշտպանել ու զարգացնել գաղթականների՝ բնական պայմանների հետևանքով մահանալու թեզը: Հասկանալի էր, որ 10,000-15,000 հայ գաղթականներ, հավաքվելով մի տեղում, անկասկած պիտի ենթարկվեին զրկանքների, սովի ու հիվանդությունների: Հետո, երբ նրանց հանկարծ տեղահանեին ավելի խորը քշելու նպատակով, բնականաբար առանց փոխադրամիջոցի, ստիպված պիտի քայլեին և, ի վերջո, ընկնեին ճա-

Նապարհին: Այս կարծիքը, ի վերջո, հաղթեց:

Մինչև այդ պահը Հալեպում ժանդարմները չէին խառնվում գաղթականների գործերին: Դրանից հետո ժանդարմների-
ան սկսեց համագործակցել ոստիկանության հետ: Շուտով
Հալեպում լայնածավալ գործողություններ սկսվեցին: Քիլիսի
բնակավայրերից մեկում՝ Քաթմայում և Հալեպում հավաքված
գաղթականներին սկսեցին մաս-մաս ուղարկել Աքթերին,
այնտեղից էլ՝ Բաբ: Կատարվեց այն, ինչ ծրագրված էր: Ամեն
օր սովից, ցրտից ու հիվանդություններից հարյուրավոր մա-
հացողների մասին լուրեր էին հասնում մեզ: Էյուբ բեյը գնաց
Ազազ: Վերադառնալով նա կենտրոնակայան եկավ ծիծաղե-
լով: Պատմում էր, թե ինչպես է այրել վրանները: Բաբը լի էր
գաղթականներով: Տիֆը հնձում էր բոլորին: Քայմաքամն ու
զեկույց պատրաստող այլ պաշտոնյաներ ամեն օր մահվան
լուրեր էին ուղարկում: Մահը տանում էր ոչ միայն հայերին,
այլև տեղացիներին:

Մի օր ես Աբդուլահադ Նուրի բեյին ասացի.

«Բեյ էֆենդի, եկեք մի քիչ մեղմենք գաղթականների հոսքը, որով-
հետև մահը սպառնում է ամբողջ Միջագետքին: Եթե այսպես
շարունակվի, այս մեծ տարածաշրջանում միայն դևերը կմնան:
Ռաս ու Այնի քայմաքամն այդ մասին արդեն աղերսագրեր է ու-
ղարկում»:

Նուրի բեյը ծիծաղեց.

«Որդիս, այսպես միանգամից երկու վնասակար տարր կվերաց-
նենք: Հայերի հետ մեռնողներն արաբները չեն: Մի՞թե դա վատ
է: Այսպիսով, բացվում է թրքության ապագայի ճանապարհը»:

Լռեցի:

Այս ահավոր պատասխանը ցնցեց ինձ:

* * *

Ինչն էր այդ մարդուն դրդում այդքան աննահանջ, այդքան անողորմ ու հրեշավոր ծրագիր իրականացնել: Այս մասին կարելի է շատ խոսել, բայց գաղթականների գլխավոր տնօրինության թղթերում գտնված մի հրամանը բավական է բացատրելու համար այն համարձակությունը, որով Նուրի բեյն իրականացնում էր իրեն վստահված գործը՝ հայերի բնաջնջումը:

Ահա այդ հրամանը.

«Երկար ժամանակ մտադրություն կար ոչնչացնել (կայսրության) հայկական տարրը, որ դարեր շարունակ ջանացել է սասանել մեր պետության ամուր հիմքերն ու լուրջ սպառնալիք ներկայացրել կառավարության համար: Մեր սուրբ պարտքն իրագործելու հարմար պայմաններ չեն եղել: Այժմ այլևս խոչընդոտներ չկան, ու ժամանակն է հայրենիքը փրկել այս վտանգավոր տարրից: Անհրաժեշտ է գիտակցաբար ու լիարժեք նվիրվածությամբ գործել, վերացնել «հայ» անունը Թուրքիայում, առանց խղճին ու կարեկցանքին տրվելու վերջ դնել նրանց գոյությանը»:

.....

Այս սարսափելի կոտորածները, որոնց մասին խոսում է Նայիմն իր հուշերում, տեղի են ունեցել հարկապես Մուստաֆա Աբդուլհալիկի՝ Հալեպի նահանգապետ նշանակվելուց հետո:

Նայիմ բեյը շարունակում է. «Սկզբում Հալեպի գաղթականների գրասենյակի գլխավոր տնօրինությունում հատուկ հանձնաժողով կար, որն իրականացնում էր հայերի արտաքսումը

(դեպի անապատ): Քանի դեռ հայերի աքսորն այս հանձնա-
ժողովն էր կազմակերպում, գաղթականները մասամբ զերծ
էին մնում կեղեքումներից ու հալածանքներից: Բայց կառավա-
րությունը, տեսնելով, որ այդպես չի կարող հասնել իր նպա-
տակին, նահանգապետին (Բեքիր Սամի բեյին) պաշտոնանկ
արեց ու նրա տեղն ուղարկեց Մուստաֆա Աբդուլհալիկ բեյին,
որը կարող էր ծառայել այդ նպատակին: Այս մարդը հայու-
թյան թշնամին էր ու ջանում էր հանուն թուրքերի բնաջնջել հայ
ժողովրդին: Գաղթականների գրասենյակի տնօրինությանը
տված նրա հրամանների դաժանությունը բացատրել հնարա-
վոր չէ: Օսմանյան խորհրդարանի որոշ հայ անդամներ, գուցե
հազարավոր խնդրանքների գնով, կորզել էին Ներքին գործե-
րի նախարարության թույլտվությունը, որ իրենց ընտանիքները
մնան Հալեպում: Նախարարությունը ցուցումներ էր ուղար-
կել նահանգապետին, բայց նա թաքցրել էր հրամաններն ու
ընտանիքներին քշել անապատ: Ես գիտեմ այդպիսի 15-20
հազար ընտանիք, որոնց մնալը նախարարությունը պահան-
ջել է, բայց նրանց աքսորել են:

Կառավարությունն այն մարդուն օգնական էր նշանակել
Աբդուլահադ Նուրի բեյին՝ գաղթականների գրասենյակի տնօ-
րենի օգնականին: Նուրի բեյը չափազանց խելացի ու ի բնե
դաժան մարդ էր՝ հայերի հանդեպ ատելությամբ լցված: Նա
թրծված դաժանության մարմնավորում էր: Հայերի կրած աղե-
տից ու թշվառ վիճակից հրճվում ու պարելու աստիճան ուրա-
խանում էր, քանի որ այդ ամենն իր հրամանների հետևանքն
էր: «Կառավարությունը չի ուզում, որ սրանք ապրեն», - ասում էր
նա: Նուրի բեյը պատմում էր, որ երբ նշանակվել է այս պաշտո-
նին, Հալեպ մեկնելուց առաջ Ներքին գործերի նախարարու-

թյան մի խորհրդական կանչել է Թալեաթի հետ հանդիպման: Նուրի բեյը գնացել է Բարձր դուռ: Փաշան մի քանի հյուրերի հետ է եղել:

Հարցրել է, թե երբ պիտի մեկնի, և ապա պատուհանի մոտ տանելով ցածրաձայն ասել.

«Անշուշտ գիտես անելիքդ: Այլևս չպետք է Թուրքիայում տեսնեմ այդ անհիծյալների (հայերի) գոյությունը»⁹:

Ջեմալ փաշան հրամայել էր, որ Ինթիլիում սեփական կառքերով աշխատող հինգ-վեց հայ ընտանիքներ գնան Դամասկոս: Նահանգապետն այս հրամանն ուղարկել էր Նուրի բեյին, նա էլ կցել էր հետևյալ մակագրությունը. «Հարյուր հազարավոր հայերի տեղահանող մի հսկա կառավարություն մի քանի հայերի երկու կոտրած կառքի կարո՞տ է, որ այդ մարդկանց ընդհանուր գաղթից կտրի ու Դամասկոս ուղարկի»: Նա շատ նյարդայնացած էր ու մռայլ¹⁰:

Աբդուլահադ Նուրի բեյի անմիջական գործընկերը Նրա ենթակա էյուբ բեյն էր՝ նույնպես արյունարբու և կաշառակեր մի մարդ: Նա մշտապես գործում էր սպանելու և հատկապես թալանելու համար: Գաղթականների գրասենյակի տնօրինությունից դուրս գալուց հետո նա մեծ հարստություն էր դիզել ու անցել պատվերով բեռնափոխադրման աշխատանքի: Հայերի շնորհիվ հարստացած այս մարդը երբեք հայերին լավություն չարեց: Նրա կրոնն ու խիղճը փողն էր: Հայերի հանդեպ դաժանությունները հանուն ազգային իդեալի չէր անում: Թալանելով հայերի սննդի ու տեղափոխման համար հատկացված գումարները՝ նա բազմապատկեց մի ամբողջ ժողովրդի սովն ու չքավորությունը¹¹:

Ահա այս մարդկանց՝ Հալեպի նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկ բեյի ու գաղթականների գրասենյակի տնօրենի օգնական Աբդուլահադ Նուրի բեյի հրամաններով կատարվեցին գաղթի բոլոր գործողությունները, և նրանց պաշտոնի անցնելուց հետո իրար հաջորդեցին ոճիրները:

Ներքին գործերի նախարարությունից Հալեպ եկած նոր ու սարսափելի հրամանն այդ նպատակին անհրաժեշտ ազատություն էր տալիս: Թեև նրանք վաղուց արդեն այդ հրամանի կարիքը չունեին: Ահա այդ գաղտնագրված հեռագիրը:

Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգ.

Թուրքական հողում հայերի բոլոր իրավունքները, օրինակ՝ կյանքի և աշխատանքի իրավունքները, վերացված են: Ոչ ոք, օրորոցի բարուրից սկսած, չպետք է ողջ մնա: Կառավարությունը պատասխանատվություն է ստանձնում այս իրավիճակի համար: Այս հրամանին համարժեք քայլեր արդեն ձեռնարկվել են որոշ նահանգներում: Չնայած մեր որոշմանը՝ որոշ մարդիկ ծածուկ արժանանում են հատուկ վերաբերմունքի՝ նրանց չեն ուղարկում վերջնական հանգրվաններ: Ավելին, նրանք ազատորեն թափառում են Հալեպի շուրջ և կառավարության համար երկրորդ խնդիրն են ստեղծում:

Տգիտության պատճառով նյութական շահերը, բնականաբար, ավելի վեր են դասվում, քան հայրենասիրությունը: Եթե մարդիկ կան, որոնք չեն հասկանում կառավարության քաղաքականությունն այս հարցում, նրանց պետք է անպայման արգելել պաշտպանել կամ փրկել նշված անձանց:

Հայերին արտաքսելու հարցում ոչ մի պատճառաբանություն կամ բացառություն չի ընդունվում՝ անկախ նրանից կին է, երեխա, թե քայլելու ունակությունից զրկված մարդ: Դուք

չպետք է ժամանակ կորցնեք. գործի անցեք հոգով ու սրտով: Այն ուժն ու արագությունը, որով դուք նրանց կոչնչացնեք ճանապարհի դժվարությունների ու կյանքին սպառնացող զրկանքների միջոցով, կբացառեն որևէ միջամտություն ձեր գործին՝ ի տարբերություն այլ վայրերի:

Ռազմական նախարարությունն ընդհանուր հրաման է տվել բանակի ղեկավարությանը, որ թիկունքի ապահովման վարչությունը չխառնվի արտաքսման այս խնդրին: Տեղեկացրեք ծառայությունն իրականացնող սպաներին, որ պատասխանատվության մասին չմտահոգվեն, այլ մտածեն միայն այս գործի իրական նպատակի մասին: Ամեն շաբաթ տեղյակ պահեք գործադրած ջանքերի արդյունքի մասին:

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Այս հրամանը Հալեպի գաղթականների գլխավոր տնօրենին ամեն տեսակ գործողություններ կատարելու լիազորություն տվեց: Գաղթականների տեղափոխման գործողությունը միայն մեկ մարդու լիազորությանը թողնելու նպատակն այն էր, որ վայրագություններ կատարելու հրամանները հնարավորինս ծածուկ մնան, շատ մարդ չհիմանա, ոճիրը կատարվի գաղտնի՝ տարածայնությունների տեղիք չտալով:

Աքսորյալների ընդհանուր հավաքման վայրը Հալեպից քսան րոպեի հեռավորության վրա գտնվող Քարլըքի տրխրահոչակ բարձունքն էր: Այնտեղից էին գաղթականներին քշում անապատ: Այնտեղ գտնվող հայերի կյանքը կախված էր ժանդարմերիայի մի տասնապետի ու առաքման մի պատնյայի քնահաճույքից:

Հալեպից մի քայլ անգամ հեռացողի համար հույսերը մարում էին: Ամբողջ գիծը՝ Քարլըքից մինչև Դեյր էլ Զոր, դարձել էր թշվառության բույն ու գերեզմանոց: Առաքման պաշտոնյաներից առավել վստահելիներին հանձնարարվել էր չխորշել մահվան հանգեցնող գործողություններից: Այդ են վկայում նաև Թալեաթի երկու հեռագրերը:

Հեռագիր առաջին

«Հալեպի նահանգապետին

Մեզ տեղեկացրել են, որ մի խումբ պաշտոնյաներ դատվում են ռազմական դատարանում՝ նշված մարդկանց (հայերի) հանդեպ դաժանությունների ու ճշումների համար: Ինչքան էլ սա ձևական բնույթ է կրում, կարող է ազդել այլ պաշտոնյաների համարձակության վրա: Ուստի հրամայում եմ այլևս նման հետաքննություններ չանցկացնել¹²:

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ»

Հեռագիր երկրորդ

«Հալեպի նահանգապետարան

Նշված անձանց (հայերի) բողոքների ու դատական գործերի հարուցումը ոչ միայն կարող է հետաձգել նրանց արտաքսումը, այլև հետագայում ընթացք կտա այնպիսի գործողությունների, որոնք կհանգեցնեն քաղաքական անախորժությունների: Այդ պատճառով չպետք է դիտարկել վերոհիշյալ դիմումները և այս մասին հրահանգել համապատասխան պաշտոնյաներին:

Ներքին գործերի նախարար՝
Թալեաթ»

Քանի որ նահանգապետարան ու Գաղթականների գրասենյակի տնօրինություն երբեմն բողոքագրեր էին հասնում տարբեր պաշտոնյաների դեմ, ներքին գործերի նախարարի ևս մեկ հեռագիր հանձնարարում էր դրանք ընդունել, բայց ընթացք չտալ: Այս հեռագրի շարժառիթը Հալեպի նահանգապետարանից քաղաքային փոստի բաժանմունք ուղղված գաղտնի հրահանգն էր, որն արգելում էր ընդունել հայ գաղթականների՝ բողոք պարունակող հեռագրերը: Կարծեմ Հալեպի փոստի բաժանմունքի տնօրենն այս մասին հարցում էր արել Պոլիս՝ փոստի նախարարություն, որի դիմումի հիման վրա էլ Ներքին գործերի նախարարությունն ուղարկել էր այդ հեռագիրը:

Ճամբարներում ընտանիքն ու զավակներին մորթած, աղջրկան խլած, պատիվն արատավորված մի խեղճ մարդ, երբ, մի բնակավայրի հասնելով, ուզում էր հեռագրով իր ողբալի վիճակը պարզել և օգնություն հայցել, փոստի աշխատակիցներից հանդիմանություն էր ստանում, թե ինչու է այդ ոճի հեռագիր ուղարկում:

Բայց դրանք արդեն մահապարտների բողոքներ էին՝ գերեզմանից եկող ձայների նման: Կառավարությունը վախենում էր այդ ձայներից: Տանջվում էր, դրանք լսելու ցանկություն չունեն:

*Գլուխ երկրորդ**Նայիմը գրում է.*

Երբ գաղթականներին երկաթուղով ուղարկում էին Ռասս ուլ Այն, *քայմաքամ* Յուսուֆ Զիյա բեյը տեղեկացրեց, որ հայերի համար այլևս տեղ չկա: Օրը հինգից վեց հարյուր գաղթական է մեռնում: Ողջերին ավելի հարավ ուղարկելու կամ մեռածների թաղելու ժամանակ չկա: Յուսուֆ Զիյա բեյն աղաչում էր դադարեցնել գաղթականների հոսքը դեպի Ռասս ուլ Այն:

Նրան այսպես պատասխանեցին. «Արագացրեք գաղթը: Այդ ժամանակ մեկնելու անկարող մարդիկ կընկնեն ու կմեռնեն քաղաքից ելնելուց մի քանի ժամ անց: Այսպիսով, գավառակը կազատվի թե՛ ողջերից, թե՛ հիվանդներից»:

Տեղական աքսորման հարցով պաշտոնյայի ու *քայմաքամի* զեկույցներից պարզ է դառնում, որ վերջին չորս ամսում 13,000-14,000 հայ է մահացել սովից ու հիվանդությունից:

...Հրամանը հրամանի հետևից գալիս էր: Աբդուլահադ Նուրի բեյը Ռասս ուլ Այնի աքսորման պաշտոնյային ամենախիստ հրամաններն էր տալիս, սակայն դրանք էլ չէին կատարվում:

Սակայն, ավելի լավ է՝ Նայիմ բեյը շարունակի պատմել.

Հալեպից Ռասս ուլ Այնի աքսորման հարցով պաշտոնյային ուղարկված հրամանները չէին կատարվում, - *գրում է նա իր հուշերում:* Նեղը գցելով պաշտոնյա Ադիլ բեյին՝ Աբդուլահադ Նուրի բեյը պարզեց, որ իրականում հայերին անապատ քշելուն դեմ է հենց Դեյր էլ Զորի մութասարիֆ Սուաթ բեյը:

Նուրի բեյը Հալեպ վերադառնալով այդ մասին տեղեկացրեց նահանգապետ Աբդուլիալիկին, որն էլ անմիջապես հեռագրեց Ալի Սուաթ բեյին. «Ռասս ուլ Այնում հազարավոր

հայերի թողնելը կառավարության սուրբ նպատակի հետ չհամաձայնելու օրինակ է: Քշեք նրանց այդտեղից»:

Ալի Սուլաթը պատասխանեց. «Այդ մարդկանց արտաքսելու համար տեղափոխման միջոցներ չկան: Եթե նպատակը նրանց սպանելն է, ես ո՛չ կարող եմ դա անել, ո՛չ էլ հրահանգ տալ»:

Մուստաֆա Աբդուլհալիկն այս հեռագիրն ուղարկեց Կոստանդնուպոլիս, Ներքին գործերի նախարարություն՝ տեղեկանք կցելով Ալի Սուլաթ բեյի մասին¹³:

....

Ռասուլ Այնի քայմաքանը փայլուն գործիք դարձավ Հալեպի բորենիների ձեռքին: Նրանց գործողության համար ազատ դաշտ էր բացվել, քանի որ հասել էին նաև Դեյր էլ Զորի մութաասարիֆ Ալի Սուլաթ բեյի հրաժարականին: Մարտի 17-ին Քերիմ Ռեֆի բեյը սկսեց տեղահանությունը: Այս գործը վստահվել էր չեչեններին, որոնց ղեկավարում էր Ռասուլ Այնի թաղապետ Արսլան բեյը: Նրանց մասին Նայիմ բեյը հետևյալն է գրում իր հուշերում.

Ռասուլ Այնի չեչեններից կազմվեց մի հրոսակախումբ՝ իբր ճանապարհին գաղթականներին հարձակումներից պաշտպանելու համար: Այս հրոսակախումբը զինվեց: Պահապանի անվան տակ այդ մարդիկ իրականում պետք է ճանապարհին կողոպտեին և սպանեին գաղթականներին:

Ռասուլ Այնի ողբերգական դեպքի հրամանը տվեցին ուղիղ Հալեպից: Հրահանգը հասավ այդ հրոսակախմբի պարագլուխներին: Նրանցից մի քանիսը եկան Հալեպ ու հանդիպեցին նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկ բեյի հետ¹⁴:

Վերադարձից 4-5 օր անց Ռաս ուլ Այնի քայմաքանը (Քերիմ Ռեֆի բեյը) գաղտնագրված հեռագրով տեղեկացրեց, որ այդ պարագլուխները «հասել են ու ստացել» կարգադրությունները:

Արտաքսմանը հաջորդեցին կոտորածները: Դրանք տեղի ունեցան այնպիսի վայրերում, որոնք բավական մոտ էին, հիմնականում Ջըրըփի ափերին ու Շեդադդիե իջնող ճանապարհին: Հայերին բաժանում էին խմբերի ու սպանում ամենադատան ձևով: Երբեմն մարդիկ հաջողեցնում էին փախչել: Նրանք հասնում էին Ռաս ուլ Այն, քանի որ անհնար էր ուրիշ տեղ գնալ, ու մյուսներին պատմում էին սարսափելի տեսարանների մասին: Պարկերացնել կարելի է, թե ինչ սրտակեղեք զգացումներ ու ինչ ապրումներ էին ունենում այդ պատմությունները լսող խեղճ, անպաշտպան մարդիկ, երբ գալիս էին նրանց հեյլից ու հրացաններով, մորակների, գավազանների ու ճիպոտների հարվածներով քշում դեպի սպանդանոցներ:

...

...

Գլուխ երրորդ

....

Կառավարությունը սկզբում շատ զգույշ ու շրջահայաց էր վերաբերվում հայերի տեղահանություններին: Պարզ չէր՝ պատերազմն ինչ էլք կունենա: Այդ պատճառով կառավարությունն աշխատում էր փրկել իր դեմքը, կոտորածի նպատակը ծածկել տեղահանության պատրվակով: Սակայն երբ հաղթանակի հանդեպ վստահություն ձեռք բերեց, կեղծելու անհրաժեշտություն այլևս չտեսնելով, սկսեց բաց և անթաքույց

բնաջնջման հրամաններ ուղարկել: Այս պատճառով էլ չեղյալ համարվեց նախապես տրված հրամանը, որով հայ գաղթականներին թույլ էր տրվում բնակվել Հալեպի շրջակայքում¹⁵:

Սակայն այս խստությունը ժամանակի հետ անցել էր, և մեծ թվով հայեր հազար ու մի միջոցներով, հարկապես կաշառքով¹⁶, հաստատվել էին Բաբ, Մաարա, Մանբիջ գյուղաքաղաքներում, այդ շրջանի գյուղերում ու ագարակներում: Գաղթականները նաև հաստատվել էին Մեսքենե, Դիպսի, Աբուհարրար, Համամ, Ռաքքա, Սեբկա, Դեյր էլ Զոր ու մի քանի աննշան վայրերում՝ Եփրատի երկայնքով մինչև Դեյր էլ Զոր: Սա այն ամբողջ ժողովուրդն էր, որ քշվելու էր Դեյր էլ Զոր և սպանվելու այն ժամանակ, երբ կձևավորվեր «Յըլդըրըմ» բանակը*:

Նայիմ բեյ.

«Երբ Մաարայի, Բաբի ու Հալեպի շրջակա գյուղերում մինչև այդ հաստատված հայերին քշելու հեռագիրը եկավ, քայմաքամներն այն աստիճան անգութ հրամաններ ստացան, որ առանց արցունքների հնարավոր չէր կարդալ:

Ժանդարմներին Հալեպից հրաման էր տրվել, որ, ճանապարհներին սոված ու ծարավ թողնելով, հնարավորինս պակասեցնեն գաղթականների թիվը»:

Աբդուլահադ Նուրի բեյը 1915 թ. հունվարի 20-ին գրել է Բաբի գաղթականների արտաքսման գծով պաշտոնյա Մուհարրեմ բեյին.

Համար 344 գաղտնի գրության պատճենը, 1917 թ. փետրը-

* 1917-ի հունիսին Օսմանյան կայսրության ռազմական նախարար էնվեր փաշան ստեղծեց և գործի դրեց «Յըլդըրըմ» բանակախումբը, որը հայտնի է նաև «Կայծակ» բանակախումբ անունով:

վարի 2, Գաղթականների գրասենյակի տնօրենի օգնականի գրասենյակից Բաբի Գաղթականների գրասենյակի տնօրենության արտակարգ ղեկավար Մուհարրեմ բեյին.

«Համոզված եմ՝ Դուք կգնահատեք այն վստահությունը, որ նահանգապետի գրասենյակն ունի Ձեր հանդեպ, նաև՝ դրա շնորհիվ Ձեզ վստահված գործի կարևորությունը: Չպետք է թույլ տաք՝ գեթ մեկ հայ մնա Բաբում:

Արտաքսման կազմակերպման Ձեր վճռականությունն ու ուժը միայն կարող են երաշխավորել դրա արդյունքը: Պարզապես հոգ տարեք, որ ճանապարհներին կամ բաց երկնքի տակ դիեր չմնան: Հաղորդեք առավելագույն գումարը, որ վճարում եք այդ գործի համար վարձած մարդկանց:

Մի՛ զբաղվեք տրանսպորտ հայթայթելով. նրանք կարող են գնալ նաև ոտքով: Մահացածների ցուցակը, որ ուղարկում եք ամեն շաբաթ, մեզ չի գոհացնում: Կարծես այդ մարդիկ լավ էլ հանգիստ ապրում են այդտեղ:

Գաղթը ճամփորդություն չէ: Ուշադրություն մի՛ դարձրեք հուսահատության ու հոգեվարքի ճիչերին ու բողոքներին: Նահանգային կառավարությունից անհրաժեշտ գրություններն արդեն ուղարկվել են քայմաքամին: Դուք պետք է մեծ ջանքեր գործադրեք այս հարցում:

1916 թ. հունվարի 20

Աբդուլահադ Նուրի»

Այս Մուհարրեմ բեյը Բաղդադի նախկին ոստիկանապետն էր և գաղթականների արքայորման հարցով զբաղվող պաշտոն-

Նյաների մեջ ամենաարյունարբուն: Նրան վստահված գործն ամենակարևորն էր, և, որպեսզի նա ազահության պատճառով հանկարծ հանդուրժող չդառնա, ամսական 150 ոսկի էին վճարում: Այս մարդն իրականացնում էր լայնածավալ արտաքսումներ: Միայն նրա պատճառով հազարավոր հայեր ամենաանգութ ձևով զոհվեցին ճանապարհին:

Աբդուլահադ Նուրի բեյն այս անգութ մարդուն աջակից նշանակեց ձիավոր ժանդարմների մի կապիտանի, որն իր հետ Բաբ բերեց հետևյալ նոր հանձնարարականը.

«Բաբ գյուղաքաղաքը դատարկելիս՝ դաժանություններ կատարողներն ազատված են պատասխանատվությունից:

Աբդուլահադ Նուրի»

Այս կապիտանն իր 5-10 ժանդարմներով չխորշեց ոչ մի տեսակ հանցանքից:

Ըստ վերջին հրամանի՝ Բաբի բոլոր գաղթականներն արտաքսվելու էին 24 ժամում: Նրանք կարող էին հագնել, ինչ ուզում էին: Միևնույն է, այս արտաքսումն ավարտվելու էր նրանց մահով: Ձմռանը, ոտաբոբիկ ու բաց գլխով նրանք ընկնում ու մահանում էին ճանապարհին: Բաբից Մեսքենե գնացող ճանապարհի երկայնքով դաշտերը լիքն էին հայերի դիերով: Իմանալով, որ դիերն անթաղ են մնացել, կառավարությունը տագնապի մեջ ընկավ: Լուր ստանալով, որ օտարերկրացիները տեսել են այդ պատկերները, կառավարությունը կարգադրեց թաղել դիերը: Բահեր ու փոցխեր գտան, գերեզմանափորներ նշանակեցին: Այսպիսով, հույս ունեին թաքցնել քրեական հանցանքի հետքերը:

Մահացածների թիվը 15 օրը մեկ հաղորդելու էին Կոստանդնուպոլիս: Սա ևս ապացուցում է, որ գաղթականների գլխավոր տնօրինությունը հիմնվել էր լիովին հանցավոր նպատակով:

Չնայած այս վիճակին՝ Աբդուլահադ Նուրի բեյը դեռևս բավարարված չէր: Գաղթը փեղի չէր ունենում այն արագությամբ, որ ինքն էր պահանջել:

...

...

Իրական սարսափի օրեր էին, որոնց մասին Նայիմը գրում է.

«Կառավարությունը պահանջում էր ոչնչացնել հայերի կյանքն ու պատիվը: Նրանց համար ապրելու, գոյություն ունենալու իրավունք այլևս չկար: Թալեաթ փաշան գրում էր. «Դարեր ի վեր Թուրքիայի համար փորձանք դարձած այս տարրի գոյությունը, վերջին շրջանում ամբողջ Օսմանյան կայսրությունն արյան մեջ խեղդել փորձող հայերի ապրելը ցանկացողները պետք է պատժվեն որպես հայրենիքի դավաճան՝ տարբեր պատրվակներով: Այդ մասին համապատասխան մարմիններին տեղեկացրեք ըստ կարգի»:

Իր հիշողությունների այս մասում Նայիմ բեյն արձանագրել է իրողություններ, որոնք բացառություն են, թե կենտրոնի ուղարկված հանցագործ հրահանգներն ինչ վիճակ են ստեղծել հայերի համար: Մենք նշեցինք այս փաստերից միայն մի քանիսը:

Նայիմը գրում է.

Մի պահ, երբ տիֆը Հալեպում սաստկացել էր, հայերի արտորը մեծ թափ ստացավ: Ոստիկաններն ու ժանդարմները տներից քաշքշելով դուրս էին հանում ու խոզերի պես կապկըպելով քշում էին Աստծուց բացի այլ ապավեն չունեցող խեղձ

հայերին, որոնք մահվան վախից թաքնվել էին: Մի օր մի խեղճ մարդ աղերսագիր էր գրել, որ տիֆով հիվանդ ընտանիքը տնից դուրս են հանել, լցրել աղբի կառքի մեջ և Քարլըք քաղաքից դուրս հանել: Խեղճն աղերսում էր, լացում, որ թույլ տան ևս տասն օր մնա քաղաքում: Այդ դժբախտը չգիտեր, որ մահվան է դատապարտված: Ոչ ոք նրան չէր կարեկցելու: Իմ աշխատելու ժամանակահատվածում մեր տնօրինությունը հայ գաղթականներից 10,000 դիմում ստացավ: Ես չեմ տեսել, որ դրանցից գոնե տասին ընթացք տային:

...

...

Արտաշես* անունով մեկին բռնել էին, որպես կասկածյալի: Նրա մոտ երկար ժամանակ զենք փնտրեցին, բայց չգտան: Ի վերջո, ձերբակալեցին եղբորը և հսկողության տակ վերցնելով ճանապարհին սպանեցին այդ անմեղ մարդուն: Այսպիսով, Հալեպում նմանատիպ հազարավոր դրամաների ականատես եղա, մինչև ինձ ուղարկեցին Մեսքենե, որպես արտաքսման գծով պաշտոնյայի:

Երբ ես մեկնում էի, էյուբ բեյը կանչեց ինձ. «Նայիմ էֆենդի, Մեսքենե ուղարկվող պաշտոնյաներից մենք օգուտ չտեսանք: Հիմա դու ես զբաղվելու այդ հարցով ու տեղյակ ես վերևից եկող հրամաններին: Տես՝ հանկարծ այդ մարդկանց ողջ չթողնես: Թե պետք է, նրանց սպանիր անձամբ. դա մեծ հաճույք է»: Ես մեկնեցի Մեսքենե: Այնտեղ իմացա Աբուհարրարում ժանդարմերիայի տասնապետի գործած ոճիրների մասին: Մնացի երկու ամիս: Միայն մեկ անգամ

* Անտոնյանի հուշերի հայերեն տարբերակում և Աքչամի գրքի թուրքերեն հրատարակությունում այս անունն Արտաշես է, իսկ անգլերեն թարգմանությունում՝ Ասատուր: Մենք օգտագործել ենք առաջին տարբերակը:

իրականացրի գաղթականների արտաքսում: Իմ ուղարկած մարդկանց թիվը չէր գերազանցում երեք տասնյակը:

Երբ դեռ Հալեպում էի, Պոլսից եկավ հետևյալ հեռագիրը.

Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգապետարան ուղղված գաղտնագրված հեռագրի պատճենը, 1915 թ. դեկտեմբերի 14

Բնաջնջման ենթակա ամենակարևոր խումբը հոգևորականությունն է: Մեծ սխալ կլինի նրանց թույլ տալ հեռանալ ու բնակություն հաստատել Սիրիայի և Երուսաղեմի նման վտանգավոր շրջաններում: Կառավարության դեմ չարամիտ դավադրության հակված այս անձանց վերջնական հաստատման լավագույն վայրն այն է, որտեղ նրանց կկոտորեն¹⁷:

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Երբ գնացի Մեսքենե, այնտեղ էր Նիկոմեդիայի (Իզմիթի) ծեր հոգևոր առաջնորդը: Քաշված փոքրիկ վրանի տակ, իր ճակատագրի մասին խորհելով՝ անցկացնում էր օրերը: Իր մոտ գնացածներին ասում էր, որ այս աղետն Աստծուց է, ու ամենքին խորհուրդ էր տալիս զգուշանալ հանցանք գործելուց: Պարզ չէր, թե ինչպես էր որևէ մեկին վսասելու ունակությունից զուրկ այդ մարդը հայտնվել գաղթականների գրասենյակի տնօրենի տեղակալի ուշադրության կենտրոնում:

Էյուբ բեյը լուր էր ուղարկել, թե Նիկոմեդիայի հոգևոր առաջնորդին ինչու եք պահում այդտեղ: Արտաքսեք նրան, թող մեռնի ճամփեզրին: Ես չէի կարող պատասխանել, որ չպետք է այդպես լինի, կամ էլ չեմ կարող այդպես վարվել: Պարզապես մենք նրան չուղարկեցինք¹⁸:

Մի օր էլ նրանք երկու քահանայի բռնեցին և ուղարկեցին Մեսքենե: Հրամանը շատ խիստ էր. պարզապես սպանել: Ես այս երկու քահանային չարտաքսեցի, պահեցի այնտեղ: Չեմ հիշում անունները, բայց կարծես նրանք երկուսն էլ Հալեպում են հիմա¹⁹:

Մեսքենեի ու Աբուհարրարի մեջ գտնվող Դիպիս կոչվող վայրը հանցանքի ամենակարևոր կետերից էր: Մահվան դատապարտվածներին այնտեղ էին սպանում ու մարմինները գետը գցում²⁰: Մեսքենեն ծայրից ծայր լցված էր կմախքներով. այն ոսկորների դաշտի էր նման:

Միայն Հալեպից 200,000 հայեր ուղարկվեցին Ռասա ու Այնի ու Մեսքենեի ճանապարհով, ու այս հսկա թվից միայն 5,000-6,000 մարդ կարողացավ փրկվել: Երեխաներին սպանում էին Եփրատը նետելով: Կանանց ճանապարհներին դաժանորեն ու բարբարոսաբար սպանում էին ժանդարմներն ու տեղի բնակչությունը՝ սվիններով ու հրացաններով:

Գլուխ չորրորդ/2

Հայկական ջարդերը ծրագրելիս ու իրականացնելիս՝ թուրքական կառավարությունն արեց ամեն ինչ, որ քաղաքակիրթ աշխարհում չիմանան այս մասին: Թուրքական կառավարությունն ամեն առիթով անպատկառորեն հերքում էր կոտորածների լուրերը: Սակայն հատկապես ամերիկյան հյուպատոսները Պոլսի իրենց դեսպանությանը հայտնելու եղանակը գտել էին, և դա իսկապես անհանգստացնում էր թուրքական կառավարությանը²¹: Այդ անհանգստության ապացույց է հերևյալ փաստաթուղթը, որը նաև հայերին բնաջնջելու հարցում կառավարության քաղաքականության մեծագույն վկայություններից է:

Ներքին գործերի նախարարության գաղտնագրված հեռագիր Հալեպի նահանգապետարան.

«Ամերիկյան կառավարության ցուցումով Պոլսի դեսպանության՝ վերջերս արած միջամտությունից եզրակացնում ենք, որ որոշ վայրերում ամերիկյան հյուպատոսները գաղտնի եղանակներով տեղեկություններ են հավաքում: Թեև հայտնել ենք, որ հայերի տեղափոխումը հարմարավետ ու ապահով ձևով ենք կատարում, սակայն այսքանը բավարար չէ նրանց համոզելու համար: Աշխատեք, որ հայերի արքայի ժամանակ ուշադրություն գրավող միջադեպեր չլինեն քաղաքների, գավառակների ու բնակության կենտրոնների մոտ: Թող այդտեղ շրջող օտարերկրացիները համոզվեն, որ գաղթի նպատակը միայն տեղափոխությունն է: Այդ պատճառով պետք է ժամանակավորապես կարեկցանք դրսևորել, իսկ հայտնի միջոցառումները (կոտորածները) իրականացնել հատուկ վայրերում: Այդ տարածքները հետազոտող մարդկանց պետք է այլ պատրվակով բռնել և ուղարկել ռազմական դատարաններ»:

Ներքին գործերի նախարար՝ Թալեաթ, 1915 թ. նոյեմբերի 18, [դեկտեմբերի 1]:

(Մակագրված է) Առանց հեռագրի մասին խոսելու՝ հանդիպեք ոստիկանապետին: Իրո՞ք կան այդպիսի հետաքննող անձինք: Նախարարության հրամանի համաձայն՝ այս վայրերում չափավոր գործողություններ կատարեք:

Գաղթականների գլխավոր տնօրենի օգնականին

1915 թ. նոյեմբերի 21

Նահանգապետ՝ Մուստաֆա Աբդուլհալիկ

Ես վստահ էի, որ նման մարդիկ կան, ու ոստիկանապետին քանիցս խնդրել եմ անհրաժեշտ հետաքննություն անցկացնել, բայց՝ ապարդյուն: Եթե նահանգապետարանը նրան զգուշացնի ինչպես հարկն է, գուցե արդյունք լինի: Այս հարցով Ձեր հրահանգն է պետք:

1915 թ. նոյեմբերի 21

Գլխավոր տնօրենի օգնական՝ Աբդուլահադ Նուրի

Դուք պետք է գրեիք նաև արտաքսման պաշտոնյաներին:

Գլխավոր տնօրենի օգնականին

1915 թ. նոյեմբերի 22

Նահանգապետ՝ Մուստաֆա Աբդուլհալիկ

Գրեք Նայիմ էֆենդուն:

(Աբդուլահադ Նուրի)

Գրվել է - թղթապանակ համար 741-16:

Ծանոթագրությունները ցույց են տալիս այն գործողությունները, որոնք կատարվել են հեռագրի կապակցությամբ:

Հետևյալ հեռագրի կրկնօրինակը, որը նույնպես այս հարցին է վերաբերում և ուղարկվել է մեկ ամիս շուրջ, ևս գտնվում է Նայիմի հուշերում:

Հալեպի նահանգապետի գրասենյակ

745

Մեզ հաղորդվել է, որ մի քանի հայ թղթակիցներ այցելել են շրջաններ, նկարել ու վկայություններ են հավաքել աղետալի դեպքերի մասին ու փոխանցել Ամերիկայի հյուպատոսին²²:

Այսպիսի վտանգավոր անձանց պետք է ձերբակալել ու վերացնել:

1915 թ. դեկտեմբերի 24

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Նայիմ բեյը հաստատում է, որ այս նպատակով գաղտնի պաշտոնյաներ են նշանակվել, անգամ ամերիկյան հյուպատոսության մերձակայքում մշտապես լրտեսներ էին ներկա: Մի օր «ժամանակի» կամ մեկ այլ թերթի խմբագիրն էր ժամանել Հալեպ: Նրա հետապնդելուն մեծ կարևորություն տրրվեց, սակայն բռնել չհաջողվեց:

...
...

Գլուխ չորրորդ/3

Հալեպի գաղթականների գրասենյակի գլխավոր տնօրենի օգնական Աբդուլահադ Նուրին ամեն օր բոլոր հանցագործությունների մասին տեղեկությունները հաղորդում էր Պոլիս, ինչպես պահանջվում էր նախարարական մի քանի կարգադրություններով:

Նուրի բեյի հեռագրերից մեկը տեղեկացնում է, թե ինչ մեթոդով են իրենք աշխատում Հալեպում, որ իրականացնեն Պոլսի կենտրոնական կառավարության ցանկությունը:

N 57

Ցեղերի ու գաղթականների վերաբնակեցման գլխավոր տնօրինություն

Հետաքննությունը պարզել է, որ ընդհանուր առմամբ ար-
սորված հայերի 100-ից հազիվ 10-ն են հասել նախատես-
ված վայրեր, մյուսները մահացել են ճանապարհին՝ բնական
պատճառներից՝ սով ու հիվանդություններ: Տեղեկացնում
ենք, որ պետք է փորձել նույն արդյունքին հասնել՝ դաժանո-
րեն վերաբերվելով դեռևս ողջ մնացածների հետ:

1916 թ. հունվարի 10

Գլխավոր տնօրենի օգնական
(Աբդուլահադ Նուրի)

...

*Մենք այսպես էլ նաև ներկայացնում ենք Աբդուլահադ Նուրի
բեյի հեռագրերից մեկը, որը շատ բան է ապացուցում:*

N 76

Ցեղերի ու գաղթականների վերաբնակեցման գլխավոր
տնօրինություն

Պատասխան 1916 թ. մարտի 3-ի հեռագրին

Ստացված տեղեկությունները վկայում են, որ մինչև օրս
Բաբի շրջանում 35,000, Հալեպի արքայի շրջան Բարլըքում
10,000, Դիպսի, Աբուհարրարի ու Համամի շրջանում 20,000,
Ռաս ու Այնում 35,000 և ընդհանուր առմամբ 95,000 հայ մա-
հացել է տարբեր պատճառներով:

1916 թ. մարտի 7

Գլխավոր տնօրենի օգնական
(Աբդուլահադ Նուրի)

...

Երբեմն նույնիսկ ստույգ անձանց ձերբակալելու հրամաններ էին գալիս Պոլսից, որոնց կատարման մասին տեղեկացնում էին կառավարությանը: Հալեպի գաղթականների գլխավոր տնօրենի օգնականին ուղարկված հեղափոխական հեռագիրը ցույց է տալիս, թե այդ կարգադրություններն ինչպես էին կյանքի կոչում:

N 51

Ցեղերի ու գաղթականների վերաբնակեցման գլխավոր տնօրենություն

Ներքին գործերի նախարարության՝ 1915 թ. սեպտեմբերի 9-ի ու նոյեմբերի 20-ի հեռագրերով կրկին հրամայվում է ձերբակալել Հաբեթ Արամյան, Կարապետ Անտունյան ու Արսեն Շահբազյան անունով անձանց²³: Պարզ է դարձել, որ նրանք գտնվում են Ռաս ու Այնում: Տեղեկացնում ենք, որ, ըստ նախարարական հրահանգի, պետք է ի կատար ածվի նրանց հանդեպ պահանջվող գործողությունը: Նահանգապետարանը պետք է նախարարությանը տեղեկացնի կատարվածի մասին:

Գլխավոր տնօրենի օգնական
(Աբդուլահադ Նուրի)

...

Աբդուլահադ Նուրիի հեռագրերից մեկը ցույց է տալիս այն մեթոդը, որով սովորաբար սպանում էին անհատապես արտորված նշանավոր հայերին:

N 76

Ցեղերի ու գաղթականների վերաբնակեցման գլխավոր տնօրենություն

Պատասխան 1916 թ. փետրվարի 10-ի հեռագրին

Հառանի (Թել Աբիյադի) քայմաքանության զեկույցից պարզ է դառնում, որ Ադանայի ոստիկանության ձերբակալած վերոնշյալ մարդը ոստիկանների վերահսկողությամբ բերվել է այստեղ: Մարդին ուղարկվելու ճանապարհին պահապանները նրան սպանել են փախուստի փորձի համար:

1916 թ. փետրվարի 17

Գլխավոր տնօրենի օգնական

(Աբդուլահադ Նուրի)

Անհայտ մնալու դատապարտված զոր նահատակին է ակնարկում այդ հեռագիրը: Ո՞վ գիտի: «Փախուստի փորձի համար» արտահայտությունը սպանելու հիմնական պատրվակն էր:

Ընդհանրապես, առանձին ու հատուկ վերահսկողությամբ ուղարկված մարդիկ արդեն դատապարտված էին մահվան:

Նայիմն իր հուշերում գրում է այդ մասին:

«Գոյություն ուներ նաև հատուկ վերահսկողության տակ գտնվող մարդկանց աքսորելու խնդիրը: Այդ դժբախտությանը ենթարկվածների համար ապրելու հույս ու հավանականություն այլևս չկայր: Նրանք հիմնականում կասկածելի համարվելու պատճառաբանությամբ բերման ենթարկված երիտասարդներ էին:

Սկզբում նրանց լցնում էին Հալեպի բանտի բակի նեղ ու կեղտոտ սենյակը: Անգամ շները չէին ապրի այնտեղ: Տասըտասնհինգ օր կիսատված պահելուց հետո նրանց դուրս էին բերում ճանապարհ՝ կապկպած ձեռքերով, ժանդարմների ուղեկցությամբ: Քանի որ ժանդարմներն արդեն ստացած էին լինում հրահանգը, նրանց սպանում էին ճանապարհին, անապատային վայրերում: Հետո գաղթականների գլխավոր

տնօրենի օգնականին այդ մասին տեղեկացնում էին հետևյալ եղանակով. «Անհատները, որոնք, ըստ հրամանի, վերահսկողության տակ էին վերցված, հասել են իրենց աքսորի վայր»: Այդ մարդիկ հաստատ դատապարտվել էին մահվան:

Մենք արդեն հաղորդել էինք, որ այդ խեղճերին ենթադրաբար ուղարկում էին սկզբում Դիարբեքի, իսկ հետո սկսեցին ուղարկել Մարդին, ինչպես ցույց է տալիս մեր ներկայացրած՝ Աբդուլահադ Նուրի բեյի այս հեռագիրը:

...

Գլուխ չորրորդ/4

Դրանից մի քանի շաբաթ առաջ փորձ եղավ որբանոց բացել Հալեպում: Որբերին հավաքում էին փողոցներից՝ ոչ թե խղճահարությունից ելնելով, այլ համաճարակից զգուշանալով: Նրանք դառնում էին տարբեր համաճարակների, հատկապես տիֆի տարածման պատճառ, երբ թափառում էին փողոցից փողոց: Այս մասին տեղեկացված կառավարությունը, վախենալով, որ երեխաներն այսպես կփրկվեն, անմիջապես ուղարկեց հետևյալ հրամանը.

Հալեպի նահանգապետարան

Նման որբանոցի անհրաժեշտություն չկա: Հիմա զգացմունքների վրա ժամանակ վատնելու և կերակրելով նրանց կյանքը երկարեցնելու պահը չէ: Ուղարկեք անապատ ու այդ մասին տեղյակ պահեք մեզ:

1915 թ. սեպտեմբերի 21,

Ներքին գործերի նախարար՝
Թալեաթ

Ըստ այս կարգադրության՝ Հալեպի Գաղթականների գրասենյակի տնօրինության օգնականի գրասենյակը նոյեմբերի 16-ին հեռագրեց Պոլիս՝ Ցեղերի ու գաղթականների գլխավոր տնօրինություն, որի մասնաճյուղն էր ինքը:

N 31

Ցեղերի ու գաղթականների գլխավոր տնօրինություն

Որբանոցում կան 400-ից ավելի տղաներ, նրանք ևս քարավանների ուղեկցությամբ կուղարկվեն աքսորի վայրեր:

1915 թ. նոյեմբերի 26

Գլխավոր տնօրենի օգնական
(Աբդուլահադ Նուրի)

...

N 63

Ցեղերի ու գաղթականների գլխավոր տնօրինություն

Որբերին որոշված վայրն ուղարկելով այն ժամանակ, երբ սաստիկ ցրտերը շարունակվում են, կերաշխավորվի նրանց հավերժական հանգիստը²⁴: Հետևաբար թույլտվություն ենք հայցում անհրաժեշտ գումարի չափաբաժինը բաց թողնելու համար:

1916 թ. հունվարի 28

Գլխավոր տնօրենի օգնական
(Աբդուլահադ Նուրի)

...

...

Այսպիսով, այդ որբերին հավաքեցին ռազմակայանների մոտ: Քանի որ Մեսթենեն ևս կայանի էր վերածվել, այնտեղ ևս երեխաներ հավաքվեցին: Նրանք յուրաքանչյուրին տալիս էին օրը մի փոքր կտոր հաց ու երբեմն, մեկ-երկու շաբաթը մեկ, տաք ջուր, որն ապուր էր հիշեցնում:

Սակայն կենտրոնական կառավարությունն իսկույն իմացավ այս մասին: Դրան հաջորդեց հրամանը՝ երեխաներին վերցնել զինվորական իշխանությունների ձեռքից ու ոչնչացնել:

Գաղտնագրված հեռագիր Ներքին գործերի նախարարությունից Հալեպի նահանգապետարան

Ռազմական նախարարության հրամանով զինվորական բազաների հավաքած նշված անձանց (հայերի) երեխաներին Գաղթականների գրասենյակի տնօրինությունների պահպանության տակ առնելու պատրվակով ոչնչացնել՝ առանց կասկածի հիմքեր տալու: Արդյունքի մասին տեղեկացնել:

1916 թ. մարտի 7

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

Գլուխ չորրորդ/5

Կառավարությունը մի կողմից խրախուսում էր հանցագործությունները, մյուս կողմից շարունակում էր հորդորել, որ շրջանների պաշտոնյաները լավ ըմբռնեն նպատակներն ու ջանասիրաբար իրագործեն դրանք: Դա նրանց գործում դրսևորած հայրենասիրության լավագույն օրինակն ու ամենազեղեցիկ հատկանիշն էր համարվում:

Ահա այդ մասին մի խոսույն փաստ՝ հեռագրի տեսքով:

Հալեպի նահանգապետարան,

Արդեն հաղորդվել է, որ կառավարությունը Ջեմիեթի (երիտ-թուրքերի կոմիտեի) հրամանով որոշել է լիովին բնաջնջել Թուրքիայում բնակվող հայերին: Այս հրամանին ու որոշմանն ընդդիմացողները չեն կարող մնալ պետական համակարգում²⁵: Կանայք, երեխաները, հաշմանդամները պետք է ոչընչացվեն՝ առանց խղճմտանքի և մեթոդների խտրության:

1915 թ. սեպտեմբերի 16

Ներքին գործերի նախարար՝

Թալեաթ

...

Գլուխ չորրորդ/6

Ջորահավաքից կարճ ժամանակ անց ընդունված օրենքը մահապապիժ էր սահմանում զենքը չհանձնողներին: Թուրքերը, հայերը, քրդերը շտապեցին հանձնել իրենց զենքերը, անգամ՝ դանակները: Կառավարությունը թուրքերից ու քրդերից զենքերը չվերցրեց, փոխարենը՝ հայերից խլեց անգամ դանակները:

Սա շատ ավելի վաղ տեղի ունեցավ, քան ընդհանուր գաղթը: Մինչև 45 տարեկան բոլոր տղամարդիկ բանակում էին, բոլոր զենքերը, նույնիսկ դաշույնները՝ բռնագրավված: Մտավորականությունն ու մեծահարուստները բանտերում կամ արքայաբաններում էին: Այդ ինչ կարող էր անել ծերերի, կանանց ու երեխաների խեղճ բազմությունը, որ կառավարությունն ընդ-

հանուր գաղթ իրականացրեց՝ պարճառաբանելով, թե հայերը սպառնալիք են նահանջող օսմանյան բանակի համար: Բացի դրանից՝ ռազմաճակատից հեռու և Պոլսի արվարձաններում բնակվող հայերի արտաքսումն ու կոտորածն ինչպես կարելի էր բացատրել, եթե նրանք այդքան մեծ հեռավորությունից վրանգ չէին կարող ներկայացնել բանակի համար:

Նայիմ բեյի հուշերում այս մասին մի հատված կա, որն արտադրում են այսպես:

«Այս ոճրի իրականացման ժամանակ Թալեաթ փաշան փորձում էր իր անմեղությունն ապացուցող փաստաթղթեր ձեռք բերել: Նա պաշտոնյաներ էր նշանակել այդ հարցը կարգավորելու համար և գումար ծախսել պետական բյուջեից: Հայթայթելով ենթադրաբար հայերի տներից գտնված զենքերի, հրացանների նկարներ՝ նա ցանկանում էր արդարացնել իր մեղքը: Ցավոք, եթե զենքերի առկայությունն անհնազանդության ու ապստամբության նշան է, ապա Թուրքիայի ամբողջ տարածքը պետք է համարվեր ապստամբության որջ: Թուրքական ցանկացած գյուղ մտնելիս՝ կգտնեք հարյուրավոր «մարտիներ» ու «մաուզերներ»: Այս զենքերը ոչ թե ապստամբության կամ խժդժություն հրահրելու, այլ գույքն ու կյանքն ավազակներից պաշտպանելու համար են: Սրանից է բխում այն ճշմարտությունը, որ կառավարությունն իր բնակիչներին անապահով կացության մեջ էր դրել»:

Վերոնշյալ հեռագրից պարզ է, որ կառավարության առաջարկով իր ուղարկած հանձնաժողովը կեղծ ապացույցներ պետք է ներկայացներ հայերի մեղավորության մասին: Հանձնաժողովի հրատարակած հատորն ամբողջովին հիմնված է նման ապացույցների վրա:

...

Եզրակացություն

Պոլսից եկող կարգադրությունները հայ գաղթականների հանդեպ «թուրք ժողովրդի» գործած մեղքերն անպատիժ թողնելու և հանցագործությունները քաջալերելու մասին վրստահաբար նպատակ չունեին ապացուցել թուրքերի անմեղությունը:

Նույնիսկ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի ժամանակ հայերի կոտորածներին չմասնակցած ու հայ հարևաններին պաշտպանած Ադրյամանի մուսուլմանները, Քիախթայի քրդերը, Դերսիմի ժողովուրդը, Մուշի թուրքերն այս անգամ ոգևորությամբ ընդունեցին հայասպանության ծրագիրը: Միություն և առաջադիմություն կուսակցությունն իր թույնը տարածել էր նաև այս շերտերում. նա կարողացել էր կոտորելու ու թալանելու բնագղն արթնացնել ամենքի մեջ:

Նայիմը գրում է իր հուշերում. «Պատերազմը նոր էր սկսվել, երբ սովն ու չքավորությունը գլուխ բարձրացրին թուլացած Թուրքիայում: Այդ թշվառներին խաբել ու կշտացնել էր պետք: Եվ դա կարող էին անել հայերից մնացած ապրանքներն ու փողը: Էրզրումի, Բիթլիսի, Դիարբեքի, Մամուրեթյուլազիզի ու Սվազի նահանգներում սկսվեցին հայերի կոտորածներն ու նրանց ունեցվածքի թալանը: Այս զբաղմունքը մարդկանց ստիպեց մոռանալ ամեն ինչ: Նաև անհրաժեշտ էր զբաղեցնել Սիրիան ու Միջագետքը: Միջագետքի դաշտերը, Սիրիայի ճանապարհներն ու անապատները լցվեցին հայերով: Դարերի վեր հայերի արժանապատիվ աշխատանքով կուտակված

մեծ հարստությունը կորչում էր իր ամբողջ շքեղությամբ ու մեծությամբ: Ինչ մնաց, փոշիացավ անապատներում, որտեղ ապրող մարդիկ արագ հասկացան, որ գաղթականների այս քարավաններն իրենց էին ուղարկվում որպես զոհեր: Սկզբում նրանք մանր-մունր հարձակումներ էին գործում: Բայց երբ հասկացան, թե ինչ է պահանջվում իրենցից, գործն ավարտեցին զանգվածային կոտորածով: Միջադեպերից ամենասրտաճմլիկները տեղի էին ունենում հենց այդ անապատներում»:

Ոչ միայն հայերի հարստությունն էին գողանում, այլև կանանց, աղջիկներին ու երեխաներին: Քանի՞ թուրք կա, որ չի օգտվել այդ թալանից: Քանի՞ թուրքի տուն կարելի է գտնել, որտեղ չկան առևանգված հայ կին, աղջիկ կամ տղա:

Բժիշկ Ավետիս Նաքրաշյանի Նամակն Անտոնյանին

1925 թ. հոկտեմբերի 6

Նյու Յորք

Պարոն Ա. Անտոնյան

Սիրելի՛ վտարանդի հայրենակից,

Ստացա սեպտեմբերի 21-ի Ձեր նամակը: Ներողամիտ եղեր ուշ պատասխանելու համար: Բոստոնում էի մի քանի օրով: Վստահ չեմ, թե կարող եմ պատասխանել Ձեր երկու հարցերին: Հայի համար հեշտ չէ որոշել, թե որն է իր կյանքի ամենատխուր կամ ամենաերջանիկ պահը: Մշտապես փոթորկոտ ծովում փոքր, հնամաշ նավակով ճամփորդողը չի կարող որոշել՝ ինչն է ամենատխուրը, ինչը՝ ամենաերջանիկը: Ես իմ բժշկական գործունեությունը սկսել եմ 1894 թ. վերջին, երբ այլևս հավատ չունեի հայկական բարեփոխիչ շարժման հանդեպ: Սակայն նախքան անվտանգ վայրում աշխատելը ես Մարաշում էի ու ականատես եղա առաջին կոտորածին: Սա տխուր շրջան էր կյանքիս հենց սկզբում, երբ լի էի հասարակության ու

ազգի հանդեպ երիտասարդական հավատով: Ինձ փրկեց միայն այն հանգամանքը, որ աշխատել էի նահանգապետի համար: Նա ինձ ոստիկանի ուղեկցությամբ ուղարկեց Այնթապ: Ես Մարաշի ու շրջակա տարածքների ընկերներին թողեցի ճակատագրի հույսին: Իմ գնալը միայն ինձ համար էր երջանկության առիթ: Դժվար ու դժբախտ պայմաններում, այնթապցի մի չերքեզ վարձելով, երկու եղբայրներին հետ գիշերները ճամփորդելով, գնացի Իսկենդերուն՝ Այնթապում թողնելով ծնողներին, հարյուրավոր բարեկամների ու ընկերների: Այնթապում ջարդը սկսվեց հենց Ալեքսանդրետ հասնելու օրը: Այդ ընթացքում շարունակվում էին Զեյթունի ապստամբությունն ու այլ կոտորածներ: Մի օր Ալեքսանդրետի նահանգապետը հրամանագիր ստորագրեց, որ ինձ աքսորեն: Ես ինքս կարողացա կարգավորել իմ աքսորն ու մակույկով հասա Մերսին: Ամիսներ անց Ադանայում վերսկսեցի վիրաբույժ ու բժիշկ աշխատել: Մեկ տարի անց, 1897 թ., մեկնեցի Փարիզ ու Լոնդոն: Այդ ժամանակ, «հայերի բարեկամներ» ունեցող անգլիական քաղաքներով ճամփորդելիս, հանդիպեցի տիկին Մելինգերին՝ ամերիկացի մի կնոջ, որը դասախոսություններ էր կարդում ու դրամահավաքներ կազմակերպում: Տիկին Մելինգերն ու տիկին Ֆրեյզերն այն անձինք էին, որ նվիրվեցին մեզ ու իրենց զոհեցին հանուն մեզ նման հայերի: Ֆրեյզերը մահացավ Բուլղարիայում: Մելինգերն ամուսնացավ ինձ հետ, սակայն մեկ տարի անց նա մահացավ՝ Հաճընի ճանապարհին լույս աշխարհի բերելով մի աղջկա: Երբ նա ողջ էր, մշտական գրագրության մեջ էր Անգլիայի երևելի անձանց ու պաշտոնյաների հետ: Նա օգնեց զգալիորեն մեղմել հայերի ցավը: Նրա մահն իմ կյանքի դժնի էջերից է:

Հետո հռչակվեց Թուրքիայի սահմանադրությունը: Ես այդ ժամանակ Պոլսում էի: Երջանկության մեծ առիթ էր, ու մենք ուրախությունից արտասվում էինք: Կարծում էի՝ մենք էլ ազատ ու մարդավայել ապրելու հնարավորություն ունենք: Իմ ուրախությունը միայն երկու շաբաթ տևեց: Երբ խոսում էի երիտթուրք առաջնորդներից մեկի՝ ակնաբույժ Էսադ փաշայի հետ, նա ասաց, որ Օսմանյան կայսրության անկման պատճառը քրիստոնյաներն են: «Աստված պատժեց Շեյխ ուլ Իսլամ Ջեմբիլի Ալի էֆենդուն, քանի որ նա Սուլթան Սելիմին թույլ չտվեց կոտորել բոլոր քրիստոնյաներին», - ասաց նա: Ես կռահում էի, թե ինչ նպատակներ ունեն երիտթուրքերը, դրա համար էլ չգնացի Ադանա: Տեղափոխվեցի Պոլիս: Սպասում էի առանց աշխատելու, քանի որ գործս ու բուժկետս Ադանայում էին: Սպասում էի իրավիճակի բարելավմանը: Հավատս կորցրի՝ ամեն օր լսելով, որ Ադանայում զենքի դիմելու ցանկություն կա: Ես չէի հավատում զենքին. այդ միտքը վտանգավոր էի համարում: Երանի թե սխալվեի: Չեմ կարող պնդել, որ փողոցում զենք կրող ամեն մի տղա կամ էլ շուկայում զենք վաճառելը դարձան կոտորածների պատճառ: Բայց նաև այս ամենը հիմք հանդիսացավ ու առիթ տվեց կոտորածի: Մի օր հազարավոր հրացանների ձայնից զարթնեցի Գեդիկ Փաշայում գտնվող իմ տանն ու դուրս եկա: Դիվան Յուլու վայրում տեսա, թե ինչպես զինվորը կրակեց մի սպայի, ու սա գետնին տապալվեց: Վազեցի տուն: Տխուր էր: Ընտանիքիս հետ փախա Այ Ստեֆանո: Երբ բանակը եկավ, մենք տոնեցինք նրանց գալուստը, ուրախացանք, սակայն այդ ժամանակ էլ տեղի ունեցավ Կիլիկիայի կոտորածը: Իմ երկու տներն ու խանութներն այրվեցին: 1910 թ. ամառն անցկացրի Ամերիկայում: Հույս

ունեի հաստատվել այնտեղ և, երկրի մասին հայրենակիցներիս լուրեր պատմելով, խրախուսել, որ հետևեն իմ օրինակին: Նյու Յորքում սկսեցի գրել: Որոշ հարգված հայեր գրելու իմ ոճը վտանգավոր էին համարում: Նրանք փորձում էին համոզել, որ դադարեցնեմ: Ես ասացի. «Երանի թե սխալ լինեին իմ գրածները: Բայց եթե չեք ուզում, չեմ գրի»: Նույն տարվա նոյեմբերին վերադարձա Ադանա ու վերակառուցեցի տներս: Բալկանյան պատերազմի օրերին, Բույուքադայում բնակվելիս, լսում էի Չաթալջայից եկող թնդանոթի զարկերը՝ հուսալով, որ օգնությունը չի ուշանա: Հետևանքը Ձեզ արդեն հայտնի է:

Մեծ պատերազմը¹ սկսվելու վրա էր: Ես Պոլսում էի ու սպասում էի արդարության հաղթանակին: Հավատն ինձ հետ պահեց հեռանալուց: Ասում էի, որ պետք է սեփական աչքերով տեսնեմ հաղթանակը: 1915 թ. ձերբակալությունների ժամանակ ինձ տարան Այաշ: Տխուր ժամանակաշրջան էր, բայց հույս կար ու միշտ էլ կա:

Այաշի բանտից իմ ազատվելը երջանկություն էր՝ միախառնված որոշ դառը հուշերի հետ: Ես Փերայում երեք տարի զինվոր էի, ու իմ միակ ուրախությունն ինձ նման հայ երիտասարդների հետ ծառայելն էր: Ի վերջո, ականատես եղա Դաշնակիցների նավատորմի ու գեներալ Սարեյի ժամանմանը: Հետո գնացի բանտ, մտա ներս:

Տեսա մարդկանց, որոնք անհաշիվ սպանություններ ու կոտորածներ էին կատարել: Խոսեցի մի քանիսի հետ: Ահարկու դեմքեր էին, որոնք իշխանություն են ունեցել մի բառով սպանելու հազարավոր մարդկանց:

Դա այն օրն էր, երբ Ձեր գրած գիրքը տեսա: Մասնավորապես՝ կարդացի Թալեաթի ու Աբդուլահադ Նուրիի նամակագ-

րութունը: Հասկացա գազան Նուրիի խաղացած դերը: Այդ մասին ուրիշներից էլ էի լսել: Հալեպում մարդիկ դողում էին՝ այդ անիծված դևի անունը լսելիս: Ինչպես էր նա փոխարինել Դեյր էլ Զորի ու այլ վայրերի նահանգապետերին, ինչպես էր Հալեպի շուրջ հանգրվանած մարդկանց տվել դահիճների ձեռքը: Բայց նրան դժվար էր գտնելը: Անունն անգամ չկար: Ես հետաքրքրվեցի Անգլիայի դեսպանությունում, հարցրի կոմիսար Ռեիսլիկին: Նա պատասխանեց, որ այդ անունը ծանոթ չէ: Մի օր Բոսֆորի վրա, Փաշա Բահչեի մոտերքում, նավի վրա էի, մեկ էլ մի հաշմանդամ բարևեց կողքիս նստածին: Սա ոտքի կանգնեց ու բարևն առավ: Հարցրի. «Ո՞վ էր այդ մարդը»: Նա պատասխանեց. «Աբդուլահադ Նուրին»: Երբ հարցրի, թե ինչ է նրա պաշտոնը, պատասխանեց, որ չգիտի: Ես այդ մարդուն հաջորդ շաբաթ ամեն օր փնտրեցի Ներքին գործերի, Արտաքին գործերի ու մյուս նախարարություններում, ոստիկանության շարքերում: Ի վերջո, հեռախոսով հարցում արի Ծովային հաղորդակցության տնօրինության ղեկավարներին ու իմացա, որ նա այդ տնօրինության քարտուղարն է:

Հանդիպեցի դատավորների կոլեգիայի անդամ Մուստաֆա փաշային ու ռազմական տրիբունալի ղեկավարին: Որոշեցինք, որ դատ բացեմ: Սակայն բոլոր առումներով բազում խնդիրներ առաջացան, որոնք խոչընդոտ հանդիսացան ռազմական տրիբունալ դիմելու համար: Ես շտապեցի Մուստաֆա փաշայի մոտ ու ասացի, որ եթե այդ օրը չձերբակալեն այդ մարդուն, նա կփախչի: Փաշան հրաման տվեց, և երկու ոստիկան ու մի սպա մեքենայով գնացին բռնելու: Ես նստած էի Մուստաֆա փաշայի մոտ: Ներս բերեցին այդ հրեշին:

Պետք է ասեմ, որ կյանքիս երջանկագույն պահն էր: Դիակի

պես գունատ մարդը դողում էր ոտքի վրա: Մտքիս եկան Քաթմայի 60,000 տղամարդիկ ու 300,000 կանայք, տաղանդավոր երեխաները, առևտրականներն ու արհեստավորները՝ Դեյր էլ Զորի խեղճ մարդիկ: Կարծես նրանք բոլորն ինձ ծափահարում էին գերեզմանից: Մտովի տեսա Մեսքենեում գետը լցված հրեշտակների պես հարյուրավոր փոքրիկների, որ իրենց ձեռքերն էին ինձ մեկնում: «Կախել», - գոռաց Քյուրտ Մուստաֆա փաշան: «Դու խիղճ չունես: Սուրբ գիրքը ներում է գործած բոլոր մեղքերը», - իմ առաջ լացում էր այս անսիրտ մարդը, որը հարյուր հազարավորների էր լացեցրել: Որքան երջանիկ էի ես:

Եկավ դատաքննության օրը: Ես խոսեցի կես ժամից ավելի: Նուրին լացում էր ու դողում: Ես տվեցի քսանից ավելի վկաների անուններ, վկայակոչեցի Քիլիսի նահանգապետ Իհսան բեյին: Նուրին Իհսան բեյին Հալեպ էր կանչել ու հարցրել, թե ինչու են Քիլիսում հայեր մնացել: Բեյը պատասխանել էր, որ իրեն տրված հրամանում զինվորների, արհեստավորների, բողոքականների ու կաթոլիկների ընտանիքները բացառություն են կազմում: Աբդուլահադ Նուրին պատասխանել էր, որ «գաղթի նպատակը բնաջնջումն է» ու պետք է քշել նրանց: Իհսան բեյը մերժել էր՝ շեշտելով, որ կենթարկվի միայն պատժողական հրամանի: Նրան ազատել էին աշխատանքից:

Դատաքննությունն արդեն ավարտվում էր: Ես արդեն պատկերացնում էի նրան կախված Բայազետի հրապարակում, ինչպես Քուրդ Մուստաֆա փաշան էր խոստացել ինձ: Դա մի այլ հաճույք կլիներ: Մի օր դուռս ծեծեցին, ու մի հոգևորական, որին չէի ճանաչում, ներս մտավ: Նա ասաց. «Ես Հայր Տաճատն եմ: Իմ այցի փողը տվել է Անկարայի կառավարությունը, որպեսզի ես ազատեմ Աբդուլահադ Նուրիին:

Այդ գազանն Անկարայի Արտաքին գործերի նախարար Յուսուֆ Քեմալի եղբայրն է: Եթե դուք այդ շանը կախեք այստեղ, երկուսից երեք հազար հայերի կկոտորեն այնտեղ: Աղաչում եմ, ազատեք նրան»:

Տխուր պահ էր: Երազներս հօդս ցնդեցին: Խնդիրն այլևս անցյալին չէր վերաբերում, այլ՝ ապագային: Ինչ կարող էինք անել: Վրիժառությունը և արդարությունը լավ ու գեղեցիկ են հնչում, սակայն խնդիրն արդեն մի քանի հազար հայերի կյանքին էր վերաբերում: Ասեմ, որ ողբերգությունների շղթան այդտեղ չավարտվեց: Մինչ մենք աշխատում էինք լուծում գտնել և մեր գործը կազմակերպել, Ֆերիդ փաշայի կառավարությունը հրաժարական տվեց ու փոխարինվեց ազգայնականներին հարող կառավարությամբ: Ռազմական տրիբունալի կազմը փոխվեց: Երբ ինձ կանչեցին տրիբունալ, առաջին բառերը, որ լսեցի, սրանք էին. «Դուք մեղադրում ու նեղացնում եք մի ազնիվ, արժանապատիվ պաշտոնյայի, որը հավատարմորեն պաշտպանում է իր երկրի ու բանակի շահերը»: Պարզ չէր, թե ում պետք է ես պաշտպանեի՝ ինձ, Աբդուլահադին, թե՞ Անկարայի ծայրահեղականներին: Դատավարությունը կարճ տևեց: Նրանք ասացին, որ սպասեմ, ու ինձ ի պահ հանձնեցին մի ոստիկանի: Սպասեցի մեկ ժամ: Եթե կուզես, դա էլ կարող եմ համարել կյանքիս ամենատխուր պահը: Մի ժամ հետո ինձ թույլ տվեցին գնալ տուն: Մուստաֆա փաշային բանտ նետեցին, նա մի կերպ կաշին փրկեց: Աբդուլահադին ազատ արձակեցին: Բայց սա վերջը չէր: 1921 թ. ես մեկնեցի Ադանա՝ գործերիս և ունեցվածքիս տեր կանգնելու: Շուտով մեջտեղ եկավ Անկարայի համաձայնագիրը: Ես առաջիններից մեկը փախա՝ հետևում թողնելով 50,000

հայերի և իմանալով նրանց գլխին գալիքը: Գիտեի, որ նրանց երազած Կիլիկիան կորսվել է:

Վերջին տխուր պահը, որից մի կերպ խուսափեցի, Բալըքեսիրում էր: 1922 թ. այնտեղ գնացի եղբորս տեսնելու և աշխատելու: Հույներ կային: Ամեն ինչ խաղաղ էր, բայց սկսվեց Աֆյոն Կարահիսարի գրոհը: Մի քանի օր անցավ: Լուրեր տարածվեցին, որ հույն զինվորները փախել են: Նույն օրը եղբորս կնոջ ու երեխաներից մեկի հետ գնացք նստեցի: Սա տեսնելով ոմանք մտածեցին, թե գիժ եմ: Եթե միայն գժված լինեի... Միայն երկու բարեկամներիս երեխաներին ասացի, որ հետս գան: Այդպես էլ եղավ: Մենք շարժվեցինք ժամը չորսին ու հասանք Բանդըրմա: Նույն երեկոյան ճանապարհը փակեցին, և չեթեական ավազակախմբերը՝ լցվեցին ու կոտորեցին բոլոր քրիստոնյաներին: Մի նավակով մենք մի կերպ անցանք Հռոդոս: 36 ժամ չէի քնել, թափառել էի ափերին նավակ գտնելու համար: Խուճապն արդեն տարածվել էր:

Կոստանդնուպոլսից Եգիպտոս գնալու համար մուտքի արտոնագիրն իմ և ընտանիքիս համար մեծ ձեռքբերում էր: Արաբների մեկ ու կես տարվա ապստամբությունից հետո Բրիտանական տիրապետության տապալումն ու Զազլուլի** աջակիցների հաղթանակը տեսնելուց հետո ժամանեցինք Ամերիկա: Այստեղ ստացած ընդունելությունը ևս իմ երջանիկ օրերից էր: Ես այժմ քննություն եմ հանձնել ու արդեն պաշտոնապես բժիշկ եմ:

* Օսմանյան կայսրությունում ավազակներին, հանցագործներին բանտերից հանում էին և պատժիչ զորախմբեր ստեղծում թալանին, ջարդերին, զորքին աջակցելու նպատակով: Այդ խմբերը կոչվում էին չեթե (*çete*):

** Սաադ Զազլուլ (1859-1927) - եգիպտոսցի իրավաբան, հեղափոխական, որը 1924 թ. հունվարի 26-ից նոյեմբերի 24-ը Եգիպտոսի վարչապետն էր:

Այժմ, սիրելի պարոն Անտոնյան, Դոնք որոշեք, թե ինչն է այս կարճ պատմության մեջ ավելի տխուր, և ինչն է ավելի երջանիկ: Չգիտեմ, թե որն է Ձեր այս հետաքրքրվածության պատճառը: Շուտով կհրատարակվի «Այաշի պատմությունը» նկարազարդ գիրքը: Ես մի օրինակ կուղարկեմ Ձեզ: Այդ գրքի համար նկար եմ պատվիրել, որը կցում եմ: Կաշխատեմ մի քանի լուսանկարներ ևս ուղարկել Ձեզ:

Հարգանքով՝

Նաքքաշյան

Թարգմանել է Ջենիֆեր Մանուկյանը:

Հավելված 3

Արամ Անտոնյանի նամակը Մերի Թերզյանին

Դոկտոր Մերի Թերզյանին
Մելրոզ հաստատություն
12 Կլոս Բելմոն փողոց
ժնւ, Շվեյցարիա

1937 թ. հունիսի 28
Փարիզ

Տիկին,

Ներեցեք, եթե ուշ եմ արձագանքում հունիսի 14-ի Ձեր նամակին: Անհրաժեշտություն առաջացավ կարդալու մի շարք հին թղթեր ու գրառումներ, որոնք տարիներ առաջ մի կողմ էի դրել: Դա որոշ ժամանակ խլեց:

Իմ պատճենած հեռագրերի բնօրինակները գտնվում են Լոնդոնի հայկական բյուրոյում, որտեղ Մանչեստրի հայ ակա-նավոր դեմքերի հանձնարարությամբ անգլերեն է թարգման-վել գիրքս: Կարծում եմ՝ Ձեզ մոտ կա անգլերեն տարբերակը: Դա ընդամենը սեղմագիրն է, որ հրատարակվեց *"The Memoirs of Naim Bey: Turkish Official Documents relating to the Massacres*

of Armenians”¹ վերնագրով և Լորդ Գլադսթոնի նախաբանով: Այնուամենայնիվ, հեռագրերն ամբողջությամբ ներկայացված են այդ սեղմագրում: Նախքան հրատարակումը ես Լոնդոնից հեռացա: Հետս վերցրի միայն այն բնօրինակները, որոնք արդեն լուսանկարվել էին և երևակվել: Մնացածը թողեցի Լոնդոնում, որպեսզի դրանք ևս պատճենահանեն: Այս մասին լիովին մոռացել էի մինչև այն օրը, երբ դոկտոր Նաքքաշյանի ցուցմունքի հիման վրա ձերբակալվեց Աբդուլահադ Նուրի բեյը՝ Հալեպի գաղթականների գրասենյակի նախկին փոխտնօրենը, Պոլսի նավատորմի վարչության երբեմնի պաշտոնյան: 1920 թվականն էր: Այդ հրեշը լիովին կատաղած էր իր ձերբակալությունից, որը կարող էր ճակատագրական ավարտ ունենալ: Նա պետք է դատվեր բոլորին հայտնի ռազմական տրիբունալում, որը նախագահում էր Քուրդ Մուստաֆա փաշան: Նա Պոլսում արդեն մի քանի չարաբաստիկ եղեռնագործների դատապարտել էր ու կախաղան բարձրացրել:

Նաքքաշյանը Պոլսո Ջավեն պատրիարքի միջոցով դիմեց հայկական ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշային, որ նա ինձ օգնի այդ դատավարության համար պատրիարքարան ուղարկել գրքումս վերարտադրված փաստաթղթերի բնօրինակները: Ես ստացա Պողոս Նուբար փաշայի նամակն ու անմիջապես գրեցի Լոնդոնի հայկական բյուրո, որ իրենց ունեցած բոլոր բնօրինակներն ուղարկեն պատրիարքարան, ինչը և արեցին: Միևնույն ժամանակ ես ուղարկեցի վկայությունների մի երկար շարք, որ Նայիմ բեյն էր գրել Աբդուլահադ Նուրի բեյի մասին: Դա մի մեղադրական փաստաթուղթ էր իր զարհուրելի ղեկավարի մասին: Ուղարկել եմ նաև տանն ունեցած մի քանի

բնօրինակներ, որտեղ նշումներ կան Աբդուլահադ Նուրիի բեյի մասին:

Դատավճիռը, սակայն, չկայացվեց: Աբդուլահադ Նուրիի եղբայրը՝ Յուսուֆ Քեմալ բեյը, որ Անկարայում նստող Ազգային Մեծ ժողովի կառավարության արտաքին գործերի նախարարն էր, Պոլիս ուղարկեց Կաստամունուի հոգևոր առաջնորդ Տաճատ վարդապետին: Յուսուֆ Քեմալ բեյը սպառնացել էր, որ եթե դատի հետևանքով իր եղբորը կախեն, ինչը լիովին հավանական էր, ապա քեմալական կառավարության իշխանության տակ գտնվող բոլոր հայերին կկոտորեն: Խեղճ հայ հոգևորականը՝ վստահ լինելով, որ սա դատարկ սպառնալիք չէ, հասել էր Պոլիս, Հայոց պատրիարքարան, ու դուրսը Նաքքաշյանին համոզել հետ վերցնել մեղադրանքը:

Այս ժամանակ Պոլսում նստող Ֆերիդ փաշայի կառավարությունը ստորագրել էր Սևրի պայմանագիրը և հարկադրված էր հրաժարական տալ քեմալական շարժման ճնշման տակ: Սևրի պայմանագրի աղետալի ու կործանիչ դրույթների հրատարակումից հետո կրքերն իրոք թեժացել էին և ահագնացող ուժով բորբոքվել նույնիսկ Ստամբուլում: Կոստանդնուպոլսում իշխանության եկավ նոր կառավարություն, որը հեռակա կապ ուներ քեմալականների հետ: Հենց առաջին քայլերից մեկով նրանք ոչ միայն ազատ արձակեցին Աբդուլահադ Նուրիի բեյին, այլև ձերբակալեցին այդ հրեշին դատող Պատերազմի խորհրդի անդամներին: Ձերբակալվեցին անգամ խորհրդի նախագահ Քուրդ Մուստաֆա փաշան ու դուրսը Նաքքաշյանը: Նրանց գործերը քննեց նոր Պատերազմի խորհուրդը: Դուրսը Նաքքաշյանը ծանր տառապանքներ կրեց, մինչև ազատ արձակվեց:

Եթե այս միջադեպը հետաքրքրեց Ձեզ, մանրամասների համար կարող եք դիմել հենց դոկտոր Նաքքաշյանին: Նա արդեն բնակվում է Նյու Յորքում: Ահա վերջին հասցեն, որ ինձ մոտ կա՝ տուն 530, Արևմտյան 166-րդ փողոց, Նյու Յորք:

Հիմա՝ պատրիարքարան հասած փաստաթղթերի մասին: Թե՛ Լոնդոնից եկած, թե՛ իմ ուղարկած փաստաթղթերը կցվեցին Աբդուլահադ Նուրիի գործին ու մնացին դատարանում: Այդպես էլ չիմացա, թե ինչ եղավ դրանց հետ:

Ես այլևս դրանց մասին չէի մտածում, բայց 1921 թ. ապրիլյան մի օր ինձ կանչեցին Բեռլին, որ վկայություն տամ Մոաբիտի դատարանում նախկին Մեծ վեզիր Թալեաթ փաշայի սպանության գործով: Մի երիտասարդ հայ՝ Սողոմոն Թեհլիրյանը, Թալեաթին գնդակահարել էր Բեռլինի Հարդենբերգեր փողոցում: Թեհլիրյանի փաստաբանները միաժամանակ ինձ տեղեկացրել էին, որ իմ գիրքն օգտագործելու են դատարանում: Գրքիս արժանահավատության նպատակով նրանք խնդրել էին, որ իրենց հանձնեի այնտեղ պատճենված մի քանի հեռագրերի բնօրինակները:

Այսպիսով, ես Բեռլին մեկնեցի իմ ունեցած փաստաթղթերով: Գլխավորը Բեհաեդդին Շաքիր բեյի նամակներն էին, բայց տանում էի նաև Հալեպի նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկ բեյի ձեռագրով վերածնված մի քանի հեռագրեր ևս:

Իհարկե, դրանց իսկության հարցն իսկույն բարձրացվեց Թեհլիրյանի փաստաբանների հետ մեր հենց առաջին հանդիպմանը: 1921 թ. հունիսի 10-ին ես նրանց այդ փաստաթղթերի ծագման մասին հակիրճ հուշագիր տվեցի: Կից ուղարկում եմ Ձեզ դրա կրկնօրինակը: Այս հուշագիրն արժեքավոր էր, բայց չէր կարող խնդիրը լուծել: Թեհլիրյանի փաստաբան-

ները, նաև Բեռլինի փաստաբանների գրասենյակի հայտնի անդամներ դոկտոր Ֆոն Գորդոնը, դոկտոր Վերտհաուերը, Գերմանիայի ականավոր իրավաբաններից մեկը՝ Քելի համալսարանի պրոֆեսոր Նեյմայերը, ամեն ինչ արեցին, որ նախքան փաստաթղթերը դատարան մտցնելը համոզվեն դրանց իրական լինելու մեջ: Այդ նպատակով նրանք դոկտոր Լեփսիուսի միջնորդությամբ իմ գրքի նյութերի խկությունը ստուգելու համար դիմեցին Արտաքին գործերի նախարարության պաշտոնյա պարոն Վ. Ռոսլերին, որը պատերազմի տարիներին Հալեպում Գերմանիայի հյուպատոսն էր: Նա հայերի կոտորածների ականատեսն էր ու վստահելի աղբյուր էր համարվում: Էգերում բնակվող պարոն Ռոսլերը ջերմորեն ընդունեց դոկտոր Լեփսիուսի խնդրանքը և երկար պատասխան զեկույցով հաստատեց, որ փաստաթղթերն իրական են:

Զեկույցը գրվել է 1921 թ. ապրիլի 25-ին, սակայն փաստաբաններին է հասել միայն հունիսի 12-ին ու 13-ին: Պատճառն այն է, որ հեղինակը պաշտոնյա լինելով պարտավոր էր զեկույցն ուղարկել նախարարություն հաստատման, հետո նոր՝ Լեփսիուսին: Նախարարն իր համաձայնությունը տվել է պայմանով, որ զեկույցը մնա խիստ խորհրդապահական՝ միայն փաստաբանների համար և առանց դատարանում հղում անելու թույլտվության: Միևնույն ժամանակ նախարարը, ցանկանալով խուսափել դատական գործին միջամտելուց, Ռոսլերին արգելել է ցուցմունք տալ, ինչը պատճառ է դարձել Բեռլինի լրատվամիջոցների մեծ մասի արհամարհական ու ծաղրական արձագանքին:

Ռոսլերի զեկույցը լիովին համոզեց փաստաբաններին: Նրանք դոկտոր Պոլ Պֆեֆֆերին Բեռլինից անմիջապես

հանձնարարեցին գերմաներեն թարգմանել ու հրատարակել Թալեաթի հեռագրերը: Այդ չորսէջանոց գրքույկը բաժանվեց դատարանի անդամներին, երդվյալ ատենակալներին, լրատվամիջոցներին ու ոչ պաշտոնական շատ անձանց: Այդպիսի հիմնավորումից հետո իրավաբաններն արդեն հասկացան, թե ինչպես կարող են դատարանում վարպետորեն օգտագործել փաստաթղթերի մի քանի բնօրինակները: Այդ թղթերը կարևոր դեր կատարեցին ու մեծ ներդրում ունեցան ցանկալի արդյունք ապահովելու հարցում: Թեհլիրյանն արդարացվեց:

Ռոսլերի զեկույցի մասին լսելուց հետո, ի հակադրություն իր ոչ պակաս նշանավոր կրոնակից, թուրքամետ էմիլ Լյուդվիգի, գերմանացի մեծ հրապարակախոս Մաքսիմիլան Հարդենը (երկուսն էլ հրեա էին) իր հայտնի “Die Zukunft” թերթի մի ամբողջ համար նվիրեց իմ գրքին: 1921 թ. հունիսի 4-ի համարն էր: Նա գրքիս մասին իմացել էր փաստաբաններից առաջ, հավանաբար դոկտոր Լեփսիուսից: Հարդենն ամբողջ դատավարության ընթացքում մեղադրյալների ու բոլոր հայերի աննկուն պաշտպաններից էր:

Կից կգտնեք դոկտոր Պֆեֆֆերի թարգմանությամբ գրքույկի կրկնօրինակը: Հիմա Ռոսլերի զեկույցի մասին: Ես ունեմ դրա կրկնօրինակը, որը ստացել եմ դոկտոր Լեփսիուսից՝ պայմանով, որ երբեք հանրայնորեն հղում չանեմ, առանց իր թույլտվության: Զեկույցը գերմաներեն է: Ռոսլերը մեծապես քննադատում է գրքիս շարադրանքը, որը նա համարում է լիովին կողմնակալ: Ավելին, նա հերքում է պատերազմի տարիներին Թուրքիայում գտնվող գերմանացիների վարքի վերաբերյալ իմ գրքի որոշ հատվածներ: Ինչ խոսք, իրադարձությունները փաստելու տեսակետից Ռոսլերը ճիշտ է: Բայց

Նա մոռանում է, որ իմ գիրքը ոչ թե պատմագիտական, այլ քարոզչական նպատակ ունի և, ինչպես հատուկ է այդ տիպի նյութերին, զերծ չէ որոշ թերություններից: Պետք է նաև հիշել, որ այդ ժամանակաշրջանում Անտանտի հետ լավ հարաբերություններ ունենալու համար անխուսափելիորեն անհրաժեշտ էր Գերմանիային փնտվել: Հավելեմ, որ գրքիս հրատարակման ընթացքում Լոնդոնի հայկական բյուրոն ու Փարիզի հայկական պատվիրակությունը, իրենց պաշտպանած գործի շահերը գերադասելով, ձեռագրիս հանդեպ մի քիչ անփութորեն են վարվել: Սակայն հյուպատոս Ռոսլերն արդարացի վարվեց ինձ հետ: Թեև նա գերմանացիների նկատմամբ իմ գրքում հնչեցրած մեղադրանքների համար բարկացած էր ինձ վրա, սակայն իր զեկույցի՝ կոտորածներին վերաբերող վկայությունների հարցում բարեհաճ գտնվեց: Զեկույցի այդ մասը համոզիչ է ու նաև ուսուցողական՝ հայերի ողբերգությունը հասկանալու համար:

Ձեր հարցրած բնօրինակներից գտա միայն Բեհաեդդին Շաքիր բեյի նամակը՝ գրված փետրվարի 18-ին: Նրա երկրորդ նամակն ու երկու հեռագրերի բնօրինակները կցվել են Թեհլիրյանի գործին: Պետք է որ հիմա էլ այնտեղ լինեն: Փարիզ վերադառնալուց հետո ես երկու անգամ փորձեցի վերականգնել դրանք, բայց՝ ապարդյուն: Թեհլիրյանի փաստաբաններից մեկը՝ դոկտոր Վերտհաուերը, 1921 թ. սեպտեմբերին կնոջ հետ Փարիզում էր: Ընկերոջիցս իմանալով այդ մասին՝ ես գնացի Հոթել Կրիկյոն, որտեղ նրանք իջևանել էին: Առիթից օգտվելով բարձրացրի փաստաթղթերի հարցը: Դոկտոր Վերտհաուերը խոստացավ Բեռլին վերադառնալուց հետո զբաղվել խնդրով, սակայն գնալուց հետո այդպես էլ չարձագանքեց:

Դուք նաև հարցրել եք՝ ինչու գրքումս չեմ նշել Բեհաեդդին Շաքիր բեյի անունը, եթե նա Ջեմալին ուղարկած ու գրքումս պատճենված երկու նամակների հեղինակն էր, և եթե Պոլսո թերթերն արդեն հրատարակել էին նրա անունը:

Պատճառը պարզ է: Գրքիս հրատարակման պահին ես տեղյակ չէի, որ դրանց հեղինակը Բեհաեդդին Շաքիր բեյն է: Ստորագրության փոխարեն անընթեռնելի մի տող էր, որն առաջին հայացքից սովորական նշանի տեսք ուներ: Այդ մասին ես իմացել եմ Բեռլինում 1921 թ., իմ գրքի հրատարակումից ամիսներ անց: Այդ քաղաքում գտնվող մի հայկական կոմիտե, որ զբաղվում էր Թեհլիրյանի պաշտպանությամբ, հավաքել էր հայերի կոտորածների վերաբերյալ հայկական թերթերի մի տրցակ: Պոլսի թերթերը Փարիզում կարդալու հնարավորություն չունեի, ուստի սկսեցի հետաքրքրությամբ աչքի անցկացնել դրանք: Հանկարծ հանդիպեցի մի նամակի թարգմանության՝ Բեհաեդդին Շաքիրի անունով ստորագրված: Դա «Ժողովրդի ձայնը» թերթից մի պատառիկ էր՝ հին, առանց թվականի: Հավանաբար լույս էր տեսել 1920 թ.: Քանի որ իմ գրքում զետեղված այդ նամակը ստորագրված չէր, ինձ, իհարկե, հետաքրքրեց, թե թարգմանության վերջում ինչու է Բեհաեդդին Շաքիրի անունը գրված: Այսպիսով, նամակ գրեցի այդ թուրքական թերթին, որ տպել էր Շաքիրի ստորագրությունը (հավանաբար Միհրան բեյին պատկանող «Սաբահն» էր, որի գլխավոր խմբագիրը հայտնի հակաերիտթուրքական Ալի Քեմալ բեյն էր): Ուշ իմացա, որ իմ գրքում տպված նամակների տակ առաջին տառերը նշանակում են «Բեհա»: Այդ մականունը Բեհաեդդին Շաքիրին ընկերներն էին տվել: Տեսնում եք, որ խնդիրն այնքան էլ դժվար չէ, ինչքան թվում էր:

Եվս մի հարց էիք ինձ տվել: Դուք ուզում եք իմանալ, թե Շաքիրի երկու նամակների հասցեատեր Ջենալ բեյին հրահանգ տվողը Նայիմ բեյն էր: Ոչ: Ես այդ մասին Ձեզ մանրամասն գրել եմ առաջին նամակում: Երկուսի միջև հսկայական տարբերություն կա: Նայիմ բեյը լրիվ աննշան մի կերպար էր, մինչդեռ Ջենալը Միություն և առաջադիմություն կուսակցության Հալեպի պատասխանատու քարտուղարն էր, ամբողջ նահանգի բացարձակ տիրակալը, ավելի բարձր, քան նահանգապետը: Հասկանալի է, որ նրա իշխանությունը տարածվում է միայն քաղաքացիական կառավարման վրա: Ջենալը չէր կարող միջամտել ռազմական հարցերին, իսկ այ քաղաքացիական ոլորտում՝ արտաքսումներում, աքսորներում, հսկում էր ամեն ինչ: Խնդրում եմ նորից կարդալ իմ առաջին նամակն ու գրքիս հարյուրերորդ էջը:

Կարելի է ենթադրել, որ գաղթականների գրասենյակի փոխտնօրեն Աբդուլահադ Նուրի բեյը լիովին հավատարիմ էր Միություն և առաջադիմություն կուսակցությանը, դրա համար էլ նրան վստահում էին: Ահա թե ինչու է Ջենալը Շաքիրի երկու նամակները տվել այս տնօրինությանը, որպես գործողությունների ծրագիր, որը, ի վերջո, իրականացրեցին: Սա նաև օգնում է հասկանալ, թե ինչպես է Նայիմ բեյը գտել դրանք ու դուրս բերել Աբդուլահադ Նուրի բեյի գրասենյակից, որտեղի քարտուղարն էր: Դա ծայրաստիճան անկազմակերպ հաստատություն էր, աշխատում էր աննկարագրելի խառնաշփոթի պայմաններում, արխիվի նյութերը ցրված էին դարակներում՝ առանց թվագրման, պիտակների, դասակարգումների: Իհարկե, քաղաքներում կամ շրջաններում գտնվող գաղթականների հարցերի մյուս բոլոր հաստատություններն էլ այդ անկանոն վիճակում էին:

* * *

Բեռլինում Թեհլիրյանի փաստաբաններին ուղարկած գրության պատճենն ուղարկել եմ Ձեզ: Այնտեղ բացատրվում են մի քանի հանգամանքներ, որոնց պայմաններում մենք կարողացել ենք ձեռք բերել իմ գրքում վերարտադրված փաստաթղթերը: Գրությունն ամբողջական չէ: Կային հարցեր, որոնց պարզաբանումը չէի կարող տալ ո՛չ իմ գրքում, ո՛չ էլ Թեհլիրյանի փաստաբաններին: Այդպես եմ արել, որպեսզի չվարկաբեկեմ Նայիմ բեյին, որը բացարձակապես մաքուր մարդ չէր: Հանուն մեզ նա դավաճանել է իր հայրենիքը. ահա ամենը: Ավելին, Նայիմը լավ պաշտոնյա չէր, սակայն նրան հանդուրժում էին չինանալով դավաճանության մասին: Իհարկե, նա բացառություն չէր Հալեպի վարչակազմում: Այնտեղ այնպիսի սրիկաներ կային, որոնց համեմատ Նայիմը սուրբ էր: Նա խաղամուլ էր ու հարբեցող, ինչն էլ նրան դավաճանության էր դրդում: Իրականությունն այն է, որ մենք այդ բոլոր փաստաթղթերը գնել ենք Նայիմից:

Սակայն հոգու խորքում նա լավ մարդ էր: Չնայած իր այս ստորացմանը՝ լիովին վստահելի էր: Մենք միշտ կարող էինք նրան վստահել:

Ես Նայիմին հանդիպեցի գաղթականների ճամբարներից մեկում՝ Միջագետքի անապատի Մեսքենեի հավաքականում, ուր նա ուղարկվել էր տնօրեն Չերքեզ Հուսեյն բեյին ժամանակավորապես փոխարինելու: Չերքեզ Հուսեյն բեյին պաշտոնանկ էին արել, որովհետև եռանդով չէր իրականացրել Հալեպի իշխանությունների հրամանները: Դեյր էլ Զորի կոտորածները սկսվել էին, ու Հալեպի գաղթականների

գրասենյակի փոխտնօրենը ճնշումներ էր բանեցնում Հուսեյն բեյի վրա, որ նա գաղթականներին ուղարկի Դեյր էլ Զոր կոտորելու, և ազատի Մեսքենեի ճամբարը: Սակայն Հուսեյն բեյը չէր ուզում բաժանվել իր գաղթականներից՝ հատկապես հարուստներից, որոնք շռայլորեն վճարում էին նրա բարյացակամության դիմաց: Նայիմը սպասում էր Հուսեյն բեյին, որ արդարացնի իր ներկայությունը, բայց նրա բախտին արժանացավ: Հստակ պատկերացնենք այդ ժամանակաշրջանը. ամեն ոք ապրում էր սարսափը սրտում, կոտորածի վայրեր քշվելու վտանգի տակ՝ ստանալով օրեցօր ահագնացող լուրեր:

Այս պայմաններում Նայիմ բեյը որոշ հարուստ ընտանիքների առաջարկեց փախչել Հալեպ՝ խոստանալով նրանց օգնել փողի դիմաց: Այս ընտանիքները, որոնք Կոնիայից, Ադանայից, Աքշեհիրից ու այլ բնակավայրերից էին քշվել, այլ տարբերակ չունեին: Միայն թե նրանք վախենում էին օգտը վել այդ հնարավորությունից՝ միանգամայն արդարացիորեն մտածելով, որ վեց, յոթ կամ տասը հոգանոց խմբերով փախչելն աննկատ չէր մնա Մեսքենե-Հալեպ երկար ճանապարհին և ծանր հետևանքներ կունենար:

Նայիմն առաջարկեց մարդ ուղարկել Հալեպ՝ գտնելու իր ծանոթ արաբ կառապանին՝ Նախլի անունով: Ըստ Նայիմի՝ այդ մարդը վստահելի, զուսպ ու ազնիվ կերպար էր և կարող էր այդ ընտանիքները տեղափոխել՝ առանց վտանգների ենթարկելու: Ավելին, սերելով այդ շրջանից, Նախլին կարող էր ճամփորդության ընթացքում զգալի օգնություն ակնկալել արաբ գյուղացիներից, որոնք միմյանց հանդեպ համերաշխությունը շատ բարձր էին գնահատում:

Ես մեծ կապեր ունեի այդ ընտանիքների հետ ու տեղյակ

էի նրանց և Նայիմի քննարկումներին: Նրանք ինձ խնդրեցին հանդես գալ որպէս բանագնաց: Այլ տարբերակ չունեի և վերջապէս համաձայնեցի ընդունել նրանց առաջարկն ու բախտս փորձել:

Այս նպատակով ես հանդիպումներ ունեցա Նայիմի հետ, որն ինձ տվեց Նախլիի հասցեն: Այսպէս, մի գիշեր ճանապարհ ընկա Հալեպ: Դեռևս լավ չգիտեի Նայիմ բեյի բնավորությունը, նրա պաշտոնն ինձ վստահություն չէր ներշնչում, դրա համար էլ նրա ասած ճանապարհով չգնացի, որ հանկարծ ծուղակի մեջ չընկնեմ: Նայիմի առաջարկած աջ թեքվող և իրականում ամենակարճ ճանապարհի փոխարեն ես ընտրեցի ձախը: Այն ավելի երկար ու դժվար էր, բայց կրի ու ավազի բլուրներով էր շրջապատված: Դրանք ինձ թույլ էին տալիս ցերեկները թաքնվել ու քնել, որովհետև կարող էի գնալ միայն գիշերները: Հալեպ հասա երեք օր ու չորս գիշեր անց: Ունեի միայն քարի պէս չոր բաղարջ, ուտում էի վարունգ ու ճանապարհին հանդիպած բույսերի պատիճները, միշտ ճանապարհից մեկ-երկու կիլոմետր հեռու էի մնում, քայլում էի՝ աչքս հեռագրասյուններին պահած: Դրանք ձգվում էին ճանապարհի երկայնքով և իմ միակ ուղեցույցն էին:

Երբեմն ինձ երկու-երեք բորենի էին ուղեկցում: Գիշերները լուռ հետևում էին ինձ, կարծես ստուգում էին, թե երբ վերջապէս վայր կընկնեմ: Ցերեկներն ինձ նման թաքնվում էին: Իրականում ես դրանց ո՛չ ցերեկը տեսա, ո՛չ էլ գիշերը: Մթության մեջ միայն նրանց աչքերն էին սարսափազդու փայլում, կարծես պարող ու թափառող կրակներ լինեին: Նայիմ բեյը զգուշացրել էր բորենիների մասին՝ խորհուրդ տալով ճանապարհը շարունակել հանգիստ, առանց ուշադրություն դարձ-

նելու և փախչելու, քանի որ փախչելու դեպքում կարող էին հարձակվել: Երրորդ գիշերը միայն նրանք հեռացան ինձնից՝ հետևելով ագռավների աղմկոտ երամին, որ հավանաբար գնում էր իջնելու դիերի վրա:

Հալեպում ես Նախլիին բավական հեշտ գտա: Նա իսկապես բարի ու վստահելի մարդ էր, հեշտ ընդունեց առաջարկը և, մի քանի ծամփորդություն կատարելով, 16 հայ ընտանիք տեղափոխեց Հալեպ: Նայիմի շնորհիվ՝ նա նաև յուրաքանչյուր ընտանիքի հետ անվճար վերցրել էր Մեսքենե բերված մեկ-երկու հայ մտավորականի, որոնք ոչ մի միջոց չունեին:

Իհարկե, Նայիմի ջանքերի շնորհիվ էր, որ Նախլին կարողացավ 16 հայ ընտանիքներին ու մտավորականներին ապահով տեղ հասցնել՝ առանց բացահայտվելու: Երկուսին էլ այդ ընտանիքները լավ վարձատրել էին:

Հետագայում որոշ ընտանիքների անդամների Հալեպում բռնեցին Մեսքենեից ապօրինի փախչելու համար: Ինձ նույնպես ձերբակալեցին, սակայն արագ ազատեցին՝ ընկերներիս տրամադրած փաստաթղթի շնորհիվ: Մյուսներին առերեսեցին Նայիմի հետ, որը նոր էր վերադարձել Հալեպ: Նայիմն Աստծո անունով երդվեց, որ նրանց չի տեսել Մեսքենեում: Այդ մարդիկ ազատ արձակվեցին: Կառապան Նախլին, որին ևս ձերբակալել էին, իր մասնակցությունը համառորեն հերքեց, ինչը շատ արաբներ վարպետորեն են անում: Չնայած դրան Նախլին ամիսներ շարունակ մնաց բանտում, բայց ոչ մեկի չմատնեց:

Նայիմ բեյը կարող էր օգտվել այդ միջադեպից ու այդ ընտանիքներին սովորական շանտաժի միջոցով կախման մեջ պահել, բայց այդպես չարեց: Իհարկե, ամեն անգամ, երբ գումարը վերջանում էր, նա այդ ընտանիքներին հիշում էր:

Նայիմը երբեք ուղղակիորեն գումար չէր ուզում: Սովորաբար ես էի միջնորդի դեր կատարում: Այդ մարդիկ դրամական միջոցներ ունեին, երախտապարտ էին Նայիմ բեյին, նրան համարում էին իրենց փրկիչը, ուստի իմ միջնորդությունը հաջողությամբ էր ավարտվում: Բացի դրանից՝ Նայիմ բեյի խընդրած գումարներն աննշան էին:

Այս մտերմության շնորհիվ՝ ես աստիճանաբար կարողացա նախ տեղեկանալ իրադարձությունների ու տեղական իշխանությունների մտադրությունների մասին, ապա նաև՝ ձեռք բերել այլևս չգործող գաղթականների գրասենյակի փոխտնօրինության դարակների փաստաթղթերը, որոնք Դեյր էլ Զորում ամիսներ առաջ եղած կոտորածների մասին էին: Բրիտանացիներն արդեն Դամասկոսի մոտ էին, Հալեպի անկումը ժամանակի հարց էր միայն: Ես Նայիմին ասացի, որ երբ բրիտանացիները մտնեն Հալեպ, նա կարող է հայերի կոտորածների մասին փաստաթղթերը խոշոր գումարներով վաճառել նոր ստեղծվող հայկական կառավարական մարմիններին: Ես նրան նաև խորհուրդ տվեցի հուշեր գրել Հայկական հարցի մասին:

Այս նպատակով էլ նա մնաց Հալեպում: Երբ բրիտանացիները քաղաքը գրավեցին, հայերը հիմնեցին Ազգային միությունը, որը մի քանի փորձաքննություններից հետո շտապեց գնել Նայիմի գողացած փաստաթղթերը: Դրանց առքուվաճառքի պայմանները նկարագրված են 1921 թ. հունիսի 10-ին Բեռլինից ուղարկած իմ հուշագրում:

Այս ամենը գրում եմ խիստ գաղտնի. միակ նպատակս Ձեր հետաքրքրությունը բավարարելն է: Ես իմ գրքում Նայիմին լիովին այլ կերպ եմ նկարագրել: Նրա անձի մասին ճշմար-

տությունն ասելը ոչ մի օգուտ չի տա: Նայիմը լիովին անբարո կերպար էր: Նա ուներ թուլություններ, որոնց պատճառով կարող էր շատ բան վաճառել, բայց՝ ոչ ամեն ինչ: Տարբերությունը զգալի է: Մեր երկար հարաբերությունների ընթացքում նա երբեք չի ստել: Կարճ ասած, նա հակասական կերպար էր՝ լավ ու վատ գծերով: Իմ գրածից կարելի է կռահել, որ մենք կարողացել ենք օգուտ քաղել լավ գծերից՝ առանց անհանգրտանալու վատերի մասին: Ես մշտապես մտածում եմ նրա մասին ու համակրանք ունեմ, ինչը ժամանակի ընթացքում չի փոխվել: Ես մշտապես վտանգների եմ ենթարկվել նրա հետ հարաբերությունների պատճառով, ինչը բնորոշ է իմ արկածախնդիր էությանը: Նա երբեք չի դավաճանել ինձ:

Հիմա նրա պաշտոնի հստակ անվանման մասին: Իմ գրքի անգլերեն տարբերակում թարգմանված է «Հալեպի գաղթի կոմիտեի գլխավոր քարտուղար»: Դա այնքան էլ ճիշտ չէ: Ավելի ճիշտ կլիներ «Հալեպի գաղթականների գրասենյակի փոխտնօրինության քարտուղար» պաշտոնը: Ցավոք, ես անգլերեն չգիտեմ ու չեմ կարող Ձեզ անգլերեն հստակ ձևակերպումն ասել: Հույս ունեմ՝ ինքներդ կանեք:

Ներողամիտ եղեք երկար նամակիս համար: Ես, օգտվելով Ձեր հետաքրքրասիրությունից, գրի առա որոշ պատառիկներ այն հիշարժան օրերից, որոնք ժամանակը դեռևս չի խամրեցրել:

Մաղթում եմ հաջողություն աշխատանքում և հույս ունեմ՝ ինձ այդ մասին տեղեկություններ կտաք: Ընդունեք հարգանքիս հավաստիքը:

Հարգանքով՝ Արամ Անտոնյան

Թարգմանել է Ջենիֆեր Մանուկյանը:

Հյուպատոս Վ. Ռոսլերի նամակը դոկտոր Լեփսիուսին

Հյուպատոս Վ. Ռոսլեր

Էգեր, 1921 թ. ապրիլի 25

Սիրելի դոկտոր Լեփսիուս

Ստացա հայերի կոտորածի մասին Արամ Անտոնյանի գիրքը, որ սիրալիր գտնվելով ինձ եք ուղարկել: Կարդալով այն մտովի հետ գնացի Հալեպ: Նախ որոշ վերապահումներ ու քննադատություն կներկայացնեմ, ապա կանդորադառնամ Նայիմ բեյի հուշերին ու դրանցում տեղ գտած փաստաթղթերի նշանակությանը:

Ըստ իս՝ հեղինակն անկողմնակալ չի եղել: Նա տուրք է տվել իր կրքերին ու Գերմանիայի մասին գրել է մի այնպիսի կանխակալ վերաբերմունքով, որին մենք արդեն սովոր ենք: Որոշ դեպքերում հեղինակը Գերմանիայի մասին խոսում է ամենաքինախնդիր ձևով, հիմնականում շրջանցում հայերի օգտին արված Գերմանիայի միջամտությունները: Նույնիսկ եթե ինչ-որ հատվածներում չի կարողացել խուսափել այդ միջամտություններն ընդունելուց, ապա հավելվածների միջոցով նվազագույնի է հասցրել դրանց նշանակությունը: Եթե

158-րդ էջի՝ էնվեր փաշայի հեռագիրն իրական է, ապա այնտեղ հիշատակված գերմանական միջամտությունը եղել է մեծագույն արժեք և իրապես փայլուն հաջողություն: Հեղինակը սա վերագրում է Լիբկնեխտին ու Լեդեբուրին: Երբ նա ընդունում է Անատոլիական ու Բաղդադի երկաթուղիների հարցով արված միջամտության կարևորությունը, դա վերագրում է միայն շվեյցարացիներին: Ընդհանրական ձևով միայն 51-րդ էջում ինժեներներին հիշատակելով՝ հեղինակն անմիջապես անցնում է մի շվեյցարացու գովելուն: Ոչ մի խոսք չկա քույր Բեատրիչեի, քույր Պաուլա Շյոֆերի, Ուրֆայի ու Մարաշի մասին: Դեպի Դեյր էլ Զոր մեծաթիվ հայերի արտաքսումը նա փորձ է անում վերագրել Գերմանիայի խրախուսական քայլերին (էջ 56) ու պնդում, որ պատճառը Յըլդըրըմ բանակի ստեղծումն էր: Նա մոռանում է, որ արտաքսումները դեպի Դեյր էլ Զոր տեղի են ունեցել 1915-1916 թթ., այնինչ Յըլդըրըմ բանակը ստեղծվել է մինչև 1917 թ. ամառը: Հսարավոր է, որ հեղինակը սա շփոթում է 1915-1916 թթ. Գերմանիայի արտահայտած ռազմական ցանկությունների հետ, որոնք էին հիվանդ գաղթականների թափանցումը երկաթուղային տրանսպորտ արգելելը և համաճարակները կանխելը: Գիտենք, որ դա միայն մասամբ հաջողվեց: Այսուհանդերձ, Գերմանիան սա արել է հայերի վիճակը մեծապես հաշվի առնելով և նրանց ուղղակիորեն աջակցելու նպատակով: Այդպես եղավ, օրինակ, Բաբում, որտեղ հայերին պահեցին երկաթգծից 10-20 ոտնաչափ հեռավորության վրա և թույլ տվեցին երկաթուղու միջոցով սնունդ մատակարարել նրանց:

Պարբերաբար փաստաթղթերի ամսաթվերում հանդիպում են սխալներ, որոնք ամբողջ փաստաթուղթն անիրական են

դարձնում, մինչդեռ այդ սխալները հեղինակի անփութության հետևանք են: Տրամաբանական կլիներ, որ գրքի 132-րդ էջի փաստաթուղթը թվագրված լիներ 1916 թ. հունվարի 15-ով, ոչ թե 1915 թ. հունվարի 15-ով: Նմանապես, էջ 133-ի համար 853 փաստաթուղթը պետք է թվագրել 1916 թ. հունվարի 23-ով, ոչ թե 1915 թ. հունվարի 23-ով: Ակնհայտ է նաև 148-րդ էջի համար 762 փաստաթղթի սխալը: Այստեղ 1915 թ. դեկտեմբերի 17-ի հեռագիրը ներկայացված է որպես 1916 թ. դեկտեմբերի 2-ի հեռագրի պատասխան: 72-րդ էջի տեքստում ամսաթիվը գրված է 1917 թ. հունվարի 20, այնինչ հեռագրում նշված է 1916 թ. հունվարի 20:

Հեղինակը միշտ չէ, որ հստակ պատկերացնում է իրադարձությունների միջև կապը: Հատկապես երրորդ գլխում, Դեյր էլ Ջորի կոտորածների մասին խոսելիս, նա շարունակ հետ ու առաջ է անում: Կարծես նպատակն ավելի շատ բոլոր փաստաթղթերն ի ցույց դնելն է, քան դրանց բուն նշանակությանն անդրադառնալը (օրինակ՝ 70-րդ էջի հեռագիրը թեմայի հետ կապ չունի):

Եթե այս հարցերը մի կողմ թողնենք, պետք է ասեն, որ գրքի բովանդակությունն իր մանրամասներով լուրջ տպավորություն է թողնում: Հրատարակված փաստաթղթերը, իրադարձությունների ընթացքի հետ համադրելով, շատ հավանական են թվում: Ինձ ծանոթ շատ իրադարձություններ նկարագրված են բացառիկ ճշգրտությամբ: Մյուսները, որոնց ծանոթ չեմ, պարզում են այն գործընթացները, որոնց ես ականատես էի, բայց չէի կարողանում բացատրություն գտնել: Այդպիսիներից է մեծ թվով հայերի վերադարձը Մեսքենեից: Տասներեքերորդ էջում հեղինակը համոզիչ բացատրում է, որ Նայիմ

բեյը, ինչպես և Մեսքենեի ճամբարի տնօրեն Հուսեյն բեյը, չեն կատարել իրենց ստացած զարհուրելի հրամանները: Կարծում եմ՝ հիշում եմ Հուսեյն բեյին: Ամեն դեպքում, մի անգամ ես կարողացա Մեսքենե ուղարկած երաշխավորագրով ամերիկյան սեմինարիայից արտաքսված վեց հայերի Հալեպ վերադարձնելու իրավունք ստանալ:

Նախաբանում հեղինակը գաղթականների կոմիսարիատը համարում է գաղթով զբաղվող գլխավոր կազմակերպությունը (*sousdirection générale des deportés sise à Alep*): Նա ճիշտ է: Երբ գաղթականների կոմիսարը ժամանեց Պոլիս, ես մի պահ կարծեցի, թե կազմակերպության նպատակը սնունդ և այլ անհրաժեշտ պարագաներ քիչ-քիչ մատակարարելն ու համակարգելն էր: Մոտեցա կոմիսարին ու խնդրեցի ազատ արձակել գերմանացիների համար ծառայած որոշ հայերի: Նա ամենակոպիտ ձևով մերժեց ու աննկարագրելի մեծամիտ ոճով ասաց այն, ինչը երբեք չեմ մոռանա. “Vous ne comprenez pas ce que nous voulons. Nous voulons une Armenie sans Armeniens.”¹: Այսպիսով, նա ձևակերպեց իր նպատակը, ինչն էլ տեսնում ենք Անտոնյանի գրքում: Մոռացել եմ այդ կոմիսարի անունը, բայց թերևս Աբդուլ Նուրի բեյ էր: Եթե ոչ նա, ապա նրա ղեկավար Շուքրի բեյն էր, որը Հալեպում էր Նուրիից առաջ: Ես նաև չեմ հիշում Նայիմ բեյին, ինչը զարմանալի չէ: Ես ստիպված էի զգույշ լինել գաղթով զբաղվող իշխանությունների հետ հարաբերություններում և նրանց հետ առնչվում էի միայն միջնորդավորված ձևով: Այնուամենայնիվ, ես լավ եմ հիշում Էյուբ բեյին: Նախքան Պոլսից կոմիսարի ժամանումը, նա պատասխանատու էր գաղթի կազմակերպման համար, հետո էլ աշխատանքի անցավ կոմիսարի մոտ: [Այստեղ թարգմանիչը որոշ բառեր

բաց է թողել]: Ես գրքում նրա կերպարի նկարագրությունը լիովին ճշմարտացի եմ համարում:

Պոլսից Ներքին գործերի նախարարություն ուղարկած հեռագրերի իսկությունը ստուգելը բարդ է, քանի որ դրանք միայն հեռագրատան աշխատողների ու վերծանող անձանց ձեռագրերով են: Բայց, կարծում եմ, ես հիշում եմ նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկ բեյի ստորագրությունը: Ամեն դեպքում, ստորագրությունը կարելի է ստուգել Հալեպում: Դա անուղղակիորեն կապացուցի, որ Ներքին գործերի նախարարության հեռագրերն իրական են: 16-րդ էջում հեղինակը փաստաթղթերը երկու մասի է բաժանում՝ Նայիմի փրկածները և հիշողությամբ վերականգնածները (*transorité au fur et a mesure de ses souvenirs*)²: Հնարավոր է նաև, որ Նայիմ բեյը պաշտոնական փաստաթղթերն իր մոտ է պահել՝ չդնելով թղթապանակի մեջ: Որքան ես գիտեմ, թուրքերը երբեք թղթապանակներ չէին պահում: Որոշ գերատեսչություններ, իրոք, ունեին կանոնավոր գրանցամատյաններ: Բայց ես կասկածում եմ, թե այդ ժամանակվա այնպիսի մի գերատեսչություն, ինչպիսին գաղթականների կոմիսարիատն էր, կհոգար պահվող թղթապանակների մասին՝ հաշվի առնելով իրենց գործունեության բնույթը: Այսպիսով, բնօրինակ համարվող փաստաթղթերն իսկապես կարող են իրական լինել: Վերականգնած փաստաթղթերի իրական լինելու մասին կարծիք կազմելու համար հարկ է իմանալ Նայիմ բեյի բնավորությունը: Ինքս, սակայն, այդ թղթերում չհանդիպեցի անհավանական թվացող որևէ մի հանգամանքի: Ավելին, իմ իմացած փաստերը դրանց օգնությամբ իրենց բացատրությունը գտան: Ձևակերպումները ևս խոսում են դրանց իրական լինելու և ոչ թե հակառակի մասին:

Ես չեմ կարող հաստատել կամ ժխտել գաղթին նախորդող օրերին, 1915 թ. փետրվարի 18-ին, երիտթուրքերի կոմիտեի՝ Ադանայի իրենց ներկայացուցչին ուղարկած անչափ կարևոր նամակի (96-րդ էջ) իրական լինել-չլինելը:

Դա վերաբերում է նաև երիտթուրքերի կոմիտեի մյուս նամակներին: Չգիտեմ նաև դրանց իսկությունը ստուգելու եղանակները: Այդ թեմայով մեկնաբանությունների համար հորդորում եմ դիմել քույր Բեատրիչեին: Նա հաճախ էր շրփվում գաղթականների կոմիսարի հետ և անձամբ գիտեր էյուրբեյին: Ամեն դեպքում վստահ չեմ, որ նա անձամբ ճանաչում է Նայիմ բեյին կամ Աբդուլ Նուրի բեյին: Ինչևէ, նրա կարծիքը կարևոր է: Ի դեպ, հյուպատոս Հոֆմանը, որը հիմա աշխատում է Արտաքին գործերի նախարարության մուտքի արտոնագրերի բաժնում, Բերեն փողոցի 21 հասցեում, կարող է արժեքավոր կարծիք հայտնել այդ մասին:

Եվ մի քանի հարց՝ Գերմանիայի հասցեին հեղինակի հընչեցրած քննադատությունների մասին: 56-րդ էջի հետևի լուսանկարը՝ «Աստված, պատժիր Անգլիային» մակագրությամբ, «Էմդեն» հաճանավի վրա Հալեպի գերմանացիների պատվին կազմակերպված հավաքույթի մի դրվագ է: Նրանք կրում էին արաբական գլխադիրներ, որովհետև իրենց ծովային համազգեստը կորցնելուց հետո հարկադրված էին պաշտպանվել Արաբիայի շոգից: Բացի դրանից՝ ընդունելության ժամանակ Հալեպի նահանգապետը սպաներին, ինչպես, օրինակ, այս անձնակազմին, նոր գլխադիրներ կամ թիկնոցներ է նվիրել, և շատերը դրանք կրում են այդ նկարում: Հասկանալի է, որ Գերմանիայի նավատորմի անդամները, որ այդքան տառապել էին Անգլիայի պատճառով, նկար-

վելու համար կընտրեին «Աստված, պատժիր Անգլիային» մակագրությունը: Հեղինակն այդ լուսանկարը լիովին սխալ ենթատեքստում է դրել: Մյուքեն Հալեպով անցել է 1915 թ. մայիսին: Դա կապ չուներ արաբների շրջանում անգլիացիների դեմ ապստամբություն հրահրող քարոզչության հետ: Իրականում «Էմդենի» անձնակազմը լավ չէր տրամադրված արաբների հանդեպ: Ի վերջո, նրանք հարկադրված եղան կռվել արաբների դեմ ու կորցրեցին երեք հոգու, ինչպես Մյուքեն է նշում, «Այեշայում»: Հեղինակը նշում է նաև պարոն Քոխի իրականացրած քարոզչության մասին, բայց ես դրանից սպառնիչ տեղեկություններ չունեմ: Չեմ տեսել Անտոնյանի գրքի 60-րդ էջի լուսանկարում պատկերված արաբերեն գրքույկը, որ սրբազան պատերազմի կոչ է անում: Գուցե դա գերմանական կողմի անփութության հետևանք է: Հնարավոր է նաև, որ գրքույկը նախատեսված է եղել Հյուսիսային Աֆրիկայի համար, բայց հայտնվել է Հալեպում:

Անկեղծորեն երախտապարտ եմ թղթապանակի հրատարակման գործում դեր ունեցած Ձեր զեկույցի համար:

Վ. Ռոսլեր

Թարգմանել է Բելինդա Կուպերը:

Հուշագիր՝ ուղարկված Սողոմոն Թեհլիրյանի փաստաթաններին

1921 թ. հունիսի 10

Բեռլին

Իմ գրքում (*"Documents officiels concernant les massacres arméniens"*, Փարիզ, 1920 թ.) պատճենված փաստաթղթերը եղել են Նայիմ բեյինը, որը Հալեպի գաղթականների գրասենյակի փոխտնօրինության քարտուղարն էր: Կենտրոնական գրասենյակը գտնվում էր Պոլսում, և դրա գլխավոր տնօրենը Միություն և առաջադիմություն կուսակցության երիտասարդ անդամ Շուքրի բեյն էր: Փոխտնօրինությունն էր պատասխանատու հայ գաղթականներին վերաբերող բոլոր հրամանների ու միջոցառումների իրականացման համար, քանի որ Հալեպն այն գլխավոր հավաքակայանն էր, որտեղից գաղթականներին քշում էին Սիրիայի ու Միջագետքի անապատներ:

Նայիմ բեյը լիակատար համեստ, անվնաս մարդ էր: Հալեպի ու այլ վայրերի հայերը, նույնիսկ պատերազմի ժամանակ, բազմիցս են տեսել նրա սիրահոժար ու բարի վերաբերմունքն իրենց ու իրենց արտաքսված հայրենակիցների հանդեպ:

Կասկած չկա, որ այդ փաստաթղթերը հանվել են Հալեպի

գաղթականների գրասենյակի փոխտնօրինության գործերից: Հալեպի նահանգապետը ներքին գործերի նախարարից (Թալեաթ փաշա) ստանում էր հայերին վերաբերող գաղտնագրված հրամանները, վերծանում, ստորագրում, կնքում և փոխանցում Գաղթականների գրասենյակի փոխտնօրինություն, որը պարտավոր էր դրանք ի կատար ածել: Փոխտնօրինության քարտուղարը Նայիմ բեյն էր:

Երբ Նայիմ բեյը համաձայնեց մեզ տրամադրել այս փաստաթղթերը, Հալեպի հայերի ազգային միությունը, որը պաշտոնական հաստատություն էր, փորձաքննության ենթարկեց փաստաթղթերի վրայի ձեռագրերն ու ստորագրությունները: Այն տևեց մեկ ամբողջ շաբաթ: Մեզ մոտ էին նաև նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկ բեյի ստորագրած ու մակագրած այլ փաստաթղթեր, որոնք մանրակրկիտ համեմատում էինք խորանալով մանրուքների մեջ: Ի վերջո, փաստաթղթերի վրայի բոլոր գրառումների համադրությամբ անառարկելիորեն հաստատվեց, որ դրանք նահանգապետ Մուստաֆա Աբդուլհալիկի ձեռագրերն ու ստորագրություններն են: Այլևս կասկած չկար, որ փաստաթղթերն իրական են:

Ազգային միությունը, լիովին համոզվելով փաստաթղթերի իրական լինելու մեջ, համարելով, որ ես, երկու տարի ապրած լինելով նման սոսկալի պայմաններում, լավատեղյակ եմ կոտորածներին ու վայրագություններին, ինձ հանձնարարեց Նայիմի փաստաթղթերից ընտրել այն նմուշները, որոնք ճշտորեն կհաստատեն հայերի կոտորածների պատասխանատվությունը:

Փաստաթղթերն ուսումնասիրելիս ես նկատեցի, որ փոքր երեխաների արտաքսման, զանգվածային բնաջնջման ու սպանության վերաբերյալ բոլոր հրամաններն ուղղակիորեն

գալիս էին ներքին գործերի նախարար, ապա և Մեծ վեզիր Թալեաթից: Հենց նա էր խրախուսում կամ հանդիմանում պաշտոնյաներին՝ պահանջելով, որքան հնարավոր է, արագ վերջ դնել հայերի գոյությանը, բնաջնջել ամբողջովին՝ առանց խնայելու մեծ ու փոքրի: Մասնավորապես՝ նա հորդորում էր արագ ու ամեն գնով լուծել բնաջնջման հարցը՝ առանց պատժի կամ հետևանքների մասին մտածելու: Թալեաթն այս հանցագործության կատարումը հռչակել էր ցանկացած պաշտոնյայի՝ հայրենիքի հանդեպ մեծագույն պարտավորություն:

Այս փաստաթղթերից ընտրել են ամենակարևորները: Ես հավաստիացնում եմ Ձեզ, որ նախքան այդ գրավոր հրամաններին ծանոթանալը, իմ աչքով են տեսել, թե ինչպես են դրանք կյանքի կոչվել, և 1915-1916 թթ. դժոխային օրերին լսել են դրանց կատարման մասին:

Ի վերջո, Հալեպի հայկական ազգային միությունն ինձ հանձնարարեց այս փաստաթղթերը տեղափոխել Եվրոպա ու հանձնել Փարիզի կոնֆերանսին մասնակցող Հայկական ազգային պատվիրակությանը: Հենց այդպես էլ նշված է Հալեպի ֆրանսիական զինվորական իշխանության՝ ինձ տված անցաթղթում, որը ես անձնագրի տեղ օգտագործեցի:

Ես այդ առաքելությունը կատարեցի՝ մեկնաբանությունների ու պարզաբանումների մի մանրամասն զեկույց կցելով Նայիմի տված փաստաթղթերին: Դրանք հրատարակվեցին Լոնդոնում՝ անգլերեն, Փարիզում՝ ֆրանսերեն և Բոստոնում՝ հայերեն:

Արամ Անտոնյան

Թարգմանել է Ջենիֆեր Մանուկյանը:

Վերջաբան

Թուրքական ասացվածք կա. «Ճշմարտությունները վաղ սովորություն ունեն, մի օր ջրի երես են դուրս գալիս»: Տասնամյակներ ի վեր թուրքական կառավարությունները փորձել են պատմության էջերից թաքցնել կամ անբողջապես մաքրել հայերի բնաջնջման իրողությունը: Այս նպատակով մշակվելու գործի են դրվել տարբեր ռազմավարություններ: Դրանցից գլխավորն այլընտրանքային փաստեր ներկայացնելու փորձն էր: Այդ փաստերն ըստ հերթականության դասավորելով՝ նրանք ջանում են ներկայացնել այլընտրանքային իրականություն. իբր արտաքսումների նպատակը եղել է հայերին պատերազմի գոտուց խաղաղ միջոցներով տեղափոխելն ու վերաբնակեցնելը, ոչ թե անբողջապես ոչնչացնելը: Այս ռազմավարության մի ուղղությունը երիտթուրքերի կառավարության՝ հայերի բնաջնջումը ծրագրելու և իրականացնելու արդյունքներն ապացուցող փաստաթղթերի ոչնչացումն է: Ռազմավարության մյուս ուղղությունը փրկված ամեն մի ապացույց հետևողականորեն վարկաբեկելու ջանքերի գործադրումն է:

Այս շարունակվող ժխտողական արշավի գլխավոր հետևանքն այն է, որ Ցեղասպանությունն ապրածների ցավը

չի ամոքվում: Բավական չէ, որ նրանց նախնիները բնաջնջվել են, որ նույնիսկ փրկվողներն ու նրանց սերունդները չեն կարողանում մոռանալ ցավն ու կորուստը, դեռ մի բան էլ՝ իրենց հանդեպ գործած հանցանքները լիովին չեն ընդունվել ու դատապարտվել: Ավելին, նրանք հարկադրված են եղել ապացուցել, որ իրենց կոտորել են: Նրանց ամեն մի պատմություն կասկածելի, «կողմնակալ ու անվստահելի աղբյուր» է համարվել զուտ նրա համար, որ հեղինակը հայ է:

Սակայն հույսը վերջինն է մեռնում: Ակնհայտ է, որ, չնայած պատմությունը լռեցնելու Թուրքիայի ջանքերին, վերջին տասնամյակների ծանրակշիռ գիտական աշխատանքները ցնցել են ժխտողականության այս ապակե դոյակի պատերն ու ապացուցել, որ օսմանյան հայերի բնաջնջումն անբեկանելի պատմական ճշմարտություն է: Այնուամենայնիվ, դասական թուրքական ժխտողականությունը շարունակել է շարադրել իր տեսակետները՝ հենվելով երկու հիմնական պնդումների վրա: Առաջին՝ «Չկան բնօրինակ փաստաթղթեր, որոնք ապացուցում են հայերի կանխամտածված բնաջնջումը: Եթե կան, ցույց տվեք»: Երկրորդ՝ պարզապես մերժում են գոյություն ունեցող փաստաթղթերը՝ որակելով հայերի հորինվածք:

Ցեղասպանությունը հաստատող նյութական ամենակարևոր ապացույցներն են «Թալեաթ փաշայի հեռագրերը» անունով փաստաթղթերն ու Նայիմ էֆենդուի հուշերը: Առաջին ապացույցը նախկին օսմանյան կառավարությանը Թալեաթ փաշայի ուղարկած հեռագրերն են: Դրանք կարգադրում կամ ցույց են տալիս կառավարության՝ ամբողջ հայ բնակչությանը բնաջնջելու ծրագրերը: Այս հեռագրերը

վաճառել է օսմանյան պաշտոնյա Նայիմ Էֆենդին: Հալեպի գաղթականների գրասենյակի տնօրինությունում նա եղել է այդ հրամանների իրագործման պատասխանատուն:

Այդ փաստաթղթերից բացի՝ Նայիմը գրել է նաև ծանոթագրություններ ու անձնական հիշողություններ այդ իրադարձությունների մասին: Գիտնականներն ու լայն հասարակությունն այս աշխատանքն ու դրան կից փաստաթղթերը մինչև վերջերս հիմնականում մերժել են ոչ արժանահավատ, հավանաբար հորինված լինելու պատճառաբանությամբ: Մերժման տրամաբանությունը հետևյալն է. (1) Նայիմ Էֆենդի անունով անհատի գոյությունը հավանական չէ, (2) գոյություն չունեցող մարդը չէր կարող գրել հուշեր, ուստիև դրանք չեն կարող գոյություն ունենալ, (3) Թալեաթին վերագրվող հեռագրերը կեղծիք են: Այսպիսով, Օրելն ու Յուզան եզրակացնում են, որ այդ հուշերը, ծանոթագրություններն ու փաստաթղթերը հայերի, ամենայն հավանականությամբ՝ հենց Անտոնյանի հորինածն են:

Մինչև վերջերս անհնար էր այս երեք պնդումների դեմ հիմնավոր փաստարկներ բերել: Նախ՝ հնարավոր չէր ներկայացնել օսմանյան փաստաթղթերի այն բնօրինակները, որոնցով կհաստատվեր Նայիմ Էֆենդի անունով օսմանյան պաշտոնյայի գոյությունը: Երկրորդ՝ չկային բավարար վկայություններ, որոնք կհաստատեին Նայիմի տեղեկությունները: Չկային նաև դրանց իսկությունը հաստատող իրեղեն ապացույցներ: Պատճառն այն է, որ օսմանյան արխիվի նյութերը հատվածական են ու ոչ ամբողջական: Երրորդ՝ Նայիմ Էֆենդու հուշերի բնօրինակների ու Թալեաթի հեռագրերի տեղն անհայտ էր, և ենթադրվում էր, թե դրանք կորել են:

Այսպիսով, թեման դժվար էր քննարկել, և այդ պնդումները հնարավոր չէր հերքել, քանի որ բացակայում էին հակառակն ապացուցող համոզիչ փաստերը: Դա է պատճառը, որ լուրջ ցեղասպանագետները հիմնականում խուսափում էին օգտվել Անտոնյանի հրատարակած՝ Նայիմ էֆենդուի հուշերից կամ Թալեաթ փաշայի հեռագրերից և հղում անել դրանց: Այս հետազոտությանը լռության ու մոռացության երկարատև փուլն ավարտվում է: Մենք ցույց տվեցինք, որ Նայիմ էֆենդի անունով օսմանյան պաշտոնյա իսկապես եղել է, և կան նրա հեղինակած իրական հուշերը: Հիմնվելով մինչև այժմ հայտնաբերված և ապացույցներ պարունակող օսմանյան փաստաթղթերի վրա՝ դժվար չէ ցույց տալ, որ հուշերի բովանդակությունը, դրանցում տեղ գտած կարգադրություններն ու պնդումները ճշմարիտ են:

Նույնը կարելի է ասել Թալեաթ փաշայի հեռագրերի մասին: Դրանք կեղծ հռչակելու ժխտողական պատմագիտության բոլոր պնդումները (մասնավորապես՝ տողերով թղթերի օգտագործման, պատերազմի փուլում օսմանյան գաղտնագրման մեթոդների, փաստաթղթերի վրայի ստորագրությունների վերաբերյալ) ուղղակի սխալ են՝ հիմնված անլուրջ փաստարկների վրա: Օրինակ՝ Նայիմ էֆենդուի ներկայացրած հեռագրերում տողերով թղթերի առկայությունն ու երկնիշ թվերով գաղտնագրման եղանակն իրականում ոչ թե ապացուցում են դրանց հորինված լինելը, այլ հակառակը, հաստատում են փաստաթղթերի իսկությունը: Իրականում այդ տեսակի թղթերն ու նման եղանակներն օգտագործել է Գաղթականների գրասենյակի տնօրինությունը, որտեղ և աշխատում էր Նայիմը:

Ճշմարտությունը շատ պարզ է: Նայիմի՝ Անտոնյանին փո-

խանցած գաղտնագիր հեռագրերն իրական են: Եթե այս-
քանից հետո Թուրքիայի կառավարությունը կամ ժխտողա-
կանության աջակիցները պնդեն, որ այս փաստաթղթերը
հորինվածք են, ապա իրենք պետք է հրապարակեն գաղտ-
նագրերի գրանցամատյաններն ու հենց այդ եղանակով
հիմնավորեն իրենց ասածները: Այդ գրանցամատյանները
գոյություն ունեն, ու դրանք հրապարակելու լիազորություն
ունեցողներն այն նույն մարդիկ են, որոնք պնդում են, որ
Նայիմի ներկայացրած փաստաթղթերը հորինվածք են:

Իրականում մենք պնդում ենք ու մարտահրավեր նետում
Թուրքիայի կառավարությանը. այդ գրանցամատյանները *չեն*
հրապարակվում, որովհետև դրանք հաստատում են հեռագ-
րերի իրական լինելը: Ապացուցելու հերթը նրանցն է: Այս աշ-
խատանքը ոչ միայն ապացուցում է, որ Թալեաթի հեռագրերը
բնօրինակներ են, այլև հաստատում է Ցեղասպանությունն
ապրածների՝ սերնդեսերունդ փոխանցած պատմություն-
ները, այլազգի ականատեսների վկայությունները: Միևնույն
ժամանակ վերահաստատվեցին այս հարցի վերաբերյալ հա-
րյուրավոր գիտական աշխատություններում բացահայտված
պատմական ճշմարտությունները: Այսպիսով, ապացուցվեց,
որ Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրու-
թյան երիտթուրքական կառավարությունը վարել է հայ բնակ-
չության բնաջնջման գիտակցված ու կանխամտածված քա-
ղաքականություն: Իսկապես որ. «Ճշմարտությունները վաղ
սովորություն ունեն, մի օր ջրի երես են դուրս գալիս»:

Ծանոթագրություններ

Նախաբան

- 1 Hannah Arendt, *Between Past and Future: Eight Exercises in Political Thought* (New York: Penguin Books, 2006), 536:
- 2 Նույն տեղում, էջ 535:
- 3 Նույն տեղում:
- 4 Այս հայտնի ասույթը վերագրում են ԱՄՆ սենատոր Դենիել Պատրիկ Մոյնիհանին (1927-2003) https://en.wikipedia.org/wiki/Daniel_Patrick_Moynihan: Հավանաբար այն բխում է ամերիկացի պետական գործիչ Բեռնար Բարուխի (1870-1965) հետևյալ մտքից. «Ես միշտ կարծել եմ, որ ամեն մարդ կարող է ունենալ սխալ կարծիք, բայց ոչ սխալ փաստեր»: Տե՛ս *Baruch: The Public Years* (New York: Holt, Rinehart and Winston, 1960), 376:
- 5 Փաստերի վրա հիմնված Հայոց ցեղասպանության իրողությունը *սոսկ տեսակետի վերածելու* օրինակը տե՛ս Marc Mamigonian, “Academic Denial of the Armenian Genocide in American Scholarship: Denialism as Manufactured Controversy,” *Genocide Studies International*, 9, no. 1 (Spring 2015): 61–82: Հայոց ցեղասպանության ժխտողականության վերաբերյալ վերջին բանավեճերի համար տե՛ս Jennifer M. Dixon, “Rhetorical Adaptation and Resistance to International Norms,” *Perspectives on Politics*, 15, no. 1 (2017): 83–99; Richard G. Hovannisian, “Denial of the Armenian Genocide 100 Years Later: The New Practitioners and Their Trade,” *Genocide Studies International*, 9, no. 2 (2015): 228–247; and Taner Akçam, *The*

- Young Turks' Crime Against Humanity* (Princeton, NJ: Princeton University Press, 2012), 273–449:
- 6 Michel-Rolph Trouillot, *Silencing the Past: Power and the Production of History* (Boston: Beacon Press, 1995), 26: Պատմության կերտման չորս փուլերն այս հեղինակի գաղափարն են:
 - 7 Մահնուդ Քամիլ փաշայի հեռագիրը վկայում է, որ ժողովրդի մի զգալի հատված դեմ է եղել հայերի հանդեպ վարվող պետական քաղաքականությանը: Տե՛ս George N. Shirinian, “Turks Who Saved Armenians: Righteous Muslims during the Armenian Genocide,” *Genocide Studies International*, 9, no. 2 (2015): 208–227; Burçin Gerçek, *Akıntıya Karşı: Ermeni Soykırımında Emirlere karşı Gelenler, Kurtaranlar, Direnenler* (Istanbul: İletişim, 2016):
 - 8 Yusuf Sarıncay, “What Happened on April 24, 1915, the Circular of April 24, 1915 and the Arrest of Armenian Committee Members in Istanbul,” *International Journal of Turkish Studies*, 14, nos. 1&2 (Fall 2008): 75–101, 80: Հոդվածի քննադատության համար տե՛ս Ara Sarafian, “What Happened on 24 April 1915? The Ayash Prisoners,” URL: <http://www.gomidas.org/submissions/show/5> (Accessed 22 April 2013):
 - 9 Գրիգոր Զոհրապը (1861–1915) հայ նշանավոր ակտիվ գործիչ էր, փաստաբան, ճարտարագետ, ճարտարապետ և գրող: 1908, 1912 և 1914 թթ. նա Ստամբուլից ընտրվել է օսմանյան խորհրդարանի պատգամավոր: Ավելի հանգամանալի տե՛ս Nesim Ovadya Izrail, 1915 *Bir Olum Yolculuğu Krikor Zohrab* (Istanbul: Pencere Yayınları, 2013):
 - 10 Զոհրապի մահը հաստատել է նրան սպանողը և ընդունել Զոհրապի գլուխը քարով ջախջախելու փաստը: Տե՛ս Ahmet Refik

- Altınay, *İki Komite İki Kıtıl* (Istanbul: Bedir Yayınları, 1999), 51-52:
- 11 Գրիգոր Գերգերյանի արխիվ, օսմանյան փաստաթղթեր, համար 13, Գրիգոր Զոհրապ, 3-րդ փաստաթուղթ: Արխիվային նույնականացման թվերը ժամանակավոր են և, ի վերջո, փոխվելու են: Հետազոտողներին առաջարկում ենք հողվածներ և այլ փաստաթղթեր գտնելու համար օգտվել մեր պատրաստած առցանց ինդեքսից:
 - 12 Նույն տեղում, Փաստաթուղթ համար 04:
 - 13 Նույն տեղում, Փաստաթուղթ համար 02:
 - 14 Ali Fuat Erden, *Birinci Dünya Savaşı'ında Suriye Hatıraları* (Istanbul: TIŞ Bankası Kultur Yayınları, 2006), 226:
 - 15 Զոհրապի սպանության և նրան սպանողների ձերբակալության, դատի ու մահապատժի մասին հուշերը տե՛ս Nesim Ovadya Izrail, 1915 *Bir Olum Yolculuğu*, 355-384:
 - 16 Նույն տեղում, էջ 363-364:
 - 17 Հայերենում Հայ հեղափոխական դաշնակցությանը հակիրճ անվանում են Դաշնակցություն: Հայկական ամենաուժեղ կուսակցություններից մեկը հիմնադրվել է 1890 թ. Թիֆլիսում: Դաշնակցությունն է 1918 թ. ձևավորել Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունը:
 - 18 BOA.DH.ŞFR., 53/211, ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնագրված հեռագիրն Անկարա, 3 հունիսի 1915 թ.:
 - 19 BOA.DH.ŞFR., 54/132, ներքին գործերի նախարար Թալեաթի գաղտնագրված հեռագիրը Հալեպ, 24 հունիսի, 1915 թ.:
 - 20 Հալեպում Գերմանիայի հյուպատոս Ռոսլերը 1915 թ. հունիսի 29-ի հեռագրով հաղորդել է, որ Ակնունին ընկերների հետ դեռևս Հալեպում է: (DE/PA-AA/ BoKon/169): Ըստ Ռայմոնդ Գևորգյանի՝ սպանությունը կատարել է Հաջի Թելալի հան-

ցախումբը: Տե՛ս R. Kevorkian, *Armenian Genocide A Complete History* (London: I.B. Tauris, 2011), 524:

- 21 BOA.DH.EUM., 5. ՖԲ. 26/23 ներքին գործերի նախարար Թաւերի խորհրդապահական նամակն Արտաքին գործերի նախարար Հալիլ բեյին, 19 հուլիսի 1915 թ.:
- 22 BOA.DH.ՖՐ., 52/266, ներքին գործերի նախարար Թաւերի գաղտնագրված հեռագիրը Կաստանունուի նահանգ, 8 մայիսի, 1915 թ.:
- 23 BOA.DH.ՖՐ., 54-A/183, ներքին գործերի նախարար Թաւերի գաղտնագրված հեռագիրը Կաստանունուի նահանգ, 29 հուլիսի, 1915 թ.:
- 24 Grigoris Balakian, *Armenian Golgotha* (New York: Alfred A. Knopf, 2009), 301-304:
- 25 Yusuf Sarıncı, “What Happened on April 24, 1915,” 97:
- 26 Genelkurmay Başkanlığı, *Arşiv Belgeleriyle Ermeni Faaliyetleri, 1914-1918, Vol. 1* (Ankara: Genelkurmay Basımevi, 2005), 131:
- 27 1915 թ. սեպտեմբերի 26-ի օրենքի և նոյեմբերի 8-ի կանոնակարգի մասին ավելի հանգամանաւի տե՛ս *Taner Akçam and Umit Kurt, Spirit of the Laws: The Plunder of Wealth in the Armenian Genocide*, թարգմանությունը՝ Արամ Արկունի (New York: Berghahn Books, 2015), 24-29:
- 28 BOA.DH.EUM.VRK., 15/71-2, Muamele-i Umumiye-i Sevkiye Hakkında Talimatname (Հրամանագիր տեղահանությունների ընդհանուր իրականացումը կարգավորելու վերաբերյալ):
- 29 For detailed information on the Ottoman archives and the destruction of documents, see *Taner Akçam, The Young Turks' Crime Against Humanity*, 9-20:
- 30 Երիտթուրքերի հետպատերազմյան դատավարություններ-

րի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Vahakn N. Dadrian and Taner Akzam, *Judgment at Istanbul: The Armenian Genocide Trials* (New York: Berghahn Books, 2011):

- 31 Գրող և լրագրող Արամ Անտոնյանը (1875-1952) եղել է Ստամբուլի ականավոր հայ մտավորականներից մեկը: Մյուսների ծակատագրին արժանանալուց նա փրկվել է պատահականության շնորհիվ՝ գաղթի ճանապարհին կոտրելով ոտքը: Այսպիսով, նա գաղթի տարիներն անցկացրել է Մեսքենեի համակենտրոնացման ճամբարում, Հալեպի մոտ: Այստեղ էլ նա հանդիպել է Նայիմ Էֆենդուն: 1928 թ.-ից մինչև իր մահը՝ 1952 թ., Անտոնյանն աշխատել է որպես Փարիզի Պողոս Նուբար գրադարանի տնօրեն: Անտոնյանի մասին ավելի մանրամասն տե՛ս Rita Soulahian Kuyumjian (ed.), *Exile, Trauma and Death: On the Road to Chankiri with Komitas Vartabed* (London: Gomidas Institute and Tekeyan Cultural Association, 2010):
- 32 Էֆենդին կամ բեյը պարոնին համարժեք օսմանյան տիտղոսներ էին և արտահայտում էին հասարակությունում անհատի զբաղեցրած դիրքը: Էֆենդին ավելի ցածր է, քան բեյը: Նայիմն օսմանյան փաստաթղթերում հիշատակվում է որպես Էֆենդի:
- 33 Aram Andonian, *Documents officiels concernant les massacres Armeniens* (Paris: Imprimerie H. Turabian 227, Boulevard Raspail, 1920); Andonian, *The Memoirs of Naim Bey, Turkish Official Documents relating to the Deportations and Massacres of Armenians*, compiled by Aram Andonian with an introduction by Viscount Gladstone (London: Hodder and Stoughton, 1920); Արամ Անտոնյան, *Մեծ ոճիրը* (Boston: Bahag Printing House, 1921):

Անգլերեն հրատարակությունը խնդրահարույց է ու պետք չէ օգտագործել որպես աղբյուր, իսկ ֆրանսերենը, չնայած հաջող թարգմանությանը, չի պարունակում բոլոր գլուխները: Մենք հղում ենք արել միայն հայերեն տարբերակին:

- 34 Şinasi Orel ve Süreyya Yuca, *Ermenilerce Talat Paşa'ya Atfedilen Telgrafların Gerçek Yüzü* (Ankara: Türk Tarih Kurumu, 1983); Şinasi Orel and Sureyya Yuca, *The Talat Pasha Telegrams, Historical Fact or Armenian Fiction?* (Nicosia: K. Rustem & Brother, 1986):
- 35 “Les explications de Bernard Lewis,” *Le Monde*, 1 January 1994:
- 36 Guenter Lewy, *The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide* (Salt Lake City: University of Utah Press, 2004):
- 37 Նույն տեղում, էջ 206:
- 38 Նույն տեղում:
- 39 Նույն տեղում, էջ 73, 206:
- 40 Նույն տեղում, էջ 65:
- 41 https://www.tbmm.gov.tr/develop/owa/tbmm_basin_aciklamalari_sd.aciklama?p1=30684 (Accessed 14 April 2017): Ավելորդ է նշել, որ խնդիրն այն չէ, որ Թուրքիայի կառավարությունն է մրցանակ հանձնողը: Խնդիրը մրցանակը տալու պատճառն է:
- 42 Arnold Toynbee and James Bryce, *The Treatment of Armenians in the Ottoman Empire, Documents presented to Viscount Grey of Fallodon, Secretary of State for Foreign Affairs By Viscount Bryce*. Uncensored edition (Princeton and London: Gomidas Institute, 2005): «Աստիճանակարգման սինդրոմը» բնորոշ է շատ պատմաբանների: Տե՛ս Taner Akçam, “The Relationship between Historians and Archival Records: A Critique of Single

- Source Scholarship on the Armenian Genocide,” *Journal of the Society for Armenian Studies*, 19, no. 2 (2010): 43–92:
- 43 Marc Nichanian, “The Truth of the Facts About the New Revisionism,” in *Remembrance and Denial: The Case of the Armenian Genocide*, edited by Richard G. Hovannisian (Detroit: Wayne State University Press, 1999), 257:
- 44 Հայր Գրիգոր Գերգերյանի կյանքի մասին բոլոր տեղեկությունները մենք ստացել ենք դոկտոր Էդմոն Գերգերյանից:
- 45 Նուրբերը դատվել, դատապարտվել է մահվան ու մահապատժի է ենթարկվել 1920 թ. օգոստոսին: Քյուրտ Մուստաֆա փաշայի դատի մասին ավելի հանգամանալի տե՛ս Vahakn N. Dadrian and Taner Akçam, *Judgment at Istanbul*, 305–306:
- 46 Գրիգոր Գերգերյանի արխիվի փոխանցման վերաբերյալ հակիրճ գրությունը հեղինակի արխիվում է հետևյալ հասցեով՝ 03 “19-Zaven Yeghiayan”:
- 47 Մենք բազմիցս փորձել ենք այս արխիվներում աշխատելու թույլտվություն ստանալ, սակայն՝ ապարդյուն: Գերգերյանի արխիվի բնօրինակները Երուսաղեմի օրինակների հետ համեմատելու մեր խնդրանքն առայժմ չի բավարարվել:
- 48 Takvim-i Vekayi, no. 3540, 5 May 1919. Մեղադրական եզրակացության ամբողջ տեքստը տե՛ս Vahakn N. Dadrian and Taner Akçam, *Judgment at Istanbul*, 179–190:
- 49 Բեհաեդդին Շաքիրի ու Հատուկ կազմակերպության գործունեության մանրամասները տե՛ս Taner Akçam, *A Shameful Act: The Armenian Genocide and the Question of Turkish Responsibility* (New York: Metropolitan, 2006), 149–205: Խնդրին վերաբերող հեռագրերից մի քանիսը հետևյալն են՝ BOA. DH.ŞFR., 441/80; 442/31, and 498/67:

- 50 Vahakn N. Dadrian and Taner Akçam, *Judgment at Istanbul*, 180–181:
- 51 Երիտթուրքերի գլխավոր դատավարության վկայության համար տե՛ս նույն տեղում, էջ 184: Մամուրեթյուլազիզի դատավարությունում դատավորների որոշման համար տե՛ս նույն տեղում, էջ 207–212:
- 52 *Yeni Gazete*, 3 օգոստոսի, 1919 թ.:
- 53 *Alemdar*, 11 հունվարի, 1920 թ.:
- 54 Արխիվում մեր հայտնաբերած տեքստը մենք կոչում ենք այնպես, ինչպես Անտոնյանը՝ *Hatirat* [Հուշեր]: Ուստի այս տեքստին արված բոլոր հղումներում այսուհետև այն կոչելու ենք *Hatirat*:

Ներածություն

- 1 Dickran H. Boyajian, *Armenia: The Case for a Forgotten Genocide* (Westwood, NJ: Educational Book Crafters, 1972).
- 2 Աբդուլ Համիդի իշխանության ամբողջ ընթացքում շարունակվել են հայերի կոտորածները: Առավել մանրամասն տե՛ս George N. Shirinian, “The Armenian Massacres of 1894–1897: A Bibliography,” *Armenian Review*, 47, nos. 1–2 (2001): 113–164:
- 3 Տեքստում նույն գրասենյակը հիշատակվում է տարբեր անվանումներով՝ «Տեղահանության տնօրինություն», «Ցեղերի ու գաղթականների տեղավորման հարցերի տնօրինություն», «Գաղթականների հարցերով գլխավոր տնօրինություն» և այլն: Պատճառն այն է, որ տարբեր ժողովուրդներ տարբեր կերպ են կոչել այն: Գլխավոր գրասենյակը գտնվել է Ստամբուլում, մեկ մասնաճյուղը՝ Հալեպում:
- 4 52 թիվը տվել է հենց Գրիգոր Գերգերյանը: Նա 1965 թ. մի

հողված է հրատարակել «Կրիգեր» կեղծանունով՝ «Արամ Անտոնյանի հրատարակած թուրք պաշտոնական վավերագրերի վավերագրությունը», Զարթոնք թերթ, 1915-1916 թթ., *Հուշամատյան Մեծ եղեռնի*, Բեյրութ, Ատլաս, 1965 թ., էջ 238-239: 1986 թ. Վահագն Դադրյանը խմբագրել և ուղղել է Գերգերյանի ցուցակի որոշ սխալներ՝ պատրաստելով 52 փաստաթղթերի ծանոթագրություններով ցուցակը: Տե՛ս Vahakn N. Dadrian, “The Naim-Andonian Documents on the World War I Destruction of Ottoman Armenians: The Anatomy of a Genocide,” *International Journal of Middle Eastern Studies*, 18, no. 3 (August 1986): 311-360, 316-317: Իրականում Նայիմի որոշ մեջբերումներ փաստաթուղթ համարել-չհամարելու հարցը վիճելի է: Որոշ նկարագրություններում, որոնք Գերգերյանն ու Դադրյանը համարում են «փաստաթուղթ», Նայիմն ավելի շատ իրադարձությունների պատմություններ ու տեղեկություններ է հաղորդում, քան նկարագրում է իրական փաստաթղթերի պատճենները: Առանց խնդրի մեջ շատ խորանալու՝ մենք փաստաթղթերի քանակը համարում ենք 52:

- 5 Արամ Անտոնյանը հուշեր է գրել 1915 թ. ապրիլի 24-ին իր ձերբակալության, պատերազմի և գաղթի տարիների ասարումների մասին: Տե՛ս Rita Soulahian Kuyumjian (ed.), *Exile, Trauma and Death*:
- 6 Մեզ հայտնի չէ Նայիմի՝ Անտոնյանին վաճառած փաստաթղթերի ստույգ թիվը: Գերգերյանը պնդում է, որ Նայիմն իրականում հայ պատգամավոր Գրիգոր Զոհրապի մահվան վերաբերյալ երեք առանձին փաթեթներով հեռագրեր է ուղարկել: Այսինքն՝ դրանք միասին կազմում են 21 փաստաթուղթ: Տե՛ս Կրիգեր. «Արամ Անտոնյանի հրա-

տարակաժ թուրք պաշտոնական վավերագրերը», էջ 236: Այսուհանդերձ, Ջոհրապի վերաբերյալ փաստաթղթերի թիվը Գերգերյանի արխիվում հասնում է վեցի: Սրանցից քանի՞սն է տվել Նալիմը, քանի՞սն այլ ծագում ունեն՝ դժվար է ասել: Մենք օգտագործում ենք 24 թիվը, քանի որ այն ավելի ճշգրիտ է թվում:

- 7 Այս աշխատությունում մենք չենք քննարկում Շաքիրի երկու նամակների իրական լինելու հարցը, որովհետև դա կապ չունի Նալիմի հուշերի հետ: Այնուամենայնիվ, այս նամակներն իրական են, քանի որ դրանց բովանդակությունը ստուգվել է Հայոց ցեղասպանության հետազոտության ընթացքում ձեռք բերված նյութերով: Ավելին, նամակների տակ դրված Շաքիրի ստորագրությունն իրական է: Շաքիրը երիտթուրքական *Şurayı Ümmet* (1902-1910) թերթի սյունակագիրն է եղել և օգտագործել է իր ստորագրությունը: Երկու ստորագրությունները համեմատելիս՝ ակնհայտ է դառնում, որ դրանք նույն հեղինակին են պատկանում:
- 8 Տե՛ս «Նախաբանի» 33-րդ հղումը:
- 9 Naim Efendi, *Hatırat*, [էջ15]: Էջերը նշված են բնօրինակի վրա ու տեսանելի են մեր գրքում հրատարակած տեքստում:
- 10 Արամ Անտոնյան, *Մեծ ոճիրը*, էջ 208, 210: Գոյություն ունի այս փաստաթղթի լուսանկարը, որը միայն թվեր է պարունակում (էջ 217). Գաղտնազերծված տարբերակը հրատարակել է Անտոնյանը Նալիմի հուշերում: Ցավոք, մեր ունեցած տարբերակում այն չկա:
- 11 *Hatırat* 20.
- 12 *Eşhası malume* եզրույթն օսմանյան հեռագրերում օգտագործվում է հայերին մատնանշելու համար, «հայի» հոմանիշ է:

13 *Hatırat* [07].

14 *Hatırat* 14.

15 Şinasi Orel; Süreyya Yuca, *Ermenilerce Talât Paşa'ya Atfedilen Telgrafların Gerçek Yüzü* (Ankara: Turk Tarih Kurumu, 1983). Երկու հեղինակներն էլ գիտնական չեն: Օրելը պարզապես հայտնի դիվանագետ է եղել: Նրանք երբեք որևէ այլ աշխատություն չեն հեղինակել: Խիստ կասկածելի է, որ բազմաթիվ տեխնիկական խնդիրներ ուսումնասիրող աշխատանքը մանրակրկիտ ու պրոֆեսիոնալ շարադրեն այնպիսի հեղինակներ, որոնք դրանից առաջ ու հետո այլ աշխատություն չեն գրել: Սա էր պատճառը, որ մենք որոշեցինք ավելի մանրամասն ուսումնասիրել խնդիրը: Պարզվեց, որ աշխատությունն իրականում գրել են ոչ թե այդ հեղինակները, այլ Թուրքիայի Արտաքին գործերի նախարարության հովանու տակ գործող հետազոտողների խումբը: ԱԳՆ աշխատակից Քամուրան Գյուրունը, որը թուրքական պաշտոնական պատմագրությունն արդարացնող *հայտնի «Հայկական թղթապանակի»* հեղինակն է, առանցքային դեր է խաղացել դրա հրատարակման գործում: Սկզբում որոշվել է աշխատությունը հրատարակել առանց հեղինակների՝ կառավարական «սպիտակ գրքի» ձևաչափով: Ի վերջո, հետազոտողների խմբից Օրելին ու Յուջային նշել են որպես հեղինակների: Թուրքիայի ԱԳՆ գնահատմամբ՝ այս աշխատանքը Հայկական հարցում ամենակարևոր գործերից է: Նրանց գնահատականի հետ դժվար է չհամաձայնել՝ հաշվի առնելով դրա տասնամյակների ազդեցությունը Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ոլորտում:

Գլուխ 1 - Նայիմ Էֆենդու պատմությունը և նրա հուշերի իրական լինելու հարցը

- 1 Այս համոզմունքի արմատավորման պատճառներից մեկն այն է, որ Գրիգոր Գերգերյանի՝ 1965 թ. հայերեն հոդվածը չի արժանացել ակադեմիական շրջանակների ուշադրությանը՝ չնայած իր կարևորությանը: Հոդվածում Գերգերյանը գրում է. «Արամ Անտոնյանը Նայիմ Սեֆի Էֆենդու հուշերի ամբողջական տարբերակը չի ներկայացրել իր հրատարակություններից ոչ մեկում՝ ո՛չ հայերեն բնօրինակում, ո՛չ ֆրանսերեն կամ անգլերեն թարգմանություններում: Հուշերի մի մասը պահված է երեք տետրերի մեջ Նուբարյան գրադարանում: Գոյություն ունեն նաև դեռևս չթարգմանված ու չհրատարակված մանրամասներ, որոնք կարելի է գտնել այնտեղ»: Գերգերյանը հույս էր հայտնում, որ այդ «հատվածները կհրատարակվեն»: Տե՛ս Կրիգեր, «Արամ Անտոնյանի հրատարակած...», էջ 236: Այս տողերը գրելուց հիսուն տարի անց նրա երազանքը, ի վերջո, իրականացավ:
- 2 1984 թ. օգոստոսի 24-ին Վահագն Դադրյանին Գերգերյանի գրած նամակում կարդում ենք. «Առնվազն 1950 թ. դրությամբ Նայիմի պատճենած երեք փաստաթուղթ է եղել Նուբարյան գրադարանում: Ես բոլորի բնօրինակները լուսանկարել եմ»: Նամակն այժմ Թաներ Աքչամի անձնական արխիվում է:
- 3 Կրիգեր, «Արամ Անտոնյանի հրատարակած...», էջ 236:
- 4 Նույն տեղում:
- 5 Ըստ Ռայմոնդ Գևորգյանի, որը 1986-2013 թթ. եղել է Փարիզի

Պողոս Նուբար գրադարանի տնօրենը, Նայիմի հուշերն ու որոշ փաստաթղթերի լուսանկարների բնօրինակներ անհետացել են Գերգերյանի 1950 թ. ու Իվ Թերնունի 1975 թ. այցերի միջև ընկած ժամանակահատվածում: Ո՛չ Թերնունը, ո՛չ Դադրյանը, որոնք 1980-ականների սկզբներին այցելել են գրադարան, այս նյութի բնօրինակները չեն գտել: Դրանց ճակատագիրը Ռայմոնդ Գևորգյանի համար ևս մնում է անհայտ:

- 6 Արամ Անտոնյան, *Մեծ ոճիրը*, էջ 15:
- 7 Այս փաստաթղթերի պատճեններում կան թերություններ: Օրինակ՝ տարբեր են 803-րդ փաստաթղթի բնօրինակի ու Նայիմի պատճենածի ամսաթվերը: Բնօրինակի ամսաթիվը 1915 թ. դեկտեմբերի 25-ն է, իսկ հուշերում նշված է 1917 թ. հունվարի 25:
- 8 Orel and Yuca, *Talat Pasa'ya Atfedilen*, 130. Իրենց դիտարկումներում հեղինակները նշում են. «Բավական մոտ է թուրքերեն տեքստին» (էջ 31), «չնայած մանրուքներին տեքստերը համընկնում են» (էջ 33), «տեքստերը նման են» (էջ 51), «տեքստերն ընդհանուր առմամբ համընկնում են» (էջ 65), «որոշ մանրուքներ ու հակասություններ կան» (էջ 42), արվել են «հավելումներ ու լրացումներ» (էջ 42): Ուստի նրանք իրենց կասկածն են հայտնում հուշերի վերաբերյալ ու եզրակացնում, որ այդ տարբերությունները զուտ «թարգմանական սխալներ ու տառասխալներ չեն» (էջ 130):
- 9 Դոկտոր Ավետիք Նաքքաշյանը (1868 (հավանաբար) - 1943 թթ.) Ստամբուլի հայ մտավորական էր: Նրան ձերբակալել են 1915 թ. ապրիլի 24-ին ու ազատ արձակել հուլիսի 23-ին: Պատերազմի ընթացքում ծառայել է օսմանյան բա-

նակում՝ կապիտանի աստիճանով: Փայլուն ծառայության համար պարգևատրվել է բանակի բարձրագույն շքանշանով: Զինադադարից հետո վերադարձել է Ստամբուլ, 1922 թ. մեկնել նախ Եգիպտոս, ապա 1924-ին հաստատվել ԱՄՆ-ում: Նա հավաքել ու հայերեն հրատարակել է իր հուշերն Այաշի բանտում անցկացրած օրերից: (*Այաշի բանտը*, Բոստոն, Հայրենիք, 1925 թ.): Հաջորդ տարի հրատարակել է հուշերի ամբողջական տարբերակը (*Զվարթ պատմություններ*, Նյու Յորք, անհայտ հրատարակիչ, 1926 թ.): Այս գործն անգլերեն է թարգմանվել տասնչորս տարի անց՝ *A Man Who Found a Country* (New York: Thomas Y. Crowell Company, 1940) վերնագրով: Էլեկտրոնային տարբերակը՝ <http://avedis.telf.com/>:

- 10 Աբդուլահադ Նուրի Թենգիրշենկ բեյը (?-1927) Յուսուֆ Քեմալ Թենգիրշենկի ավագ եղբայրն էր: 1920-1933 թթ. եղել է հաջորդաբար Էկոնոմիկայի, արտաքին գործերի ու արդարադատության նախարար: 1915-1916 թթ. Նուրին եղել է Հալեպում Տեղահանության տնօրինության տնօրենը: Զինադադարի ժամանակ մեկնել է Ստամբուլ, որտեղ նրան ձերբակալել են քաղաքն օկուպացրած եվրոպական ուժերը: Կալանքի տակ եղած ժամանակ նրան թույլ են տվել փախչել հիվանդանոցից: Նուրին 1921 թ. միացել է Անատոլիայում գործող Ազգայնական ուժերին: 1922 թ. Ազգայնական ուժերի Ստամբուլ մտնելուց հետո Նուրին անցել է նախապատերազմյան իր գործին քաղաքի Բեռնափոխադրման ու ծովային տրանսպորտի վարչությունում: Ավելի մանրամասն տե՛ս Cevdet Yakupoğlu, “*Bir Sürgün Kahramanı Abdülahad Nuri Bey: Hayatı, Eserleri ve Selçuklu-Beylikler Tarihi. Üzerine Çalışmaları,*” *Ankara Üniversitesi Osmanlı Tarihi Arastırma ve Uygulama Merkezi Dergisi*, 21 (2007): 169-189:

- 11 Աբդուլահադ Նուրին Տեղահանության տնօրենի օգնական է նշանակվել հավանաբար 1915 թ. հոկտեմբերին՝ փոխարինելով տնօրեն Շյուքրու բեյին: Տարվա առաջին ամիսներին նա օսմանյան փաստաթղթերում հիշատակվում է որպես տնօրենի օգնական, հետո միայն՝ տնօրեն: Կան հստակ ապացույցներ, որ պաշտոնի բարձրացումը եղել է նոյեմբերի վերջին: Արտաքսմամբ զբաղվող պաշտոնյաների պարտականությունները նոյեմբերին Հալեպում Տեղահանության տնօրինությունից անցել են Հալեպի նահանգապետին (BOA.DH.ŞFR., 58/56 և 66): Նոյեմբերի 13-ին Տեղահանության տնօրեն Շյուքրու բեյը Թալեաթին գրում է, որ իր լիազորությունները հանձնել է Հալեպի նահանգապետին (BOA.DH.ŞFR., 497/43): Հինգ օր անց Թալեաթը Շյուքրու բեյին հեռագրով խնդրում է հնարավորինս արագ մեկնել Ստամբուլ՝ նոր աշխատանքի անցնելու, քանի որ «տեղահանության աշխատակիցների գործը հանձնվել է Հալեպի նահանգապետին» (BOA.DH.ŞFR., 58/60): Այսուհանդերձ, 1915 թ. նոյեմբերի 21-ի մեկ այլ հեռագրից պարզ է դառնում, որ Շյուքրուն դեռ չէր հեռացել Հալեպից (BOA.DH.ŞFR., 498/62): Շյուքրուի Ստամբուլ մեկնելուց հետո է միայն Նուրին փոխարինել նրան:
- 12 «ժողովրդի ծայն», 1919 թ., սեպտեմբերի 19: Դատավարության կարևոր հատվածներից է Քիլիսի *քայմաքամ* Իհսան բեյի ցուցմունքը: Նախկին պաշտոնյան պատմել է. «Պաշտոնական հրամաններում զինվորների, բողոքականների, կաթոլիկների ու հաշմանդամների ընտանիքներն ազատված էին աքսորից և իրավունք ունեին մնալ իրենց ընտանիքի հետ»: Ի պատասխան՝ Հալեպի նահանգապետը նա-

